

1751

~~84~~
L-49

588

99



2011

ԱՐՄԵՆ ԼԻԻԲՐԱՐԻ ԱՐՏԱՍՈՎՈՐ ԱՐԿԱՆՆԵՐԸ

84

Բ-71

ՄԻԼԻՈՆՆԵՐՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

ԳՐԵՑ՝ ՄՕՐԻՍ ԼԸՊԼԱՆ

ՔԱՐԳՄ.՝ Զ. ՆԵՄՑԷ

(Արտատպուած «Երկիր», օրաթերթին)



2003



9648

Կ. ԳՈՂԻՄՍ
ՏՊԱԴՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐՅԱՆ ՈՐԳԱՆ
1920

27838-4.3

Ա.

ՔՈՅՐ ՔՕՐԱԼԻ

Երեկոյեան ժամը 6.30էն քիչ մը առաջ էր: Կամաց կամաց մթնել կը սկսէր, երբ երկու զինուորներ հասան ծառազարդ քառուղի մը, Կալիէրա թանգարանին դիմացը: Անոնցմէ մէկը ֆրանսական հետեւակազօրքի վերարկուն կը կրէր և ոտքին մէկը կը պակսէր, միւսը մէկ թեւ ունէր և կը կրէր սենեկալեան զինուորի համազգեստ: Քառուղիին մէջտեղը գտնուող բարձրավանդակին չըջանը ըրին և կանգ առին: Հետեւակազօրքը իր սիկառը նետեց, սենեկալցին առաւ զայն, քիչ մը ծխեց և զրպանը դրաւ մնացորդը: Այս բոլորը առանց բառ մը արտասանելու: Նոյն միջոցին հանդիպակաց փողոցէն երկու ուրիշ զինուորներ ելան: Ասոնցմէ առաջինը կը քալէր անթացուպերով և միւսը դաւազանով: Անոնք ալ կանգ առին սալայտակին եզերքը գտնուող լրագրավաճառի քէօշիկին առջեւ: Երեք միւս փողոցներէն ալ երեւան ելան երեք զինուորներ, մէկը կաղ, միւսը առանց ոտքի և երրորդ մը ծռած ոտքով: Ամէն մէկը զնաց ծառի մը քով և անոր կրթնեցաւ: Իրարու հետ չխօսեցան և անցորդները ուշադրութիւն չդարձուցին անոնց: Փամը վեցուկէս հնչեց:

Այդ միջոցին հրապարակին վրայ նայող տուններէն մէկուն դուռը բացուեցաւ: Մէկը դուրս

ելաւ: Սպայ մըն էր. իր զինուորական գլխարկին տակ մեծ վերակապ մը կը ծածկէր իր ծոճակը և ճակատը: Սպան բարձրահասակ և խիստ բարակ էր: Իր աջ ոտքը փայտէ էր և կը յենուր զաւազանի մը վրայ: Հրապարակէն հեռացաւ և մտաւ Բիէն-Շարօն փողոցը: Հոնկէ՝ ասդին անդին ակնարկ մը պտտցուց Մօտեցաւ ծառերէն մէկուն, զինուորներէն մէկուն փորին զարկաւ որ ետ քաշուեցաւ:

Սպան մեկնեցաւ:

Երկու հարիւր քայլ հեռուն հիւանդանոցի մը առջեւ կանգ առաւ և սկսաւ դուռը դիտել: Յանկարծ կին մը երեւցաւ դրան վրայ: «Ահա ինքը», ըստ սպան և սկսաւ հետեւիլ կնոջը, որ հաղւած էր հիւանդատանի հագուստ մը: Հակառակ վերարկուն լայնութեան, յայտնի կ'ըլլար թէ ան երիտասարդ էր:

Այս միջոցին փողոցին մէջ ոչ ոք կար, բայց նոյն միջոցին կողմնակի փողոցէ մը դուրս ելաւ օթօմօպիլ մը, որ սկսաւ երթալ կնոջ ուղղութեամբ, որոշ հեռաւորութիւն մը պահելով իր և անոր միջեւ:

Սպային ուշադրութիւնը զրաւեց երկու պարագայ: Օթօմօպիլին մէջ կային երկու հողի և ասոնցմէ մէկը որ մեծ պեխեր ունէր, դուրս կախուած էր պատուհանէն և կը խօսէր մեքենավարին հետ:



10889-57 (2496)
 39

Այն միջոցին երբ հիւանդապահուհին մտնեցած էր հրապարակին, օթօմօպիլը արագացուց իր ընթացքը և մտնեցաւ մայթին: Նոյն պահուն այն մարդը որ միշտ կը խօսէր մեքենավարին հետ, բացաւ դուռը և իջաւ: Սպան, առանց ուշադրութիւն ընելու թէ կրնայ տեսնուիլ, անցաւ փողոցը և սուլիչ մը տարաւ իր բերանը:

Օթօմօպիլը կանգ առաւ, մէջի երկու մարդիկը դուրս ցատկեցին, լսուեցաւ սարսափի ձիւ մը, և սպան սուլեց: Միեւնոյն ատեն երկու մարդիկը բռնեցին կինը և սկսան քաշել զայն դէպի օթօմօպիլը: Մտերուն ետեւէն եօթը խեղանդամ զինուորները դուրս ցատկեցին և յարձակեցան կինը փախցնողներուն վրայ: Կտիւրը քիչ տեւեց: Մեքենավարը տեսնելով կոխը, մեկնեցաւ, իսկ յարձակողները տեսնելով զինուորներուն սպառնալից անթացուպերը և սպային արձանակը, փախան և աներեւութացան:

— Է՛յ, Եա-Պօն, պոռաց սպան խեղանդամ սենեկալցիին, բռնէ՛ փախչողները:

Սպան բռնած էր կինը, որ կը դողար և նուազելու մօտ էր:

— Մի վախնար, քօյր Քօրալի, ես եմ, հարիւրապետ Պէլվալ... Բաթրիս Պէլվալ...

Կինը մրմնջեց.

— Ա՛հ, գուք էք հարիւրապետ:

— Այո՛, և հոս հաւաքուողները ձեր բարեկամներն են, այն վիրաւորները, զոր խնամեցիք և որոնք եկած են ձեզ պաշտպանելու համար:

— Շնորհակալ եմ, շնորհակալ:

Զինուորներու օգնութեամբ, զայն սկսաւ տանիլ դէպի այն տունը ուրկէ դուրս ելած էր: Երիտասարդ կինը կը հետեւէր: Մտան տունէն ներս և անցան սալօն մը, որուն ելեքորական լոյսերը վառեց սպան:

— Նստեցէք, ըսաւ ան:

Կինը կիսանուաղ ինկաւ արթուի մը վրայ, մինչդեռ սպան հրամաններ կուտար:

Երիտասարդուհին քաղցր և հրապուրիչ դէմք մը ունէր, նուրբ դիմագծերով, քնքոյշ և դեղեցիկ աչքերով:

Սպային խնամքներուն շնորհիւ ան քիչ մը կազդուրուեցաւ: Այդ միջոցին ներս մտաւ սենեկալցին, որ ծոծրակէն բռնած կը բերէր առեւանդիչներէն մէկը, խամածիկի մը պէս:

— Զգէ զայն, հրամայեց սպան: Եա-Պօնը ուժեղ ձեռք մը ունի, մէկ ձեռքը բայց երբ անով մէկը կը բռնէ, հրաշք մըն է եթէ չխեղդէ:

Այդ սեւամորթը հակայ մըն էր, գուռզ մազերով: Մէկ թեւը չկար և կուրծքին վրայ կային երկու զինուորական պատուանշաններ: Անոր մէկ այտը, կզակին և բերնին կէսը ջախջախուած էին թնդանօթէն: Ատկէ զատ համր եղած էր: Հազիւ ձայներ մը կ'ելլէին բերնէն:

— Լա՛ւ, ըսաւ սպան, բայց ուրիշ անդամ աւելի կամաց:

Ծռեցաւ մարդուն վրայ, շօշափեց զայն և տեսնելով որ նուազած էր միայն, ըսաւ կնոջը.

— Զայն կը ճանչնա՞ք:

— Ո՛հ, ըսաւ հիւանդապահուհին:

— Վստա՞հ էք որ ոչ մէկ տեղ տեսած էք այս գլուխը:

— Երբէ՛ք, երբէ՛ք, յայտարարեց կինը:

Սպախուղարկեց գրպանները և ոչ մէկ թուղթ գտաւ: Յետոյ կապել տուաւ զայն և ճամբեց իր օգնական զինուորները:

Երբ զինուորները մեկնեցան, վերադարձաւ դէպի կինը, սալօն առաջնորդեց զայն և ըսաւ.

— Ինչպէ՞ս դիտէք, ութը որ կ'ընէ հիւանդանոցէն հեռանալու և հիմա կը ընակիմ: Պուլվար Նայյօ, այդ հիւանդանոցին կից գտնուող ապաքինարանը, ուր վիրակապերս փոխել կուտամ և կը մնամ գիշերները: Այս առտու բարեկամի մը կը սպասէի Պուլվարին ճաշարաններէն մէկուն մէջ, երբ լսեցի խօսակցութեան մը վերջին մասերը:

Պէտք է ըսեմ որ այդ սրահը բաժնուած է երկու մասի, բարակ և մարդու հասակ պատուարով մը, որուն մէկ կողմը կը նստին սրճարան յաճախողները, միւս կողմը՝ ճաշողները: Ես միայնակ էի ճաշարանին կողմը, իսկ խօսողները զիս չէին տեսած և կարծելով որ ոչ ոք չկայ, բարձրաձայն կը խօսէին: Ես լսեցի հետեւեալ խօսքերը որոնք արձանագրեցի յուշատետրիս մէջ:

Հանեց յուշատետրը և յարեց.

— Վերջին խօսքերը չըսուած, որոնք մասնաւոր նշանակութիւն մը ունէին, խօսեցաւ կայծերու, կայծերու անձրեւի մը մասին: Այդ կայծերու անձրեւը պատեւրագմէն առաջ մէկ երկու անգամ

տեղի ունեցեր է, տեսակ մը զիշերային նշան, որուն կրկին պատահելուն կը սպասէին և կը պատարաստուէին: Այս բոլորէն ո և է բան կը կասկածի՞ք:

— Ո՛չ... բացարձակապէս ոչ:

— Ա՛հ, մտացայ ըսելու որ երկու խօսակիցները շատ լաւ անգլիերէն կը խօսէին, բայց այնպիսի հնչուժով մը, որ ես համոզուեցայ որ երկուքն ալ Անգլիացի չէին: Ահա իրենց ամբողջ խօսակցութիւնը զոր նօթագրեցի:

«— Ուտի, եզրակացնելու համար, ըսաւ անոնցմէ մէկը, ամէն բան կարգադրուած է: Այս իրիկուն, ժամը 7էն քիչ մը առաջ պիտի գտնուիք նշանակուած տեղը:

«— Այո՛, գնդապետ: Օթօմօպիլը պատրաստ է արդէն:

«— Լաւ, գիտցէք որ ան հիւանդանոցէն կ'ելլէ ժամը 7ին:

«— Մի վախնաք, չենք սխալիք, քանի որ միշտ նոյն ճամբով կ'երթայ:

«— Զեր Ծրագիրը պատրաստած էք:

«— Կէտ առ կէտ: Նոյն իսկ եթէ հոն մարդիկ գտնուին, չպիտի կրնան միջամտել, որովհետև արագօրէն պիտի դորձենք:

«— Վստա՞հ էք ձեր մեքենավարին վրայ:

«— Մենք անոր այնքան լաւ կը վճարենք, որ մեզի պիտի հնազանդի:

«— Ետտ լաւ: Դուք գիտէք թէ ես ո՛ւր պիտի սպասեմ ձեզի, օթօմօպիլով: Դուք կինը ինձի պիտի տաք եւ կացութեան տէրը պիտի ըլլանք:

«— Եւ դուք ալ կնոջ իրաւ

որ գնդապետ, գէշ պատառ չէ, որովհետեւ շատ գեղեցիկ է:

«— Այո՛, երկար ատենէ ի վեր զայն տեսած եմ, բայց իրեն չեմ ներկայացուած, բայց կ'ուզեմ առիթէն օգտուել և արագ գործել. թերեւս պիտի լայ, ակուսայ պիտի կրճէ: Աւելի լաւ: Ես կը սիրեմ որ ինծի դիմադրեն»:

Ակսան ծիծաղել, յետոյ ոտքի ելան և հեռացան օթոմօպիլով:

Հարիւրապետը լռեց. երիտարարդ կինը կը խորհէր: Յանկարծ ըսաւ.

— Ինչո՞ւ համար ինծի լուր չի տուիք:

— Ձեզի լուր տալ, բայց եթէ խնդիրը ձեր մասին չըլլար: Ինչո՞ւ համար ձեզի անհանգիստ ընէի: Լաւ սեպեցի բարեկամներէս մէկէն խնդրել, որ իր տունը իմ տրամադրութեանս տակ դնէ, յետոյ պատահածը գիտէք:

Երկար լուսթիւն մը յաջորդեց այս խօսակցութեան. յանկարծ հարիւրապետը ըսաւ.

— Թերեւս լուսարանութիւններ ստանանք, եթէ հարցաքննենք մեր կալանաւորը: Եթէ չուզէ պատասխանել, ոտքիանութեան կը յանձնենք. թող պէտք եղածը ընէ:

Կինը սարսուռաց:

— Ոտքիանութեան:

— Անչո՞ւշտ: Ի՞նչ կուզէք որ ընեմ:

— Բայց ո՛չ, բայց ո՛չ, ճշաց կինը յուզուած: Ոչ մէկ գնով: Եթէ ոտքիանութիւնը խառնուի այս գործին, քննութիւն պիտի կատարուի, անհատական կեանքս վեր ի վայր պիտի շրջի: Ո՛չ, կը խնդրեմ, չեմ ուզեր որ իմ մասին

խօսք ըլլայ: Ուրիշ միջոց մը գտէք:

Հարիւրապետը անոր նայեցաւ, բաւական զարմացած և ըսաւ.

— Խօսք կուտամ, այս գործը չպիտի յայտնուի:

Յետոյ ոտքի ելաւ ու ըսաւ.

— Կ'ուզէ՞ք տեսնել մարդը, քոյր Գորալի:

— Ոչ, ըսաւ: Այնքան յոգնած եմ: Ինչ քառանձինն հարցաքննեցէ՞ք զայն: Յետոյ կը պատմէք ըսածները:

Հարիւրապետը չպնդեց և սենեակէն մեկնեցաւ:

Յանկարծ զարմացական ճիչ կը լսեց կինը և սենեակէն դուրս նետուեցաւ, հանդիպեցաւ հարիւրապետին, որ իր ճամբան կը փակէր:

— Մի գաք:

— Բայց դուք վերաւորուած էք, բացաղանչեց կինը:

— Ե՞ս:

— Այո՞, ձեր թեւին վրայ արիւն կայ:

— Ա՛՛ տոխկա իմ արիւնս չէ, այդ մարդուն արիւնն է:

— Վէ՞րք մը ստացած է ուրեմն:

— Այո՛, բերնէն արիւն կուգայ:

— Ուրեմն Եա-Պօնը այդքան ուժով սեղմած էր:

— Եա-Պօնը չէ:

— Ո՞վ է ուրեմն:

— Իմ մեղսակիցները եկեր և խեղճեր են զայն:

Արդարեւ քիչ մը ատեն անշարժ պառկած էր մարդը: Իր դէմքը մահուան դալուկով պատած էր: Կարմիր մետաքսէ թելի մը կը շրջապատէր անոր վիզը:

— Սրիկային մէկը պակսեցաւ, քոյր Գորալի, ըսաւ ԲաթրիսՊէլվալ, կինը առաջնորդելով սենեակ, սպանեալին վրայ արագ քննութիւն մը ընելէ յետոյ:

— Անունը Մուսթաֆա Ռօվալայօֆ է եղեր, ըսաւ. այդպէս զրուած էր իր ժամացոյցին վրայ:

Սենեակին մէջ նստեցան դէմ դիմաց: Այն երկու ժամերը, զոր անցուցին միասին, եղան խոտովանութեան ժամեր հարիւրապետին համար, որ յայտնեց իր բուռն սէրը կնոջ հանդէպ:

Երիտասարդ կինը իր ձեռքերը դրած էր այրող այտերուն վրայ և յուզուեալ մտիկ կ'ընէր զինուրականին սիրոյ արտայայտութիւնները:

— Բայց ես ամուսնացած եմ, բողբոջ կինը, ի՞նչպէս կ'ուզէք որ փոխադարձեմ ձեր սէրը: Իմ ամուսինս ողջ է և անշուշտ չեմ կրնար երկրորդ անգամ մը ամուսնանալ...:

Յուզուած և շփոթած կանգ առաւ: Իր սրտին բարխումները կը լսուէին սենեակին լուսթեան մէջ:

Յանկարծ ոտքի ելաւ:

— Մեր վերջին տեսակցութիւնը պիտի ըլլայ, ըսաւ կինը, պիտի խնդրեմ միայն որ չփորձէք իմ ինքնութիւնս հասկնալ:

Իր ձեռքը երկնցուց երիտասարդ զինուորականին.

— Մնաք բարով:

— Յետսութիւն, պատասխանեց Բաթրիս:

Նորէն կրկնեց.

— Մնաք բարով:

— Յետսութիւն:

Կինը մեկնեցաւ: Երբ փողոցին

դուռը գոցուեցաւ, այն ատեն միայն հարիւրապետը ուզողուեցաւ պատուհաններէն մէկը. տեսաւ երիտասարդ կինը, որ կ'անցնէր ծառերուն մէջէն: Իր սիրտը սեղմուեցաւ:

Պիտի տեսնէ՞ր արդեօք կրկին զայն:

— Այո՛, պիտի տեսնեմ, մտածեց: Թերեւս վազը, չէ՞, ու բախտը ինծի կ'օգնէ:

Իրիկուան ճաշելէ յետոյ, վերադարձաւ հիւանդանոց: Եա-Պօնը հո՞ս է, հարցուց:

— Այո՛, գնդապետ: Ձեզի համար ծրար մը բերին:

— Որո՞ւ կողմէ բերուեցաւ:

— Մարդուն մէկը բերաւ: Երարին վրայ զրուած էր. «Աս հարիւրապետ Պէլվալ», ձեր սենեակին մէջ դրի:

Սպան իր սենեակը գնաց և սեղանին վրայ գտաւ ծրար մը, կապուած և լուղթով պլլուած:

Բացաւ: Տուփ մըն էր և տուփին մէջ կար ժանդոտած մեծ բանալի մը, իր կարդին թուղթով պատուած:

Ի՞նչ կը նշանակէր այս բանալին: Տուփին մէջ ոչ մէկ հասցէ և ոչ մէկ նշան կար: Ենթադրեց թէ սխալ մը պատահած է և բանալին դրաւ զրպանին մէջ:

— Բաւական է այսօրուան առեղծուածները, քնանանք:

Բայց երբ իր պատուհանին վարագոյրները կը գոցէր, Պուլօնի անտառին վերեւ տեսաւ կայծերու ցայտք մը, որ ծառերուն կատարները կը լուսաւորէր զիշերուան խաւարին մէջ:

Յիշեց այն խօսակցութիւնը զոր առաւօտուն լսած էր քոյր Գորալիի առեւանդման փորձէն առաջ:

Բ. ԺԱՆԳՈՏԱԾ ԲԱՆԱԼԻՆ

Ութը տարու եղած ատեն, Բաթրիս Պէլվալ, որ մինչեւ այն ատեն Բարիզ բնակած էր հօրը հետ, Լոնտոնի ֆրանսական մէկ վարժարանը զրկեցաւ, ուրկէ ելաւ աստը տարի յետոյ:

Սկզբան, ամէն շաբթու լուր կ'առնէր հօրմէն: Յետոյ, օրին մէկը, վարժարանին տնօրէնը իմացաւ որ Բաթրիս Պէլվալ որը էր, իր կրթութեան ծախքերը ապահովուած էին, և չափահասութեան ատեն անգլիացի նոտարի մը միջոցաւ պիտի ստանար 200,000 ֆրանքի չափ գումար մը, որ հօրենական ժառանգութիւնը կը ձեւացնէր:

Երկու հարիւր հազար ֆրանքը անբաւական էր ամուրի երիտասարդի մը համար, որ այնքան շատ լիցանք մը կը վարէր: Իր զինուորական ծառայութիւնը կատարելու համար Ալձէրիս զրկուեցաւ և հոն միջոցը գտաւ քսան հազար ֆրանք պարտք ընելու, որովհետեւ դրամ չունէր:

Ուստի սկսաւ իր ժառանգութիւնը մօտել, յետոյ աշխատանքի ձեռնարկել: Հանձարեղ եւ գործունեայ միտք, առանց մասնաւոր կոչումի, բայց նախաձեռնութիւն եւ հաստատամտութիւն պահանջող ամէն գործի ընդունակ, գաղափարներով աւելուն, կամքի տէր, կրցաւ վտանգութիւններ շնչել, դրամագլուխներ գտնել

ու գործեր կազմակերպել:

Ատոնք էին երկտրական գործեր, ահերու և ջրվէժներու զնում, օթոմօպիլներու սպասարկութիւն գաղթավայրերու մէջ, շոգենաւային զիծերու հաստատում, հանքերու շահագործում. մէկ քանի տարուան մէջ տասերկուքի չափ գործեր կազմակերպեց, որոնց ամէնքն ալ յաջողեցան:

Պատերազմը անոր համար եղաւ հրաշալի արկածախճդրութիւն մը: Յարուան կերպով նետուեցաւ պատերազմին մէջ: Գաղթային զինուորներու յիսնապետ, Մարնի մէջ շահեցաւ տեղակալի երկը: Սեպտ. 13ին, սրունդէն վիրաւորուած, նոյն օրն իսկ անդամահատութեան ենթարկուեցաւ: Երկու ամիս յետոյ, ո'վ գիտէ ինչ էնթրիկներու հետեւանքով, իբր զիտող մտաւ մեր լաւագոյն օդանաւորներէն մէկու սաւառնակը: Յունուար 10ին, շրաբնէլ մը վերջ տուաւ երկու հերոսներու շահատակութեանց: Այս անգամ հարիւրապետ Պէլվալ, զլիսէն ծանրապէս վիրաւորուած, Շան զ'էլիզէի պողոտային հիւանդանոցը փոստրուած էր: Այդ թուականին, քոյր Քօրալի ալ նոյն հիւանդանոցը կը գտնուէր իբր հիւանդապահուհի:

Գլխուն վրայ կատարուած

գործողութիւնը յաջողեցաւ: Բայց կնճռատութիւններ առաջ եկան: Շատ տառապեցաւ, առանց տրտունջ յայտնելու սակայն: Իր զուարթամտութեամբ կը խրախուսէր թշուառութեան ընկերները, որոնք ճշմարիտ գորով մը ունէին իր նկատմամբ: Կը խնդացնէր, կը սփոփէր ու կը կաղուրէր զանոնք իր աւելնով և ամենագէշ կացութիւններու հանդէպ ցոյց տուած անտարբերութեամբ:

Անոնցմէ և ո'չ մէկը չպիտի մոռնար այն վարուելակերպը, որով Բաթրիս ընդունած էր գործարանատէրի մը կողմէ իրեն եղած առաջարկը արուեստական սրունդի մը մասին:

— Արուեստական սրունդ մի: Բայց ինչո՞ւ, սարոն, անտարակոյս, ամէն մարդ իարելու համար, որպէսզի ոչ ոք նշմարէ հաշմանդամ ըլլալս, այնպէս չէ՞: Հետեւաբար, պարո'ն, անդամատուած ըլլալը թերութիւն մը կը նկատէք, և ես, ֆրանսացի սպայ, պարտիմ ծածկել զայն իբր ամօթապարտ բան մը:

— Երբեք, հարիւրապետ, Սակայն...:

— Որքա՞ն կարծէ ձեր մեքենական սրունդը:

— Հինգ հարիւր ֆրանք:

— Հինգ հարիւր ֆրանք, կը կարծէք որ ես կարողութիւն ունիմ այդքան գումար վճարելու արուեստական սրունդի մը համար, երբ անդին հարիւր հազարաւոր թշուառներ կան ինծի պէս անդամատուած, որոնք պիտի հարկադրուին իրենց փայտէ ոտքերը ցուցադրելու:

Հոն գտնուող անձերը կը ծիծաղէին: Քոյր Քօրալի իսկ մտիկ կ'ընէր ժպտուն: Բաթրիս Պէլվալ ինչեր չպիտի տար, քոյր Քօրալի մէկ ժպտին համար:

Ինչպէս Բաթրիս Պէլվալ յայտնած էր առաջին օրերուս իսկ, հիւանդապահուհիին սիրահարուած էր, անոր սրտայոյզ գեղեցկութենէն, անբիծ շնորհէն, գողտրիկ աչքերէն, քաղցր հօգիէն ազդուած, որ հիւանդանոցն վրայ կը հակէր և բարերար գգուանքի մը տպաւորութիւնը կը թողուր: Սկիզբի օրերէն, հիւանդապահուհին հրապոյրը կը սպրդէր սպային մէջ ու կը պարուրէր զայն:

Այդ կնոջ ձայնը կ'ոգեւորէր զինքը: Քոյր Քօրալի իր նայուածքով ու բոյրով կը հմայէր: Հակառակ անոր որ այդ սիրոյն տիրապետութեան ենթարկուած էր, հարիւրապետը անհուն պէտք մը կը զգար անձնուիրութիւն ցոյց տալու և իր ուժը տրամադրելու այդ քնքուն և փափուկ էակին, զոր վտանգներով չըջապատուած կը տեսնէր:

Եւ անա՛ դէպքերը իրաւունք կուտային հարիւրապետին, քանի որ այդ վտանգները կը ճշդուէին ու անիկա բարեբախտութիւնը ունեցած էր իր թշնամիներուն գրկախառնումէն ազատելու մանկամարդ կիսը: Առաջին ճակատամարտին ելքը կը հրճուեցնէր զինքը, բայց չէր կարծեր որ վերջացած ըլլաբ ան: Յարձակումները պիտի վերսկսէին: Արդէն իսկ իրաւունք չունէ՞ր մտովի հարցնելու թէ առնչութիւն մը կար մանկամարդ կնոջ

դէմ առտուն սարքուած դաւադրութեան ու այն ազգանշանին միջեւ, որով կայծերու անձրեւ մը տեղացած էր: Երկու խօսակիցներուն կողմէ ծանուցուած երկու դէպքերն ալ միեւնոյն միջին դաւադրութեան հետ կապ չունէին միթէ:

Կայծերը կը շարունակէին շողալ հոն: Բաթրիս Պէլվալի դատողութեամբ, այդ կայծերը կը ցայտէին Սէնի կողմէ, այսինքն երկու բարձրագոյն կէտերու միջեւ, այն է ձախակողմէն՝ Թրօքատէրօ, իսկ առաջակողմէն՝ Բասիի կայարանը:

— Ուրեմն երկու երեք քիւլօմէթր հեռու կը գտնուի թռչունի սաւառնուձով, ըսաւ հարիւրապետը մտովի: Հոն երթանք՝ տեսնելու համար:

Երկօրոք յարկը, քիչ մը լոյս կը մղուէր դրան մը փականքէն: Եւ-Պօն հոն կը բնակէր, և սպան հակողուհիէն իմացած էր թէ Եւ-Պօն թուղթ կը խաղար իր սիրաբանած կնոջ հետ: Բաթրիս Պէլվալ ներս մտաւ:

Եւ-Պօն թուղթ չէր խաղար ալ եւս: Թիկնաթողի մը մէջ քնացած էր խաղի թուղթերուն առջեւ, որոնք ցիրուցան փոռուած էին. կնոջական գլուխ մը կը հանգչէր վեր դարձած թեղանիքին վրայ, որ ձախ ուսէն կախուած էր: Շատ յամիկ գլուխ մըն էր. շրթունքները Եւ-Պօնի շըրթունքներուն պէս հաստ, սեւ ակռաներուն վրայ կը բացուէին. անոր ճարպոտ ու դեղին մօրթը ձէթով օծուած էր կարծես: Խոհարարուհիին ազլիկը Անժէլն էր որուն հետ կը սիրա-

բանէր Եւ-Պօն: Անժէլ կը խըռկար:

Բաթրիս գոհունակութեամբ դիտեց զանոնք: Այդ տեսարանը կը հաստատէր իր տեսութիւններուն ճշդութիւնը: Երբ Եւ-Պօն յաջողած էր տարփուհի մը գտնել, է՛ն հաշմանդամ հերոսները ինչո՞ւ չկարենային սիրոյ բերկրանքը վայելել:

Հարիւրապետը Սենեկալցիին ուսին դպաւ: Այս վերջինը արթննալով ժպտեցաւ, և կամ աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել, իր հարիւրապետին ներկայութիւնը կռահելով՝ արթննալէ առաջ ժպտեցաւ:

— Բնդի պէտք ունի՞մ, Եւ-Պօն: Եւ-Պօն ուրախութեան կռինչներ արձակեց ու Անժէլը մէկդի հրեց, որ սեղանին վրայ գլտօրեցաւ ու շարունակեց խակալ:

Փողոցին մէջ Բաթրիս չտեսաւ կայծերը: Ծառերու դանդուածը թոյլ չէր տար կայծերը նշմարելու: Ծառուղիին հետեւեցաւ, ու ատեն շահնչու համար Սէնթիւրի կառախուձքը նստաւ մինչեւ Հանրի Մարիէլ պողոտան: Հոն, Լա Թուր փողոցը մտաւ, որ Բասի կը յանգի:

Ճամբան, Բաթրիս իր մտահոգութիւններուն վրայ խօսեցաւ Եւ-Պօնի հետ, թէ եւ սեւամորթը մեծ բան մը չէր հասկնար: Բայց հարիւրապետին համար սովորութիւն եղած էր այդ բանը: Եւ-Պօն, նախ պատերազմի ընկերը, յետոյ իր հետեւորդ զինուորը, չունի մը պէս հաւատարիմ էր: Միեւնոյն օրը գլխէն վերաւորուած ըլլալով՝ իր պետին հետ անդամատուած էր ու կը կարծէր

որ երկուքնին ալ համանման վիճակի մը մատնուած էին: Երկու անգամ վիրաւորուած ըլլալուն կը հրճուէր, ինչպէս հրճուած էր հարիւրապետ Պէլվալի հետ երկու անգամ մահուան մօտ դգալուն համար ինքզինքը: Հաւատարիմ անասունի այդ հլութեան՝ Պէլվալ կը պատասխանէր սիրալիր ընկերակցութեամբ մը. իրաւ է որ հարիւրապետը անոր հետ կ'իյնար ու երբեմն բաւական բիրտ վերաբերում կ'ունենար, ինչ որ ա՛լ աւելի կ'արժարձէր սեւամորթին գորովը: Եւ-Պօն կրաւորական խորհրդակիցի մը դերը կը կատարէր, որուն խօսքերուն ականջ կը դնեն, առանց անսալու և իրենց բարկութիւնը անոր վրայ կը թափեն:

— Ի՞նչ կը խորհիս այս ամէնուն վրայ, Եւ-Պօն, կ'ըսէր հարիւրապետը, անոր թեւը մտած քալելով: Ես այն կարծիքը ունիմ թէ միեւնոյն պատմութիւնն է միշտ: Դուն ալ այնպէս կը կարծես, չէ՞:

Եւ-Պօն երկու կողմանձիւններ արձակեց, որոնց մէկը այո՛ կը նշանակէր, իսկ միւսը՝ ո՛չ:

Ուստի նախ ըսաւ ան.

— Այո՛:

— Հետեւաբար տարակոյս չկայ որ քոյր Քօրալի նոր վաանդի մը մատնուած է, այնպէս չէ՞, յայտարարեց սպան:

— Այո՛, քրթմնջեց Եւ-Պօն, որ սկզբունքով միշտ հաւանութիւն կը յայտնէր:

— Լա՛ւ: Հիմա կը մնայ գիտնալ թէ ի՛նչ կը նշանակէ կայծերու այդ անձրեւը: Ութը օր առաջ ձէրլինները առաջին այ-

ցելութիւն մը տուած ըլլալուն, պահ մը խորհեցայ որ...: Բայց մտիկ կ'ընե՞ս զիս:

— Այո՛...:

— Ենթադրեցի որ մատնութեան ազգանշան մըն էր ձէրլիններու երկօրոք այցելութեան առթիւ...:

— Այո՛...:

— Բայց ո՛չ, ապուշ արարած: Ի՞նչպէս կ'ուզես որ ազգանշան մը ըլլայ ձէրլիններու համար, քանի որ խօսակցութեան մը համաձայն, զոր դիպածաբար լսեցի, այդ ազգանշանը տրուեցաւ պատերազմէն երկու տարի առաջ: Մնաց որ, իսկապէ՞ս ազգանշան է ան:

— Ոչ:

— Ի՞նչպէս ոչ: Ուրեմն ի՞նչ է ան, ամենատիմար արարած: Լաւադոյն պիտի ըլլայ որ լուսմնաս ու զիս մտիկ ընես, քանի որ չես գիտեր թէ ի՛նչ բանի վրայ կը դառնայ ինչդիրը: Ես ալ բան մը չեմ գիտեր, ու կը խոստովանիմ թէ չուարած մնացած եմ: Տէր Ասաւած, որ քան կնճոտ է այս ամէնը: Հեղինակութիւն չունիմ այդպիսի խնդիրներ լուծելու համար:

Բաթրիս Պէլվալ ա՛լ աւելի չփոթութեան մատնուեցաւ, երբ Թուր փողոցը հասաւ: Քանի մը ճամբաներ կը բացուէին իր առջեւ:

Ատոնցմէ ո՞րը ընտրէր: Թէեւ Բասիի կեղրոնը կը գտնէր, բայց ո՛ր է կայծ չէր շողար մութ երկնքին վրայ:

— Անշուշտ, վերջացած ըլլալու է ի վնաս մեզի, ըսաւ հարիւրապետը: Յանցանք քուկդ է, Եւ-Պօն: Եթէ երբեք ինձի կորսնցնել չտայիր թանկագին

վայրկեաններ, սիրեցեալիդ գիր-
կը թաղւած, ատենին պիտի
հասնէինք: Անժէլի հրապոյրնե-
րուն առջեւ կը խոնարհիմ, բայց
վերջապէս:

Հարիւրապետը սկսաւ յառա-
ջանալ, հետզհետէ աւելի անորո-
շութեան մատնուած: Դիպածա-
կան և առանց բաւարար տեղե-
կութիւններու կողմակերպուած
արշաւանք մը ու է արդիւնք
չէր տար իսկապէս. ուստի կը
խորհէր հրաժարիլ այդ արշաւան-
քէն, երբ օթոմօպիլ մը դուրս ե-
լաւ ֆրանքլին փողոցէն, Թրօ-
քատէրայի կողմէն յառաջանալով:
Օթոմօպիլին մէջ գտնուող մարդ
մը ձայնական փողին մէջէն աղա-
ղակեց.

— Դէպի ձախ դարձէք, և
յետոյ ուղիդ յառաջացէք մինչեւ
որ ձեզի ազդարարեմ:

Հարիւրապետ Պէլվալի այն-
պէս թուեցաւ որ այդ ձայնը առ-
տուն ճաշարանին մէջ լսած ձայ-
նին բեկբեկումը ունէր:

— Գորշ գլխարկով մա՞րդն է
արդեօք, այսինքն մէկը անոնցմէ
որոնք փորձեցին առեւանգել քոյր
Դորալին, մրմնջեց Պէլվալ:

— Այո՛, քրթմնջեց Եա-Պօն:

— Այնպէս չէ՞: Կայծերու ազ-
դանշանը կը բացատրէ իր ներ-
կայութիւնը այդ կողմերը: Պէտք
չէ այդ հետքը կորսնցնել: Օ՛ն,
յառաջ, Եա-Պօն:

Բայց անօգուտ էր որ Եա-Պօն
արշաւէր: Կառքը Ռէյնուար փո-
ղոցը անցած էր, ու հարիւրա-
պետը կրցաւ ճիշդ այն վայր-
կեանին հոն հասնիլ երբ ան կանգ
կ'առնէր քառուղիէն երեք չորս
մէթր հեռու, կառանցիկ մեծ

դրան մը առջեւ, որ ձախակողմը
հաստատուած էր:

Հինգ անձեր վար իջան: Ա-
սոնցմէ մէկը հնչեցուց զանգակը:
Երեսուն քառասուն ըստէ
անցաւ: Յետոյ, երկրորդ անգամ
ըլլալով, Բաթրիս զանգակին
ձայնը լսեց: Մայթին վրայ խռ-
նուած հինգ անձերը կը սպասէին.
վերջապէս զանգակի երրորդ հար-
ուածէ մը յետոյ, դրան թեւերէն
մէկուն մէջ հաստատուած փոքր
մուտք մը բացեցաւ կիսովին:

Կը խօսակցէին: Կ'երևար թէ
փոքր դուռը բացող մարդը բա-
ցատրութիւններ կ'ուզէր: Բայց
իսկոյն երկու անձեր ուժգնօրէն
ինկան դրան վրայ, որ այդ մը-
ղումին տակ տեղի տուաւ, ու
ամբողջ խումբը ներս մտաւ:

Մեծ աղմուկ մը առաջ եկաւ:
Գուռը գոցուեցաւ: Հարիւրա-
պետը անմիջապէս ուսումնասի-
րեց այդ վայրը:

Ռէյնուար փողոցը գիւղի
նախկին ճամբայ մըն էր, որ
Բասի գիւղին տուներուն և
պարտէզներուն մէջէն կը յառա-
ջանար ատենօք ու կը հասնէր
մինչեւ բլուրներուն կողը՝ Սէնի
ջուրով ոռոգւած: Տեղ տեղ,
գաւառական երևոյթ մը ունի
ան, ինչ որ հազւագէտ դարձած
է հետզհետէ: Հին շէնքեր
կը գտնւին ճամբուն եզերքը:
Հնաւուրց բնակարաններ սքօղւած
են ծառերուն մէջտեղը: Տակա-
ւին հոն կը պահուի այն տունը,
ուր Պալլաք բնակած է: Հոն էր
այն խորհրդաւոր պարտէզը, ուր
Սրսէն Լիւբէն հին արևածամա-
ցոյցի մը ձեղքին մէջ գտաւ ազա-
րակապանի մը աղամանդները:

Պատի մը շարունակութիւնն
էր այն տունը, ուր հինգ անձեր
արշաւած էին, և որուն մօտ կե-
ցած էր օթոմօպիլը. այդ պատ-
ճառով՝ հարիւրապետը չէր կրնար
մտնել: Առաջին կայսրութեան
օրով կառուցւած հին ապարանք-
ներուն երեւոյթը ունէր ան: Կլոր
պատուհանները, գետնայարկին
վրայ վանդակապատ, իսկ առա-
ջին յարկին վրայ՝ փեղկերով,
չէնքին երկայն ճակտին վրայ
շարուած էին: Յաւելուածական
ուրիշ շէնք մըն ալ կար հեռուն,
իբր անկախ թեւ մը:

— Այդ կողմէն ընելիք բան
մը չկայ, ըսաւ հարիւրապետը:
Աւատական բերդի մը նման գոց
է: Ուրիշ կողմ նայի՛նք:

Հին շէնքերը իրարմէ բաժնող
նեղ գոտիները դէպի գետ կ'ուղ-
ղուէին: Այդ գոտիներէն մէկը կը
գտնուէր այն պատին երկայնքը,
որ տունին քովն էր: Հարիւրա-
պետը հոն մտաւ Եա-Պօնի հետ:
Պատը սուր և գէշ դայլախազե-
րով շինուած ու փողոցի լապտե-
րով տկարօրէն լուսաւորւած էր:

— Եա-Պօն, պէտք է մագլցիլ:
Պատը շատ բարձր է: Թերեւս
կարելի ըլլայ բարձրանալ լապ-
տերի դերանին միջոցաւ...:

Սեւամորթին օգնութեամբ,
հարիւրապետը բարձրացաւ մինչև
լապտերը, և իր մէկ ձեռքը
կ'երկարէր արդէն, երբ նշմարեց
որ պատին կատարը ապակիի
կտորներ կային, որոնք բացար-
ձակապէս անմատչելի կը դար-
ձընէին անոր մերձեցումը:

Բաթրիս վար իջաւ զայրա
ցած:

— Կրո՛ղ: Եա Պօն, կրնայի՞ր
ինձի իմաց տալ նախապէս: Ինչ

մնաց որ ձեռքերս պիտի կարտէի:
Ի՞նչ բանի վրայ կը խորհիս: Ին-
չու ուղեցիր ինձի ընկերանալ
ամէն գնով:

Ճամբան դարձւածք մը ու-
նէր հոն: Գոտիք ալ եւս լուսա-
ւորուած չըլլալուն, բոլորովին
մութ էր, ու հարիւրապետը խար-
խափանքով կը յառաջանար:

Սենեկալցին հարիւրապետին
ուսին դպաւ:

— Ի՞նչ կուզես, ըսաւ Եա-
Պօն:

Այդ ձեռքը դէպի պատ մղեց
հարիւրապետը: Հոն դրան մը
խորշը կար:

— Ապահովաբար, դուռ մը
ըլլալու է: Կերեւակայե՞ս որ
այդ դուռը տեսած չէի երբեք:
Եա-Պօնն է որ միայն սուր աչք
ունի՞:

Եա-Պօն լուցկիի տուփ մը
ներկայացուց: Մէկ քանի հատ
վառեց յաջորդաբար, դուռը
քննելու համար:

— Ինչի ի՞նչ ըսի քիչ մը
առաջ, ընելիք բան չկայ, յարեց
հարիւրապետը: Միակտուր տախ-
տակ մըն է, երկաթէ ձողերով և
գամերով ամրացած...: Տե՛ս,
բռնատեղի չկայ այս կողմը...
փականքի ծակ մը կը տեսնուի...:
Ա՛հ, որքան պէտք կայ չափու
վրայ շինուած բանալիի մը...
ճիշդ այն բանալիին տեսակէն
զոր գործակատար մը ասկէ առաջ
յանձնած էր իմ սենեակս:

Հարիւրապետը լսեց: Անհե-
թեթ գաղափար մը կ'անցնէր
մտքէն, այնքան անհեթեթ որ
ինքզինքը անկարող կըզգար դի-
մադրելու անոր թելադրած շար-
ժումին:

Ուստի վերադարձաւ: Իր քով ունէր այդ բանալին: Գրպանէն հանեց զայն:

Դուռը նորէն լուսաւորեցաւ: Փականքին ծակը երեւան եկաւ. հարիւրապետը մէկ անգամէն ծակին մէջ խոթեց բանալին: Դէպի ձախ ձիգ մը ըրաւ. բանալին դարձաւ: Հրեց ու դուռը բացեցաւ:

— Ներս մտնե՛նք, ըսաւ Բաթրիս:

Սեւամորթը աեղէն չերերաց: Բաթրիս հասկցաւ անոր ապշուածեան պատճառը: Մնաց որ ինք ալ զարմացած էր: Ի՞նչ անլուր հրաշքով՝ այդ բանալին ճշդիւ կը յարմարէր այդ դրան: Ի՞նչ հրաշքով՝ այդ բանալին իրեն զրկող անձանօթ մարդը կրցած էր կռահել թէ հարիւրապետը ի վիճակի պիտի ըլլար առանց ո եւ է ազդարարութեան գործածելու զայն...:

Բայց Բաթրիս որոշած էր գործել առանց լուծելու այն հանելուկը, զոր չարածծի դիպուած մը հանոյք կը զգար իրեն ներկայացնելու:

— Ներս մտնենք, դոչեց հարիւրապետը յաղթականօրէն:

Ծառի ձիւղեր կը զարնուէին դէմքին. այն ատեն հարիւրապետը հասկցաւ որ խոտի վրայէն կը քալէր, և իր առջեւ պարտէզ մը կը տարածուէր: Այնքան թանձր մթութիւն մը կը տիրէր որ նրբութեանը չէին նշմարուեր մարմանդներու սև զանգուածին մէջ. մէկ երկու բոպէ քալելէ յետոյ՝ ժայռերու զարնուեցաւ, որոնց վրայէն ջուր կը հոսէր:

— Զի՛ւթ, աղէկ մը թրջեցայ,

անիծած Եա Պօն, քրթմնջեց հարիւրապետը:

Բաթրիս Պէլլալ տակաւին խօսքը շաւարտած, կատարի հաշիւն մը լսուեցաւ պարտէզին խորերէն, և այդ հաշիւնը իսկոյն մօտեցաւ. մեծ արագութեամբ: Ան հասկցաւ որ պահապան շուն մը, իրենց ներկայութիւնը իմանալով վրանին կը վազէր. հակառակ կտրիճ ըլլալուն, սարսուռ մը զգաց, այնքան տպաւորիչ էր գիշերային մթութեան մէջ եղած յարձակումը: Ի՞նչպէս պաշտպանէր ինքզինքը: Եթէ հրագէնի հարուած մը պարպէր ան, ներկայութիւննին մատնած պիտի ըլլար, բայց ստուկէ զատ գէնք չունէր վրան:

Շունը դահալիթօրէն կը յառաջանար, իր սրարշաւ վազքին հանած ազմուկէն դատելով, որ կը յիշեցնէր վարազի մը վազքը թաւուտներուն մէջ: Իր շղթան կտարած ըլլալու էր, որովհետեւ երկաթի ձայն մը կ'ընկերանար: Բաթրիս մութին մէջ տեսաւ որ Եա Պօն առջեւէն կ'անցնէր, զինքը պաշտպանելու համար, և գրեթէ իսկոյն առաջ եկաւ բաղխումը:

— Եա Պօն, ինչո՞ւ չձգեցիր որ ես առջեւէն երթամ: Օ՛ն, մարդս, հիմա կը հասնի՛մ քովդ:

Երկու հակառակորդները գետին գլտորած էին: Բաթրիս ծռեցաւ, ջանալով սեւամորթին օդնել: Կենդանիի մը մազերուն դպաւ, յետոյ՝ Եա Պօնի զգեստներուն: Բայց երկուքը այնքան միակտուր զանգուած մը կը ձեւացնէին գետնին վրայ և այնքան կառաղուծեամբ կը կռուէին որ

հարիւրապետին միջամտութիւնը բանի մը չէր ծառայեր:

Մնաց որ, կարճ տեւեց այդ կռիւը: Բանի մը բոպէ ետքը՝ ալ ևս չէին շարժեր երկու հակառակորդները: Շփոթ հոնդիւն մը կը լսուէր:

— Ի՞նչ կ'ըլլաս, Եա Պօն, կը մրմնջէր հարիւրապետը անձկութեան մատնուած:

Սեւամորթը ոտքի ելաւ մորնչելով: Լուցկիի լոյսով՝ Բաթրիս տեսաւ որ իր միակ թեւովը բռնած էր հոնդացող խոշոր շուն մը, զոր կոկորդէն կը սեղմէր հինգ անոդք մատներուն միջոցաւ: Խորտակուած շղթայ մը կախուած էր անուրէն:

— Շնորհակալ եմ, Եա Պօն: Աղէ՛կ պրծայ: Հիմա կրնաս սղատ ձգել զայն: Ալ եւս անվնաս դարձած ըլլալու է:

Եա Պօն հնազանդեցաւ: Բայց շատ ուժգին սեղմած ըլլալուն համար, շունը պահ մը գալարուեցաւ խոտին վրայ, քանի մը հեծեծիւններ արձակեց ու անշարժ մնաց:

— Խե՛ղճ անասուն, ըսաւ Բաթրիս, իր պարտքը միայն կատարած էր, մեզի պէս գողերու վրայ նետուելով: Հիմա մեր պարտքը կատարենք Եա Պօն, թէեւ նւազ յստակ ըլլայ ան:

Ապակիի պէս փայլող բան մը հարիւրապետին քայլերը ուղղեց և ապաստին մէջ պեղուած սանդուխներու շարքի մը և իրարու վրայ զետեղուած բարձրաւանդակներու միջոցաւ առաջնորդեց դէպի այն թէրասը, որուն վրայ կառուցուած էր տունը: Այդ կողմի բոլոր պատուհանները, փողոցի

պատուհաններուն պէս կլոր ու բարձր, փեղկերով պաշտպանուած էին: Բայց պատուհանէ մը կը մզուէր այն լոյսը, զոր վարէն նշմարած էր Բաթրիս:

Հարիւրապետը Եա Պօնի հրամայեց թաւուտքին մէջ պահուրտիլ. յետոյ ինք շէնքի ճակատին մօտեցաւ, մտիկ ըրաւ, խօսքերու շփոթ շշուկ մը լսեց և ստուգեց որ փեղկերը ամրապէս դոցուած ըլլալուն կարելի չպիտի ըլլար ո՛չ տեսնել և ո՛չ ալ լսել. այսպէս՝ չորրորդ պատուհանէն յետոյ, գաւթիկի մը աստիճաններուն առջեւ հասաւ. դուռ մը կար անոր ծայրը:

— Բանի որ պարտէզին բանալին դրկած են ինձի, ո ե է պատճառ չկայ որ պարտէզին վերայ նայող դուռն ալ չբացուի:

Դուռը բացուած էր: Ներսը, ձայներու շշուկը աւելի որոշ կը լսուէր, ու հարիւրապետը հասկըցաւ թէ այդ շշուկը սանդուխին կողմէ կուգար, և թէ այդ սանդուխը, որ տան անբնակ մասին կը ծառայէր, իր վերեւ տարտամօրէն լուսաւորուած էր:

Բաթրիս վեր ելաւ: Արդարեւ, առաջին յարկին վրայ, կիսաբաց դուռ մը կար: Գլուխը բացածքին մէջ սահեցուց, յետոյ ծռելով ներս մտաւ:

Այն ատեն հարիւրապետը ինքզինքը գտաւ նեղ պատշգամի մը վրայ, որ ընդարձակ սրահի մը կէս-բարձրութեան կը հասնէր: Այդ կալըրիին երկայնքը գլորքերու դարակներ կային, որոնք մինչև ձեղունը կը հասնէին. այդ կալըրին սրահին երեք կողմերուն վրայ կը յատա-

Ջանար և պտուտակի ձևով երկաթէ երկու սանդուխներ պատն ի վար կ'իջնէին:

Գիրքերու դէզեր կուտակուած էին նաեւ բազրիքի ձողերուն դէմ, որ կալըրին կը բաժնէր սրահէն. այսպէս՝ անկարելի էր որ Բաթրիս տեսնուէր վարէն, իրմէ երեք-չորս մէթր ցած, այսինքն գետնայարկը համախմբուած անձերուն կողմէ:

Հարիւրապետը մեղմօրէն մէկդի առաւ զիրքերու երկու դէզեր: Այդ պահուն, ձայներու շուկը ուժգին պոռչտուքի մը փոխուեցաւ, և մէկ ակնարկով նշմարեց որ հինգ անձեր մէկ հողի վրայ կը յարձակէին, և այս վերջինը ինքնապաշտպանութեան ատեն չունեցած, գետին կը տապալէին զայն կատաղի մունջիւններով:

Բաթրիս Պէլվալի առաջին շարժումը եղաւ զոհին օգնութեան հասնիլ: Ետ-Պօնի օգնութեամբ, որ անշուշտ պիտի փութար իր տիրոջ մօտ, եթէ կանչէր, ան պիտի կրնար վախցնել հինգ անձերը: Եթէ չըրաւ ատիկա պատճառը սա է որ անոնք բնաւ զէնք չունէին իրենց վրայ ու սպաննելու մտադիր չէին: Իրենց զոհը անշարժութեան մատնելէ յետոյ՝ կողորդէն, ուսերէն և ոտքերէն բռնեցին: Ինչ պիտի պատահէր:

Հինգ անձերէն մէկը ոտքի ելաւ և պետի մը շեշտովը հրամայեց.

— Կապեցէք զայն...: Բերանը թխմեցէք...: Մնաց որ, եթէ ազաղակէ իսկ, ոչ ոք պիտի լսէ:

Բաթրիս իսկոյն ճանչցաւ մէկը

այն երկու ձայներէն, զոր առտուն լսած էր ճաշարանին մէջ: Այդ անձը փոքրակազմ, նուրբ ու վայելուչ մարդ մըն էր, ձիթագոյն և անդութ դէմքով մը:

— Վերջապէս ձեռք անցուցինք չարագործը: Կը կարծեմ որ այս անգամ բերանը պիտի բանայ: Բարեկամներ, վճռած էք ամէն բան ընելու:

Չորս անձերէն մէկը ատելավառ շեշտով մը գոռաց.

— Պատրաստ ենք ամէն բան ընելու անյապաղ, ինչ որ ալ պատահի:

Այդ մարդը սե ու խոշոր պելս մը ունէր: Բաթրիս ճանչցաւ ճաշարանի միւս անձը, այսինքն քոյր Գօրալիի վրայ յարձակողներէն մէկը, ան որ խոյս տուած էր: Թաղիքէ գօրջ զլիսարկը արթուի մը վրայ դրուած էր:

— Պուրնէֆ, ամէն բանի պատրաստ էք, ինչ որ ալ ըլլայ, այնպէս չէ՞, ըսաւ պետը հեգնօրէն: Օ՛հ, սկսինք պարը: Իմ ծերուկ էսարէսս, չե՞ս ուզեր քու գաղտնիքդ յայտնել: Տեսնե՞նք:

Բոլոր շարժումները ճշգրտուած էին իրենց միջև ու գործը բաժնուած էր ճշգրտօրէն, ինչպէս ցոյց կուտար իրենց գործելակերպը, անհաւատալի մէթոտով մը ու արագութեամբ մը օժտուած:

Մարդը կաշկանդելէ յետոյ՝ վեր հանեցին ու խիտ ցած յենարան ունեցող թիկնաթոռի մը խորը նետեցին զայն. յետոյ իրանը կապեցին չուանի մը միջոցաւ:

Մարդուն սրունգները, միշտ

կապուած, թիկնաթոռին բարձրութիւնը ունեցող ծանր աթոռի մը վրայ դրին, այնպէս որ երկու ոտքերը աթոռէն դուրս երկարեցան: Յետոյ հանեցին անոր կոշիկները ու դուրսաները:

— Գլտորեցէք, ըսաւ պետը: Պարտէզին վրայ նայող չորս պատուհաններէն երկուքին միջև մեծ վառարան մը կար, ուր օճուխի հրաշէկ կրակ մը կը վառէր. տեղ տեղ կրակը ճերմկած էր՝ սաստիկ վառելուն համար:

Մարդիկը առաջ քշեցին զոհը կրող թիկնաթոռը ու աթոռը, և մերկ ոտքերը մօտիկցուցին վառարանին, յիսուն մէթր հեռուութեամբ:

Հակառակ բերանը թխմուած ըլլալուն, զոհը ցաւի վայրագ ճիչ մը արձակեց, և հակառակ կապերուն, սրունգները յաջողեցան կծկելիլ ու գալարելիլ:

— Օ՛հ, աւելի մօտեցուցէք, գոռաց պետը:

Բաթրիս Պէլվալ իր ըէվոլվէրը բռնեց:

— Հիմա ես ալ պիտի սկսիմ, և թոյլ չպիտի տամ որ այդ դըժբախար...:

Բայց այն պահուն երբ հարիւրապետը գործելու պիտի սկսէր, դիպածական շարժումի մը շնորհիւ նշմարեց ամենէն տարօրինակ ու անակնկալ տեսարանը:

Իր դիմաց, ու սրահին միւս կողմը, հարիւրապետին գտնուած պատշգամին վրայ կնոջ գլուխ մը կը տեսնուէր բազրիքին ձողերուն կրթնած գլուխ մը, գունատ, սարսափահար, և որուն աչքերը սոսկումէն խոշորցած,

Միլիոններու Գաղտնիք

խելայեղօրէն կը դիտէին վարը, կարմիր վառարանին առջեւ պատահած դէպքը:

Հարիւրապետը ճանչցած էր քոյր Գօրալին:

Գոյր Գօրալի այդ տան մէջ պահուած, ուր յարձակում գործած էին իր առեւանգիչները, և ուր ինք հարիւրապետն ալ պահուած էր անբացատրելի պարագաներու աջակցութեան շնորհիւ:

Իսկոյն սա գաղափարը ունեցաւ թէ — դէթ առեղծւածներէն մէկը փարատած էր — քոյր Գօրալի իրեն պէս գառնէն յառաջացած ու տուն մտած էր գաւթիկէն, այսպէս ճամբայ բանալով իրեն: Իայց այդ պարագային՝ ինչպէս յաջողած էր այդպիսի ձեռնարկի մը յաջողութեան համար միջոցներ հայթայթել: Մանաւանդ քոյր Գօրալի ինչ ընելու եկած էր հոն:

Բոլոր այդ հարցումները կը ներկայանային հարիւրապետ Պէլվալի մտքին, սակայն չէր փորձեր պատասխանել, այնքան տպաւորուած էր Գօրալիի խելացնոր դէմքէն: Մնաց որ, ալ աւելի վայրագ ճիչ մը լսեցաւ, ու Պէլվալ նշմարեց որ զոհին երկու ոտքերը կը գալարէին վառարանին կարմիր հրարգելին առջեւ:

Բաթրիս այս անգամ Գօրալիի ներկայութեան ազդուած, փափագ չէր զգար զոհին օգնութեան հասնելու: Ան որոշած էր մանկամարդ կնոջ ընթացքին համեմատ վարելի, տեղէն չշարժիլ, ու ոչ մէկ բան չընել, անոր ուշադրութիւնը հրաւիրելու համար:

— Գաղա՛ր, հրամայեց պետը: Ետ քաշեցէք զայն: Անշուշտ կը բաւէ այսքան շարժարանը:

10889 45-68801

Ու ժօտենալով յարեց .

— Սիրելի էսարէս, ի՞նչ կ'ըսես : Այս պատմութիւնը հաճոյ կը թւի՞ քեզի : Եթէ բերանդ չբանաս, մինչև ծայրը պիտի երթանք, ինչպէս կ'ընէին յեղափոխութեան շրջանի աւազակները, որոնք վարպետներ էին : Ուրեմն պիտի խօսիք, այնպէս չէ՞ :

Յիշոց մը արձակեց պետը :

— Հէ՛, ի՞նչ պիտի ըսես : Կը դժկամակի՞ս բերանդ բանալ : Բայց թշուառական յամառ, միթէ չե՞ս ըմբռներ կացութիւնը : Արդեօք պզտիկ յոյս մը ունի՞ս : Ուրեմն խենթ ես որ կը յուսաս : Ո՞վ կրնայ քեզի օգնել : Ծառանեօրդ : Դռնապանը, սենեկապանը և խոհարարապետը իմ մարդիկս են : Եօթը օր արձակուրդ տւի անոնց : Հիմա մեկնած են անոնք : Սենեկապանուհիին, խոհարարուհիին վրայ յոյս դրած ես : Տան միւս ծայրը կը բնակին, և յաճախ ինծի ըսած ես որ ձայնը մինչև հոն չերթար : Յետոյ՝ կնո՞ջդ վրայ յոյս դրած ես : Ան ալ այս սենեակէն հեռու պառկած, բան մը չէ լսած : Կը մնայ ձերուկ քարտուղարդ : Կաշկանդեցիք զայն, երբ քիչ առաջ դուռը բացու մեզի : Պուրնէ՛ֆ, այս կողմէն գործը վերջացնելու ենք :

Թաւ պեխերով մարդը, որ այդ պահուն անթուին կրթնած էր, հասակը ցցեց ու պատասխանեց .

— Ի՞նչ կայ :

— Պուրնէ՛ֆ, ո՛ւր արդեւա՛փակած են քարտուղարը :

— Դռնապանին խցիկը :

— Տիկնոջ սենեակին ուր ըլլալը գիտե՞ս :

— Անտարակոյս, ձեր ըրած ցուցմունքներուն համաձայն :

— Չորսերնիդ հոն գացէ՛ք և քարտուղարը ու տիկինը հոս բերէք :

Չորս անձերը դռնէ մը դուրս ելան, որ քոյր Գօրալիի ներքեւ կը գտնուէր. անոնք տակաւին չանհետացած, պետը զո՞հին վրայ ծռեցաւ և ըսաւ .

— Էսարէս, հիմա առանձին կը գտնուինք : Ուզեցի որ այնպէս ըլլայ : Օգտուինք այս առանձնութենէն :

Պետը ա՛լ աւելի ծռեցաւ եւ այնքան ցած ձայնով մըմնջեց որ Բաթրիս դժարութիւն կը քաշէր լսելու .

— Այս մարդիկը տխմարներ են զոր ուզածիս պիտի գործածեմ. իմ ծրագրիներս անոնց չեմ հաղորդած որչափ որ հնար է : Մինչդեռ մենք, էսարէս, իրարու հետ կրնանք դիւրաւ համաձայնիլ : Չհաւանեցար ըսածիս, ու տեսար թէ գործը ո՛ւր յանդեցաւ : Օ՛ն, էսարէս, յամառութիւն չուղեր և խորամանկութիւն մի՛ բանեցներ ինծի դէմ : Ծուղակին մէջ ինկած, անզօր ու կամքիս ենթակայ ես : Իրաւախօսութեան մը յանգէ, որպէս զի չարչարանքներու չենթարկուիս, որոնք ի վերջոյ կորովիդ պիտի յաղթեն : Հաշտուինք իրարու հետ և հաւասար բաժանումի հիման վրայ բանակցինք : Իրարու դէմ կը սլայքարինք : Երբ միանանք, դիւրաւ պիտի շահինք յաղթութիւնը : Ո՞վ գիտէ թէ յաղթականը պիտի կրնայ բառնալ այն խոչընդոտները որոնք իր դէմ կ'եւլեն : Ահա ինչո՛ւ համար կը

կրկնեմ. երկուքի բաժնենք : Այո՛ կամ ո՛չ :

Ան հանեց զո՞հին բերանը թխմած լաթը և ականջը սրեց : Այս անգամ Բաթրիս չլսեց զո՞հին արտասանած մէկ քանի խօսքերը : Բայց պետը իսկոյն ոտքի ելաւ յանկարծական զայրոյթի պոռթկումով մը :

— Հէ՛, ի՞նչ ըսիր : Ի՞նչ կ'առաջարկես ինծի : Ծիտակը, աղէկ համարձակութիւն այդ տեսակ առաջարկ մը ընելու համար ինծի : Այդ առաջարկը ըրէ՝ Պուրնէ՛ֆի և իր ընկերներուն : Անոնք պիտի ըմբռնեն : Բայց ո՛չ ես, գնդապետ Յաքոբի : Ա՛հ, ես ա՛լ աւելի շատակեր եմ : Կը հաւանիմ բաժնել, բայց ողորմութիւն չեմ ընդունիր երբեք :

Բաթրիս անյազօրէն մտիկ կ'ընէր, ու միեւնոյն ատեն աչքէ չէր հեռացներ քոյր Գօրալին, որուն դէմքը անձկութենէ այլայլած, նմանապէս ուշադրութեամբ կը հետեւէր խօսակցութեան :

Հարիւրապետը կը դիտէր նաև զո՞հը, զոր մասամբ կը ցոլացնէր վառարանին վերեւ դրած հայելին : Չո՞նը ասեղնագործւած թաւիչ սենեկազգեստ մը և շագանակագոյն ֆանէլայէ տաքատ մը կը կրէր. գրեթէ յիսուն տարու մարդ մըն էր, բոլորովին ճաղատ գլխով, լեցուն դէմքով, խոշոր և ծուռ քթով, թաւ յօնքերու տակ մխրճուած աչքերով, ուռած, աղբրեկ և խոշոր մօրուքով ծածկւած այտերով : Մնաց որ, Բաթրիս կրնար աւելի ճշգրիտ կերպով քննել զայն դիմանկարի մը վրայ, որ վառարանին ձախակողմը կախուած էր, առաջին և երկրորդ պա-

տուհանին միջեւ. աղբու, զօրաւոր և խիստ արտայայտիչ դէմք մը ունէր :

— Արևելքցիի մը դէմքն է, ըսաւ Բաթրիս մտովի : Եգիպտոսի և Թուրքիայի մէջ այսպիսի գլուխներ տեսած եմ :

Իոյր այդ անձերուն անունները, գնդապետ Յաքոբի, Մուսթաֆա, Պուրնէ՛ֆ, էսարէս, ինչպէս նաև անոնց շեշտը, վարուկերսը, երևոյթը, սիւլէթը, ամէն ինչ հարիւրապետին կը յիշեցնէր այն տպաւորութիւնները զոր ունեցած էր հոն, Աղեքսանդրիայի օթէլներուն մէջ կամ Վոսփորի ափերուն վրայ, էտիրնէի շուկաներուն մէջ կամ յունական շոգենաւերուն վրայ, որոնք Եգէական ծովը կ'ակօսեն : Լէվանթիներու, Բարիզի մէջ արմատացած լէվանթիներու տիպարներ էին անոնք : Էսարէս պէ՛տ սեղանաւոր մըն էր զոր Բաթրիս կը ճանչնար. նմանապէս իրեն ծանօթ էր գնդապետ Յաքոբի որուն շեշտերէն ու լեզուէն կը հասկցէր որ բանիմաց Բարիզցի մըն էր ան :

Նորէն ձայնի շուկ մը լսուեցաւ դրան կողմէն : Դուռը ուժգնօրէն բացուեցաւ, ու չորս անձեր ներս մտան, կաշկանդուած մարդ մը քաշքրտելով զոր սրահին մուտքին վրայ ձգեցին :

— Ահա՛ ձերուկ Սիմէօնը, գոչեց այն անձը զոր Պուրնէ՛ֆ կ'անուանէին :

— Կինը ո՛ւր է, հարցուց պետը : Յուսամ թէ ձեր տրամադրութեան տակ կը գտնուի :

— Ոչ :

— Ինչպէ՛ս : Փախա՛ւ :

— Պատուհանէն :
 — Բայց պէտք է հետապնդել զայն : Պարտէզը ըլլալու է . . . :
 Կը յիշէք, քիչ առաջ, պահապան շունը կը հայէր . . . :
 — Իսկ եթէ խոյս տւա՞ծ է :
 — Ինչպէ՞ս :
 — Գռիհին վրայէն նայող դռնէ՞ն :
 — Անկարելի է :
 — Ինչո՞ւ :
 — Տարիներէ ի վեր չի գործածուիր այդ դուռը : Նոյն իսկ քանալի չունի :
 — Լաւ, յարեց Պուրնէֆ : Բայց չենք կրնար զայն հետապնդել լապտերներով և ամբողջ թաղը իրար անցընել, կին մը երեւան հանելու համար . . . :
 — Այո՛, բայց այդ կինը . . . :
 Գնդապետ Ֆաքի զայրացած կը թւէր : Դէպի կալանաւորը դառնալով ըսաւ .
 — Բախտ ունիս եղբր, անդգամ ծերուկ : Երկու անգամ է որ կինդ ձեռքէս խոյս կուտայ : Երբեմնի գործը պատմեց ձեզի : Ա՛հ, եթէ սա անիծած հարիւրապետը չըլլար . . . զոր պիտի գտնեմ ի վերջոյ, և որուն սուղի պիտի նստի իր միջամտութիւնը . . . :
 Բաթրիս կատաղութեամբ կը սեղմէր բունցքները : Կը հասկընար այդ մարդուն ըսածը : Քոյր Քորալի իր տան մէջ պահուրտած էր : Հինգ անձերու խուժումէն յանկարծակիի եկած, քոյր Քորալի մեծ ճիգեր ընելով կրցած էր պատուհանէն վար իջնել, թէրասին երկայնքը յառաջանալ մինչեւ դաւթիկը, ընակուած սենեակներուն հանդիպակաց կողմը հասնիլ և մատենա-

դարանի կալըրին ապաստանիլ, ուր ներկայ կը գտնէր իր ամուսինն դէմ մղւած սոսկալի կուրին :
 — Քոյր Քորալիի ամուսինը մի, խորհեցաւ Բաթրիս սարսուղին :
 Եթէ երբեք հարիւրապետը տարակոյս մը ունէր այդ մասին, դահավէժ դէպքերը իսկոյն փարատեցին այդ տարակոյսը, որովհետեւ պետը հեգնորէն կ'ըսէր .
 — Այո՛, ծերուկ էսարէսս, քեզի կրնամ խոստովանիլ թէ կինդ շատ հաճոյ կը թւի ինձի, և որովհետեւ այսօր կէս օրէն ետքը ձեռքէս փախցուցի զայն, կը յուսայի որ այս իրիկուն գործերս կարգադրելէն անմիջապէս յետոյ՝ ուրիշ աւելի հաճելի գործեր պիտի կարգադրէի անոր հետ : Անգամ մը որ իմ իշխանութեանս տակ գտնւէր ան, կինդ իբր պատանդ պիտի ծառայէր. ապահով եղիր որ մեր համաձայնութիւնը կատարելապէս գործադրելէն յետոյ միայն պիտի վերադարձնէի զայն : Էսարէսս, պիտի համաձայնէիր, որովհետեւ չափազանց կը սիրես Քորալին : Շատ իրաւացի կը գտնեմ ատիկա :
 Դէպի վառարանին աջակողմը ուղղւեցաւ և կոճակ մը դարձնելով վառեց ցողացուցիչի մը տակ դրւած ելեկտրական լամբար մը, երբորդ և չորրորդ պատուհանին միջեւ :
 Էսարէսի կենդանագրին քով կար քողածածկւած կենդանագիր մը : Պետը քաշեց վարագոյրը : Քորալի երեւան եկաւ պայծառ լոյսին մէջ :

— Այս տեղի դիտոն է, դիւթունհին, կուռքը, մարգրիտներուն մարգրիտը, սեղանաւոր էսարէս պէյի կայս. մարգրիտը : Որքան գեղեցիկ է : Հիացիր իր փափուկ դիմագծերուն, ձուածեւ դէմքին, հմայիչ վզին ու շնորհալի ուսերուն վրայ : Էսարէսս հոն մեր երկրին մէջ չկայ կին մը որ Քորալիի չափ արժէ . ընդհուպ իմս պիտի ըլլայ, որովհետեւ պիտի գտնեմ զայն : Ա՛հ, Քորալի, Քորալի . . . :
 Բաթրիս մանկամարդ կնոջ նայեցաւ, ու իրեն այնպէս թւեցաւ որ ամօթէն կը շառագունէր դէմքը :
 Ինք հարիւրապետն ալ զայրոյթէն ու բարկութենէն կը սարսուար, ամէն անգամ որ նախատական խօսք մը կ'ըլլար : Արդէն իսկ մեծ վիշտ կը զգար, Քորալին ուրիշի մը կինը ըլլալուն համար, հիմա այդ վշտէն զատ կատաղութիւնը կուսնար Քորալին տեսնելու այդ մարդոց նայածքին տակ, անզօր որսի մը պէս՝ խոստացւած անոր որ է՛ն զօրաւորը պիտի ըլլար :
 Բաթրիս միեւնոյն ատեն մըտովի կը հարցնէր թէ ինչո՞ւ համար Քորալի այդ սրահին մէջ կը մնար : Ենթադրելով իսկ թէ ան չէր կրցած պարտէզէն դուրս ելլել, ան կարող էր տան այդ մասին մէջ երթելեկել, պատուհան մը բանալ և օգնութիւն կանչել : Ո՞վ պիտի արդիւնէր Քորալին այդպէս շարժելու : Անկասկած, մանկամարդ կինը չէր սիրեր իր ամուսինը : Բայց ի՞նչպէս թոյլ կուտար որ շարձարեն այդ մարդը, և նոյնիսկ հանդիսատես կ'ըլլար շարձարանքին, տեսարաններուն էն անուկին կըղիտէր և տառապանքի մանչիւնները կը լսէր :

— Կը բաւէ այսքան անմտութիւն, գոչեց պետը, կենդանագրին վրայ քաշելով վարագոյրը : Քորալի, իմ գերագոյն վարձատրութիւնս պիտի ըլլաս, բայց պէտք է արժանի դառնալ քեզի : Օ՛հ, գործի սկսինք, ընկերներ, և ամուսինն գործը վերջացնենք : Իբր սկզբնաւորութիւն, տասը սանթիմ մօտեցուցէք կրակին : Կ'այրի, այնպէս չէ՞, էսարէս : Բայց անհանդուրժելի չէ տակաւին : Համբերութիւն, աղնիւ բարեկամս, համբերութիւն :
 Պետը քակեց կալանաւորին աջ թեւը, անոր մօտ տարաւ փոքր սեղան մը, որուն վրայ մատիտ և թուղթ դնելէ յետոյ, յարեց .
 — Ահա՛ գրելու համար պէտք եղածը : Քանի որ բերանդ թիմուած ըլլալուն չես կրնար խօսիլ, գրէ : Չես գիտեր թէ ի՞նչ բանի վրայ կը դառնայ խնդիրը, այնպէս չէ՞ : Մէկ քանի նամակ ձարտէ՛, ու ազատ պիտի ըլլաս : Կը հաւանիս : Ո՛չ : Ընկերներ, տասը սանթիմ ալ մօտեցուցէք կրակին :
 Պետը հեռանալով հին գրասենեակին վրայ ձուեցաւ : Բաթրիս աւելի պայծառ լոյսի մը շնորհիւ ձանչցած էր այն մարդը, որ ատենօք Քորալիին կ'ընկերանար մինչեւ հիւրանոց : Յետոյ ըսաւ .
 — Սիմէօն, ու և է շարիք չպիտի հասցնեն քեզի : Գիտեմ թէ արիւղը անձնէր ես, բայց ան քեզ իրազեկ չի պահեր իր մասնաւոր գործերուն : Միւս կողմէ վստահ եմ որ լուռ պիտի մնաս թուրք այս եղածներու մասին, որովհետեւ մեզի դէմ մատնութեան մէկ խօսք պատճառ պիտի ըլլայ արիւղը քան թէ մեր կորստեան : Հասկցար, այնպէս չէ՞ : Լա՛ւ, ինչո՞ւ չես պատասխաներ : Միթէ կոկորդ շա՞տ սեղմեցին չւանկերով : Կե-

ցի՛ր, քեզի՛ օդ առնել պիտի տամ:

Սակայն չարաշուք գործը կը շարունակէր վառարանին մօտ: Տաքութենէն կարմրած երկու ստքերուն մէջէն թափանցիկ կերպով կը անանէր բոցերուն հրացայտ փայլը: Զոհը կը ջանար իր սրունգները քաշել ու ընկերկրի, և թիմուած բերանը խուլ ու անընդհատ հեծեծիւն մը կ'արձակէր:

— Պիտի ձգե՛նք որ այսպէս այրեն մրկեն գայն, ինչպէս վառեակ մը շամփուրէ կ'անցընեն, ըսաւ Բաթրիս մտովի:

Հարիւրապետը Քօրալիի նաչեցաւ: Տեղէն չէր շարժած ան, դէմքը այլափոխուած ու անճանաչելի դարձած, աչքերը սոսկալի ցնորքէն դիւթուած:

— Հինգ սանթիմ ալ մօտեցուցէք, ազազակեց պետը սենեակին ծայրէն, ձերուկ Սիմէօնի կապերը քակելով:

Գործադրեցաւ այդ հրամանը: Զոհը այնպիսի ճիչ մը արձակեց որ Բաթրիս այլայլեցաւ: Բայց նոյն րոպէին իրազեկ եղաւ բանի մը որ իր ուշադրութիւնը չէր գրաւած, կամ գէթ կարելորութիւն չէր ընծայած: Զոհին ձեռքը բռնած էր փոքր սեղանին եզերքը թեթեւ շարժուածներ ընելով, իբր ջղաձգական կծկումներու հետեւանք, մինչ թեւը կրթընած էր մարմարէն վրայ: Դահիճները կը ջանային զոհին սրունգները անշարժ բռնել, առանց այդ մարդոց ու պետին գիտութեանը, որ Սիմէօնով զբաղած էր միշտ. զոհին ձեռքը իր առանցքին վրայ կը դարձնէր զգրոց մը, կը սողոսկէր այդ

զգրոցին մէջ, բէվովէր մը դուրս կը հանէր, ու թիկնաթուռին ետին կը պահէր:

Սօլ յանդգնութիւն մը կ'ենթադրէր այդ արարքը, կամ աւելի ճիշդը յօսլ մտադրութիւն մը. անգորութեան մատնուած՝ զոհը չէր կրնար յուսալ որ հինգ ազատ ու զինուած հակառակորդներու պիտի յաղթէր: Սակայն հայելիին մէջ զոհին դէմքը տեսնելով թաթրիս դիտեց որ վայրագ արտայայտութիւն մը ունէր ան:

— Հինգ սանթիմ ալ մօտեցուցէք, հրանայնց գնդապետ Թաքնի, վառարանին մօտ դառնալով:

Զոհին միտը քննելէ յետոյ՝ ծիծաղելով ըսաւ.

— Մորթը կ'ուռենայ տեղ տեղ, իսկ երակները պայթելու վրայ են: Էսարէս պէյ, լաւ դրութեան մէջ չես գտնւիր, և ես բնաւ չեմ տարակուսիր բարի կամեցողութեանդ վրայ: Սկսա՛ր գրել: Ո՛չ: Ձեռ ուզեր գրել: Ուրեմն կը յուսա՛ս դեռ: Թերևս կնոջդ վրայ դրած ես յոյսդ: Եթէ խոյս տւած ըլլայ իսկ, բան մը չպիտի բռնէ ան: Ուրեմն քթիս կը խընդա՛ս...:

Յանկարծ կատաղութեան մատնուած, ազազակեց ան.

— Կրակին մէջ խոթեցէք ոտքերը, որպէս զի լաւ մը մրկին: Ա՛հ, մօրուքիս կը խնդա՛ս: Ա՛հ, քիչ մը սպասէ, մարդուկս. ես ալ գործին պիտի խառնուիմ, մէկ կամ երկու ականջդ կտրելու համար, ինչպէս կ'ըլլայ իմ երկրիս մէջ:

Պետը իր բաձկոնակէն դաշոյն մը հանեց, որ լոյսերուն տակ շողողաց: Անտոնական անգթութիւն արտայայտող իր դէմքը նողկալի էր: Վայրի ազազակով մը վեր առաւ թեւը և անողոք երեւոյթ մը ստացաւ: Հա-

կառակ իր արագ շարժումին, էսարէս կանխեց գայն:

Բէվովէրը պայթեցաւ ու ժոհնօրէն: Դաշոյնը գնդապետին ձեռքէն վար ինկաւ: Քանի մը րոպէ մնաց իր սպառնական դիրքով, թեւը օդին մէջ առկախ, դաժան աչքերով, կարծես չրմբռնելով իրեն պատահածը: Յետոյ իր զոհին վրայ նետուեցաւ յանկարծ, իր ամբողջ մարմնին ծանրութեամբ անդամալուծելով անոր թեւը, այն պահուն երբ էսարէս նշան կ'առնէր մեղսակիցներէն մէկուն:

Ան կը շնչէր տակաւին: Կակաղելով ըսաւ.

— Ա՛հ, անբա՛ն... սպաննեց զիս... բայց դուն կորստեան պիտի մատնուիս, էսարէս...: Կանխատեսած էի այս պարագան: Եթէ այս զիշեր չվերադառնամ, ոստիկանութեան տնօրէնը նամակ մը պիտի ստանայ... որով քու մատնութիւնդ պիտի իմացելի էսարէս... ամբողջ պատմութիւնդ և ծրագիրներդ երեւան պիտի ելլեն...: Ա՛հ, թշուառակա՛ն...: Ի՛նչ տխրութիւն...: Երկուքնիս կրնայինք շատ լաւ համաձայնիլ իրարու հետ...:

Պետը քանի մը շփոթ խօսքեր ալ մըմնջեց ու գետին ինկաւ: Մեռած էր ան:

Թերեւս այդ թատերական անակնկալէն աւելի պետին ըրած յայտնութիւնը և զոհը ու անոր վրայ յարձակողները ամբաստանող նամակը պահ մը ապշութիւն պատճառեցին: Պուրնէֆ գինաթափ ըրած էր էսարէսը: Այս վերջինը կրցած էր իր սրունգները ծալել, քանի որ ալ եւս ոչ ոք կը բռնէր աթոռը ու տեղէն կը շարժէր:

Սակայն լուութեան հետ աւելի կը սաստկանար այդ տեսարանին ձգած տպաւորութիւնը: Գետին

փռւած էր դիակը ու արիւն կը հոսէր գորգին վրայ: Քիչ մը անդին, Սիմէօն անշարժ կեցած էր: Իսկ զոհը, միշտ կապուած, բոցերուն առջեւ կը գտնուէր, որոնք պատրաստ էին միտը լափլիզելու: Զոհին քով կեցած էին չորս դահիճները. ասոնք թերեւս կը վարանէին իրենց բռնելիք ընթացքին վրայ, բայց դէմքերնին ցոյց կուտար այն անողոք որոշումը, որով կ'ուզէին թշնամին զսպել ու է միջոցով:

Պուրնէֆ, որուն կարծիքը կը հարցնէին ընկերները իրենց նայուածքով, ամէն ինչ ընելու պատրաստ կը թւէր: Բաւական յաղթանդամ և հուժկու մարդ մըն էր, շրթունքին վրայ ցցւած պիտերով զոր Բաթրիս Պէլլալ նշմարած էր: Պետէն նւազ անգութ, իր երեւոյթով, նւազ վայելուչ ձեւով ու նւազ հեղինակաւոր, աւելի պաղարիւնութիւն ու հանդարտութիւն ցոյց կուտար:

Գալով գնդապետին, իր մեղսակիցները չէին զբաղեր անով: Իրենց կատարած գործը թոյլ չէր տար որ սնտոի կարեկցութիւն մը ունենան անոր նկատմամբ:

Վերջապէս Պուրնէֆ վճռական որոշում մը տուաւ իր ծրագիրը պատրաստած անձի մը պէս: Դրան մօտ դրւած թաղիքէ գորշ գլխարկը առաւ, և անոր մէջէն հանեց փոքր ծրարիկ մը, որուն տեսքը սարսուռ ազդեց Բաթրիսի: Կարմիր նուրբ լար մըն էր, նման անոր զոր գտած էր Մուսթաֆա Րօվալօֆի վիզը, Եսօնի կողմէ ձերբակալուած առաջին մեղսակիցը:

Պուրնէֆ պարզեց լարը,

երկու ծայրերէն բռնեց, ծուռզին վրայ փորձեց անոր հաստատունութիւնը. յետոյ էսարէսի մօտ դառնալով անոր վիզը անցուց, բերանը թխմուած լաթը հանելէն յետոյ:

— Էսարէս, չպիտի չարչարեմ քեզ, ըսաւ Պուրնէֆ, այնպիսի հանդարտ շեշտով մը որ աւելի սպաւորիչ էր քան գնդապետին զայրոյթը և ծաղրանքները: Չարչարանքը այնպիսի բան մըն է որ նողկանք կ'ազդէ ինծի, և չեմ ուզեր այդ միջոցին դիմել: Գիտես թէ ի՞նչ պէտք է ընես, ու ես գիտեմ թէ ի՞նչ պէտք է ընեմ, Բառ մը քու կողմէդ, գործ մը իմ կողմէս, և անա ամէն ինչ վերջացած կ'ըլլայ: Այդ բառն է այո՛ կամ ո՛չ զոր պիտի արտասանես: Այն գործը զոր պիտի կատարեմ ի պատասխան այոյսիդ կամ ոչիդ, ազատ արձակումը պիտի ըլլայ:

Քանի մը երկվայրկեան լուռ մնալէ յետոյ, յայտարարեց Պուրնէֆ.

— Եւ կամ թէ մահդ:

Այդ փոքր պարբերութիւնը պարզ ու հաստատակամ շեշտով արտասանուած, անդառնալի դատավճիռի մը նշանակութիւնը ունենալ կը թւէր: Սա ստոյգ էր որ էսարէս բացարձակ անձնատուութեամբ մը միայն կրնար խուսափիլ իրեն սպասող վախճանէն: Մէկ վայրկեան չանցած, կամ պէտք է խօսէր և կամ պէտք է մեռնէր:

Բաթրիս անգամ մըն ալ դիտեց քոյր Քորալին, պատրաստ միջամտելու, եթէ նշմարէր անոր մէջ կրաւորական սոսկումէն

աարբեր բան մը: Բայց մանկամարդ կնոջ դիրքը չէր փոխուած: Ուրեմն անգգած կը մնար էն ծանրակշիռ դէպքերուն, նոյնիսկ ամուսնին սպառնացող վտանգին առջեւ:

— Համաձայն ենք, այնպէս չէ՞, ըսաւ Պուրնէֆ իր մեղսակիցներուն:

— Կատարելապէս համաձայն, յարեց մեղսակիցներէն մէկը:

— Կը ստանձնէ՞ք ձեր պատասխանատուութեան բաժինը:

— Կը ստանձնենք:

Պուրնէֆ իրարու մօտեցուց ձեռքերը ու խաչաձեւեց, այնպէս որ լարը էսարէսի վիզը սեղմեց: Յետոյ թեթեւօրէն սեղմեց, որպէս զի ճնշումը զգացելի ու չոր շեշտով մը ըսաւ.

— Այո՛ կամ ո՛չ:

— Այո՛:

Ուրախութեան մրմունջ մը լուեցաւ: Մեղսակիցները շունչ կ'առնէին, ու Պուրնէֆ գլուխը ցնցեց գլխի հաւանութեան նշանով:

— Ա՛հ, կ'ընդունի՞ս... ձիւղատենն էր... չեմ կարծեր թէ ու եւ է մէկը այնքան մօտ գտնուած ըլլայ մահուան որքան դուն, էսարէս:

Առանց լարը թուլցնելու, Պուրնէֆ յարեց.

— Ուրեմն պիտի խօսիս: Բայց կը ճանչնամ քեզ, և քու պատասխանդ զարմանք կը պատճառէ ինծի, որովհետեւ գնդապետին ըսած էի թէ մահու ստուգութիւնն իսկ չպիտի հարկադրէր քեզ՝ զաղտնիքդ խոստովանելու: Կը սխալի՞մ միթէ:

Էսարէս պատասխանեց.

— Ոչ մահը, ոչ ալ չարչարանքը...:

— Ուրեմն ուրի՛շ բան պիտի առաջարկես մեզի:

— Այո՛:

— Կ'արժէ՞ այդ ուրիշ բանը:

— Այո՛: Քիչ մը առաջ գնդապետին առաջարկեցի արդէն, երբ դուրս ելած էիք դուք: Բայց ուզելով ձեզ մատնել և ինծի հետ բանակցիլ զաղտնիքին ամբողջութեան մասին, ան մերժեց այդ առաջարկը:

— Ինչո՞ւ ընդունի՞մ զայն:

— Այո՛ կամ ո՛չ. դուն կ'ըմբռնես այն բանը զոր չըմբռնեց գնդապետը:

— Ուրեմն իրաւախօնութիւն կ'առաջարկես, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Դրամի՞ մասին:

— Այո՛:

Պուրնէֆ ցնցեց ուսերը:

— Անտարակոյս, քանի մը հազարնոց պանքնօթ: Կը կարծե՞ս որ Պուրնէֆ ու երկու ընկերները այդքան միամիտ են: Էսարէս, ինչո՞ւ համար կ'ուզես որ իրաւախօնութեան յանգինք: Գրեթէ ամբողջութեամբ գիտենք ձեր զաղտնիքը...:

— Դիտէ՞ք թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ այդ զաղտնիքը,

բայց չէք գիտեր թէ ի՞նչ միջոցներու պէտք կայ՝ զայն օգտագործելու համար: Նոյնպէս լուր չունիք թէ ո՞ւր կը գտնուի ան: Խնդրը հոտ է:

— Երեւան պիտի հանենք:

— Երբեք:

— Այո՛, քու մահդ պիտի դիւրացնէ փնտռութեանը:

— Իմ մահս: Մէկ քանի ժամէն, գնդապետին մատնութեան շնորհիւ, նեղը դուրս, պիտի ձերբակալուիք հաւանաբար, և անկարող պիտի ըլլաք հետազօտութիւնները շարունակելու: Հետեւաբար ընտրութեան իրաւունք չունիք: Կամ ձեզի առաջարկած դրամս կ'ընդունիք, և կամ... բանտ կ'երթաք:

— Իսկ եթէ ընդունինք, եր՞բ պիտի առնենք դրամը, ըսաւ Պուրնէֆ, որուն վրայ աղդած էր այդ պատճառաբանութիւնը:

— Անմիջապէս:

— Ուրեմն հո՞ս է գումարը:

— Այո՛:

— Աննշան գումար մը, ապահովաբար:

— Ոչ... քու յուսացածէդ շատ աւելի մեծ գումար մը:

— Որքան:

— Չորս միլիոն:



Գ.

ԱՄՈՒՍԻՆԸ ԵՒ ԿԻՆԸ

Մեղսակիցները ընդոտտ չար-
ժուժ մը ըրին. երեկտրական ցրն-
ցուժ մը ունեցած էին կարծես:
Պուրնէֆ տենդագին շեշտով մը
հարցուց.

— Ի՞նչ կ'ըսես:

— Չորս միլիոն կ'ըսեմ քեզի.
ձեռքէ իւրաքանչիւրին մէկ միլիոն
կ'իջնայ:

— Ի՞նչ կ'ըսես... չորս մի-
լիոն... ապահով ես...:

— Չորս միլիոն...:

Այդ դուժարը այնքան մեծ և
առաջարկը այնքան անյուսալի էր
որ մեղսակիցներուն տպաւորու-
թիւնը ունեցաւ նաև Բաթրիս
Պէլվալ: Անոնք խորհեցան որ
ձուղակ մը կրնար ըլլալ, ու
Պուրնէֆ չկրցաւ ինքզինքը զըս-
պել, ըսելու համար.

— Արդարև, այդ առաջարկը
կը գերազանցէ մեր կանխատե-
սութիւնները...: Ուստի կը խոր-
հիմ թէ ինչո՞ւ այդ առաջարկը
կ'ընես:

— Աւելի՞ քիչով պիտի գո-
հանայիք:

— Այո՛, ըսաւ Պուրնէֆ ան-
կեղծօրէն:

— Դժբախտաբար չեմ կրնար
աւելի քիչ տալ: Մահւընէ խու-
սափելու համար մէկ միջոց միայն
ունիմ, այն է դրամարկըս բա-
նալ: Արդ, իմ դրամարկըս չորս
ծրար հազար ֆրանքնոց թղթա-
դրամ կը պարունակէ:

Պուրնէֆի զարմանքը չէր ան-

ցած տակաւին, ու ա՛լ աւելի կը
կասկածէր հիմա: Ուստի հար-
ցուց.

— Ի՞նչ ապահովութիւն ու-
նիս որ չորս միլիոնը առնելէ
յետոյ նորէն չպիտի պահանջենք:

— Ի՞նչ բան: Տեղի՞ն գաղտ-
նիքը:

— Այո՛:

— Ոչ, քանի որ գիտէք թէ
կը նախընտրեմ մեռնիլ քան թէ
յայտնել այդ բանը: Չորս մի-
լիոնը առաւելագոյն դուժարն է:
Կը հաւանի՞ս: Ի փոխարէն ո և է
խոստում, ո և է երդում չեմ
ուղեր, կանխաւ վստահ ըլլալով
թէ զբաւանիդ դրամով լեցնելէ
յետոյ, միակ գաղափար մը պիտի
ունենաք, այն է կծիկը դնել,
առանց սպանութիւն գործելու,
որ կարող է ձեզ կորստեան մատ-
նել:

Այդ պատճառաբանութիւնը
այնքան համողիչ էր որ Պուրնէֆ
չվիճաբանեցաւ այլ ևս:

— Դրամարկըս սա սենեակին
մէջ կը գտնուի, ըսաւ Էսարէս:

— Այո՛, առաջին և երկրորդ
պատուհաններուն միջեւ, իմ
դիմանկարիս ետին:

Պուրնէֆ վար առնելով պատ-
կերը, ըսաւ.

— Բան մը չեմ տեսներ:

— Դրամարկըն շուրջը կը
գտնուին կեղերոնական փոքր տա-
պակին զարդական ցցւակները:
Մէջտեղը կայ ոչ թէ փայտէ այլ
երկաթէ կոճակ մը. տապակին

չորս անկիւնները գտնուող այդ
կոճակները դէպի ալ կը դառնան
յաջորդական կեռերով. առոնք
մէկ բառ կը ձեւացնեն, «Քօրա»,
որ փականքին թիւը կը ներկա-
յացնէ:

— Առաջին չորս տառերը Քօ-
րալիի, յարեց Պուրնէֆ, որ Էսա-
րէսի պատուէրները կը գործադ-
րէր:

— Ոչ, ըսաւ Էսարէս, այլ
առաջին տառերն են Քօրանին:
Հասկցա՞ր:

Մէկ բոպէ ետքը, Պուրնէֆ
պատասխանեց.

— Հասկցայ: Բանալին ո՞ւր է:

— Բանալի չկայ: Բառին հին-
գերորդ տառը՝ և, կեղերոնը կը
գտնուի:

Պուրնէֆ այդ հինգերորդը
դարձուց և զսպակ մը երեւան
եկաւ:

— Կը բաւէ որ քաշես զայն,
հրամայեց Էսարէս: Ճակատի քա-
րերուն մէջ պեղւած է ան: Ձեռքդ
երկնցո՞ւր: Չորս թղթապանակ
պիտի գտնես հոն:

Արդարև, այդ պահուն, Բաթ-
րիս Պէլվալ կը սպասէր որ ան-
սովոր դէպք մը պիտի խանգարէր
Պուրնէֆի այդ փնտառուքները,
և ան պիտի իջնար յեղակարծօրէն
բացւած անդուդի մը մէջ, Էսա-
րէսի չարաղիւթութեամբ: Երեք
մեղսակիցներն ալ այդ վախը ու-
նէին, որովհետեւ գոյներնին նե-
տած էր, և նոյն իսկ Պուրնէֆ
զգուշաւորութեամբ ու կասկածով
կը շարժէր:

Պուրնէֆ ի վերջոյ ետ դարձաւ
ու գնաց Էսարէսի քով նստաւ:
Ձեռքին մէջ ունէր չորս թղթա-
պանակներու ծրար մը, կտաւէ
փոկով իրարու կապւած. անոնք
կարճ բայց շատ հաստ էին: Իրա-

րու ետեւէ բացաւ զանոնք, օ-
ղակը քակելէ յետոյ:

Պուրնէֆի սրունքները, ուր
դուժ էր թանկագին բնուր, կը
դողդոջէին. երբ զբաւանին մէջ
խոթեց թղթագրամներու խոշոր
տրցակ մը, կարծես թէ տենդէն
դողացող ձերուների մը նմանէր
ան:

Ու Պուրնէֆ մրմնջեց.

— Հազարնոց թղթադրամներ
են... հազարնոց թղթադրամնե-
րու տասը ծրար:

Իրարու հետ կուելու պատ-
րաստ մարդոց պէս իւրաքան-
չիւր մեղսակից ձեռք անցուց
թղթապանակ մը, մէջը պրպտեց
ու մրմնջեց.

— Տասը ծրար... հաշիւը
ճիշտ է... հազարնոց տասը ծրար:

Մեղսակիցներէն մէկը խեղ-
դուկ ձայնով մը զոչեց.

— Հեռանա՛նք հոսկէ... հե-
ռանանք հոսկէ...:

Յանկարծական վախ մը խե-
լայեղ դարձուցած էր զանոնք:
Չէին կրնար երեւտիկայել թէ Է-
սարէս այդպիսի հարստութիւն
մը իրենց յանձնէր, առանց ծը-
բագիր մը ունենալու, որով ետ
պիտի առնէր իրենցմէ՝ սենեա-
կէն տակաւին դուրս չելած:
Ստուգութիւն մըն էր ատիկա:
Ձեղունը իրենց գլխուն վրայպիտի
փէր: Պատերը իրարու պիտի
մնային, խեղդելու համար մեղ-
սակիցները, իրենց անհասկնալի
հակառակորդը խնայելով:

Բաթրիս ալ տարակոյտ չունէր
այդ մասին: Աղէտը մօտալուս էր,
ու Էսարէսի անմիջական փոխ-վրէ-
ժը անխուսափելի: Անոր պէս
զօրաւոր ըմբիշտի երեւոյթ ունե-

ցող մարդ մը այդպէս դիւրաւ չէր յանձնէր չորս միլիոնի գումար մը, եթէ որոշ մտադրութիւն մը չունենար: Բաթրիս ճնշւած ու շնչահատ կը զգար ինքզինքը: Եղերական տեսարաններու սկզբնաւորութիւնէն ի վեր, որոնց ներկայ գտնուած էր, Բաթրիս աւելի բուռն յուզումով մը չէր սարսուցած. դիտեց որ Քորալիի դէմքն ալ միևնոյն անձկութիւնը կը յայտնէր:

Սակայն Պուրնէֆի իր պաղարիւնութիւնը գտաւ քիչ մը, ու մեղսակիցները վար դնելով ըսաւ.

— Անմտութիւն չուզեր: Կարող է Սիմէօնի օգնութեամբ կայերը քակել և մեր ետեւէն վազել:

Չորս մեղսակիցները մէկ ձեռքով թիկնաթուռին կապեցին էսարէսը, մինչ միւս ձեռքով կառչած էին իրենց թղթապանակներուն: Էսարէս քրթմիջեց.

— Տխմարներ, հոս եկած էիք, գաղտնիք մը կորզելու համար ինչ, ու հիմա խելքերնիդ կը կորսնցնէք չորս միլիոնի ողորմելի գումարին համար: Ի՞րաւ որ, գնդապետը աւելի խօսք հասկցող մարդ էր:

Նորէն կաշկանդեցին զայն, ու Պուրնէֆի բուռնցքի սոսկալի հարւած մը իջեցուց Պուրնէֆի գլխուն, որ խելակորոյս եղաւ:

— Այսպէս մեր մեկնումը ապահոված կ'ըլլայ, ըսաւ Պուրնէֆի:

Մեղսակիցներէն մէկը հարցուց.

— Գնդապետը հո՞ս պիտի ձգենք:

— Ինչո՞ւ չէ:

— Արդէն մեր շահը կը պահանջէ որ էսարէսը կողմանակի դիրքի մը մէջ ձգենք: Մեր ամէնուն շահը կը պահանջէ որ թէ՛ էսարէս և թէ՛ մենք կծիկը դնենք կարելի եղածին չափ շուտ, գնդապետին անիծեալ նամակը ոստիկանական տնօրէնութեան չհասած, այսինքն կէս օրէն առաջ:

— Յետո՞յ:

— Օթօմօպիլին մէջ դնենք գնդապետին մարմինը և ձամբուն վրայ տեղ մը ձգենք զայն: Ոստիկանութիւնը թող գործին մէջէն ելլէ:

— Հապա իր վրայ գտնուած թուղթե՞րը:

— Ճամբան կը խուզարկենք: Օգնեցէք ինծի:

Վէրքը կապեցին, որպէս զի արիւն չհոսի. յետոյ վերցուցին դիակը, իւրաքանչիւրը մէկ անդամէն բռնելով, այսպէս դուրս ելան, առանց բոպէ մը ձեռքերնին հեռացնելու իրենց թղթապանակին վրայէն:

Բաթրիս լսեց որ մեղսակիցները փութով կը յառաջանային ուրիշ սենեակի մը մէջէն ու քիչ յետոյ կը կոխկրտէին անդաստակին հնչուն սալաքարերը:

Էսարէս ու Սիմէօն տեղերնուն չերերացին:

Հարիւրապետ Պէլվալ լսեց մեկնումի բոլոր ազմուկները, կառանցիկ դրան շառաչումով գոցելը, օթօմօպիլի մօթէօրին ձայնը ու վերջապէս հեռացող օթօմօպիլին խաղուքը:

Աս եղաւ ամէնը: Ոչ մէկ դէպք պատահած էր: Մեղսակիցները չորս միլիոն ֆրանքով խոյս կուտային:

Նրկարատեւ լուսութիւն մը տիրեց, որու միջոցին Բաթրիս միշտ անձկութեանմասնուած էր: Ան չէր կարծեր որ գործը իր վերջին փուլին մէջ մտած ըլլար, և անակնկալներէ շատ կը վախնար, որոնք կրնային պատահիլ տակաւին. ուստի ուղեց իր ներկայութիւնը մասնանշել Քորալիի:

Նոր պարագայ մը թոյլ չուաւ որ այդ բանը ընէ: Քորալի ոտքի ելած էր:

Մտնկամարդ կնոջ դէմքը սոսկումի և հարեկումի միեւնոյն արտայայտութիւնը չունէր այլ ևս. թերեւս Բաթրիս աւելի ահաբեկեցաւ, տեսնելով թէ անոր աչքերը անսովոր փայլ մը կը ստանային և յօնքերը ու շրթունքը կը կծկէին: Հասկցաւ որ Քորալի կը պատրասուէր գործելու:

Ի՞նչ ուղղութեամբ: Տոսմին վերջը եկած էր արդեօք:

Քոյր Քորալի ուղղեցաւ դէպի այն անկիւնը, ուր իր կողմէ կախած էր շարժուն սանդուխներէն մէկը, ու յամբօրէն վար իջաւ, առանց փորձելու մեղմացնել իր ոտնաձայնը:

Ամուսինը անպատճառ կը լըսէր այդ ոտնաձայնը: Մնաց որ, Բաթրիս հայելիին մէջ տեսաւ թէ էսարէս իր գլուխը կը ցցէր ու նայւածքով կը հետեւէր քոյր Քորալիի:

Այս վերջինը կանգ առաւ հոն:

Ու է վարանում չկար իր ընթացքին մէջ: Իր ծրագիրը որոշ էր և զայն գործադրելու լաւագոյն միջոցին վրայ կը խորհէր:

— Ա՛հ, ի՞նչ կ'ընէք, քոյր Քորալի, ըսաւ Բաթրիս մտովի:

Ընդոտա շարժում մը ըրաւ Բաթրիս: Քոյր Քորալիի նայւածքին ուղղութիւնը և սեւեռուն արտայայտութիւնը ի վեր կը հանէին իր թաքուն մտածումը: Քորալի նշմարած էր գնդապետին ձեռքէն դետին ինկած դաշոյնը:

Բաթրիս բնաւ տարակոյս չունէր որ Քորալի կ'ուզէր այդ դաշոյնը ձեռք անցնել, ամուսինը սպաննելու համար: Մարդասպանութեան կամքը տպաւորւած էր իր գունատ դէմքին վրայ, այնպէս որ մանկամարդ կինը շարժում մը չըրած, սոսկումի ընդոտա ցնցում մը ունեցաւ էսարէս, և ջանաց մկանային ուժով փրցնել զինքը կաշկանդող կապերը:

Քորալի յառաջացաւ, նորէն կանգ առաւ, ու յախուռն շարժումով մը գետնէն վերցուց դաշոյնը:

Իսկոյն երկու քայլ ևս յառաջացաւ: Այդ պահուն կը գրտնըւէր այն թիկնաթուռին աջակողմը, ուր էսարէս պառկած էր: Եթէ էսարէս գլուխը դարձնէր քիչ մը, պիտի տեսնէր մանկամարդ կինը: Ահաբեկ վայրկեան մը սահեցաւ: Այր ու կին զերար կը դիտէին:

Բաթրիսի մաքին և գիտակցութեան խորը կ'անդրադառնար գաղափարներու, երկիւղներու, ատելութիւններու, սանձարձակ և հակամարտ կիրքերու եռուղեք, որ տակն ու վրայ կ'ընէր այդ երկու անձերուն ուղեղը, մինչ անոնցմէ մէկը պիտի սպաննէր, իսկ միւսը պիտի մեռնէր:

Ի՞նչ ընելու էր Բաթրիս: Ի՞նչ մասնակցութիւն պիտի ունենար այն տուամին մէջ, որ իր աչքերուն առջեւ տեղի կ'ունենար:

Պէ՛տք էր միջամտել, Բօրալին արգելէր որ անդարմանելի արարքը չգործէ, եթէ ոչ պարտէր իր բէվովէրով ջախջախել ամուսնին գլուխը:

Բայց ճշմարտութիւնը ըսելու համար, Բաթրիս Պէլվալ սկիզբէն իսկ զայրագին հետաքրքրութիւն մը ցոյց կուտար, զգացում մը որ միւսներուն հետ կը խառնէր, կը տիրապետէր իր վրայ և ցնորական կը դարձնէր ամէն ներքին պայքար: Մշուշապատ դործի մը գաղտնիքը հասկնալու համար ցոյց տրւած տափակ հետաքրքրութիւն մը չէր ան, այլ աւելի բարձր հետաքրքրութիւն մը, իր սիրած կնոջ խորհրդաւոր հողին ճանչնալու համար. այդ կինը դէպքերու յորձանքէն քշւած ու յանկարծ ինքզինքին տէր դարձած, էն անարկու որոշումը կուտար կատարեսլ ազատութեամբ ու սպաւորիչ հանդարտութեամբ մը: Հիմա ուրիշ խնդիրներ կը ներկայանային իր մտքին: Ինչո՞ւ այդ որոշումը կուտար: Վրէ՛ժ մըն էր թէ պատիժ կամ ատելութեան յագեցում:

Բաթրիս Պէլվալ անշարժ մնաց:

Բօրալի թեւերը վեր առաւ: Ամուսինը գերագոյն ճիգեր մատնող յուսահատական շարժումներ իսկ չէր բներ այլ եւս: Իր աչքերուն մէջ ո՛չ աղերսանք կար և ոչ ալ սպառնալիք: Համակերպած մարդու մը երեւոյթը ունէր: Կը սպասէր ան:

Անոնցմէ քիչ մը հեռու, ծերուկ Սիմէօն, միշտ կաշկանդւած, իր արմուկներուն վրայ կրթնած էր ու խելայեղ նայւածքներ կ'ուզէր:

Բօրալի նորէն վեր առաւ թեւերը: Իր ամբողջ էութեամբ կը բարձրանար ու կը մեծնար անբեւոյթ խոյանքի մը մէջ, ուր բոլոր ուժերը կը ծառայէին իր կամքին: Բօրալի հարւածը իջեցնելու վրայ էր:

Սակայն իր նայւածքը նւազ խիստ ու նւազ մռայլ էր հիմա: Բաթրիսի այնպիսի թւեցաւ որ վարանում մը կար Բօրալիի աչքերուն մէջ: Ան կ'արտայայտէր ոչ թէ իր սովորական քաղցրութիւնը, այլ քիչ մը կանացի շնորհ:

— Ա՛հ, քոյր Բօրալի, անա՛խնքզինքդ գտար: Հիմա քեզ կը ճանչնամ: Ի՛նչ որ ալ ըլլայ այն իրաւունքը դոր ինքզինքիդ տրւած ես, այդ մարդը սպաննելու համար, չախտի սպաննես զայն... ու կը նախընտրեմ որ այդպէս ըլլայ:

Մանկամարդ կնոջ բազուկը յամբօրէն վար ինկաւ, իր մարմնին երկայնքը: Դիմադիծերը թուլցան: Բաթրիս կռահեց որ անհուն սիրտիանքը դոր կը զգար Բօրալի, ազատելով զինքը սպանութեան մղող սեւեռուն գաղափարին ճնշումէն: Ապշութեամբ քննեց իր դաշոյնը. կարծես անուելի մղձաւանջէ մը արթնցած էր: Յետոյ ամուսնին վրայ ծըռելով սկսաւ քակել անոր կապերը:

Բօրալի ակներեւ խորշանքով մը կ'ընէր այդ բանը, զգուշանալով ձեռք դպցնելէ և անոր նայւածքէն խուսափելով: Մէկիկ մէկիկ խղեց կապերը: Էսարէս ազատ էր ալ եւս:

Ամէնէն շմեցուցիչ բանը

պատահեցաւ այն ատեն: Առանց շնորհակալութիւն յայտնելու իր կնոջ, և առանց զայրանալու անոր դէմ, անդուժ տանջանքի մը մատնւած այդ մարդը, որ տակաւին կը տառապէր, դանդաշուն ու մերկ ոտքերով խուժեց սեղանին վրայ դրւած հեռաձայնի դործիքի մը մօտ. հեռաձայնը թելերով կապւած էր պատին:

Սովալուկ մարդու մը կը նմանէր, որ հացի կտոր մը նըլմարելուն պէս՝ անյագօրէն կը նետուի անոր վրայ: Փրկութիւնը, դէպի կեանք վերադարձն էր ատ: Էսարէս, դողդոջուն, հեռաձայնի ընկալուչը կախւած տեղէն առաւ ու գոչեց.

— Սանթրալ, 39—40.

Յետոյ իր կնոջ դառնալով իսկոյն, զոռաց.

— Կորուէ՛:

Բօրալի չլսել ձեւացուց: Ծերուկ Սիմէօնի վրայ հակած, անոր կապերն ալ կը քակէր:

Էսարէս հեռաձայնի դործիքին առջև անհամբերութեան նշաններ ցոյց կուտար.

— Ալօ՛, օրիորդ... ոչ թէ վաղւան այլ այսօրւան համար է, և իսկոյն... թիւ 39—40... իսկոյն...:

Ու խօսքը Բօրալիի ուղղելով հրամայական շեշտով մը կրկնեց.

— Կորուէ՛...:

Մանկամարդ կինը նշանացի հասկցուց թէ չախտի հեռանար, և թէ ընդհակառակը կ'ուզէր մտիկ ընել:

Էսարէս իր բուռնցքը ցոյց տալով, կրկնեց.

— Կորուէ՛, կորուէ՛...: Բեզի կը հրամայեմ որ հոսկէ հեռանաս:

Սիմէօն, դուռն ալ կորուէ՛: Ծերուկ Սիմէօն ոտքի ելաւ և դէպի Էսարէս յառաջացաւ: Կարծես կ'ուզէր խօսիլ և բողբոջել: Բայց իր շարժումը անորոշ կը մնար. պահ մը խորհրդածելէ յետոյ՝ դէպի դուռ ուղղեցաւ, առանց բառ մը արտաբերելու, և դուռն ելաւ:

— Կորուէ՛, կորուէ՛, յարեց Էսարէս սպաննազին:

Բայց Բօրալի մօտեցաւ ամուսնին ու թեւերը խաչածեց այնպիսի յամառութեամբ մը որ դիմացինին ասպարէզ կը կարդար կարծես:

Նոյն միջոցին հեռաձայնի հազորդակցութիւնը վերահաստատւած ըլլալու էր, քանի որ Էսարէս հարցուց.

— Թիւ 39-40. լա՛ւ:

Էսարէս կը վարանէր: Բօրալի ներկայութիւնը շատ անհաճոյ կը թւէր անոր. չէր ուզեր որ իր ըսելիքները լսէ ան: Բայց ատենը կ'անցնէր: Իսկոյն իր որոշումը տուաւ և անգլիերէն լեզուով ըսաւ.

— Դո՛ւն ես, Կրէկուար...: Էսարէսն եմ...: Ալօ՛...: Ալօ՛, քեզի կը հեռաձայնեմ Բէյնուար փողոցէն...: Ատեն չկորսնցընենք...: Մտիկ ըրէ՛...:

Էսարէս նստեցաւ ու շարունակեց.

— Աւասիկ: Մուսթաֆա մեռաւ: Նոյնպէս գնդապետը...: Բայց մի ընդմիջեր, եթէ ոչ բաներնիս բուսած է...: Այո՛, քու բանդ ալ բուսած է...: Մտիկ ըրէ՛, ամենքն ալ հոս եկան, զնդապետը, Պուրնէֆ, ամբողջ խումբը, ու զիս կողպտեցին:

բանութեամբ, սպառնալիքով... Գնդապետը անդիլի աշխարհ զըրկեցի. միայն թէ ոստիկանական տնօրէնութեան ուղղած նամակով մը մատնած էր մեզ ամենքս: Նամակը ընդհուպ պիտի հասնի հոն: Ուրեմն կ'ըմբռնես: Պուրնէֆ և իր մեղսակիցները պիտի պահւորին: Ատեն պիտի ունենան իրենց տունը երթալու և թուղթերը հաւաքելու... Մէկ ժամէն, առ առաւելն երկու ժամէն քու մօտդ պիտի գան: Ապահով ապաստարան մըն է: Անոնք պատրաստած են այդ ապաստարանը, առանց գիտնալու թէ ես և դուն իրար կը ճանչնանք: Ուրեմն հաւանական չէ որ սխալու՞մ մը ըլլայ: Հիմա պիտի գան...:

Էսարէս լուռ մնաց: Քիչ մը խորհելէ յետոյ շարունակեց.

— Անոնց բնական սենեակներուն իւրաքանչիւրին կըրկին բանալին ունիս: Այո՛...: Լա՛ւ: Այդ սենեակներուն որմադարանները բացող բանալիներէն ալ երկուքական հատ ունիս: Այո՛: Շա՛տ լաւ: Անոնք պտուկնուն պէս, կամ թէ երբ վրատահ ըլլաս որ խորունկ քուն մը կը քաշեն, սենեակներն մտիր ու որմադարանը խուզարկէ՛: Անպատճառ իւրաքանչիւրը հոն պիտի պահէ իր աւարի բաժինը: Դիւրաւ պիտի գտնես զայն: Քեզի ծանօթ չորս թղթապանակներն են: Շամբորդութեան պայուսակին մէջ զետեղէ զանոնք և կարելի եղածին չափ շուտ կծիկը դիր ու իմ քովս եկո՛ւր:

Էսարէս լուռ: Այս անգամ մտիկ կ'ընէր: Քիչ յետոյ յարեց.

— Ի՞նչ կ'ըսես: Լէյնուա՞ր փողոց: Հո՞ս պիտի գաս: Բայց խե՛նթ ես դուն: Կ'երեւակայե՞ս որ կարենամ հոս մնալ գնդապետին մատնութենէն յետոյ: Ոչ, գնա օթէլը սպասէ ինձի, կայարանին մօտ: Կէս օրին կամ ժամը մէկին, թերեւս աւելի ուշ հոն գտնւիմ: Մտահոգ մի՛ ըլլար: Հանդարտօրէն ճաշէ և յետոյ կը խորհինք պէտք եղածը: Այո՛, հասկցա՞ր: Այդ պարագային, ամէն բան կ'երաշխաւորեմ: Ընդհուպ կը տեսնւինք:

Խօսակցութիւնը վերջ գտած էր. բոլոր այդ միջոցները ձեռք առնւած էին՝ չորս միլիոնին տիրանալու համար: Էսարէս մտատանջւելու բան մը չտեսէր ալ ևս: Գործիին ընկալուչը տեղը կախեց, դէպի այն թիկնաթողը ուղղեցաւ, ուր տանջանք կրած էր, աթոռին յենարանը կրակին կողմը դարձուց, տարատիւ վարի մասը վեր քաշեց, գուլպաները ու մուճակները հագաւ դժարութեամբ, դէմքի ցաւազին ծամածրուումներով, բայց հանդարտօրէն, այնպիսի մարդու մը պէս որ աճապարելու պէտք չզգար:

Քօրալի աչքերը չէր բաժնէր ամուսնին վրայէն:

«Հոսկէ հեռանալու է», կը խորհէր հարիւրապետ Պէլվալ, քիչ մը նեղւած՝ էրիկ և կնկան միջեւ փոխանակւած խօսքերէն:

Սակայն տեղէն չհեռացաւ: Կը վախնար որ քոյր Քօրալիի զլիտուն փորձանք մը կուզայ:

Նախ Էսարէս յարձակու՞մ գործեց:

— Ինչո՞ւ այդպէս երեսս կը նայիս:

Մանկամարդ կինը իր ընդվզու՞մը զսպելով մրմնջեց.

— Ուրեմն իրա՞ւ է: Ալ եւս տարակուսելու բան չկա՞յ:

Էսարէս հեղնական ծիծաղով մը ըսաւ.

— Ինչո՞ւ համար պիտի ստեմ: Չպիտի հեռաձայնէի քու ներկայութեանդ, եթէ երբեք վստահ չըլլայի թէ հոս կը գտնուէիր սկիզբէն ի վեր:

— Վերն էի:

— Ուրեմն ամէն ինչ լսեցի՞ր:

— Այո՛:

— Ամէն ինչ տեսա՞ր:

— Այո՛:

— Ու տեսնելով որ զիս կը շարչարեն ու լսելով որ կ'աղաղակեմ, բան մը չըրի՞ր՝ զիս պաշտպանելու համար տանջանքին ու մահուան դէմ:

— Ոչինչ չըրի, քանի որ ճշմարտութիւնը զիտէի:

— Ի՞նչ ճշմարտութիւն:

— Այն որուն վրայ կը կասկածէի, առանց հաւատալու:

— Ի՞նչ ճշմարտութիւն, գոչեց Էսարէս աւելի ուժգին շեշտով:

— Ձեր մատնութեան ճշմարտութիւնը:

— Յիմար ես դուն: Մատնութիւն չեմ ըներ:

— Ա՛հ, բառերու վրայ մի՛ խաղաք: Արդարեւ, ճշմարտութեան մէկ մասը չեմ ըմբռներ. այդ մարդոց ըսածները չհասկցայ. Ի՞նչ կը պահանջէին անոնք: Բայց այն գաղտնիքը զոր ձենէ խլել կ'ուզէին՝ մատնութեան գաղտնիք մըն է:

Էսարէս ուսերը ցնցեց:

— Մարդ իր երկիրը միայն կը մատնէ. ես Թրանսսացի չեմ:

Միլիոններու Գաղսնիք

— Դուք Թրանսսացի էիք, գոչեց քոյր Քօրալի: Խնդրեցիք որ Թրանսսացի ըլլաք ու եղաք: Թրանսսացի մէջ ամուսնացաք ինձի հետ, հոն է որ կը բնակիք ու հարստութիւն գիղեցիք: Ուրեմն Թրանսսան մատնած կ'ըլլաք:

— Ի՞նչ կ'ըսէք:

— Անա ինչ որ չեմ հասկնար: Ամիսներէ, տարիներէ ի վեր, գնդապետը, Պուրնէֆ, ձեր նախկին ընկերները և դուք անագին գործ մը կատարած էք. անոնք ըսին այդ բանը, և կ'երեւայ թէ հիմա կը վիճաբանիք ձեռնարկէն գոյացած շահերուն վրայ. միւսները ձեզ կ'ամբաստանեն թէ առածինն գրպանած էք այդ շահերը և ծածուկ կը պահէք գաղտնիք մը որ ձեզի չի պատկանիր: Այսպէս մատնութենէ աւելի աղտոտ և գարշելի բան մը կ'ընդունը՞մարեմ... գողի ու աւազակի գործ մը:

— Ալ կը բաւէ:

Ամուսինը բռունցքի հարւածներ կ'իջեցնէր թիկնաթողին յենարանին:

Քօրալի առանց անարեկելու ըսաւ.

— Ալ բաւական է, իրաւունք ունիք: Կը բաւէ որքան խօսեցանք: Մէկ իրողութիւն կայ որ կը տիրապետէ միւսներուն վրայ, այն է ձեր փախուստը: Ոստիկանութիւնը վախ կը պատճառէ ձեզի:

Էսարէս նորէն ցնցեց ուսերը ու ըսաւ.

— Բանէ մը չեմ վախնար:

— Լա՛ւ, բայց կը հեռանաք:

— Այո՛:

— Վերջացնենք: Ո՞ր ժամուն կը մեկնիք:

- Ընդհուպ, կէս օրին:
- Եթէ երբեք ձերբակալեն ձեզ:
- Չպիտի ձերբակալեն:
- Իսկ եթէ ձերբակալե՞ն:
- Ազատ պիտի ձգեն:
- Առնւազն քննութիւն, դատ տեղի չպիտի՞ ունենայ:
- Ոչ, գործը պիտի դոյնեն.
- Այնպէս կը յուսաք...:
- Վստահ եմ:
- Աստուած տայ: Փրանսա- յէն ալ պիտի մեկնիք անշուշտ:
- Երբ կարելի ըլլայ:
- Այսօրն քն...:
- Երկու-երեք շաբաթէն:
- Ձեր մեկնումի օրը ինծի իմաց տէ՞ք, որպէս զի սպասող- ւիմ:
- Իմաց պիտի տամ, Գորա- լի, բայց ուրիշ պատճառով մը:
- Ի՞նչ պատճառ:
- Որպէս զի ինծի միանաս:
- Քեզի միանա՞մ:
- Էսարէս չարամիտ ժպտով մը ըսաւ.
- Իմ կիներս ես: Կիներ պէտք է հետեւի իր ամուսնին, և դուն զիտես որ իմ կրօնքիս մէջ ամուսինը ամէն իրաւունք ունի իր կնոջ վրայ, նոյն իսկ մահուան իրաւունք: Արդ, դուն իմ կիներս...:
- Քորալի ցնցեց զլուսը և դառն արհամարհանքի շեշտով մը պատասխանեց.
- Ձեր կիներ չեմ: Ատելութիւն և խորշէնք միայն կը զգամ ձեզի նկատմամբ: Ձեմ ուղեր ալ ևս տեսնել ձեզ, ու չպիտի տեսնեմ, ինչ սպառնալիք ալ ընէք:
- Էսարէս ոտքի ելաւ և կնոջ քով գնաց կորաքամակ ու դող-

դողուն սրունդներով. բռունցք- ները սեղմած՝ յայտարարեց.

— Ի՞նչ կ'ըսես: Համարձա- կութիւնը կ'ունենա՞ս այդ խօսքը ընելու: Ես, քու տէրդ, կը հրա- մայեմ որ ինծի միանաս առաջին կոչին վրայ:

— Չպիտի միանամ ձեզի: Աստուծոյ առջեւ կ'երդնում: Իմ յաւիտենական փրկութեանս վրայ կ'երդնում:

Կատաղութենէն կը փրփրէր Էսարէս: Դէմքը վայրագ արտա- յայտութիւն մը առաւ ու ազա- դակեց.

— Ուրեմն հոս մնա՛լ կ'ուզես: Այո՛, հոսկէ չհեռանալու պատ- ճառներ ունիս, որոնց տեղեակ չեմ, բայց դիւրին է գուշա- կելը...: Սրտի պատճառներ ու- նիս, այնպէս չէ՞...: Կեանքիդ մէջ բան մը կայ, անշուշտ...: Լռէ՛, լռէ՛...: Միշտ արհամար- հած չե՞ս զիս...: Այսօր չէ որ կ'ատես զիս: Առաջին վայրկեա- նէն սկսեալ, նոյն իսկ մեր ամուսնութենէն առաջ...: Միշտ իբր մահացու թշնամիներ տպրած ենք իրարու հետ...: Ես կը սի- բէի... կը պաշտէի քեզ...: Եթէ բառ մը ըսէիր ինծի՝ ոտքերուդ առջեւ պիտի իյնայի: Ոտնաձայնդ անգամ կը յուզէ սիրտս...: Բայց դուն կը սոսկաս ինէ: Կը կարծես որ կեանքդ պիտի կանոնաւորես առանց ինծի: Բայց կը նախընտ- րեմ սպաննել քեզ:

Էսարէսի մտաները սեղմած էին ու բաց ձեռքերը կը դողդո- շէին Քորալի շուրջը, ալ ու ձախ, գլխին մօտ, կարծես որս մը ջախջախելու պատրաստ, Ջղա- զրդիւ սարսուռ մը կը կափկա-

փեցնէր ծնօտները: Քորալի կա- թիլներ կը փայլէին դանկին եր- կայնքը:

Քորալի, տխրած ու փոքրա- կազմ, անզգած կը մնար էրկանը առջեւ: Բաթրիս Պէլվալ, որուն սիրտը անձկութենէն կը սեղմէր և կը պատրաստէր միջամտելու, դիտեց որ Քորալի դէմքը ար- համարհանք ու խորշէնք միայն կը յայտնէր:

Ի վերջոյ Էսարէս յաջողեցաւ ինքզինքը զսպելով ըսել.

— Քորալի, ինծի պիտի միա- նաս: Քու ամուսինդ եմ, կամայ ահամայ: Քիչ մը առաջ զգացիր այդ բանը, երբ սպանութեան կամքը ինծի դէմ զինեց քեզ, բայց քաջութիւն չունեցար դի- տաւորութիւնդ գործադրելու: Միշտ այսպէս պիտի ըլլայ: Ընդ- վզումդ պիտի հանդարտի և տի- բոյդ պիտի միանաս:

Մանկամարդ կիներ պատաս- խանեց.

— Հոս, այս տան մէջ պիտի մնամ, քեզի դէմ պայքարելու համար: Մասնութեան գործը պիտի աւրեմ: Առանց ատելու- թեան պիտի ընեմ ատիկա, քանի որ ատելութիւն չունիմ ալ եւս, բայց շուտ պիտի տեսնեմ այդ գործը, դարմանելու համար չա- բիքը:

Էսարէս մեղմաձայն ըսաւ.

— Ես ատելութիւն ունիմ, զգուշացի՛ր, Քորալի: Այն պա- հուն իսկ երբ պիտի կարծես թէ վախնալիք բան չունիս ինէ, թերեւս հաշիւ պահանջեմ քենէ: Ջղուշացի՛ր:

Երկարական զանգակի մը կոծակը սեղմեց Էսարէս: Ծերուկ

Սիմէօն քիչ ետքը ներս մտաւ:

— Երկու սպասաւորները խոյս տւած են, հարցուց Էսարէս: Ու առանց պատասխանի ըս- պատելու, յարեց.

— Բարի՛ ճամբորդութիւն: Սենեկապահուհին ու խոհարա- բուհին կը բաւեն սպասարկու- թեան համար: Անոնք բան մը չեն լսած, այնպէս չէ՞: Ծատ հե- ոուն կը պառկին: Փոյթ չէ, Սի- մէօն, իմ մեկնումէս յետոյ պիտի հսկես անոնց վոսայ:

Էսարէս իր կիներ դիտելով զարմացաւ որ ան չէր հեռա- նար. յետոյ քարտուղարին դառ- նալով ըսաւ.

— Պէտք է որ ժամը վեցին անկողնէն ելլեմ, ամէն ինչ պատ- բաստելու համար: Անօթութենէ կը մեռնիմ: Մինչեւ սենեակ ա- ռաջնորդէ՛ զիս: Յետոյ կը վե- րադառնաս ու լոյսերը կը մարես:

Սիմէօնին օգնութեամբ դուրս ելաւ:

Բաթրիս Պէլվալ իսկոյն ըմ- բռնեց թէ Քորալի չէր ուղած տկարանալ իր ամուսնին առջեւ, բայց ուժասպառ եղած էր ու քալե- լու կարողութիւն չունէր: Դեղեւ- ուն ծուկնկի եկաւ ու խաչակնքեց:

Երբ ոտքի ելաւ քանի մը վայրկեան յետոյ, իր ու դրան միջեւ, գորգին վրայ նշմարեց թուղթի կտոր մը, ուր անունը արձանագրւած էր.

Թուղթը առաւ ու կարդաց.

«Տիկին Քորալի, այդ պայ- քարը ձեր ուժէն վեր է: Ինչո՞ւ իմ բարեկամութեանս չէք դիմեր: Ծարժուձեւ մը ըրէք, և անա ձեր քոյի եմ»:

Քօրալի դանդաչեց, այդ նա- մակին անբացատրելի գիւտէն և Բաթրիսի յանդգնութենէն վեր- դովւած: Բայց գերագոյն ճիգով

մը ամփոփեց իր կամքի ուժը, դուրս ելաւ, առանց ընելու այն շարժումները զոր Բաթրիս կը խնդրէր:

Դ.

ԺԱՄԸ ԵՕԹԸ ՏԱՍՆԸԻՆԸ ԱՆՑԱԾ

Այդ գիշեր, Բաթրիս չկրցաւ քնանալ իր սենեակին մէջ: Արթուն, ինքզինքը ճնշւած ու նեղը մնացած կը զգար, որ էշային մըղ- ձաւանջի մը սարսափին մատնւած կարծես: Սա տպաւորութիւնը կ'ունենար թէ կը շարունակէին այն յուզումնալից դէպքերը, ուր շւարած հանդիսատեսի մը և ան- զօր դերասանի մը դերը կը խա- դար միեւնոյն ատեն. մինչդեռ ինք կը փորձէր հանգչիլ, անդին դէպքերը աւելի սաստկութեամբ կը շղթայագերծէին: Էրկան ու կնկան հրաժեշտի ողջոյնները նոյն իսկ առժամապէս վերջ չէին տւած Քօրալի սպառնացող վտանգներուն: Ամէն կողմէ վտանգներ կային, և Բաթրիս Պէլվալ կը խոստովանէր թէ անկարող էր կանխատեսելու զանոնք, և աւել- ին կայ, առաջը առնելու:

Երկուժամուան անքնութենէ մը յետոյ, ելեկտրական լոյսը վա- ուեց, ու սկսաւ արագօրէն գրել պատմութիւնը այն օրուան զօր ապրած էր: Այսպէս կը յուսար քիչ մը քակել անլուծելի կծիկը:

Ժամը վեցին գնաց արթնցուց Ես-Պօնը: Յետոյ ահաբեկ սեւա- մօրթին առջեւ կեցաւ թեւերը ծալլած և անոր երեսն ի վեր պօ- ուաց:

— Ուրեմն կը կարծես որ գործդ աւարտած ես: Մինչ ես կը տապալակիմ խոր մթութեան մէջ, պարօնը կը քնանայ, ու ամէն ինչ լաւ կ'ընթանայ: Մի- րելիս, շատ առաձգական խիղճ մը ունիք:

Առաձգական բառէն շատ ա- խորժեցաւ Սենեկացին, որուն բերանը լայն բացուեցաւ և հա- ճոյքէն սկսաւ կաղկանձիւններ արձակել:

— Կը բաւէ որքան ճառեցիք, հրամայեց հարիւրապետը: Միայն քու ձայնդ կը լսուի: Աթոռ մը ա՛ռ, սա յուշագիրը կարդա՛ և քու պատճառաբանւած կարծիքդ յայտնէ՛: Ի՛նչ, կարդալ չե՛ս գի- տեր: Իրաւ որ չէր արժեք քու յետոյքդ մաշեցնել Սենեկալի լիսէներու և քօլէժներու նստա- րաններուն վրայ: Եզական դաս- տիարակութիւն:

Բաթրիս հառաչեց, և ձեռա- գիրը խլելով ձեռքէն, ըսաւ:

— Մտիկ ըրէ՛, խորհէ՛, տը- րամաբանէ՛, եզրակացո՛ւր: Ահա թէ ի՛նչ կացութեան մէջ կը գըտ- նուինք: Ուստի սապէս կ'ամփո- փեմ եզածը:

«Ա. Էսարէս պէյ մը կայ, մե- ծահարուստ սեղանաւոր, ամե- նայետին խաբեբայ մը, որ մի-

եւնոյն ատեն մատնած է Յրան- սան, Եգիպտոսը, Անգլիան, Թուրքիան, Պուլկարիան և Յու- նաստանը... ապացոյցը սա է որ իր մեղաակիցները կրակի կ'են- թարկեն իր ոտքերը: Ասոր վրայ՝ անոնցմէ մէկը կը սպաննէ, և չորսը կը հեռացնէ նոյնքան մի- լիոններու շնորհիւ, ուրիշ մեղ- սակցի մը պաշտօն կը յանձնէ այդ միլիոնները ետ առնելու համար հինգ վայրկեանի մէջ: Այդ ընտր- եալ խուճըր գետնին տակ պիտի մտնէ առուան ժամը 11ին, ո- րովհետեւ օստիկանութիւնը պիտի միջամտէ: Լա՛ւ:

Բաթրիս Պէլվալ շունչ առաւ ու շարունակեց:

2. Տիկին Քօրալի ամուսնա- ցած է այդ խաբեբայ պէյին հետ, չեմ գիտեր ինչո՛ւ համար: Ան կ'ատէ ամուսինը և կ'ուզէ ըս- պաննել զայն: Ամուսինը կը սի- րէ կինը, բայց կ'ուզէ սպաննել զայն: Գնդապետ մըն ալ կայ որ կը սիրէ Տիկին Քօրալին ու ա- նոր վրայ կը խենթենայ: Մուս- թաֆա անուն մէկը գնդապետին հաշիւն կ'առեւանգէ զայն, և Սենեկացիի մը կողմէ կը խեղ- դւի: Վերջապէս Ֆրանսացի հա- րիւրապետ մը եւս կը սիրէ զայն, բայց խոյս կուտայ անկէ, ամու- սինը ատելուն համար, և որուն հետ ասկէ առաջ բաժնած է թանկագին քար մը: Ասոր վրայ աւելցո՛ւր ժանգոտած բանալի մը, կարմիր մետաքսէ լար մը, հեղձամա՛ր ե- ղած շուն մը և կարմրած ածուխ- ներու վանդակ մը: Եթէ կա- րենաս մէկ բառ հասկնալ իմ ցատրութիւններէս, արեւստա- կան սրունդովս հարւած մը կ'ի-

ջեցնեմ, որովհետեւ ես բան մը չեմ հասկնար, քու հարիւրապետը ըլլալով հանդերձ:

Ես-Պօն բերանաբաց կը ծի- ծաղէր, մինչ իր այտերէն մէկը ձեղքող բաց վէրք մը կը տես- նւէր գէմքին վրայ, Մնաց որ, իր հարիւրապետին հրամանին համաձայն, բան մը չէր հասկնար խնդրէն, և ոչ ալ Բաթրիսի ճա- ուէն: Բայց երբ Բաթրիս այդ բիրտ շեշտով խօսք կ'ուղղէր ի- րեն, մեծ ուրախութիւն կըզգար:

— Ա՛լ կը բաւէ, հրամայեց հա- րիւրապետը, կարգը ինձի եկաւ տրամաբանելու և եզրակացնելու:

Վաւարանին կռթնած, երկու արմուկները ժարմարին վրայ, գլուխը սեղմեց երկու ձեռքերուն մէջ: Իր զւարթութիւնը, արդիւնք իր անհոգ բնաւորութեանը, այս անգամ շատ մակերեսային էր: Միշտ Քօրալի վրայ կը խորհէր ցաւագին վախով մը:

Քանի մը ծրագիրներ կը ներ- կայանային մտքին առջեւ. ա- նոնցմէ ո՛րը ընտրէր: Հեռաձայ- նին թիւին շնորհիւ պարտէ՛ր փնտուել այդ հրէկուարին թա- քստոցը, որուն տունը ապստա- նած էին Պուրնէֆ և ընկերները: Ոստիկանութեան իմա՛ց տալու էր: Լիէյնուար փողոցը դառնա՛ր, ինք ալ չէր գիտեր ընելիքը:

Դէպի Ես-Պօն դարձաւ յան- կարծ, որուն լուութիւնը ցաւա- գին տպաւորութիւն մը կը ձգէր իր վրայ:

— Ի՛նչ տխուր կերպարանք ունիս: Դուն ես որ զիս կը տխրեցնես միշտ: Ամէն ինչ սեւ կը տեսնես... սեւամորթի մը պէս... հեռացի՛ր:

Եւ-Պօն դուրս ելաւ շարած : բայց քիչ յետոյ հարիւրապետին դուռը զարկին ու ձայն մը դուրսէն աղաղակեց .

— Հարիւրապետս , կը հեռա- ձայնեն քեզի :

Բաթրիս դուրս ելաւ գահա- վիժօրէն : Ո՞վ իրեն կը հեռա- ձայնէր առտուն կանուխ :

— Որ՞ու կողմէ հեռաձայն կ'ընեն , հարցուց հիւանդապա- հուհիին , որ առջեւէն կ'երթար :

— Ես ալ չեմ գիտեր , հարիւ- րապետս . . . : էրիկ մարդու ձայն էր , որ կ'աճապարէր ձեզի հետ խօսելու . բաւական երկար ատեն հնչեցուց հեռաձայնին զանգա- կը : Ես , վարը , խոնանոցն էի :

Ակամայ , Բաթրիս կը յիշէր Ռէյնուար փողոցի հեռաձայնը , էսարէսի բնակարանի մեծ սրա- հին մէջ : Երկու դէպքերը իրա- րու հետ առնչութիւն մը ու- նէին :

Յարկ մը վար իջաւ և նըր- բանքէ մը յառաջացաւ : Հեռա- ձայնի գործին կը գտնէր նա- խասենեակէն անդին , խցիկի մը մէջ , ուր ձերմակեղէնները կը պահէին : Հոն փակեցաւ հա- րիւրապետը :

— Ալօ . . . ես եմ , հարիւրա- պետ Պէլվալ : Ի՞նչ բանի վրայ կը դառնայ խնդիրը :

Արդարեւ , էրիկ մարդու ձայն մը , զոր չէր ճանչնար , պատաս- խանեց շնչասպառ .

— Հարիւրապետ Պէլվալ . . . : Ա՛հ , լա՛ւ . . . : Կը վախնամ որ շատ ուշ չըլլայ . . . ատեն պիտի ունենամ . . . : Բանալին ու նա- մակը առի՞ր :

— Ո՞վ էք դուք :

— Բանալին ու նամակը ա- ռի՞ր , պնդեց ձայնը :

— Բանալին , այո՛ , բայց ոչ նամակը , պատասխանեց Բաթրիս :

— Ո՛չ , նամակը : Բայց սոս- կալի՛ բան է : Ուրեմն չե՞ս գի- տեր . . . :

Խռպոտ ճիչ մը լսեց Բաթրիս . յետոյ գործիին մէջէն լսեց ան- կապ ձայներ և վիճաբանութեան շշուկ մը : Յետոյ այդ ձայնը գոր- ծիին բերանը եկաւ կարծես , ու որոշապէս լսեց որ ձայնը կը կա- կաղէր .

— Շատ ուշ է . . . : Բաթրիս . դո՞ւն ես . . . : Մտիկ ըրէ՛ , մեղե- սիկէ մէտայեօնը . . . : Այո՛ , իմ վրաս է մէտայեօնը . . . : Ա՛հ , շատ ուշ է . . . : Շատ պիտի փափագէի . . . Բաթրիս . . . Բարալի . . . Բաթ- րիս . . . :

Յետոյ նոր ու սրտառուչ ճիչ մը և աւելի հեռաւոր աղմուկներ լսեցան , ուր Բաթրիս կրցաւ զանազանել սա բառերը . «օգ- նութիւն . . . օգնութիւն . . . : Օ՛հ , մարդասպանը , թշուառականը» : Աղմուկը տկարացաւ քիչ մը : Յե- տոյ լռութիւն տիրեց ու փոքր շառաչիւն մը լսեցաւ յանկարծ : Մարդասպանը իր տեղը կախած էր հեռաձայնին ընկա- լուչը :

Քսան բոպէ չէր տեսած այդ ամէնը : Երբ Բաթրիս ուղեց հե- ոաձայնին փողը իր տեղը դնել , ստիպեցաւ ճիգ մը ընել՝ ձեռ- քէն չձգելու համար . իր մատները կծկտած էին մետաղին շուրջը :

Բաթրիս շարած կը մնար : Իր աչքերը յառած էին ժամա- ցոյցի մը վրայ , որ բակին մէջ կը տեսնէր պատուհանէն . ժամը

եօթը տասնըինը անցած ցոյց կուտար ան . մեքենաբար կը կրկնէր այդ թիւը , փաստացի արժէք մը ընծայելով անոր :

Այդ տեսարանը այնքան ան- իրական կը թւէր որ մտովի կը հարցնէր թէ գոյութի՞ւն ունեցած էր այդ ամէնը , և թէ իր թմրած ուղեղին խորութեան մէջ միայն գործւած չէ՞ր ոճիրը :

Բայց աղմուկներուն արձա- գանդը տակաւին կը բզզար ա- կանջին մէջ , յանկարծ ձեռք ա- ռաւ հեռաձայնի փողը , այնպիսի անձի մը պէս որ յուսահատօրէն կը կառչի տարտամ յոյսի մը :

— Ալօ . . . օրիորդ . . . դո՞ւք էք որ գիտ կանչեցիք հեռաձայ- նով : Լսեցի՞ք աղաղակները . . . : Ալօ , ալօ :

Ոչ ոք կը պատասխանէր . Բաթրիս զայրացաւ , օրիորդը նախատեցու խցիկէն դուրս ելաւ , Եւ-Պօնի հանդիպեցաւ ու կոխո- տեց զայն :

— Կորուէ՛ : Յանցանքը քուկդ է . . . : Հոն կենալու և Բօրալիի վրայ հսկելու էիր : Պէտք է հոն երթաս ու անոր տրամադրու- թեան տակ դնես ինքղինքդ : Ես ոստիկանութեան իմաց պիտի տամ . . . : Եթէ դուն արգելք չըլ- լայիր՝ շատոնց իմաց տւած պիտի ըլլայի , և զորքը այս տեղւանքը չէր հասներ : Օ՛ն , շուտ ըրէ :

Յետոյ վար դնելով զայն , ը- սաւ .

— Ո՛չ , տեղէդ մի շարժիր : Ծրագիրդ անհեթեթ է : Հոս կե- ցիր : Ա՛հ , ո՛չ հոս , իմ մօտս : Մարդս , պաղարիւն չունիս բնաւ :

Բաթրիս դուրս հրեց Եւ-Պօնը

ու խցիկը մտաւ , զոր ամէն ուղ- դութեամբ չափչփեց տենդագին , զայրոյթի շարժումներ ու խօս- քեր ընելով : Սակայն իր շա- րումին մէջ գաղափար մը մար- մին կ'առնէր տակաւ . արդէն ո և է փաստ չունէր թէ Րէյնու- ար փողոցի բնակարանին մէջ պատահած ըլլար դէպքը : Իր յի- շատակը պէտք չէ զինքը մղէր նոյն ցնորքն ունենալու և աչ- քերուն առջեւ բերելու եղբրա- կան տեսարանը : Նախազգացում կ'ունենար թէ տաճար կը շարու- նակէր : Բայց այլուր թերեւս և Բօրալիէն հեռու :

Այդ առաջին գաղափարը ու- բիշ գաղափար մը արթնցուց մտքին մէջ . ինչո՞ւ համար տե- ղեկութիւն չէր առներ այդ մա- սին :

— Այո՛ , ինչո՞ւ տեղեկու- թիւն չեմ քաղեր : Անմիջապէս կրնամ հեռաձայնել Րէյնուար փողոցը , ո և է պատուակով ու ո և է մէկուն կողմէ , ոստիկա- նութեան իմաց տալէ , ինծի հե- ոաձայնող անձին թիւը գտնելէ առաջ , միջոցներ գորս յետոյ պիտի գործադր եմ : Այն ատեն , հաւանաբար , ի՛նչ ընելիքս պիտի գիտնամ . . . :

Բաթրիս լաւ կը զգար թէ մեծ բան մը չէր արժեր իր գոր- ծեկակերպը : Եթէ պատասխանող չըլլար՝ ատիկա ապացոյց մըն էր թէ ոճիրը գործւած էր հոն : Թե- րեւս ո՛չ ոք արթնցած էր , պա- տասխանելու համար :

Բայց գործելու պէտքը կը մղէր զինքը : Տարեցոյցին մէջ փնտռեց էսարէս պէյի թիւը , ու հեռաձայնեց :

Դժնդակ յուզումով մը սպասեց: Յետոյ ցնցում մը զգաց ատքերէն մինչեւ գլուխը: Հազորդակցութիւնը հաստատուած էր: Հոն մէկը կը պատասխանէր իր կոչին.

— Ալօ՛, ըսաւ Բաթրիս:

— Ալօ՛, ըսաւ ձայն մը: Ո՞վ կայ հեռաձայնին առջեւ:

Էսարէս պէյի ձայնն էր: Շատ բնական էր, քանի որ այդ պահուն էսարէս իր թուղթերը կարգի կը դնէր և փախչելու կը պատրասուէր: Բաթրիս այնքան շարած էր որ ըսելիքը չէր գիտեր: Ուստի միտքը ինկած առաջին բառերը ըսաւ.

— Պարոն էսարէս պէյ, դո՛ւք էք:

— Այո՛: Որո՞ւ հետ պատիւ ունիմ խօսելու...

— Շարժուն հիւանդանոցին յարակից մասին մէջ դարձանուող վերաւոր մըն է:

— Հարիւրապետ Պէլվալ թեբեւս:

Բաթրիս բոլորովին շարեցաւ: Ուրեմն Քորալիի ամուսինը կը ճանչնար զինքը: Կակազելով ըսան ան.

— Այո՛... հարիւրապետ Պէլվալ:

— Ա՛հ, ինչ բախտ, հարիւրապետ, գոչեց էսարէս պէյ գոհունակ շեշտով մը: Ճիշդ մէկ րոպէ առաջ հեռաձայնեցի՝ ինդրելու համար որ...

— Ա՛հ, դո՛ւք էիք... ընդմիջեց Բաթրիս, որուն սալուութիւնը սահման չունէր:

— Այո՛, կ'ուզէի գիտնալ թէ ո՞ր ժամուն պիտի կրնայի հազորդակցիլ հարիւրապետ Պէլվալի

հետ, իմ բոլոր շնորհակալութիւններս յայտնելու համար:

— Ի՞նչ էիք... դո՛ւք էիք, կրկնեց Բաթրիս հետզհետէ վերդովւած...

Էսարէս պէյի շեշտը զարմանք կը պատճառէր:

— Զուգադիպութիւնը հետաքրքրական է, այնպէս չէ՞: Դժբախտաբար, հազորդակցութիւնը խզեցաւ ուրիշ հազորդակցութեան մը պատճառով:

— Ուրեմն լսեցի՞ք:

— Ի՞նչ բան, հարիւրապետս:

— Ճիշտը:

— Ճիշտ՞ըր մի:

— Դէ՛ք ինծի այնպէս թւեցաւ, հազորդակցութիւնը շատ անորոշ ըլլալուն...:

— Ես պարզապէս լսեցի որ մէկը ձեզ կը խնդրէր և շատ կ'աճապարէր: Այդ անձը ես չըլլալուս համար, հեռաձայնը գոցեցի և յետաձգեցի այն հաճոյքը զոր պիտի ունենայի, ձեզի շնորհակալութիւն յայտնելով:

— Ինծի շնորհակալութիւն յայտնելու մի:

— Այո՛, գիտեմ թէ երէկ իրիկուն ի՛նչ յարձակում կրեց կինս, և դուք ի՛նչպէս ազատեցիք զայն: Ուստի կը փափաքիմ ձեզ տեսնել ու երախտադիտութիւնս յայտնել: Կ'ուզե՞ք որ ժամադիր ըլլանք: Օրինակի համար շարժուն հիւանդանոցին մէջ, այսօր, ժամը երեքին:

Բաթրիս պատասխան չէր տար: Զերբակալութեան սպառնալիքի տակ դտնուող և խոյս տալու պատրաստուող այդ մարդուն յանդրանութիւնը կ'ապաշխարէր զինքը: Միեւնոյն ատեն մտովի կը հար-

ցնէր թէ էսարէս պէյ ի՛նչ շարժառիթէ մղւած՝ հեռաձայնով խօսած էր իր հետ, առանց բռնադատուած ըլլալու: Բայց հարիւրապետին լուսութիւնը չվրդովեց սեղանաւորը, որ իր քաղաքավարական խօսքերը շարունակեց և մենախօսութեամբ մը աւարտեց, ուր իր կողմէ եղած հարցումներուն ինք կը պատասխանէր ամենայն դիւրութեամբ:

Յետոյ իրարմէ հրաժեշտ առին անոնք: Սոսակցութիւնը վերջ գտած էր:

Հակառակ ամէն բանի, Բաթրիս աւելի հանդարտ կը զգար ինքզինքը: Սենեակը դարձաւ անկողնին վրայ նետուեցաւ ու երկու ժամ քնացաւ: Յետոյ Եւ-Պօնը կանչելով իր մօտ, ըսաւ.

— Ուրիշ անգամ Զանա՛ ջիղերդ գսպել և խելքդ չկորսնցնել, ինչպէս քիչ մը առաջ: Ծիծաղելի դարձար: Այլ եւս չխօսինք այդ մասին: Ծաշեցի՞ր: Ոչ: Եւ ոչ ալ ես: Քննութեան ենթարկեցա՞ր: Ո՛չ: Ես ալ ո՛չ: Հազարապետը խոստացաւ գլուխս ծածկող չարաշուք վիրակապը վերցնել: Շատ նեղութիւն կը պատճառէ ինծի: Փայտէ սրունդ մը կը հասկնամ՝ բայց լաթով կապուած դէմք մը անհաճոյ կը թւի սիրահարի մը: Օ՛ն, աճապարէ: Երբ ամէն ինչ պատրաստ ըլլայ, ճամբայ կ'իյնանք դէպի շարժուն հիւանդանոցը: Բոյր Քորալի չի կրնար զիս արգիլել որ հոն երթամ:

Բաթրիս ինքզինքը շատ երջանիկ կը զգար: Ժամ մը յետոյ, դէպի Բօրթ Մայեօ գացած ատեննին Եւ-Պօնի կ'ըսէր թէ

Միջոններու Գաղսնիքը

մթութիւնը կը փարատէր տակաւ:

— Այո՛, այո՛, գործը լաւ կ'ընթանայ: Ահա իրերու վիճակը: Նախ Քորալի վտանգի մէջ չէ: Ինչպէս կը յուսայի, միլիոններուն համար կախ տեղի ունեցած է մեղսակիցներուն միջեւ, քոյր Քորալիէ հեռու: Գալով այն տարաբախտ մարդուն որ ինծի հեռաձայնեց, և որուն օրհասականի աղաղակները լսեցի, անձանօթ բարեկամ մը ըլլալու էր, քանի որ Բաթրիս կը կոչէր զիս ու կը դուրէր: Անտարակոյս, ան դրկած է պարտէզին բանալին: Դժբախտաբար, բանալին հետ միասին դրկած նամակը կորսուած է: Ամէն ինչ պիտի խոստովանէր ինծի, եթէ յարձակում կրած է: Ո՞վ յարձակած է անոր վրայ: Հաւանաբար մէկը այն մեղսակիցներէն, որ կը վախնար ըլլալիք յայտնութիւններէն: Աւասիկ, Եւ-Պօն, այս ամէնը շլացուցիչ կերպով պայծառ է: Թերեւս ճշմարտութիւնը ըսածիս ճիշդ հակառակը ըլլայ: Բայց ի՛նչ փոյթ: Կարեւորը այն է որ ենթադրութեան մը վրայ հիմնուելու է ճշմարիտ կամ սխալ: Եթէ երբեք ճշմարիտ չէ իմ ենթադրութիւնս, ամբողջ պատասխանատուութիւնը քու վրայ կը ծանրանայ:

Բօրթ Մայեօ հասնելէ յետոյ՝ օթոմօսիլ մը նստան: Բաթրիս ուղեց Րէյնուար փողոցէն անցնիլ: Բասիի քառուղին ելած ատեննին նշմարեցին որ քոյր Քորալի Լէյնուար փողոցէն դուրս կ'ելլէր ձերուկ Սիմէօնի ընկերակցութեամբ:

Մանկամարդ կինը օթօմօսպիլ մըկանչեց ու Սիմէօն վարիչին քով նստաւ, իրենց ետին ունենալով Բաթրիսի օթօմօսպիլը: Քօրալի և Սիմէօն դացին մինչեւ Շան զ'էլիզէի շարժուն հիւանդանոցը:

Ժամը տասնըմէկն էր:

— Ամէն ինչ լաւ կ'ընթանայ, ըսաւ Բաթրիս: Մինչդեռ իր ամուսինը խոյս կուտայ, կինը, Քօրալի, չուզեր փոփոխութիւն ներմուծել իր առօրեայ կեանքին մէջ:

Հարիւրապետը ու Եա-Պօն ճաշեցին շրջակաները, ծառուղիին երկայնքը պտտեցան, շարժուն հիւանդանոցին վրայ հսկելով. յետոյ ժամը մէկուկէսին հոն մտան:

Յանկարծ Բաթրիս ապակեպատ բակի մը խորը, ուր զինւորները կը հաւաքէին, նշմարեց Սիմէօնը, որ գլխուն կէսը սովորական քթապահովը ծածկած, դեղին ու խոշոր ախոցները դրած, ծխափողը կը քաշէր ամթուի մը վրայ:

Դալով քոյր Քօրալիի, երրորդ յարկը կը գտնէր, իր սպասարկութեան օրահներէն մէկուն մէջ, հիւանդի մը սնարին քով նստած, որուն ձեռքը բռնած էր: Մարդը կը քնանար:

Քոյր Քօրալի շատ խոնջ թւեցաւ Բաթրիսի: Իր սեւածիր աչքերը և սովորականէն աւելի գունատ դէմքը ցոյց կուտային իր յոգնութիւնը:

— Խեղճ քոյր, այդ անզղամները ի վերջոյ պիտի սպաննեն քեզ, խորհեցաւ Բաթրիս:

Նախորդ գիշերուան տեսարանները յիշելով՝ հարիւրապետը հիմա

կ'ըմբռնէր թէ ինչո՞ւ Քօրալի թաքուն կեանք մը կը վարէր, ու դէ՞թ հիւանդանոցի փոքր աշխարհին մէջ կը ջանար ինքզինքը ցոյց տալ իբր գթութեան քոյր մը զոր իր անունով կը կոչեն: Կասկածելով թէ ի՞նչ անւանարկութիւններ կը գործէին իր շուրջը, ամուսինին անունը չէր ընդուներ և բնակարանին տեղը չէր յայտներ: Քօրալիի կամքը ու ամօթխածութիւնը այնքան լաւ պաշտպանած էին զինքը որ Բաթրիս չէր համարձակեր անոր մօտենալ:

— Սակայն իմ քառթս չեմ կըրնար զրկել անոր, ըսաւ Բաթրիս մտովի, դրան սեմին վրայ, հեռուէն դիտելով մանկամարդ կինը, առանց տեսնելու անոր կողմէ:

Բաթրիս ներս մտնելու կը պատրաստէր, երբ կին մը, որ սանդուխէնվեր կ'ելլէր բաւական բարձրաձայն խօսելով, իր մօտ գոչեց.

— Ո՛ւր է տիկինը... Պէտք է որ անմիջապէս գայ: Սիմէօն...

Ծերուկ Սիմէօն, որ նոյնպէս սանդուխէն վեր կ'ելլէր, սրահին խորը ցոյց տաւ Քօրալին: Կինը դէպի ներս խոյացաւ:

Կինը քանի մը բառ ըսաւ Քօրալիի, որ այլայլած, դէպի դուռ վազեց, Բաթրիսի առջևէն անցաւ և սանդուխէն վար իջաւ արադօրէն, Սիմէօնի ու կնոջ ուղեկցութեամբ:

— Օթօմօսպիլ մը ունիմ տրամադրութեանս տակ, կահազեց կինը շնչասպառ: Տունէն դուրս ելած պահուս օթօմօսպիլ մը գրտնելու բախտը ունեցայ ու վար

դրի զայն: Աճապարե՛նք, տիկին...: Ոստիկանութեան քօմիսէրը այնպէս հրամայեց ինծի...

Բաթրիս, որ նմանապէս վար կ'իջնէր, ուրիշ բան չլսեց. բայց այդ վերջին բառերուն վրայ՝ կտրուկ որոշում մը տուաւ: Եա-Պօնը բռնեց ճամբուն վրայ, ու երկուքը՝ միասին նետուեցան օթօմօսպիլի մը մէջ, որուն վարիչը հրաման ստացաւ հետեւելու Քօրալիի օթօմօսպիլին:

— Դարձեալ նոր բան մը կայ, Եա-Պօն, ըսաւ հարիւրապետը: Դէպքերը կը զահալլիքին: Այդ կինը, անշուշտ, էսարէսի ապարանքին սպասուհիներէն մէկն է, և ոստիկանութեան քօմիսէրին հրամանով հոս եկած է, իր տիրուհին փնտռելու համար: Ուրեմն զնդապետին մատնութեան հետեւանքն է աս: Տան մէջ խուզարկութիւն, քննութիւն, վերջապէս կարգ մը տաղտուկներ քոյր Քօրալիի համար: Իսկ դուն կը համարձակիս ինծի խորհուրդ տալու որ շրջահայեաց ըլլամ: Կ'երեւակայե՞ս որ այս տագնապի միջոցին առանձին պիտի թողում գինքը: Ի՞նչ աղտոտ բնաւորութիւն ունիս, խեղճ Եա-Պօնս:

Դաղափար մը ինկաւ միտքը ու գոչեց Բաթրիս.

— Միայն թէ այդ խաբերայ էսարէս օձիքը ձեռք տւած չըլլայ: Ադէտ մը պիտի ըլլար: Շատ ինքնավստահ էր: Կծիկը դրած ըլլալու է...

Ճամբան, այդ երկիւղը գերագրգիռ վիճակի մը մատնեց Պէլլալը և ամէն խղճահարութիւն վանեց: Մնաց որ, բացար-

ձակապէս վստահ էր թէ էսարէսի ձերբակալութեանը պատճառով սպասուհին խելայեղօրէն ներս մտած ու Քօրալի զահալիժօրէն մեկնած էր: Այդ պայմաններուն մէջ ի՞նչպէս կրնար վարանիլ, միջամտելու համար գործի մը, ուր իր յայտնութիւնները պիտի լուսաբանէին արդարութիւնը:

Բաթրիս կարող էր այնպէս մը ընել որ իր յայտնութիւնները օսասկացնելով կտմ մեղմացնելով Քօրալիի շահուն ծառայէին անոնք...

Երկու կառքերը գրեթէ միևնոյն ատեն կանգ առին էսարէսի բնակարանին առջեւ, ուր այդէն կառք մը կը սպասէր: Քօրալի վար իջաւ ու կառանցիկ դրան կամարին տակ անհետացաւ:

Սենեկապահուհին ու Սիմէօն մայթին վրայ ելան:

— Եկո՛ւր, ըսաւ Բաթրիս, խօսքը Սենեկապիին ուղղելով: Դուռը կիսովիս բաց ըլլալուն՝ Բաթրիս ներս մտաւ:

Մեծ անդաստակին մէջ երկու ոստիկաններ պահակ կըսպասէին:

Բաթրիս փութկոտ շարժուածելով մը ողջունեց զանոնք ու տան մարդու պէս անցաւ գնաց, իբր թէ մեծ կարեւորութիւն ունենար և առանց իրեն կարելի չէր օգտակար գործ մը տեսնել:

Իր սոսնաձայնը սալաքարերուն վրայ՝ Բաթրիսի յիշեցուց Պուրնէֆի ու իր մեղսակիցներուն փախուստը: Լաւ ճամբու մէջ կը գտնէր: Զախակողմը սրբահ մը կը բացէր, ուրկէ մեղսակիցները փախցուցած էին զնդապետին դիակը. մատենադարանին հետ կը հաղորդակցէր այդ սրահը:

Ձայնի շշուկներ կը լսեին այդ կողմէն: Սրահէն անցաւ: Այդ պահուն լսեց Քորալիի ձայնը, որ սոսկուծի շեշտով մը կը բացագանչէր.

— Ա՛հ, Տէր Աստուած, ա՛հ, Տէր Աստուած, կարելի՞ բան է միթէ:

Ուրիշ երկու ոստիկաններ թոյլ չտւին որ Բաթրիս ներս մտնէ: Հարիւրապետը ըսաւ անոնց.

— Տիկին էսարէսի ազգականն եմ... միակ ազգականը...:

— Այնպէս հրաման ունինք, հարիւրապետս ...

— Ես ալ գիտեմ. թոյլ մի տաք որ ուրիշ մէկը ներս մտնէ: Ես Պօն, դուն հոս կեցիր:

Բաթրիս անցաւ: Ընդարձակ սրահին մէջ վեց-եօթը անձերու խումբ մը, անշուշտ քովսէր ու դատաւոր, բանի մը վրայ ծռած էր, զոր Բաթրիս չէր զանազաներ: Յանկարծ այդ խումբէն դուրս ելաւ Քորալի, ու հարիւրապետին ուղղութեամբ յռաջացաւ, դեղեւուն և թեւերը օդին մէջ տարածած: Սենեկապանուհին մէջքէն բռնեց Քորալին ու թիկնաթոռի մը մէջ քաշեց զայն:

— Ի՛նչ կայ, հարցուց Բաթրիս:

— Տիկինը գէշութիւն մը կը զգայ, պատասխանեց սենեկապանուհին, խելայեղութեան մատնւած: Ա՛հ խելքս կորսընցուցած եմ:

— Բայց ի՛նչ կայ... ի՛նչ պատճառով:

— Պարոնն է...: Ի՛նչ անուելի տեսարան... Ես ալ տակնուվրայ եղայ:

— Ի՛նչ տեսարան: Խումբէն մէկը բաժնետերով մօտեցաւ ու հարցուց.

— Տիկին էսարէս հիւսուհի է:

— Բան մը չէ, ըսաւ սենեկապանուհին... Նւաղում մը ունեցաւ...: Տիկինը տկարութիւններու ենթակայ է:

— Տարէք զայն, ոտքի ելլելուն պէս: Իր ներկայութիւնը անօգուտ է հոս:

Ու խօսքը Բաթրիս Պէլվալի ուղղելով հարցական ձեւով մը ըսաւ.

— Հարիւրապետս...

Բաթրիս չլսել ձեւացուց:

— Այո՛, պարոն, Տիկին էսարէսը պիտի տանինք, ըսաւ նոյն անձը: Իր ներկայութիւնը անօգուտ է, արդարեւ: Միայն թէ նախ ստիպւած եմ...:

Բաթրիս իր խօսակցէն խուսափելու համար, յառաջացաւ, օգտւելով դատաւորներու խումբին քիչ մը իրարմէ բաժնւած ըլլալէն:

Հարիւրապետին աչքին առջեւ այնպիսի տեսարան մը պարզւած էր որ ան իսկոյն հասկըցաւ Քորալիի նւաղման և սենեկապանուհին յուզման պատճառը: Բաթրիս զգաց որ գանկին ամբողջ մորթը կը ցցէր առջի իրիկւան տեսարանէն շատ աւելի քստմնելի տեսարանի մը առջեւ:

Վառարանէն քիչ հեռու, գրեթէ հոն ուր չարչարանքը տեղի ունեցած էր, էսարէս պէյ կռնակի վրայ փուած էր: Տնական միեւնոյն զգեստները կը կրէր. շագանակագոյն տւեակէ տաքատմը ութաւիչէ բաձկոն մը: Անձեռոցով մը ծածկած էին ա-

նոր ուսերը և գլուխը: Բայց ներկաներէն մէկը, անշուշտ օրէնսգէտ բժիշկ, մէկ ձեռքովը վեր կ'առնէր այդ ծածկոյթը, իսկ միւս ձեռքովը ցոյց կուտար մեռեալին դէմքը, մեղմաձայն բացատրութիւններ տալով:

Բայց կարելի՞ է դէմք անւանել միսերու անձանաչելի կոյտ մը, որուն մէկ մասը անխայտ կը թւէր, իսկ միւս մասը արիւնոտ խիւս մը կը ձեւացնէր, ուր ոսկորի ու մորթի կտորներու կը խառնուէին մազեր, մօրուքի թելեր և ջախջախւած աչքի մը դուռնիք:

— Օ՛հ, ի՛նչ խայտառակութիւն: Սպաննած ու յետոյ կրակին մէջ նետած են, այնպէս չէ:

Քիչ մը առաջ Բաթրիսը կանչող մարդը, որ էն կարեւոր անձնաւորութիւնը կը թւէր, դարձեալ մօտեցաւ.

— Ո՞վ էք դուք: — Հարիւրապետ Պէլվալ, պարոն, Տիկին էսարէսի բարեկամը, մէկը այն վիրաւորներէն զոր իր ինամքներովը աղատած է:

— Լա՛ւ, պարոն, յարեց կարեւոր անձնաւորութիւնը: Բայց չէք կրնար հոս կենալ: Արդէն ոչ ոք պէտք չէ մնայ հոս: Պարոն քովսէր, հաճեցէք դուրս հանել հոս գտնուողները, բացի բժիշկէն, ու դրան առջեւ սպասել իբր պահակ: Թոյլ մի տաք որ մէկը ներս մտնէ ու էլ պատրւակով...:

— Պարոն, բացառիկ կարեւորութիւն ունեցող յայտնութիւններ պիտի ընեմ ձեզի, պընդեց Բաթրիս:

— Պիտի լսեմ ձեզ, հարիւրապետ, բայց քիչ մը յետոյ: Ներողութիւն:

Ե.

ԿԵՍ ՕՐԸ ՔՍԱՆ ԵՐԵՔ ԱՆՑԱԾ

Կիսովին սանդուխով ծածկւած այն մեծ անդաստակը, որ Ռէյնուար փողոցէն կ'առաջնորդէ դէպի վերին թէրասը պարտէզին, երկուքի կը բաժնէ էսարէսի բնակարանը. այդ անդաստակին միջոցաւ իրարու հետ կը հաղորդակցին երկու մասերը:

Ձախակողմը կան սալօնը և մատենադարանը. ասոնց շարունակութիւնը կը ձեւացնէ անջատ շէնք մը՝ մասնաւոր սանդուխով: Աջակողմը կը գտնուին գնդամուղի սրահ մը և ճաշասրահը՝ ցած ձեղուններով. այդ սրահներուն վերեւ կը գտնուին էսարէս պէյի

փողոցին վրայ նայող սրահը և պարտէզին վրայ նայող սենեակը:

Ասկէ անդին կը գտնուին ծառաներու յարկարածիւնը, ուր կը պառկէր նաև ծերուկ Սիմէօնը:

Բաթրիսէն խնդրած էին որ գնդամուղի սրահին մէջ սպասէ Սենեկապետին հետ: Հարիւրապետը հոն կը գտնուէր քառորդէ մը ի վեր, երբ Սիմէօնը ու սենեկապանուհին ներս մտցեցան:

Ծերուկ քարտուղարը շատ ընկճւած էր իր տիրոջ մահուան վրայ, և արտառոց շարժուածութեամբ կը ճառէր: Բաթրիս հարցափորձեց զայն: Մարդուկը անոր ականջն ի վար ըսաւ.

— Դեռ վերջացած չէ ամէն ինչ . . . : Պէտք է վախնալ շատ մը բաներէ . . . այսօր իսկ . . . ընդհուպ . . . :

— Ընդհուպ, կրկնեց Բաթրիս :

— Այո՛ . . . այո՛ . . . հաւաստեց ծերուկը դողդոջուն ձայնով : Ուրիշ բան չըսաւ քարտուղարը :

Գալով սենեկապահուհիին, սապէս պատասխանեց Բաթրիսի հարցումներուն .

— Պարոն, նախ տալիս անակնկալ մը ունեցանք. խոհարարը, սպասաւորը և դռնապանը մէկտեղ չկային : Յետոյ, ժամը վեցուկէսին, Սիմէօն պարոնին կողմէ եկաւ մեզի ըսելու թէ ան փակած էր մատենադարանին մէջ և թէ ոչ ոք խանգարելու չէր զայն, նոյնիսկ ճաշի համար : Տիկինը քիչ մը տկար էր : Ժամը իննին, Տիկինին հրամայեցին իր շօքօլան . . . : Ժամը տասնին, ան դուրս կ'ելլէր Պ. Սիմէօնին հետ : Սենեակները կարգի դնելէ յետոյ խոհանոցէն դուրս չելայ : Ժամը տասներմէկ, յետոյ տասերկու եղաւ . . . : Եւ ահա՛, ժամը մէկին, փողոցի դուռը զարնեցաւ : Պատուհանէն դուրս նայեցայ : Օթօմօպիլ մը կեցած էր, իր մէջ ունենալով չորս անձեր : Ոստիկանական քօմիսէրն էր որ կը ներկայանար ու պարոնին հետ կ'ուզէր տեսնել : Առաջնորդեցի զանոնք պարոնին դուռը զարկին, որ գոցած էր : Պատասխան չկար : Ի վերջոյ, անոնցմէ մէկը ազուակուղով բացաւ փականքը . . . : Այն ատեն կ'երեւակայէք . . . ոչ :

չէք կրնար երեւակայել . . . այդ պահուն, պարոնին գլուխը վառարանի վանդակին տակ կը գտնուէր : Օ՛հ, ի՛նչ անդամներ կան . . . : Սպաննած են դայն, անանկ չէ՞ . . . : Հոս գտնուող անձերէն մէկը յայտարարեց թէ կաթեւածահար եղած և կոնակի վրայ ինկած էր : Սակայն, իմ կարծիքովս . . . :

Ծերուկ Սիմէօնը մտիկ քրած էր, առանց բան մը ըսելու : Մօրուքը խառնափնթոր էր ու աչքերը սքօղւած էին դեղին ակնոցներուն ետին : Սիմէօն հեղնական քրքիլով մը մօտեցաւ Բաթրիսի ու անոր ականջն ի վար ըսաւ .

— Պէտք է շատ մը բաներէ վախնալ . . . տիկին Բօրալի . . . պէտք է հոսկէ երթայ անմիջապէս . . . անմիջապէս . . . եթէ ոչ վա՛յ իրեն . . . :

Հարիւրապետը սարսուաց և ուղեց հարցափորձել զայն, բայց չկրցաւ աւելի բան մը իմանալ : Ծերունին հոն չմնաց ալեւս : Ոստիկան մը եկաւ ու մատենադարան տարաւ զայն :

Երկար տեւեց Սիմէօնին վկայութիւնը :

Յետոյ լուեցան խոհարարուհիին ու սենեկապահուհիին վկայութիւնները : Ապա Բօրալիի քով գացին :

Ժամը չորսին, նոր օթօմօպիլ մը հասաւ : Բաթրիս տեսաւ որ անդաստակէն երկու հոգի կանցնէին զոր ամէն ոք յարգանքով կողոլունէր : Հարիւրապետը ճանչցաւ զանոնք. դատական և ներքին գործերու նախարարներն էին :

Անոնք կէս ժամ խորհրդակցեցան մատենադարանին մէջ ու յետոյ մեկնեցան :

Ժամը հինգի ատենները, ոստիկան մը եկաւ Բաթրիսը փրնտրուելու և առաջին յարկը առաջնորդեց զայն : Ոստիկանը դրան զարկաւ ու հեռացաւ : Բաթրիս զարգախուց մը մտցուեցաւ, ուր փայտի կրակ մը կը վառէր և երկու հոգի նստած էին . Բօրալի ու այն անձը որ քիչ առաջ զինքը կանչած էր և որ ամբողջ հարցաքննութիւնը վարելու երեւոյթ ունէր : Բաթրիս անոր առջեւ խոնարհութիւն մը քրաւ :

Յիսուն տարեկան, գէր, լեցուն դէմքով, դանդաղաշարժ մարդ մըն էր, որուն վառվռուն աչքերը իմացականութիւն կ'արտայայտէին :

— Պարոն հարցաքննիչ դատաւորն է, անշուշտ, հարցուց Բաթրիս :

— Ոչ, նախկին հարցաքննիչ դատաւոր Պ. Տէմալիօնն եմ, և մասնաւոր պաշտօն ունիմ այս գործը լուսաբանելու . . . բայց ոչ նախնական քննութիւնը կատարելու, ինչպէս ըսիք քիչ մը առաջ : Արդէն քննութիւն կատարելիք բան չկայ :

— Ի՞նչպէս կ'ըլլայ, գոչեց Բաթրիս ապշահար :

Բօրալիի երեսը նայեցաւ Բաթրիս : Մանկամարդ կիւր հարիւրապետին վրայ սեւեռած էր իր ուշադիր նայածքը : Յետոյ Պ. Տէմալիօնի նայեցաւ, որ կը յարէր .

— Երբ բացատրութիւններ տրւին, հարիւրապետ, իրարու

համամիտ պիտի գտնուինք ամէն կէտերու վրայ, ինչպէս տիկինին հետ համակարծիք գտնուեցանք :

— Ձեմ տարակուսիր այդ մասին, ըսաւ Բաթրիս : Սակայն կը վախնամ որ շատ մը կէտեր մուծի մէջ մնան :

— Անկասկած, բայց պիտի լուսաբանենք խնդիրը, և ամէնքնիս միասին պիտի լուսաբանենք : Կ'ուզէ՞ք ըսել ձեր գիտցածները :

Բաթրիս խորհեցաւ պահ մը ու յետոյ յայտարարեց .

— Պարոն, զարմանքս չպիտի ծածկեմ ձեռնէ : Ընելիք պատմութիւնս անկարելոր չէ, սակայն, հոս մէկը չկայ որ արձանագրէ զայն . վկայութեան մը և երդումով եղած յայտարարութեան մը արժէքը չպիտի ունենայ, որպէսզի ստորագրեմ :

— Հարիւրապետս, դուք պիտի սահմանէք ձեր խօսքերուն և հանելիք հետեւութիւններուն արժէքը : Առ այժմ նախնական խօսակցութիւն մը, կարծիքներու փոխանակութիւն մընէ պատահած դէպքերու վրայ, որոնց մասին տիկին էսարէս այնպիսի տեղեկութիւններ տաւ զոր դուք չպիտի կրնաք տալ կարծեմ :

Բաթրիս յետաձգեց պատասխանը : Սա տարտամ տպաւորութիւնը ունէր թէ համաձայնութիւն մը գոյացած էր մանկամարդ կնոջ ու դատաւորին միջեւ, Բաթրիս իր ներկայութեամբ ու եռանդով տաղտկալի անձ մը կը դառնար, զոր կ'ուզէին ճամբել : Ուստի որոշեց պայտպանողական դիրք մը բռնել մինչեւ որ իր խօսակիցը արտայայտուէր :

— Արդարեւ տիկինը կրնայ ձեզի տեղեկութիւններ հաղորդած ըլլալ: Բայց գիտե՞ք այն տեսակցութիւնը, որուն ակամայ ներկայ գտնեցայ ճաշարանին մէջ:

— Այո՛:

— Տիկին էսարէսի վրայ եղած առեւանգումի փորձէն տեղեկութիւն ունի՞ք:

— Այո՛:

— Սպանութեանէ՞ն:

— Այո՛:

— Տիկին էսարէս ձեզի պատմած է շանթաթի այն դէպքը որ այս գիշեր տեղի ունեցաւ Պ. էսարէսի դէմ, ինչպէս նաեւ չարչարանքին մանրամասնութիւնները, զնդապետին մահը, չորս միլիոններու յանձնումը, յետոյ հեռաձայնական տեսակցութիւնը Պ. էսարէսի ու Պ. կրէկուարի միջեւ, վերջապէս ամուսնին կողմէ կնոջը եղած սպառնալիքները:

— Այո՛, հարիւրապետս, այդ ամէնէն տեղեկութիւն ունիմ, այսինքն ձեր բոլոր գիտցածներուն իրազեկ եմ. առկէ զատ գիտեմ նաեւ այն բաները որոնք երեւան եկան իմ անձնական քննութեամբս:

— Արդարեւ, յարեց Բաթրիս, կը տեսնեմ որ իմ պատմութիւնս անօգուտ կը դառնայ. հարկ եղած բոլոր տարրերը ունի՞ք՝ եզրակացութեան մը յանգելու համար:

Ու շարունակելով հարցափորձել և անոր հարցումներէն խուսափել, յարեց.

— Կրնա՞մ ձեզի հարցնել թէ ի՞նչ ուղղութեամբ եզրակացուցած էք:

— Հարիւրապետս, վերջնական չեն իմ եզրակացութիւններս: Սակայն մինչեւ որ հակառակը ապացուցուի, նամակի մը խօսքերուն կը վստահիմ: Պ. էսարէս այսօր կէս օրին իր կնոջ ուղղած է այդ նամակը, զոր իր գրասեղանին վրայ գտանք: Նամակը աւարտած չէ: Տիկին էսարէս ինէ ինչդրեց որ կարդամ զայն և ի հարկին ձեզի հաղորդեմ: Աւասիկ այդ նամակը.

Այսօր, 4 Ապրիլ, կիս օր

«Քօրալի,

«Երէկ, անխոտովանելի պատճառներ վերագրեցիր իմ մեկնումին. անիրաւ ես այդ մասին, և ես սխալեցայ թերեւս, բաւարար ինքնապաշտպանութիւն մը ըրած չըլլալուս համար: Իմ մեկնումիս միակ շարժառիթը կը ձեւացնեն այն ատելութիւնները, որով շրջապատուած եմ. դուն այլ քովդ տեսար թէ ի՞նչ անողոք վայրագութեամբ մը վարեցան ինձի հետ: Փախուստէն զատ փրկութեան ուրիշ միջոց չկայ այդպիսի թշնամիներու հանդէպ, որոնք կը ջանան ամէն կերպով կողոպտել զիս: Ուրեմն կը մեկնիմ, բայց քեզի կը յիշեցնեմ իմ բացարձակ կամքս: Առաջին ազդանշանիս վրայ, պէտք է ճամբայ ելլես՝ ինձի միանալու համար: Եթէ Բարիզէն չհեռանաս, ոչ մէկ բան կրնայ քեզ ապահովել օրինաւոր զայրոյթի մը դէմ, և ոչ իսկ իմ մահս: Արդարեւ, ամէն միջոց ձեռք առած եմ, որպէս զի այդ պարագային...»

— Նամակը հոս կանգ կ'առնէ, ըսաւ Պ. Տէմալիօն, յանձնելով զայն Քօրալիի: Անմիտելի նշանի

մը շնորհիւ գիտենք թէ վերջին տողերը գրւած են Պ. էսարէսի մահւընէն քիչ առաջ, քանի որ իր անկումին մէջ վար ձգած է փոքր ժամացոյց մը, որ գրասեղանին վրայ կը գտնուէր. այդ ժամացոյցը ցոյց կուտայ կէս օրը քսաներեք վայրկեան անցած: Կ'ենթադրեմ որ դէշուութիւն զգացած ըլլալով ուղած է ոտքի ելլել և գլխու պտոյտ ունենալով դետին ինկած է: Դժբախտաբար, ուժգին կրակ մը կար վառարանին մէջ, որուն մօտ կը գտնուէր ան. գլուխը վանդակին զարկած ըլլալով այնքան խորունկ վէրք մը ստացած է — բժիշկին քննութեան համաձայն — որ նւազում մը ունեցած է: Այն ատեն, կրակը շատ մօտ ըլլալուն, իր աւերիչ գործը կատարած է. ու ձեր աչքերով տեսաք թէ ի՞նչպէս...

Բաթրիս ապշութեամբ մտիկ կ'ընէր այդ անակնկալ բացատրութիւնը:

— Ուրեմն, ձեր կարծիքով, Պ. էսարէս արկածի հետեւանքով մեռած է, և ոչ թէ սպանուած:

— Սպանուած մի, հաւատա՞ որ ո՛չ մէկ նշան թոյլ չտար որ այդպիսի ենթադրութիւն մը ընենք:

— Սակայն...

— Հարիւրապետս, գաղափարներու զուգորդութեան մը զոհ կ'ըլլաք, ինչ որ արդարանալի է իսկապէս: Երէկ-ընէ ի վեր ներկայ կը գտնուէք եղբրական դէպքերու. բնականաբար ձեր երեւակայութիւնը կ'առաջնորդէ էն եղբրական լու՝ Միլիոններու Գաղտնիքը

ծուծին, այն է սպանութիւնը: Միայն թէ խորհեցէ՛ք անգամ մը: Ինչո՞ւ այդ սպանութիւնը, և որո՞ւ կողմէ: Պուրնէֆ և իր բարեկամները: Ի՞նչ պէտք կարատոր: Թղթադրամներով յղփացած էին, ու ենթադրելով իսկ թէ կրէկուար անուն անձանօթը ետ առած ըլլայ այդ միլիոնները, Պ. էսարէսը սպաննելով չէ որ պիտի գտնէին այդ միլիոնները: Մնաց որ, անոնք ո՞ւր կէ կրնան ներս մտած և դուրս ելած ըլլալ:

— Ոչ, հարիւրապետս, Պ. էսարէս արկածի հետեւանքով մեռած է: Իրողութիւնները անվիճելի են. օրէնսդէտ բժիշկին կարծիքն ալ ատ է և այդ իմաստով տեղեկագիր մը պիտի պատրաստէ:

Բաթրիս Պէլլալ դարձաւ Քօրալիի ու ըսաւ.

— Տիկինին կարծիքն ալ ատ է:

Մանկամարդ կինը քիչ մը ժպտելով պատասխանեց.

— Այո:

— Ծերուկ Սիմէօնն ալ այդպէ՞ս կը կարծէ:

— Օ՛հ, ծերուկ Սիմէօն կը զառանցէ, պատասխանեց նախկին դատաւորը: Եթէ Սիմէօնին ըսածներուն հաւատ ընծայենք, մարդ պիտի կարծէ որ ամէն ինչ կը վերսկսի, վտանգ մը կը սպառնայ Տիկին էսարէսի և թէ այս վերջինը պէտք է խոյս տայ հիմակընէ: Ահա ինչ որ յայտարարեց ինձի: Սակայն, զիս առաջնորդեց պարտէզին վրայ նայող նախկին դուռ մը, որ կը բացուի Բէյնուար փողոցին հետ ուղղա-

հայեաց եղող գործի մը վրայ. հոն ինծի ցոյց տուաւ պահապան շան մը դիակը, և այդ դրան ու մատենադարանի մօտակայ վերնադաւթակին միջեւ քայլափոխերու հետքեր: Բայց դուք կը ճանչնաք այդ հետքերը, այնպէս չէ: Ձեր և ձեր Սենեկալցիին քայլափոխերու հետքերն են: Գալով շան խեղդուելուն, կրնամ ձեր Սենեկալցիին վերագրել, այնպէս չէ:

Բաթրիս հիմա կ'ըմբռնէր: Դատաւորին վերապահումները, բացատրութիւնները և մանկամարդ կնոջ հետ համաձայնութիւնը, այդ ամէնը տակաւ ճշմարիտ նշանակութիւն մը կը ստանար:

Հարիւրապետը բացորոշապէս հարցուց.

— Ուրեմն ո՞՞՞ր չկա՞յ գործին մէջ:

— Ոչ:

— Ուրեմն նախնական հարցաքննութիւն չպիտի՞ կատարուի:

— Ոչ:

— Ուրեմն աղմուկ չպիտի՞ հանւի այս գործի մասին: Լուսթեան և մոռացումի պիտի՞ դատապարտուի:

— Ծիշդ այդպէս:

Հարիւրապետ Պէլլալ սկսաւ չափաչփել սենեակը, իր սովորութեան համաձայն: Հիմա կը յիշէր Էսարէսի սա գուշակութիւնը.

«Չպիտի ձերբակալեն զիս, և եթէ ձերբակալեն իսկ, ազատ պիտի թողուն...: Գործը պիտի մարեն...»

Էսարէս յտակատես եղած էր Արդարութիւնը կը լռէր, Քո-

րալի մէջ գտնելով լուսթեան մեղսակից մը:

Այդ գործելակերպը խոր զայրոյթ կը պատճառէր հարիւրապետին: Ան կը կասկածէր թէ Քորալի և Տէմալիօնի միջեւ կնքած անայլայլ դաշինքին շնորհիւ մանկամարդ կինը կը մղէր իր սեփական շահերը զօհելու օտար նկատումներու: Ատոր համար նախ պէտք էր Բաթրիսի ձեռքէն օձիքը ազատել:

— Օ՛հ, օ՛հ, այդ պարոնը իր հանդարտութեամբ ու հեղնութեամբ նեղութիւն կը պատճառէ ինծի: Քիտ կը խնդայ պարզապէս, խորհեցաւ Բաթրիս:

Սակայն, հարիւրապետը զըսպեց ինքզինքը, ու հաշտութիւն ձեւացնելով, դատաւորին մօտ գնաց նստաւ:

— Պարո՛ն, ներեցէ՛ք որ կը պնդեմ, թէ եւ այդ պնդումն անխորհրդապահ թւի ձեզի: Բայց իմ ընթացքս կարելի չէ միայն բացատրել այն համակրութեամբ կամ զգացումով զոր կրնամ ունենալ տիկին Էսարէսի նկատմամբ, այնպիսի ատեն մը, ուր աւելի քան երբեք կղզիացած է ան. տիկինը առաջընէ աւելի հիմա ու է համակրանք ու ըզգացում կը մերթէ: Իմ ընթացքս կարելի է բացատրել կարգ մը խորհրդաւոր կապերով, որոնք իրարու կը զօդեն մեզ այնպիսի ատեն մը ուր չեն կրցած մեր նայածքները թափանցել: Տիկին Էսարէս ձեզ իրազեկ չէ ըրած այն մանրամասնութիւններուն, որոնք իմ կարծիքովս, մեծ կարեւորութիւն ունին ինծի. անհնար կը թւի կարեւորութիւն

չընծայել մեզի մտազբաղուածին պատճառող դէպքերուն:

Պ. Տէմալիօն դիտելով որ Քորալին գլխով հաւանութեան նշան կը յայտնէր, պատասխանեց.

— Այո՛, տիկին Էսարէս իմացուց ինծի, և նոյն իսկ...

Պ. Տէմալիօն վարանեցաւ ու դարձեալ մանկամարդ կնոջ կարծիքը հարցուց նայածքով: Քորալի կարմրեցաւ ու շփոթութեան մատնեցաւ:

Սակայն Պ. Տէմալիօն պատասխանի մը կը սպասէր, աւելի առաջ երթալու համար: Քորալի վերջոյ մեղմաձայն յայտարարեց.

— Հարիւրապետ Պէլլալ պէտք է գիտնայ ինչ որ երեւան հանած ենք: Այդ ճշմարտութիւնը այնքան ինծի կը պատկանի որքան անոր, ու ես իրաւունք չունիմ անկէ ծածկելու ճշմարտութիւնը:

— Խօսելու պէտք չկայ, ըսաւ Պ. Տէմալիօն: Կը բաւէ հարիւրապետին ներկայացնել լուսանկարներու սա ալպօմը զոր գտայ: Աւասիկ, հարիւրապետ:

Ու դատաւորը Բաթրիսի երկարեց խիտ բարակ ալպօմ մը, զոր կտաւէ կազմով և առաձգական լարով մը բռնւած:

Հարիւրապետը անձկութեամբ բռնեց ալպօմը: Բայց զայն բաւալէն յետոյ այնպիսի անակնկալի մը առջեւ գտնեցաւ որ բացազանչութիւն մը արձակեց.

— Անհաւատալի՛ բան:

Առաջին էջին վրայ, չորս անկիւնները շրջանակի մէջ առնւած, երկու լուսանկարներ կը տեսնէին, որոնցմէ մէկը կը ներկայացնէր անգլ. քօլէճականի զգես-

տով տղայ մը, իսկ միւսը՝ աղջնակ մը: Անոնց տակ երկու յիշատակութիւններ կային. Աջակողմը՝ «Բաթրիս տասը տարեկանին մէջ», ձախակողմը՝ «Քորալի երեք տարեկանին մէջ»:

Չափազանց յուզւած, Բաթրիս էջը դարձուց:

Երկրորդ էջին վրայ կը գտնուէր Բաթրիսի լուսանկարը տասնհինգ տարեկանին մէջ, ու Քորալիինը՝ ութը տարեկանին մէջ:

Նոյնպէս հարիւրապետը տեսաւ իր լուսանկարները՝ տասներինը, քսաներեք և քսանըութը տարիքներուն մէջ քաշւած: Քորալի միշտ կ'ընկերանար, նախ իբր աղջնակ, յետոյ իբր ծաղկատի աղջիկ ու մանկամարդ կին:

— Անհաւատալի՛ է աս, կը մրմնջէր Բաթրիս: Կարելի՞ բան է միթէ: Ահա լուսանկարներ, որոնց գոյութենէն տեղեկութիւն չունէի և որոնք կը ներկայացնեն իմ կեանքիս ընթացքը. ապահովաբար ամաթէօրներու կողմէ քաշւած լուսանկարներ են ասոնք: Ահա՛ զինւորի ձեւով լուսանկարս, երբ զինւորական ծառայութիւնս կը կատարէի...: Ահա՛ ձիւ վրայ հեծած...: Ո՞վ կրնայ հրամայած ըլլալ որ այս լուսանկարները քաշէին: Տիկին, ո՞վ կրնայ գանոնք միացուցած ըլլալ ձեր լուսանկարներուն հետ:

Բաթրիս իր աչքերը յառած էր Քորալիի վրայ: Մանկամարդ կինը կը խուսափէր հարիւրապետին հարցափորձէն և գլուխը կը ծռէր. իրենց կեանքերուն մտերմութիւնը, այդ լուսանը-

կարներով ի յայտ եկած, խորապէս կը վրդովէր իր ամբողջ էութիւնը:

Բաթրիս կրկնեց.

— Ո՞վ կրնայ իրարու քով բերած ըլլալ այդ լուսանկարները: Դուք գիտէ՞ք: Որո՞ւնն է այս ալպօմը:

Պ. Տէմալիօն պատասխանեց.

— Բժիշկը գտաւ, Պ. Էսարէսը հանկեցուցած ատեն: Պ. Էսարէս իր շապիկին տակ լնայեօ մը կը կրէր, ու անոր ներսի կողմը կարւած գրպանի մը մէջ կը պահէր այս ալպօմը, որուն խաւաքարը բժիշկին ձեռքին զարնւած էր:

Այս անգամ Բաթրիսի ու Քորալի նայածքները իրարու հանդիպեցան: Հարիւրապետը կը վրդովէր սա զաղափարէն թէ Պ. Էսարէս 25 տարիէ ի վեր հաւաքած էր իրենց լուսանկարները ու կուրծքին վրայ կը պահէր, անոնց հետ ապրելով ու մեռնելով: Բաթրիս այն աստիճան վրդովւած էր որ այդ բանին նշանակութիւնն իսկ չէր փորձեր հասկընալ:

— Պարոն, վստահ էք ձեր ըսածին վրայ, հարցուց հարիւրապետը:

— Հոն էի, ըսաւ Պ. Տէմալիօն: Հոն ներկայ կը գտնուէի, երբ այդ լուսանկարները երեւան հանկեցան: Ուրիշ բան մըն ալ ես երեւան հանցի, որ քիչ մը առաջ ըսածս կը հասատէ և իսկապէս զարմանալի կերպով կը լրացնէ զայն: Լէտայեօն մը գտայ, մեղեսիկ քարի մը ընդել ուղւած և ցանցադրւազ չըջանակով մը պարփակւած:

— Ի՞նչ կ'ըսէք, ի՞նչ կ'ըսէք, դոչեց հարիւրապետ Պէլլալ: Մէտայեօն մը: Մեղեսիկէ՞ մէտայեօն մը:

— Պարոն, դուք ալ քննեցէք, ըսաւ դատաւորը, մէտայեօնը հարիւրապետին երկարելով, տիկին Էսարէսի կարծիքը անելէ յետոյ նայւածքով:

Պ. Տէմալիօն հարիւրապետին երկարեց մեղեսիկը, որ աւելի մեծ էր քան Բաթրիսի պրըլօքը ու Քորալի համրիչը՝ երկուքը միասին, որոնք գունտ մը կը ձեւացնէին. այդ գունտը չըջանակւած էր ոսկիէ ցանցադրւագով մը, որ համրիչին ու պրըլօքին պէս քանդակւած էր:

— Կրնամ՞ բանալ, հարցուց Բաթրիս:

Քորալի շարժուածելով մը խնդրեց որ բանայ զայն:

Բիւրեղէ զսպանակ մը իրարմէ կը բաժնէր երկու խիստ փօքր լուսանկարներ, մէկը Քորալիինը՝ հիւանդապահուհիի տարագով, իսկ միւսը խեղանդամ Բաթրիսինը, որ սպայի համադրեստ կը կրէր:

Բաթրիս, գունատած, կը խորհէր: Ռոպէ մը յետոյ հարցուց.

— Իրո՞ւնն է այս մէտայեօնը: Պարո՞ն, դուք գտաք զայն:

— Այո՞, հարիւրապետս:

— Ո՞ւր:

Դատաւորը կը վարանէր կարծես: Քորալի կերպարանքը դիտելով Բաթրիս սա սպաւորութիւնը ունեցաւ թէ այդ մանրամասնութեան տեղեակ չէր ան:

Ի վերջոյ Պ. Տէմալիօն պատասխանեց.

— Մեռեալի՛ն ձեռքին մէջ գտայ զայն:

— Մեռեալին ձեռքին մէջ: Պ. Էսարէսի՞ ձեռքին մէջ:

Բաթրիս ընդոտ շարժում մը ըրաւ իսկոյն, կարծես յեղակարծ ընդհարում մը ունեցած ըլլար: Դատաւորին վրայ ծռած, կ'ուզէր երկրորդ անգամ լսել այդ խօսքը, ստոյգ նկատելէ առաջ:

— Այո՞, իր ձեռքին մէջ: Ստիպեցայ կծկւած մատները բաժնել, մէտայեօնը խլելու համար:

Բաթրիս հասակը շտկեց ու բռունցքը սեղանին զարնելով, գոչեց.

— Պարոն, ձեզի բան մը պիտի ըսեմ զոր իբր վերջին փաստ կը վերապահէի, ապացուցանելու համար թէ իմ գործակցութիւնս անօգուտ չէ. ըսելիքս մեծ կարեւորութիւն կը ստանայ հիմա եղած յայտարարութիւններէն յետոյ: Պարո՞ն, այս առտու, մէկը հեռաձայնով զիս ուզեց. հաղորդակցութիւնը հազիւ հաստատւած էր, երբ բուռն յուզման մատնւած մարդու մը երեւոյթը ունեցող մէկը եղեանական յարձակումի ենթարկւած էր. աղմուկը մինչեւ ինծի կը հասնէր: Կռիւի ժխորին ու հոգեվարքի ճիչերուն մէջ լըսեցի սա խօսքերը զոր տարաբախտ մարդը կը ջանար ինծի հաղորդել իբր վերջին տեղեկութիւն. «Բաթրիս... Քորալի... Մեղեսիկէ մէտայեօնը... այո՞ իմ վրաս կը գտնուի... մէտայեօնը...: Ա՛հ, շատ ուշ է... շատ պիտի ուզէի որ... Բաթրիս...: Քորալի...»: Ահա թէ ի՛նչ լսեցի, պարոն: Հեռուեալ երկու իրո-

ղութիւնները պարտաւոր ենք նկատի առնել: Այս առտու, ժամը եօթը տասնըինը անցած, մարդ մը սպաննւած է, որ իր վրայ կը կրէր մեղեսիկէ մէտայեօն մը: Առաջին անվիճելի իրողութիւնն է աս: Քանի մը ժամ յետոյ, կէս օրը քսան երեք անցած, ուրիշ մարդու մը ձեռքին մէջ կը գտնեն այդ միեւնոյն մէտայեօնը: Աս ալ երկրորդ անվիճելի իրողութիւնն է: Երկու դէպքերը իրարու մօտեցուցէք: Այն ատեն պիտի ստիպուինք եզրակացնելու թէ այն առաջին ոճիբը, որուն հեռուոր արձագանգը լոցի հեռուէն, հօս գործըւած է, այս բնակարանին, այս մատենադարանին մէջ, ուր երէկ իրիկունէ ի վեր այնքան տրամաթիք տեսարաններ պարզուեցան մեր ներկայութեան:

Այս յայտնութիւնը, որ նոր ամբաստանութիւն մըն էր Էսարէս պէյի դէմ, մեծ տպաւորութիւն գործեց դատաւորին վրայ: Դատաւորը ակներեւ անբարեացակամութիւն մը ցոյց տւած պիտի ըլլար, եթէ նկատի չառնէր Բաթրիսի տրամբանական փաստաբերութիւնը զոր կը քոտ ուժգնութեամբ արտայայտած էր ան:

Քորալի դէմքը անդին դարձուցած ըլլալով քիչ մը, Բաթրիս չէր տեսներ զայն, բայց կը կռահէր անոր շփոթութիւնը այդքան անարդութեան ու անպատուութեան հանդէպ:

Պ. Տէմալիօն առարկեց.

— Հարիւրապետս, երկու անվիճելի իրողութիւններու վրայ կը խօսիք: Առաջինի մասին ձեզի

դիտել պիտի տամ որ այս առտու, ժամը եօթը տասնըիննին, սպաննւած մարդու մը դիակը չենք գտած:

— Պիտի գտնեն զայն:

— Լաւ: Գալով երկրորդ կէտին, այն է Էսարէս պէյի ձեռքին մէջ գտնւած մեղեսիկէ մէտայեօնին, ո՞վ կրնայ մեզի ըսել թէ Էսարէս պէյ այդ սպաննւած մարդէն առած է և ոչ թէ ուրիշ տեղէ: Վերջապէս չենք գիտեր թէ այդ ժամուն, տունը, մատենադարանին մէջ կը գտնուէր:

— Ես գիտեմ այդպէս ըլլալը:

— Ինչպէ՞ս:

— Քանի մը վայրկեան առաջ հեռաձայնեցի անոր ու պատասխանեց ինծի: Աւելին կայ, ամէն պատահականութեան առաջը առնելու համար, ինծի ըսաւ թէ հեռաձայնած էր իմ տունս, բայց հաղորդակցութիւնը խղած էին:

Պ. Տէմալիօն պահ մը խորհելէ յետոյ յարեց.

— Այս առտու դ՞ուրս ելաւ:

— Թո՛ղ Տիկին Էսարէս ըսէ մեզի:

Առանց ետին դառնալու, Բաթրիսի նայածքէն խուսափելու ակներբե փափաքով, Բօրալի յայտարարեց.

— Չեմ կարծեր որ դուրս ելած ըլլայ ան: Իր մահւան ատեն կրած հագուստները ներքնազգեստներ են:

— Երէկ իրիկընէ ի վեր տեսա՞ք զայն:

— Այս առտու, երեք անգամ դուռս զարկաւ, ժամը եօթնէն մինչեւ ինը: Զբացի դուռը: Փամը տասնըմէկին, առանձին մեկնեցայ. լսեցի որ Սիմէօնը կը

կանչէր ու անոր կը հրամայէր ինծի ընկերանալ: Սիմէօն անմիջապէս ինծի միացաւ փողոցին մէջ: Ահա բոլոր գիտցածս:

Երկար լռութիւն մը տրեց: Ամէն ոք կը խորհէր այդ տարօրինակ արկածախնդրութիւններուն վրայ:

Ի վերջոյ Պ. Տէմալիօն հասկցաւ թէ կարելի չէր հարիւրապետ Պէլվալի պէս մարդու մը ձեռքէն օձիքը ազատել դիւրաւ: Ուստի ուզեց նախ լաւ մը հասկնալ թէ ի՞նչ էր հակառակորդին վերջին խօսքը:

— Նպատակին դիմենք ուղղակի: Դուք այնպիսի ենթադրութիւն մը կ'ընէք որ շատ խառնաշփոթ կը թւի ինծի: Իսկապէս ի՞նչ է այդ ենթադրութիւնը: Եթէ համամիտ չգտնուիմ, ի՞նչ ընթացք պիտի բռնէք: Երկու որոշ հարցումներ կ'ընեմ ձեզի: Կ'ուզէ՞ք պատասխանել:

— Նոյնքան յստակատեսութեամբ որքան դուք կը հարցնէք, պարո՛ն:

Գատաւորին մօտենալով յայտարարեց.

— Ահա՛, պարո՛ն, կուլի ու յարձակումի դետինը գոր կ'ընտրեմ, եթէ պէտք ըլլայ յարձակումի: Սպաննւած է մարդ մը, երբ իր ծրագրիները պիտի գործադրէր. այդ մարդը ատենօք ճանչցած է զիս, ինչպէս նաև տիկին Էսարէսը՝ տղայ եղած ատեն. ան մեզմով շահագրգռւած ըլլալուն՝ զանազան տարիքներու մէջ քաշւած մեր լուսանկարները պահած էր և թաքուն պատճառներ ունէր մեզ սիրելու. անրէ որ պարտեղին բանակին ինծի

դրկած էր ու կը պատրասուէր մեզ իրարու մօտեցնելու այնպիսի շարժառիթներով, որ մեզի պիտի յայտնէր: Արդ, ամէն ինչ կ'ապացուցանէ թէ այդ մարդը սպաննւած է Պ. Էսարէսի կողմէ: Ուստի որոշած եմ դատական իշխանութեան մօտ բողոքել, ինչ որ ալ ըլլան իմ արարքիս հետեւանքները: Հաւատացե՛ք որ իմ բողոքս չպիտի խեղդեն: Միշտ կարելի է միջոց մը գտնել՝ ինքզինքը լսելի ընել տալու համար, նոյն իսկ տանիքներուն վրայ աղաղակելով ճշմարտութիւնը:

Պ. Տէմալիօն սկսաւ ծիծաղիլ:

— Հարիւրապետս, ի՞նչ արագ կ'ընթանաք:

— Պարո՛ն, իմ խղճիս համաձայն կ'ընթանամ, և վստահ եմ թէ Տիկին Էսարէս պիտի ներէ ինծի: Ան գիտէ թէ կորստեան մատնւած է, եթէ այս գործը խափանեն ու արդարութիւնը աջակցութիւն չընծայէ իրեն: Ան գիտէ թէ իրեն սպառնացող թըշնամիները ու է բանի առջեւ չպիտի ընկրկին՝ իրենց նպատակին հասնելու և Տիկին Էսարէսը մէջտեղէն վերցնելու համար, որ իրենց խոչընդոտ կ'ըլլայ: Աւելի սոսկալին սա է որ էն յստակատես մարդիկ լսկ չեն տեսներ

այդ նպատակը: Անուշի կուլի կը մղեն այդ թշնամիներուն դէմ, առանց գիտնալու թէ ի՞նչ բանի վրայ կը դառնայ ինչդիրը:

Պ. Տէմալիօն քանի մը բոպէ լուռ մնալէ յետոյ, ձեռքը դրաւ Բաթրիսի ուսին վրայ, ու հանդարտօրէն ըսաւ.

— Իսկ եթէ արդարութիւնը տեղեկութիւն ունենայ այդ բանէն:

Բաթրիս զարմանքով նայեցաւ զատաւորին երեսը ու հարցուց.

— Գիտե՞ք ի՞նչ ըլլաւ:

— Թերևս:

— Կրնա՞ք ինծի ըսել:

— Անշուշտ, քանի որ զիս կը ստիպէք...:

— Ի՞նչ բանի վրայ կը դառնայ ինչդիրը:

— Օ՛հ, ոչինչ բանի մը վրայ:

— Բայց վերջապէս ի՞նչ է...

— Միլիառ մը:

— Միլիառ մի՛:

— Այո՛, պարզապէս միլիառ մը, որուն երկու երրորդը, եթէ ոչ երեք չորրորդը, Ֆրանսայէն դուրս ելած է պատերազմէն առաջ: Բայց մնացած 250 կամ 300 միլիոնները միլիարէն աւելի կ'արժեն այն պատճառով որ...

— Ի՞նչ պատճառով:

— Այն պատճառով որ ոսկեգրամ են անոնք:

2.

ԷՍԱՐԷՍ ՊԵՅԻ ԳՈՐԾԸ

Հարիւրապետ Պէլլալ քիչ մը կակուղցաւ կարծես: Տարտամօրէն կը նշմարէր այն նկատումները, որոնք արդարութիւնը կը բանադատէին խոհեմութեամբ մղելու ճակատամարտը:

— Վտանձէք, հարցուց Բաթրիս:

— Այո՛, հարիւրապետս: Երկու տարիէ ի վեր պաշտօն ունիմ այս գործը ուսումնասիրելու. կատարած քննութեամբս հաստատեցաւ որ Ֆրանսայէն սկիի արտածումներ կ'ըլլային, և իսկապէս անբացատրելի կը մնար այդ բանը: Բայց կը խոստովանիմ որ Տիկին Էսարէսի հետ ունեցած տեսակցութենէս ետքը միայն հասկցայ որ ո՛ւրկէ կ'ըլլային այդ արտածումները. ամբողջ Ֆրանսայի մէջ, և նոյն իսկ ամենայն տին անկիւնները կը գործէր այդ հսկայ կազմակերպութիւնը, որուն շնորհիւ անհրաժեշտ մետաղը երկրէն դուրս կ'ելլէր:

— Ուրեմն Տիկին Էսարէս տեղեկութիւն ունէ՞ր...

— Ոչ, բայց շատ մը բաներէ կը կասկածէր. այս գիշեր, ձեր ժամանումէն առաջ, Էսարէսի ու իր վրայ յարձակողներուն միջեւ փոխանակած խօսքերէն շատ բան իմացաւ, զոր ինծի հաղորդեց: Այսպէս կրցայ առեղծւածին թափանցել: Կ'ուզէի այդ առեղծւածին կատարեալ լուծումը ձեռք բերել առանց ձեր մաս-

նակցութեան. ներքին գործերու նախարարին հրամանն ալ ատ էր ու Տիկին Էսարէս միեւնոյն փափաքը կը յայտնէր: Բայց քու ցոյց տուած չափազանց եռանդը յաղթեց իմ վարսնումներուն, և որովհետեւ միջոց չկայ ձեռնէ խուսափելու, հարիւրապետս, առանց այլեւայլի պիտի արտայայտուիմ... մանաւանդ որ ձեր խմորը ունեցող աշխատակից մը արհամարհելի չէ:

— Ուրեմն, հարցուց Բաթրիս, որ կ'ուզէր աւելի շատ բան իմանալ:

— Ուրե՛մն դաւադիրներուն պետը հոս կը գտնուէր: Էսարէս պէ՛յ պանք Ֆրանքօ-Օրիանթալի տնօրէն՝ Լա Ֆայէթ փողոցը հաստատուած, ըստ երեւոյթին Եգիպտացի, իրականին մէջ՝ Թուրք, Բարիզի սեղանաւորական աշխարհին մէջ մեծ ազդեցութիւն կը վայելէր: Անգլ. հպատակութիւնը ընդունած էր, բայց գաղտնի յարաբերութիւններ կը մշակէր Եգիպտոսի նախկին տէրերուն հետ: Էսարէս պէյ պաշտօն ունէր օտար պետութեան մը հաշւին, զոր չպիտի կրնամ ճշդիւ ըսել, Ֆրանսայէն դուրս հանել բոլոր ոսկին և իր դրամարկղներուն մէջ լեցնել, որքան որ կրնային բովանդակել անոնք: Կարգ մը փաստաթուղթերու համաձայն, Էսարէս պէյ յաջողած է երկու տարւան մէջ

արտասահման զրկել եօթը հարիւր միլիոն: Վերջին առաքում մըն ալ կը պատրաստուէր, երբ պատերազմը բացուեցաւ: Կ'ըմբռնէք թէ այնուհետեւ կարելի չէր այնքան դիւրաւ դրամ դուրս հանել որքան խաղաղութեան ժամանակ: Սահմանադրուներուն վրայ վախօնները կը խուզակուէին: Նաւահանդիստներուն մէջ նաւերը խուզարկութեան կ'ենթարկուէին, Կարճ խօսքով՝ դրամի առաքում չեղաւ: Երկու հարիւր յիսուն, երեք հարիւր միլիոն ոսկի Ֆրանսայի մէջ մնաց: Տասը ամիսներ սահեցան, ու վերջապէս պատահեցաւ անխուսափելին. Էսարէս պէյ իր տրամադրութեան տակ ունենալով այդ առասպելական գումարը, տակաւ իրը նկատեց զայն, և ի վերջոյ որոշեց իւրացնել զայն: Միայն թէ մեղսակիցներ կային...

— Անո՞նք որ այս գիշեր տեսայ:

— Այո՛, հինգ վեց կասկածելի Լէվանթէններ, հպատակութեան կեղծ թուղթ ունեցող մարդիկ, աւելի կամ նւազ ծրպտած Պուլկարներ, գերման փոքր արքունիքներու գործակալներ են անոնք: Գաւառի մէջ Էսարէս պանքային մասնաճիւղերը կը վարէին այդ անձերը, Էսարէս պէյի հաշւին, հարիւրաւոր փոխ-գործակալներ ունէին, որոնք գիւղերը կը պտտէին, տունավաճառներ կը սարքէին, գիւղացիներուն հետ կը ճնկէին, պանքտոմսեր և արժեթուղթեր կը ներկայացնէին Ֆրանսական ոսկիին փոխարէն, ու բուրդէ գուլպաները կը պարպէին: Պա-Միլիոններու Գաղտնիք

տերազմի շրջանին, այդ գործակալները դադարեցուցին իրենց գործունէութիւնը, ու Էսարէս պէյի շուրջը համախմբեցան, որ նոյնպէս փակած էր Լա Ֆայէթ փողոցի գրասենեակները:

— Յետո՞յ:

— Յետոյ միջադէպեր պատահեցան, որոնց իրազեկ ենք արդէն: Անկասկած, մեղսակիցները իրենց կառավարութիւններուն միջոցով տեղեկացան թէ ոսկիի վերջին առաքումը չէր կատարուած. անոնք անշուշտ կուսեցին թէ Էսարէս պէյ կը փորձէր իւրացնել խուճրին կողմէ հաւաքուած երեք հարիւր միլիոնի գումարը: Նախկին ընկերներուն միջեւ պայքարը ծայր տուաւ, կատաղի ու անողոք պայքար մը. ընկերները կ'ուզէին ձեռք բերել իրենց կարկանդակի բաժինը, մինչդեռ Էսարէս միտքը դրած էր բան մը չտալ, պնդելով որ միլիոնները արտասահման զրկուած էին: Երէկ, այդ պայքարը իր ծայրագոյն սաստկութեան հասաւ: Կէս օրէն յետոյ, մեղսակիցները կը փորձէին առեւանգել Տիկին Էսարէսը, զոր իբր պատանդ վար պիտի դնէին, ամուսնին սպառնալու համար: Իրիկւան, գերագոյն դրւազը տեսաք:

— Բայց ինչո՞ւ երէկ իրիկուն եղաւ այդ բանը:

— Սա պատճառով որ մեղսակիցները ամէն պատճառ ունէին այնպէս կարծելու թէ միլիոնները պիտի անհետանային երէկ իրիկուն: Առանց գիտնալու թէ Էսարէս պէյ ի՛նչ միջոցներու կը դիմէր՝ վերջին առաքումները ընելու համար, անոնք կը խոր-

հէին որ իւրաքանչիւր առաքումէ կամ պարկերու փոխադրութենէ առաջ ազդանշան մը կը տրուէր :

— Այո՛, կայծերու անձրեւ մը, այնպէս չէ՞ :

— Արդարեւ, պարտէզին մէկ անկիւնը կը գտնուին ծաղիկի նախկին ջերմանոցներ, որոնց վրայ կայ ծխնելոյզ մը : Այդ ազտոտ, մրոտ, ձանձախարիտով լեցուն ծխնելոյզը բոցեր ու կայծեր կարծակէ, երբ ջերմոցը վառեն : Այդ կայծերը հեռուէն կը տեսնուին և իբր ազդարարութիւն կը ծառայեն : Էսարէս պէյ երէկ իրիկուն անձամբ վառեց ջերմոցը : Մեղսակիցները, իրար անցած, ու ամէն բան ընելու պատրաստ, էսարէս պէյի տունը եկան :

— Էսարէս պէյի ծրագիրը ի դերեւ ելա՞ն :

— Այո՛, բայց մեղսակիցներն ալ անյաջողութեան մատնեցան : Գնդապետը մտաւ : Միւսները թղթադրամներու քանի մը տըրցակներ միայն ձեռք անցուցին, բայց անոնք ալ ետ առնուցան : Պայքարը չէր վերջացած, ու այս առտուան եղերական դէպքերը պատահեցան իբր վերջաբան : Ձեր հաւաստումներուն համաձայն, ձեզի ծանօթ անձ մը, որ կը ջանար յարաբերութեան մտնել ձեզի հետ, ժամը եօթը տասնըրկնր անցած սպաններ է, հաւանաբար էսարէս պէյի կողմէ, որ կը վախնար անոր միջամտութենէն : Քանի մը ժամ յետոյ, կէս օրը քսաներեք անցած, էսարէս պէյ ալ սպաննուած էր, հաւանաբար իր մէկ մեղսակցին կողմէ : Ահա բովանդակ գործը, հա-

րիւրապետ : Հիմա որ դուք ալ ինծի չափ ամէն բանի տեղեկացաք, անշուշտ կը խորհիք թէ այս գործին նախնական քննութիւնը պէտք է զաղտնի մնայ ու սովորական կանոններով առաջ տարեկու չէ :

Պահ մը խորհելէ յետոյ, Բաթրիս յարեց .

— Այո՛, ես ալ այնպէս կը կարծեմ :

— Շա՛տ լաւ, գոչեց Պ. Տէմալիօն : Անօգուտ է տարածայնել անհետացած ոսկիի և անգտանելի ոսկիի այս պատմութիւնը, որ միտքերը պիտի վրդովէ. անշուշտ, կը խորհիք թէ ամբողջ երկու տարի այդքան մեծ քանակութեամբ ոսկի չփոխադրուի, առանց ցաւալի համաձայնութիւններու : Վստահ եմ թէ անձնական քննութեամբ երեւան պիտի ելլէ որ աւելի կամ նւազ կարեւոր կարգ մը զբաղմունքներ ու վարկի հաստատութիւններ դեղեւումներ ունեցած և սակարկութիւններ ըրած են, որոնց վրայ չեմ ուզեր ծանրանալ : Եթէ ինչդիրը հրատարակութեան տրուի, հետեւանքը աղետալի պիտի ըլլայ : Ուրեմն լռութիւն պահելու է :

— Բայց կարելի՞ է լռութիւն պահել :

— Ինչո՞ւ չէ :

— Քանի մը դիակներ կան մէջտեղը, որոնցմէ մէկն է գընդապետ Փաքէիի դիակը :

— Անձնասպան եղած է ան :

— Մուսթաֆայի դիակը պիտի գտնէք, և կամ թէ գտած էք կալիէրա պարտէզին մէջ :

— Պարզ դէպք մըն է :

— Պ. Էսարէսինը ի՞նչ է :

— Արկած :

— Ուրեմն եղեռնական միեւնոյն ուժին այդ բոլոր արտայայտութիւնները կղզեացած պիտի մնան :

— Ոչ մէկ բան ցոյց կուտայ այն կապը, որ իրարու կը միացնէ զանոնք :

— Հանրութիւնը թերեւս ատոր հակառակ պիտի խորհի :

— Հանրութիւնը պիտի խորհի այնպէս ինչպէս որ ուզենք : Պատերազմի շրջանի մէջ կ'ապրինք :

— Մամուլը պիտի խօսի անոր վրայ :

— Մամուլը չպիտի խօսի : Գրաքննութիւն կայ :

— Բայց եթէ նոր իրողութիւն մը երեւան ելլէ, նոր ոճի մը գործը... :

— Նո՞ր ոճի մը : Ինչո՞ւ : Գործը վերջացած է գէթ իր գործօն ու եղերական մասին մէջ : Վարազոյրը կը փակուի էսարէս պէյի սպաննութեան վրայ : Գալով իր արբանեակներուն, Պուրնէֆ և ուրիշներ, ութը օր չանցած, կեդրոնացման բանակետդի մը մէջ պիտի արգելափակուին : Անտիրական միլիտներու առջեւ կը գտնենք ինքզինքնիս. ոչ ոք պիտի համարձակի պահանջել այդ միլիտները, որոնց վրայ ձեռք դնելու իրաւունք ունի Ֆրանսա : Կարելին պիտի ընեմ այդ մասին : Բաթրիս Պէլվալ ցնցեց գլուխը ու ըսաւ .

— Կը մնայ Տիկին Էսարէսը, Պէտք է նկատի առնել իր ամուսինի կողմէ եղած սպառնալիքները :

— Մեռած է ան :

— Ի՞նչ օգուտ, սպառնալիքը

կը մնայ : Մերուկ Սիմէօն այդ սպառնալիքը ձեզի յայտնեց այնքան տպաւորիչ կերպով :

— Կէս մը խննթ է ան :

— Արդարեւ, իր ուղեղը անմիջական վտանգի մը տպաւորութեան ներքեւ կը գտնուի : Ոչ, պարոն, տակաւին չէ վերջացած պայքարը : Թերեւս նոր կը սկսի :

— Լա՛ւ, հարիւրապետ, հոս չե՞նք միթէ : Տիկինը պաշտպանեցէք այն ամէն միջոցներով որոնք ձեր կարողութեան սահմանին մէջ կը գտնուին և այն ամէն միջոցներով գորս ձեզի պիտի տրամադրեմ : Մեր աշխատակցութիւնը յարատեւ պիտի ըլլայ, քանի որ իմ գործս հոս է. ըլլալիք ճակատամարտը այս տան ու պարտէզին շրջաբակին մէջ տեղի պիտի ունենայ, թէև ես չեմ յուսար որ այդպիսի բան մը պատահի :

— Ի՞նչ բանի վրայ կը հիմնուիք, այդ ենթադրութիւնը ընելու համար... :

— Երէկ իրիկուն, Տիկին Էսարէսի ըրած կարգ մը խօսքերուն վրայ : Գնդապետ Փաքէի քանիցս կրկնեց, «ոսկին հոս է, էսարէս» : Ու ան կը յարէր. «Տարիներէ ի վեր, ամէն շաբթու, քու օթոմօպիլը հոս կը բերէր ինչ որ կար Լաֆայէթ փողոցի դրամատանդ մէջ : Օթօմօպիլի վարիչ Սիմէօն և դուն ձախ դունէն կը սահեցնէիք պարկերը : Ի՞նչպէս կը զբէտի հոնկէ : Ձեմ գիտեր : Բայց պատերազմի ատեն, հոն սպասող եօթը ութը հարիւր պարկերէն և ո՛չ մէկը դուրս հանուած չէ : Իսկոյն կասկածեցայ, որով դիշեր ցերեկ հըս-

կողովիւն կատարեցինք: Ոսկին հոս է»:

— Ո եւ է նշան չկա՞յ:

— Ոչ մէկ նշան: Միայն սա բանը կայ, որուն արժէքը համեմատական է:

Ու իր գրպանէն հանեց ձմրթկաւծ թուղթ մը զոր պարզեց ու յետոյ յարեց.

— Էսարէս պէյի ձեռքին մէջ մէտայեօնին հետ մէկտեղ կար մեղանով աղտոտած սա թուղթը, ուր աճապարանքով գրւած տձեւ բառեր կը տեսնուին. ընթեռնելիս սա երկու բառեր միայն կան. ոսկիէ եռանկիւնը: Ի՞նչ կը նշանակէ ոսկիէ եռանկիւնը: Ան ի՞նչ առնչութիւն ունի մեր գործին հետ: Առայժմ բան բան մը չեմ գիտեր այդ մասին: Առառաւելն կերեւակայեմ որ թուղթի այդ կտորն ալ մէտայեօնին պէս էսարէս պէյ խլած է այն մարդուն ձեռքէն, որ այս առտու մեռած է ժամը եօթը տասնըինը անցած, էսարէս կէս օր քսանըրեքին սպաննւած ատեն քննելու վրայ էր վայն:

— Այո՛, դէպքերը այդպէս պատահած ըլլալու են: Պարոն, ինչպէս կը տեսնէք, բոլոր այդ մանրամասնութիւնները իրարու հետ կապւած են, եզրակացուց Բաթրիս: Հաւատացէք որ խընդիրը մէկ է:

— Լա՛ւ, ըսաւ Պ. Տէմալիօն ոտքի ելլելով, մէկ խնդիր երկու մասերով... Դուք երկրորդը հետապնդեցէք: Իբր էն տարօրինակը կ'ընդունիմ այն լուսանըկարները որոնք երեւան հանւեցան և որոնք Տիկին Էսարէսը ու ձեզ կը ներկայցնեն միեւնոյն ալ-

պօմին վրայ ու միեւնոյն մէտայեօնին մէջ: Հոս հարց մը կը ծագի, որուն լուծումը ճշմարտութեան պիտի մօտեցնէ մեզ, անշուշտ: Ընդհուպ, հարիւրապետս: Ես ու իմ մարդիկս ձեր տրամադրութեան տակ կը գըտնուինք:

Դատաւորը Բաթրիսի ձեռքը սեղմեց...

— Պարոն, ձեզի պիտի դիմեմ, բայց այժմէն նախազգուշական միջոցներ ձեռք առնելու չէ՞ միթէ:

— Այդ միջոցները ձեռք առնւած չե՛ն: Տունը մեր կողմէ գրաււած չէ՞ միթէ:

— Այո՛... այո՛... գիտեմ՝ այդպէս ըլլաւ... բայց նախազգացում մը ունիմ թէ այս օրը առանց միջադէպի չպիտի վերջանայ... Յիշեցէք ծերուկ Սիմէօնի տարօրինակ խօսքերը...

Պ. Տէմալիօն սկսաւ ծիծաղիլ ու ըսաւ.

— Օ՛ն, հարիւրապետս, պէտք չէ չափազանցել: Եթէ հրեք մեզի դէմ կուող թշնամիներ կան տակաւին, անոնք շատ պէտք ունին հանգչելու: Վաղը կը խօսինք այդ մասին. կ'ընդունի՞ք, հարիւրապետս:

Պ. Տէմալիօն հարիւրապետին ձեռքը սեղմեց, Տիկին Էսարէսի առջեւ խոնարհութիւն ըսաւ ու դուրս ելաւ:

Պէլվալ նախ շարժում մը ըրաւ, դատաւորին հետ դուրս ելլելու համար: Դրան մօտ կանգ առաւ ու ետ դարձաւ:

Տիկին Էսարէս, որ կարծես բան մը չէր լսեր, անշարժ կը մնար կորագրամակ ու գլուխը անդին դարձուցած:

Բաթրիս ըսաւ անոր.

— Քօրալի...:

Մանկամարդ կինը չպատասխանեց, ու ան երկրորդ անգամ ըլլալով ըսաւ. «Քօրալի». հարիւրապետը յոյս ունէր որ Քօրալի չպիտի պատասխանէր, որովհետեւ մանկամարդ կնոջ լուսութիւնը աշխարհիս էն ցանկալի բանը կը թւէր իրեն: Այդ լուսութեան մէջ ոչ բռնադատում կար և ոչ ալ ընդզոհում: Քօրալի կ'ընդունէր որ Բաթրիս իր մօտ գտնւէր իբր օգնող բարեկամ մը: Ու հարիւրապետը ալ ևս չէր խորհեր բոլոր այն հարցերուն վրայ որոնք կը վրդովէին իր միտքը, ո՛չ ալ ոճիրներու այն շարքին վրայ որոնք իր շուրջը կուտակւած էին և ոչ իսկ այն վտանգներու մասին որոնք կըրնային զինքը շրջապատել: Մանկամարդ կնոջ լքումին ու ցաւին վրայ միայն կը խորհէր:

— Քօրալի, մի՛ պատասխանէք, բառ մը մի՛ հանէք ձեր բերնէն: Ինձի կ'իյնայ խօսիլ: Պէտք է ձեզի իմացնեմ ինչ որ չէք գիտեր, այսինքն այն շարժառիթները որով կուզէիք զիս հեռացնել այս տունէն... և նոյն իսկ ձեր կեանքէն...:

Բաթրիս ձեռքը դրաւ այն թիկնաթուռին յենարանին վրայ, ուր նստած էր Քօրալի. մանկամարդ կնոջ գլխանոցը բռնեց:

Ու Բաթրիս կ'ըսէր.

— Քօրալի, կ'երեւակայէք որ ձեր տան անպատուութիւնը ինչ կը հեռացնէ ձեզ, կը շառագունիք, այդ մարդուն կինը եղած ըլլալուն համար. ատոր համար չփոթ ու մտահոգ դրութեան մը մատ-

նւած էք, իբր թէ դուք յանցաւոր եղած ըլլայիք: Բայց ինչո՞ւ: Յանցանքը ձե՞րն է: Չէ՞ք խորհիր որ թշուառութեան ու ատելութեան անցեալ մը կայ մեր միջեւ, և թէ բռնադատուած էիք այդ ամուսնութիւնը կնքելու լեմ գիտեր ի՞նչ մեքենայութեամբ: Ոչ, Քօրալի ուրիշ բան մը կայ զոր ձեզի պիտի ըսեմ: Ուրիշ բան կայ...:

Բաթրիս ա՛լ աւելի ծռած էր մանկամարդ կնոջ վրայ, որուն հմայիչ կողմնադէմքը կը զանազանէր, մինչ ան լուսաւորւած էր վառարանին կրակովը: Յարածուն եռանդով մը գոչեց, Քօրալին դուղեկով, իբր սիրալիբ յարգանքի նշան:

— Քոյր Քօրալի, պէտք է խօսիմ, այնպէս չէ՞: Կ'ըմբռնես ու պայծառ կը տեսնես քու ներսդ: Ա՛հ, կը զգամ թէ ոտքերէդ մինչեւ գլուխդ կը դողաս: Բայց այո՛, առաջին օրէն իսկ, դուն սիրեցիր վիրաւորդ, թէեւ խեղանդամ ու սուրի վէրքերով ծածկւած ըլլարան: Առէ՛, ու մի՛ բողբոջեր: Այո՛, կ'ըմբռնեմ թէ այս խօսքերը այսօր լսելով կը նեղուիս քիչ մը: Թերեւս քիչ մը համբերելու էի...: Ինչո՞ւ: Բան մը չեմ ուզեր ձեռնէ: Քիտեմ, ու ատիկա բաւ է ինձի համար: Երկար ատեն քեզի հետ չպիտի խօսիմ այդ մասին, մինչեւ որ հասնի այն անխուսափելի ժամը, երբ պիտի ստիպուի անձամբ ըսել ինձի: Մինչեւ այն ատեն լուռ պիտի մնամ, բայց մեր միջեւ սէրը պիտի տևէ, ինչ որ զմայելի պիտի ըլլայ, քոյր Քօրալի...: Հիմա ալ կ'արտասուես:

Դարձեալ կ'ուզես ժխտել: Բայց քոյր Քորալի, երբ արցունք կը թափես, այն ատեն քեզ կը ճանչնամ. պատճառը սա է որ քու պաշտելի սիրտը կը զեչու գորովով ու սէրով: Կարտասուե՞ս: Ա՛հ, քուրիկ, չէի հաւատար որ այդքան կը սիրես զիս:

Բաթրիսի աչքերն ալ լեցած էին: Քորալի արցունքները տժգոյն այտերն ի վար կը հոսէին: Հարիւրապետը կ'ըզար համբուրել այդ արտասուածոր այտերը: Բայց գորովի ամէն արտայայտութիւն նախատինք մը կը թւէր իրեն՝ այդ բոսիկին: Միայն խելայեղ նայածքներ ուղղելով կը գոհանար:

Բաթրիս զիտած ատեն սա տպաւորութիւնը ունեցաւ որ մանկամարդ կնոջ մտածումը կը հեռանար իրմէ, թէ անոր աչքերը ուշադրութիւն կը դարձընէին յեղակարծ տեսարանի մը. Քորալի իրենց սիրոյն բացարձակ լռութեան մէջ մտիկ կ'ընէր բան մը գոր ինք Բաթրիս չէր լսած բնաւ:

Յանկարծ, հարիւրապետն ալ լսեց այդ բանը, թէ անիմանալի ըլլար ան: Շշուկէ աւելի բան մը, մէկուն հոն գտնուելուն զգայութիւնն էր որ կը խառնէր քաղաքին հեռաւոր ժխորներուն հետ:

Ի՞նչ կ'անցնէր կը դառնար:

Մթնած էր արդէն, առանց Բաթրիսի ուշադրութիւնը գրաւելու: Նոյնպէս նշմարած չէր թէ Տիկին Էսարէս պատուհանը կէս մը բացած էր, փոքր գարդախուցին մէջ ճնշող տաքութիւն մը տիրելուն համար. պա-

տուհանին երկու թեւերը իրարու միացած էին գրեթէ: Քորալի այդ բանն էր որ կը դիտէր ուշադիր և հոնկէ կուգար վրտանգը:

Բաթրիս քիչ մնաց որ պատուհանին քով վազէր: Բայց չըրաւ այդ բանը: Վտանգը կը ճշդէր: Դուրսը, վերջապէս ստուերին մէջ, մարդկային ձեւ մը կը նշմարէր ապակիներուն մէջէն: Յետոյ պատուհանին երկու թեւերուն միջեւ նշմարեց կրակին լոյսովը շողացող առարկայ մը, որ հրապէնի փողը կը թւէր իրեն:

— Եթէ երբեք վայրկեան մը կասկածին թէ զգուշաւոր դիրքի մը մէջ կը գտնուիմ, Քորալի կորստեան մատնած է, կը խորհէր Բաթրիս:

— Քորալի, յոգնած ըլլալու էք: Հրաժեշտ առնենք իրարմէ:

Հարիւրապետը միեւնոյն ատեն կը դառնար թիկնաթուռն շուրջը, պաշտպանելու համար մանկամարդ կինը:

Բայց Բաթրիս ատեն չունեցաւ իր շարժումը ամբողջացնելու: Քորալի ալ հրապէնի փողին փայլիլը տեսած ըլլալով յանկարծ ընկրկեցաւ ու կակաղեց:

— Ա՛հ, Բաթրիս... Բաթրիս...

Երկու պայթուցիկներ թնդացին և անոնց յաջորդեց հեծեծիւն մը:

— Վիրաւորեցա՞յ, գոչեց Բաթրիս, մանկամարդ կնոջ վրայ խոյանալով:

— Ոչ, ոչ, բայց շատ վախցայ, ըսաւ Քորալի:

— Ա՛հ, եթէ թշուառականը քեզ վիրաւորեց...

— Ոչ, ոչ...:

— Բոլորովին վատա՞ն էս:

Երեսուն-քառասուն երկվայրկեան յետոյ՝ Բաթրիս ելեկտրական լոյսը վառեց, քննեց մանկամարդ կինը ու անձկութեամբ սպասեց որ բոլորովին սթափի:

Բաթրիս յետոյ միայն պատուհանին առջեւ վազեց, դոր ամբողջովին բացաւ և պարօծնէն վար ցատկեց: Առաջին յարկին վրայ կը գտնէր սենեակը: Պատին երկայնքը սարփինայ մը կար: Բայց սրունդին պատճառով՝ Բաթրիս դժւարաւ վար իջաւ:

Վարը, թէրասին վրայ տապալած սանդուխի մը ձողերուն մէջ՝ օնցան օտքերը: Յետոյ զարնեցաւ ոտտիկաններու, որոնք գետնայարկէն դուրս կ'ելլէին: Անոնցմէ մէկը կը գոչէր.

— Հոնկէ խոյս տուող սիւլէթ մը տեսայ:

— Ուրկէ՞, հարցուց Բաթրիս: Մարդը գոհին ուղղութեամբ կը վազէր: Բաթրիս անոր հետեւեցաւ: Բայց այդ պահուն դրան միեւնոյն կողմէն բարձրացան սուր ճիչեր և հոնդիւններ:

— Օգնութի՛ւն... Օգնութի՛ւն...:

Երբ Բաթրիս հոն հասաւ, ոտտիկանը արդէն իսկ հողին վրայ կը պտտցնէր ելեկտրական լամբար մը, ու երկուքը միասին նշմարեցին մարդկային ձեւ մը որ թաւուտքի մը մէջ կը գալարէր:

— Դուռը բաց է, հոնկէ յարձակողը խոյս տուած է: Օ՛ն, շուտ բռէք, աղաղակեց Բաթրիս:

Ոտտիկանը գոհին մէջ անհետացաւ: Ես-Պօն վրայ հասաւ այդ պահուն, ու Բաթրիս հրամայեց անոր:

— Ես-Պօն, ճամբայ ելիր սրարչաւ...: Եթէ ոտտիկանը գոհին վեր ելլէ, դուն վար իջիր: Սրարչաւ գնա՛, ես զոհով պիտի զբաղիմ:

Այդ պահուն Բաթրիս կը ծռէր, ոտտիկանին ելեկտրական լամբարը պտտցնելով գետնին վրայ տապալակող մարդուն շուրջը: Ճանչցաւ ձերուկ Սիմէօնը, որ վիզէն խեղդուած էր կարսիւր մետաքսէ երիզով մը:

— Ի՞նչ վիճակի մէջ էս: Կը լսե՞ս խօսքերս, հարցուց Բաթրիս:

Յետոյ լարը թուլցուց և կրկնեց հարցումը:

Սիմէօն անկապ նախադասութիւններու շարք մը կակաղեց. յետոյ սկսաւ երգել ու ծիծաղիլ ընդհատաբար, մեղմաձայն, մերթ կլթիկներ արձակելով:

Խենթեցած էր Սիմէօն:

— Պարոն, կը կարծէ՞ք որ գործը վերջացած ըլլայ, ըսաւ Բաթրիս, խօսքը Պ. Տէմալիօնի ուղղելով, երբ այս վերջինը հարիւրապետին քով հասաւ ու անոր բացատրութիւնները լսեց:

— Իրաւունք ունիք, խոստովանեցաւ դատաւորը. հարկ եղած բոլոր նախազգուշութիւնները ձեռք պիտի առնենք Տիկին Էսարէսի պահովութեան համար: Տան վրայ հսկողութիւն պիտի կատարուի ամբողջ գիշերը:

Քանի մը բոսիկ յետոյ, ոտտիկանը և Ես-Պօնը վերագարձան: Իրենց փնտռտուքը ապարդիւն եղած էր: Դուրսին մէջ գտնուեցաւ այն բանալին, որով բացուած էր դուռը: Ան ճշդիւ կը նմանէր այն բանալին որ Բաթրիս ու-

ներ. նոյնքան հին ու ժանգոտած էր: Յարձակողը նետած էր զայն, փախած պահուն:

Իրիկւան ժամը եօթն էր, երբ Բաթրիս, Եա-Պօնի ընկերակցութեամբ, Բէյնուար փողոցի բնակարանէն հեռացաւ ու նէօյերի ճամբան բռնեց:

Իր սովորութեան համաձայն, Բաթրիս բռնեց Սենեկալցիին թեւը, անոր վրայ կրթնելով քալելու համար:

— Գաղտնիք կը դուշակեմ, ըսաւ հարիւրապետը:

Եա-Պօն մռտուք մը արձակեց.

— Այո՛ կատարելագէս համարիտ ենք բոլոր կէտերու մասին, յարեց Պէլլալ: Գլխաւորաբար ինծի զարմանք պատճառող բանը սա է որ ոստիկանութիւնը իր բացարձակ ապիկարութիւնը ցոյց կուտայ ներկայ պարագային մէջ: Պիտի ըսես թէ ոչնչութիւններ են ատոնք: Այդպէս խօսելով, Եա-Պօն, անմտութիւն մը ու լրբութիւն մը ըրած պիտի ըլլաս, ինչ որ զարմանք չպիտի պատճառէ ինծի, քանի որ քու կողմէդ կուգայ, սակայն արժանաւոր պատիժդ պիտի կրես: Ուրեմն, ինչ որ ալ ըսես, ոստիկանութիւնը ձեռքէն եկածը միայն կրնայ ընել, առանց հաշի առնելու սա պարագան թէ պատերազմի ատեն ոստիկանութիւնը ուրիշ հոգեր ունի և չի կրնար զբաղիլ այն խորհրդաւոր յարաբերութիւններով, որոնք գոյութիւն ունին Տիկին Էսաբէսի և հարիւրապետ Պէլլալի միջեւ:

Հետեւաբար ես պէտք է

գործեմ, ինքզինքիս վրայ միայն յոյս դնելով: Արդ, կը խորհի՞մ որ պիտի՞ կարենամ այդ կարգի հակառակորդներու հետ չափիլ, երբ մտքիս առջեւ կը բերեմ այն անձը, որ յանդգնութիւնը ունեցած է ոստիկանական հսկողութեան ենթարկուած տունէն ներս մտնելու, սանդուխ մը դնելու, Պ. Տէմալիօնի հետ ունեցած խօսակցութիւնս, Գորալիի ըրած խօսքերս լսելու, և ի վերջոյ մեզի ուղղելու բեվոլլէրի երկու գնդակներ: Հէ՛, ի՞նչ կ'ըսես, կրնամ գլուխ ելլել, ու նոյնիսկ Ֆրանսական ոստիկանութիւնը, որ չափազանց աշխատութիւն ունի, անհրաժեշտ աջակցութիւնը պիտի՞ ընծայէ ինծի, Ոչ ասանկ գործի մը մէջն ելլելու համար, բացառիկ տիպարով մէկը հարկաւոր է, որպէսզի բոլոր յատկութիւնները միացնէ իր վրայ: Ատանկ մարդ մըն ալ չկայ մէջտեղը:

Բաթրիս ա՛լ աւելի կրթնեցաւ իր ընկերոջ թեւին վրայ, ու ըսաւ.

— Դուն որ այնքան գեղեցիկ յարաբերութիւններ ունիս, ատանկ մարդ մը չի՞ գտնուիր գըրպանդ: Հանճար մը, կիսասուած մը:

Եա-Պօն նորէն քրթմնջիւն մը արձակեց ուրախ երեւոյթով մը ու թեւը ազատեց: Ելեկտրական փոքր լամպար մը միշտ կը պահէր վրան: Վառեց ու ակռաներուն մէջ բռնեց լապտերը: Յետոյ գրպանէն հանեց կաւիճի կտոր մը:

Փողոցին երկայնքը կը գտնէր գաճով ծածկուած աղտոտ ու սև պատ մը: Եա-Պօն այդ պատին

առջեւ կեցաւ, ու լապտերին լոյսին շնորհիւ սխաւ գրել ձախաւեր կերպով: Իւրաքանչիւր գիրի համար չափազանց ճիգ կ'ընէր. կարծես թէ այդ գիրերուն համախմբումը միայն կրցած էր միտքը պահել ու իրարու քով բերել: Այսպէս՝ Եա-Պօն երկու բառեր գրեց, զոր Բաթրիս մէկ անգամէն կարդաց.

Արսէն Լիւբէն:

— Արսէն Լիւբէն, ըսաւ Բաթրիս մեղմաձայն:

Ու ապա լսեց զիտելով Եա-Պօնը, յարեց.

— Ի՞նչ կը նշանակէ Արսէն Լիւբէն: Ի՞նչ, Արսէն Լիւբէնը կ'առաջարկե՞ս ինծի:

Եա-Պօն հաստատական նշան մը ըրաւ:

— Արսէն Լիւբէնը կը ճանչնա՞մ միթէ:

Բաթրիս այն ատեն յիշեց որ Սենեկալցիին հիւանդանոցին մէջ իր ընկերներուն կարդացնել կուտար Արսէն Լիւբէնի տարօրինակ արկածները: Ուստի հեղնական ծիծաղով մը ըսաւ.

— Այո՛ դուն այնպէս կը ճանչնաս Արսէն Լիւբէնը ինչպէս մարդ կը ճանչնայ մէկը որուն պատմութիւնը կարդացած է:

— Ոչ, բողոքեց Եա-Պօն:

— Անձնապէս կը ճանչնա՞մ զայն:

— Այո՛:

— Տխմա՛ր, Արսէն Լիւբէն

մեռած է: Ապառաժի մը բարձունքէն ծով նետուած է, մինչդեռ դուն կը յաւակնիս ճանչնալ զայն:

— Այո՛:

— Ուրեմն իր մահընէն ի վեր առիթ ունեցած ես զինքը տեսնելու:

— Այո՛:

— Եա-Պօն այնքան մեծ ազդեցութիւն ունի Արսէն Լիւբէնի վրայ որ յարութիւն կ'առնէ եւ անհանդիստ կ'ըլլայ Եա-պօնի մէկ ազդանշանին համաձայն:

— Այո՛:

— Արդէն իսկ մեծ համարում կը ներշնչէր ինծի, բայց հիմա ալ ես կը խոնարհիմ քու առջեւդ: Հանգուցեալ Արսէն Լիւբէնի բարեկամ, ի՞նչ սիրուն տիտղոս: Որքան ատենի պէտք կայ՝ այդ սուերը մեր տրամագրութեան տակ դնելու համար: Վե՞ց ամիս: Երե՞ք ամիս: Մէկ ամիս: Տասնընէնք օր:

Եա-Պօն շարժուած է մը ըրաւ:

— Լա՛ւ, տասնընէնք օրէն, ըսաւ Պէլլալ: Բարեկամիդ ոգին կոչէ. շատ գո՛հ պիտի ըլլամ՝ անոր հետ յարաբերութեան մէջ մտնելով: Միայն թէ շատ միջակ գաղափար մը ունենալու ես իմ վրաս, քանի որ կ'երեւակայես թէ աշխատակիցի մը պէտք կը զգամ: Միթէ տխմարի, ապիկարի տեղ գրած ես զիս:

Է.

ԲԱԹՐԻՍ ԵՒ ՔՕՐԱԼԻ

Ամէն ինչ Պ. Տէմալիօնի գուշակածին պէս եղաւ: Մամուլը չի ստեցաւ այդ խնդրին վրայ: Հասնութիւնն ալ յուզման չմատնեցաւ այդ խնդրին համար: Անտարբերութեամբ իմացաւ օրուս սովորական դէպքերու նմանողայդ եղելութիւնը: Մեծահարուստ Էսարէս պէյի յուզարկաւորութիւնը աննշմար անցաւ:

Բայց յուզարկաւորութեան հետեւեալ օրը, հարիւրապետ Պէլլալի կողմէ զինուորական իշխանութեան մօտ կատարուած գիմուսին վրայ և ստիկանութեան աջակցութեամբ, իրերունօր կարգ մը հաստատեցաւ Ռէյնուար փողոցի տան մէջ: Ծանօղելի շարժուն հիւանդանոցին իրր շարակից մաս ճանչցւած ըլլալով այդ բնակարանը, Տիկին Էսարէսի հսկողութեան տակ, հարիւրապետ Պէլլալի և իր եօթը հաշմանդամ ընկերներու բնակութեան միայն յատկացեցաւ:

Այսպէս Քօրալի առանձին մնաց: Ոչ սենեկապանուհի ունէր և ոչ ալ խոհարարուհի: Եօթը խեղանդամները ամէն գործ կը տեսնէին: Մէկը դռնապան եղաւ, ուրիշ մը՝ խոհարար, երրորդ մը՝ խոհարարապետ: Եւ Պօն սենեկապանուհիի պաշտօն ստանձնած ըլլալով Տիկին Քօրալի անձնական սպասարկութիւնը կը կատարէր: Գիշերը, նրբանցքին մէջ

կը պառկէր, մանկամարդ կնոջ դրան առջեւ: Ցերեկը, անոր պատուհանին առջեւ կը սպասէր իրր պահակ:

— Ոչ ոք պէտք չէ մօտենայ այս դրան ու այս պատուհանին, ըսաւ Բաթրիս: Ոչ ոք ներս մտնելու չէ: Եթէ երբեք մտեղ մը յաջողի ներս թափանցել՝ բանդ բուսած է:

Հակառակ այդ նախզուշուրութիւններուն, Բաթրիս ապահով չէր: Ծատ մը փաստեր ունէր որոնք ցոյց կուտային թէ թշնամին ինչեր ընելու կը յա դգնէր. հետեւաբար հարիւրապետը չէր հաւատար որ ձեռք առնուած միջոցները կարենային բացարձակապէս ազդու պաշտպանութիւն մը ընծայել: Վտանգը կը սողոսկի հոն ուր չսպասէր. շատ աւելի դժուար կ'ըլլայ զգուշանալ վրտանգէն, երբ մարդ չի գիտեր թէ ո՛ր կէ կուզայ սպառնալիքը. Էսարէս պէյ մեռած ըլլալուն՝ ո՛վ պիտի շարունակէր անոր գործը: Ո՛վ պիտի գործադրէր քոյր Քօրալիի դէմ վրէժին դրութեան այն ծրագիրը, զոր Էսարէս իր նամակին մէջ կը ծանուցանէր:

Պ. Տէմալիօն իսկոյն ձեռնարկած էր հետազօտութեան, բայց խնդրին եղբրական կողմը անտարբեր կը թողուր զինքը: Դատաւորը չէր գտած դիակը այն մարդուն որուն օրհասականի ճի-

չերը լսած էր Բաթրիս և այս վերջինին վրայ զէնք քաշող խորհրդաւոր յարձակողին ալ ու է հետքը չէր գտած. իրիկուան՝ Քօրալի հաստատած չըլլալով թէ ո՛ր կէ բերուած էր սանդուխը, դատաւորը այլ ևս չէր զբաղեր այդ խնդրներով ու միայն կը ջանար 1800 տոպրակները երեւան հանել: Այդ բանին միայն կարենորութիւն կ'ընծայէր ան:

— Ամէն պատճառ ունինք կարծելու թէ այս շէնքին շրջափակին մէջ կը գտնուին այդ տոպրակները: Ապահովաբար յիտուն քիլոնոց ոսկիէ տոպրակ մը միեւնոյն ծանրութեամբ անուխի պարկի մը ծաւալը չունի: Բայց հազար ութը հարիւր տոպրակը կը ներկայացնէ եօթը-ութը խորանորդ մէթր զանգւած մը, ու այդ զանգւածը դիւրաւ չի ծածկուիր:

Պ. Տէմալիօն երկու օրէն ստուգած էր որ թաքստոցը ո՛չ տան մէջ և ոչ ալ տանը ներքեւ կը գտնուէր, երբ իրիկունները, Էսարէս պէյի օթօմօպիլի վարիչը Ռէյնուար փողոցը կը բերէր Պանք-Օրիանթալի դրամարկորուն պարունակութիւնը, վարիչը և կրէկուար անուն մէկը, լուսամուտէն կ'անցնէին երկաթէ հաստ թել մը, որուն վրայ խօսած էին գնդապետին մեղսակիցները: Այդ երկաթէ թելին երկայնքը կային կեռեր, որոնք նոյնպէս երեւան հանեցան. այդ կեռերէն կը կախէին տոպրակները, և իրարու վրայ կը դիզէին մատենադարանին տակ գտնուող մեծ նկուղի մը մէջ: Աւելորդ է ըսել որ Պ. Տէ-

մալիօն և իր գործակալները որքան հնարամտութեամբ, համբերութեամբ մանրակրկիտ կերպով խուզարկեցին նկուղին բոլոր անկիւնները, իրենց բոլոր ջանքերը յանդեցան սա արդիւնքին որ գաղտնիք մը չկար հոն. միայն երեւան հանեցին սանդուխ մը որ մատենադարանէն վար կ'իջնէր, և որուն ելքը գոցուած էր գորգը ծածկող կափուլով մը: Բացի Ռէյնուար փողոցի լուսամուտէն, ուրիշ մըն ալ կար պարտէզին վրայ, առաջին թէրասին մակերեսին հաւասար: Այդ երկու լուսամուտերը ներսէն ամբարցած էին խիստ ծանր երկաթէ փեղկերով, այնպէս որ կարելի էր ոսկիի հազարաւոր ծրարներ դիզել նկուղը մինչեւ որ ուղարկուէին:

— Բայց ինչպէս կատարուած էր դրամներուն ուղարկումը, կը խորհէր Պ. Տէմալիօն: Գաղտնիք: Ինչո՞ւ Ռէյնուար փողոցին նկուղին մէջ կը պահէին դրամները: Դարձեալ գաղտնիք: Բայց Յաքոնի, Պուրնէֆ և ընկերները կը հաւաստեն թէ այս անգամ ոսկիի առաքում չէ եղած, դրամը այս շէնքին մէջ կը գտնուի և թէ փնտառուքով կարելի է երեւան հանել զայն: Տան մէջ փնտառուքներ ըրինք: Կը մնայ պարտէզը: Հիմա ալ այդ կողմը խուզարկութիւն ընենք:

Հին ու հիանալի պարտէզ մըն է, որ ատենօք մաս կը կազմէր Քին ընդարձակ հողային կալաւածին, ուր ԺԷ. դարուն վերջերը, Բասիի ջուրը առնելու կուգային: Պարտէզը Ռէյնուար փողոցէն մինչեւ քարափ կը տարածուի,

երկու հարիւր մէթր լայնութիւն ունեցող տարածութեան մը վրայ իրարու վրայ հաստատուած թէքասներ ունի, կանաչ մարմանդներով ծածկուած, ուր թաւ թուփեր ու խոշոր ծառերու խումբեր կը տեսնուին:

Պարտէզին գեղեցկութիւնը կը կազմեն իր չորս թէքասները, որոնք դեռին ձախ եղբրքի դաշտագետիններուն և հեռաւոր բլուրներուն վրայ կը նային: Քսան սանդուխներ իրարու հետ հաղորդակցութեան մէջ կը դնեն զանոնք, ու քսան արահետներ կը բարձրանան յենորմներու միջեւ փորուած և բաղեղներու թաւուտքի մը տակ ծածկուած:

Հոս հոն կը ցցուին արձան մը, կտորած սիւն մը և խոյակի մը բեկորները: Վերին թէքասը եղբրոզ քարէ պատշգամբ զարդարուած է կաւէ հին անօթներով: Այդ թէքասին վրայ կը տեսնուին երկու փոքր ու կլոր տաճարներու աւերակները, որոնք ըմպելարաններ էին ատենօք: Մատենադարանին պատուհաններուն առջեւ կայ բոլորչի աւազան մը, որուն կեդրոնը գտնուող մանուկ մը ջուրի նուրբ ցայտք մը կ'արձակէ:

Այդ աւազանին ջուրը յորդած ըլլալով առւակ մը ձեւացուցած էր և ժայռերուն վրայէն կը հոսէր. Բաթրիս առաջին իրիկուէր այդ ժայռերուն զարնուած էր:

— Մէկ խօսքով, երեք չորս հէքթար տեղ պրպտելու է, խորհեցաւ Պ. Տէմալիօն:

Այդ գործին յատկացուց իր պաշտօնեաներէն տասը հոգի, բացի Բաթրիսի հետ զանուղ

խեղանդամներէն: Ինքնին շատ դիւրին գործ մըն էր և որոշ արդիւնքներ պիտի ընծայէր: Պ. Տէմալիօն միշտ կը կրկնէր թէ հազար ութը հարիւր տոպրակները չէին կրնար անյայտ մնալ: Ամէն խոռոչ հետքեր կը ձգէ: Մուտք մը պէտք է՝ ներս մտնելու և դուրս ելլելու համար: Արդ, մարմանդներու խոտը և նրբուղիներու աւազը ու է հետք չէր կրեր, որպէսզի յայտնի ըլլար թէ հողը նոր քրքրուած էր: Բոլոր բաղեղները, յենորմները ու թէքասները խուզարկեցան: Անօգուտ: Տեղ տեղ, բացուած խրամասներուն մէջ երեւան ելան դէպի Սէն երկարող ճամբաներ և ջուրի խողովակներու կտորներ, որով կը հոսէին երբեմն Բասիի ջուրերը: Բայց պայտաստրան մը, քարաչէն կամար մը, թաքստոցի երեւոյթ ունեցող բան մը երեւան չ'անուեցաւ:

Բաթրիս ու Քօրալի կը հետեւէին այդ խուզարկութիւններուն: Այդ գործին շահեկանութիւնը կ'ըմբռնէին ու միւս կողմէ՝ եղբրական ժամերու անձկութիւնը կը զգային տակաւին, բայց էսպէս կը շահագրգռէին իրենց ճակատագրին անբացատրելի հարցովը միայն, այնպէս որ իրենց բոլոր խօսքերը կը դառնային մութ անցելի վրայ:

Քօրալիի մայրը, Սելանիկի ֆրանսական հիւպատոսին աղջիկը, հոն ամուսնացած էր միջին տարիքով և խիստ հարուստ մարդու մը, Օտօլավիչ կոմսին հետ, սերպիական հին ընտանիքէ մը սերած: Կոմսը մեռած էր Քօրալիի ծնունդէն մէկ

տարի յետոյ: Այրին ու իր գաւազը այն ատեն կը գտնուէին Ծրանսայի մէջ, Բէյնուար փողոցի բնակարանը, զոր կոմս Օտօլավիչ գնած էր դերիտասար Եգիպտացիի մը՝ Էսարէսի միջնորդութեամբ, որ իր քարտուղարը և գործակատարն էր:

Քօրալի իր մանկութեան երեք տարիները հոն անցուց: Յետոյ իր մայրը կորսնցուց յանկարծ: Այն խարհի վրայ առանձին մնացած ըլլալով Քօրալի, Սելանիկ տարաւ զայն Էսարէս: Հոն, իր մեծ հայրը եղող հիւպատոսը իրմէ շատ աւելի պզտիկ քոյր մը ունէր, որ Քօրալիի պաշտպանութիւնը ստանձնեց: Դժբախտաբար, այդ կինը Էսարէսի աղղեցութեան ենթարկուեցաւ, թուղթերը ստորագրեց, իր հօրաքրոջ աղջկան ստորագրելու աւել, այնպէս որ դեռատի աղջկան հարստութիւնը, որ Եգիպտացիին կողմը կը յանձանձուէր, տակաւ անհետացաւ:

Վերջապէս, տասնութթը տարեկանին, Քօրալի զո՛հ եղաւ արկածի մը որ էն անուշի յիշատակը ձգեց ու աղետալի աղղեցութիւն մը գործեց իր կեանքին վրայ: Սելանիկի գիւղերուն մէջ, առտու մը առեւանդեցաւ թուրք աւազակներու կողմէ. երկու շաբաթ մնաց պալատի մը մէջ, նահանգին կուսակալին հետապնդումներուն ենթակայ: Էսարէս ազատեց զայն: Բայց այդ ազատումը այնքան տարօրինակ կերպով տեղի ունեցաւ որ այնուհետեւ յաճախ Քօրալի կը խորհէր թէ թուրքին և Եգիպտացիին միջեւ պատրաստուած դաւադրութիւն մը չէ՞ր արդեօք:

Քօրալի հիւանդ, ընկճուած, իր հօրաքրոջ կողմէ բռնադատուած, նոր յարձակումէ մը վախնալուն, սմիս մը յետոյ ամուսնացաւ այն Էսարէս պէյի հետ, որ արդէն իսկ սկսած էր սիրաբանել իր հետ, և զոր փրկիչ մը կը համարէր: Ողբալի միութեան մը, որ սոսկուած սղղած էր իրեն՝ ամուսնութեան օրն իսկ: Քօրալի կինն էր այնպիսի մարդու մը որմէ կը խորչէր. էրկանը սէրը կը սաստկանար հակառակ այն ատելութեան ու արհամարհանքին զոր Քօրալի ցոյց կուտար:

Իրենց ամուսնութեան առաջին տարին, Բէյնուար փողոցի բնակարանը հաստատուեցան: Էսարէս, որ երկար ատենէ ի վեր հիմնած էր ու կը վարէր պանք Ծրանք-Օրիանթալի Սելանիկի մասնաճիւղը, այդ դրամատան գրեթէ բոլոր բաժնեթուղթերը կը հաւաքէր, Լաֆայէթ փողոցի շէնքը կը գնէր իր կեդրոնատեղի գործածելու համար, Բաթրիկ ջոջ դրամատէրէն մէկը կը դառնար և Եգիպտոսի մէջ պէյութեան տիտղոս կը ստանար:

Այս պատմութիւնն էր որ օրին մէկը Քօրալի ըրաւ Բասիի պարտէզին մէջ. այդ մտայն անցեալը միասին պրպտեցին, Բաթրիսի անցնալին հետ դէմ առ դէմ բերելով զայն. բայց ոչ Բաթրիս և ոչ ալ Քօրալի չկրցին հասարակաց կէտ մը գտնել: Թէ՛ մէկը և թէ՛ միւրը տարբեր միջավայրերու մէջ ապրած էին: Ոչ մէկ մանրամասնութիւն չկար, որպէս զի հասկնային թէ ինչու երկուքն ալ մեղեդիկի միևնոյն գունդէն կտորներ ունէին, ինչու երկու-

քին միացած պատկերները դե- տեղւած էին միեւնոյն մէտայե- նին մէջ կամ միեւնոյն ալպօմին էջերուն վրայ փակցւած էին :

— Ի հարկին, ըսաւ Բաթրիս, սա բացատրութիւնը կրնանք աւ- էսարէս պէյի ձեռքին մէջ գտնու- ւած մէտայեօնը խլւած էր այն անձանօթ բարեկամին ձեռքէն, որ մեր վրայ կը հսկէր ու էսա- րէս պէյի կողմէ սպաննւած է : Բայց ի՞նչ կարելի է ըսել սա ալ- պօմին համար, զոր էսարէս պէյ ներքնազգեստին մէկ զրպանին մէջ կը կրէր :

Լոնցին երկուքն ալ : Քիչ յետոյ Բաթրիս հարցուց .

— Հսպա՛ Սիմէօնը :

— Միշտ հոս ապրած է ան :

— Նոյն իսկ ձեր մօր կեն- դանութեանը ասե՞ն :

— Ոչ, մօրս մահէն մէկ երկու տարի յետոյ և Սելանիկ մեկնե- լէս ետքն է որ էսարէս պէյի կողմէ պաշտօն յանձնեցաւ ա- նոր՝ այն շէնքը պահպանելու :

— Էսարէս պէյի քարտու- ղա՞րն էր :

— Իր բուն դերը չեմ հաս- կրցած երբեք : Ոչ քարտուղարն էր, և ոչ ալ խորհրդակիցը : Եր- բեք չէին խօսեր իրարու հետ : Երկու-երեք անգամ Սելանիկ ե- կաւ, մեզ տեսնելու համար : Կը յիշեմ իր այցելութիւններէն մէկը : Տակաւին շատ պղտիկ էի : Ու լսեցի որ՝ բուն լեզուով մը կը խօսէր էսարէսի հետ և սպառ- նալու երեւոյթ ունէր :

— Ի՞նչ սպաննալիք :

— Չեմ գիտեր : Սիմէօնի մա- սին բան մը չեմ գիտեր : Շատ մէկուսի կեանք մը կը վարէր :

զրեթէ միշտ պարտէղին մէջ կը գտնուէր, ուր ծխափողը կը քա- շէր, կ'երսդէր, ծառերն ու ծա- ղիկները կը խնամէր երկու-ե- րեք պարտիզպաններու օգնու- թեամբ զոր երբեմն բերել կու- տար :

— Ի՞նչ ընթացք ունէր ձեզի հանդէպ :

— Չեմ կրնար այդ մասին ալ ճշգրիտ բան մը ըսել : Ինչու չէինք խօսեր իրարու հետ, և իր զրա- դուններուն պատճառով ինձի հետ յարաբերութիւն չէր ունենար ան : Մակայն մերթ սա տպաւորու- թիւնը ունեցայ թէ իր դեղին ակնոցներուն մէջէն նայւածքով թերեւս զիս կը փնտռէր տեսակ մը շահագրգռումով : Վերջերս մինչեւ հիւանդանոց ինձի կ'ըն- կերանար. թէ՛ հոն և թէ՛ ճամ- բան, աւելի հոգածու, աւելի փութկոտ կը գտնուէր... այն աս- տիճան որ մէկ-երկու օրէ ի վեր կը խորհիմ թէ...

Պահ մը վարանելէ յետոյ շա- րունակեց Քօրալի :

— Շատ տարտամ գողափար մըն է... բայց հոգ չէ... Քանի մը օր առաջ, չէի խորհած ձեզի ըսելու... Ինչո՞ւ Շան զ'ելիզէի հիւանդանոցը մտայ, այն հիւան- դանոցը ուր դուք կը գտնուէիք արդէն իր վիրաւոր և հիւանդ : Ինչո՞ւ : Որովհետեւ Սիմէօն հոն առաջնորդեց զիս : Ան գիտէր թէ հիւանդապահուելի ըլլալ կ'ուզէի. ուտի ինձի ցոյց տւաւ այդ հի- ւանդանոցը... ուր պարազանե- րու բերումով իրարու հանդէպ պիտի գտնուէինք, ինչպէս կը յուսար ան... Հիւանդանոցը քաշւած է մէտայեօնին մէջ

գանուղ լուսանկարը, ան որ ձեզ կը ներկայացնէ համազգեստով, և զիս՝ հիւանդապահուելի տարա- զով... : Արդ, այս տան մարդոցմէ Սիմէօն միայն հիւանդանոց կ'եր- թար : Պէտք է ձեզի յիշեցնեմ թէ տղայ ու նորատի ազջիկ եղած ատենս Սելանիկ գալով Սիմէօն, հոն առած ըլլալու է ալպօմին վայրկենական լուսանկարները : Եթէ ընդունինք որ թղթակից մը իր կողմէ հետեւած է ձեր կեան- քին, նոյնպէս կարելի է հաւա- տալ թէ այն անձանօթ բարեկա- մը, որ միջամտած ու պարտէզին բանալին ձեզի զրկած էր... :

— Ծերուկ Սիմէօնը եղած ըլլայ, ընդմիջեց Սիմէօն ու ժգնօ- րէն : Անընդունելի ենթադրու- թիւն մըն է ատ :

— Ինչո՞ւ :

— Որովհետեւ մեռած է այդ բարեկամը : Այն անձը որ միջա- մանց, պարտէզին բանալին ինձի զրկեց, հեռաձայնով կանչեց զիս՝ ճշմարտութիւնը իմաց տալու համար, այդ անձը սպաննւած է... : Ո և է կաս- կած չկայ այդ մասին : Լսեցի ճիշտը մարդու մը զոր կը խող- խողէին... հողեւարքի ճիշտը զորս մարդ կ'արձակէ հողին ա- ւանդելու ատեն :

— Կարելի՞ է այդ մասին վստահ ըլլալ... :

— Բացարձակապէս վստահ եմ : Ո և է վարանում չի մեղմա- ցընէր այդ ստուգութիւնը : Մեր անձանօթ բարեկամը մեռած է՝ իր գործը աւարտելէ առաջ : Սպաննւած է ան : Արդ Սիմէօն կենդանի է :

Ու Բաթրիս յարեց :

— Մնաց որ, այդ անձը Սի- մէօնի ձայնը չունէր. ընաւ չէի լսած այդ ձայնը ու երբեք չպիտի լսեմ ալ ևս :

Քօրալի չպնդեց. ինքն ալ համոզւած էր :

Բաթրիս և Քօրալի նստած էին պարտէզին ծառերէն մէկուն տակ, ապրիլի աղւոր արեւէն օգտուելով : Շագանակներն երու ծիւրը կը փողփողէին ոստերուն ծայրը : Շահօքրամներու ծանր բոյրերը և դեղին ծաղիկները՝ իրարու հետ սեղմւած՝ պիծակներու և մեղուններու պէս, թեթեւ սիւքէն կը շարժէին ալեծածան :

Յանկարծ սարսուռ մը զգաց Բաթրիս : Քօրալի իր ձեռքին վրայ դրած էր ձեռքը, հմայիչ լքումով մը. հարիւրապետը իս- կոյն նշմարեց որ աչքերը թըր- ջելու աստիճան յուզւած էր Քօ- րալի :

— Ի՞նչ կայ, քոյր Քօրալի, հարցուց Բաթրիս :

Մանկամարդ կինը խոնարհե- ցուց զլուխը և իր այտը քսե- ցաւ սոլային ուտին : Բաթրիս չհամարձակեցաւ իր տեղէն շար- ժիլ, այդ եղբայրական շարժու- մին չտալու համար սիրոյ ար- տայայտութիւն մը, ինչ որ թե- րեւս նեղութիւն պատճառէր Քօ- րալիի :

Բաթրիս կրկնեց .

— Ի՞նչ կայ, ի՞նչ ունիս, բարեկամուհիս :

— Օ՛հ, սա ծաղիկներուն նա- յեցէք, Բաթրիս, մրմնջեց Քօ- րալի :

Երրորդ թէրասին վրայ գտնու- ւելնուն, չորրորդ թէրասին վրայ կը նայէին, այս վերջինը,

որ էն ցածն էր, շահոքրամներու
ածուխի մը մէջ կը գտնուէր ուր
զարնան բոլոր ծաղիկները իրա-
րու շաղապատուած էին: Մէջտեղը
մանուշակներու մեծ ածու մը
կը տեսնէր:

— Հոն, հոն, կը տեսնէք...
գիրեր... ըսաւ Քօրալի, իր թեւը
տարածելով և մատնանշելով ա-
ծուն:

Արդարեւ, Բաթրիս տակաւ
վերահասու կ'ըլլար թէ մանու-
շակներու տունկերը այնպէս մը
զետեղւած էին որ հողին վրայ
քանի մը գիրեր կը ձեւացնէին և
միւս ծաղիկներէն կ'անջատէին,
Մէկէն ի մէկ չէր նշմարւեր ա-
տիկա: Ինչ մը ատեն անցնելու
էր որպէս զի աչքի զարնէր. բայց
երբ մարդ տեսնէր դայն, գիրերը
ինքնին կը համախմբէին իրարու
քով ու միեւնոյն գծին վրայ կը
ձեւացնէին սա երեք բառերը.
Բարբիս եւ Քօրալի:

— Ա՛հ, հիմա կը հասկնամ,
ըսաւ Բաթրիս մեղմաձայն:

Արդարեւ, շատ տարօրինակ
ու շատ յուզիչ տեսարան մըն էր
կարդալ երկու անուններ, զոր
բարեկամ ձեռք մը ցանած էր,
իրենց երկու անունները մանու-
շակներու մէջ միացուցած: Ծատ
տարօրինակ ու շատ յուզիչ էր
այսպէս իրար դանել, իրերով,
պատկերներով, խորհրդաւոր
կամքերով, ծաղիկներով միացած,
որոնք կը բողբոջէին ու կը
փթթէին նախասահմանւած կար-
գաւորութեամբ մը:

Քօրալի շտկելով ըսաւ.

— Ծերուկ Սիմէօն կը զբաղի
պարտէզով:

— Անտարակոյս, այդ բանը

չի փոխեր իմ գաղափարս, ըսաւ
Բաթրիս քիչ մը ցնցւած: Մեր
անծանօթ բարեկամը մեռած է,
բայց Սիմէօն ճանչցած ըլլալու
է զայն: Սիմէօն թերեւս անոր
կը գործակցէր կարգ մը բանե-
րու մէջ. անիկա շատ բան գիտ-
նալու է: Ա՛հ, եթէ կարենար
խօսիլ և լաւ ձամբուլ մը մէջ
դնել մեզ:

Ժամ մը յետոյ, երբ արեւը
մարը կը մտնէր, Բաթրիս ու
Քօրալի թէրաս ելան:

Բարձրագոյն թէրասը հաս-
նելուն, Պ. Տէմալիօնը տեսան:
Ան նշանացի իր քով հրաւիրեց
ու ըսաւ.

— Բաւական հետաքրքիր բան
մը իմաց պիտի տամ. ձեզի հա-
մար, տիկին, և ձեզի համար,
հարիւրապետս, մասնաւոր շահե-
կանութիւն ունեցող զիւտ մըն է:

Ու երկուքը միասին տարաւ
թէրասին ծայրը, այն անբնակ
մասին առջեւ, որ շարունակու-
թիւնն էր մատենադարանին,
Երկու ոստիկաններ կային հոն՝
բրիչ մը ձեռքերնուն մէջ: Պրպը-
տումներու ատեն, ինչպէս բա-
ցատրեց Պ. Տէմալիօն, նախ մէկ-
զի առած էին կաւէ անօթներով
զարդարւած փոքր պատին վրայ
գտնուող բազելները: Պ. Տէմա-
լիօնի ուշադրութիւնը գրաւեց
մանրամասնութիւն մը: Քանի մը
մէթր երկայնութեան մը վրայ
պատը ծածկւած էր ձեփով մը որ
քարէն աւելի նոր էր:

— Պարտաւոր էի կարելու-
որութիւն ընծայել այդ նշանին,
ըսաւ Պ. Տէմալիօն: Ծեփը փըլ-
ցնել տւի, և անոր տակ գտայ
նւազ թանձր ձեփ մը, քարին

խորտուփորտութիւններուն խաւ-
նրւած: Մօտեցէք... ոչ, աւելի
լաւ կ'ըլլայ որ քիչ մը հեռա-
նաք... այն ատեն աւելի լաւ
պիտի կրնաք զանազանել:

Արդարեւ, ստորին խաւը կը
բռնէր ձեռմակ ու փոքր գայլա-
խաղերու շարք մը, որոնք սեւ
գայլախաղերով շրջանակւած մօ-
զախք մը կը ձեւացնէին: Անոնք
երեք մեծ գիրեր կը կազմէին,
լայնօրէն գրւած: Այդ երեք գի-
րերն էին դարձեալ. Բարբիս և
Քօրալի:

— Ի՞նչ կ'ըսէք ձօսոր, հարցուց
Պ. Տէմալիօն: Դիտելի է որ այդ
արձանագրութիւնը քանի մը
տարւան գործ է... առնւազն
տասը տարւան, նկատի ունե-
նալով հոն կառչած բազելին
դիրքը...:

— Առնւազն տասը տարի,
կրկնեց Բաթրիս, երբ առանձին
մնաց մանկամարդ կնոջ հետ:
Տասը տարի, այսինքն այն թւա-
կանին երբ ամուսնացած չէիք,
Սելանիկ կը բնակէիք տակաւին
և ոչ ոք կողգար այս պարտէզը,
բացի Սիմէօնէն և այն անձերէն
զոր այս վերջինը կը թոյլատրէր
ներս մտնելու:

Ու Բաթրիս եղբակացուց.

— Պարտէզ մտնողներուն մէջ
կը գտնուէր մեր անծանօթ բարե-
կամը որ մեռած է: Ու Սիմէօն
գիտէ ճշմարտութիւնը:

Բաթրիս և Քօրալի տեսան որ
ձերուկ Սիմէօն, ինչպէս յաճախ
կ'ընէր տառաձէն ի վեր, պարտէ-
զին կամ տան նրբանցքներուն
մէջ կը թափառէր մտահոգ ու
շւարուն, գլուխը փաթթած ծած-
կոյթով մը, ակնոցը քունքերուն
վրայ սեղմւած: Անհասկնալի բա-
ւեր կը կակաղէր: Դիչերը, մօտը

գտնուող խեղանդամներէն մէկը
լսեց որ Սիմէօն կ'երգէր:

Բաթրիս երկու անգամ փոր-
ձեց խօսեցնել Սիմէօնը: Այս վեր-
ջինը կը ցնցէր գլուխը և չէր
պատասխաներ և կամ անմեղ ծի-
ծաղով մը կը խնդար:

Այսպէս՝ խնդիրը կը կնճռո-
տէր, ու ոչ մէկ բան կանխա-
տեսել չէր տար թէ կարելի պիտի
ըլլար խնդիրը լուծել: Իրենց
մանկութենէն սկսեալ, ո՞վ իրա-
րու խոստացած էր զանոնք իբր
նշանած, անողոք հրամանի մը
համաձայն: Անցած աշնան, երբ
Բաթրիս ու Քօրալի չէին ճանչ-
նար զիրար, ո՞վ պատրաստած էր
մանուշակներու ածուն: Տասը
տարի առաջ, ո՞վ պատի մը թանձ-
րութեան մէջ ձեռմակ գայլախա-
ղերով արձանագրած էր երկու-
քին անունները:

Վրդովիչ հարցեր Բաթրիսի և
Քօրալիի համար, որոնց մէջ
ինքնաբերաբար արթնցած էր
սէրը, և որոնք յանկարծ իրենց
ետին կը նշմարէին երկար ու
հասարակաց անցեալ մը: Պար-
տէզին մէջ, ամէն մէկ քայլին,
կարծես ուխտագնացութիւն մը
կը կատարէին մոռցւած յիշատակ-
ներու խորը, ու նրբուղիներու
դարձած տեղերը նոր փաստի մը
կը սպասէին, որ ի վեր հանէր
առանց իրենց գիտութեան իրա-
րու միացնող կապը:

Արդարեւ, այդ մէկ քանի
օրւան մէջ, երկու անգամ ծառի
մը կոճղին վրայ, իսկ մէկ ան-
գամ նստարանին յենարանին
վրայ տեսած էին իրենց անուն-
ներու ընդանցիկսկզբնատուերը:
Երկու անգամ ալ, իրենց անուն-
ները արձանագրւած դտան հին

պատերուէն վրայ, ծեփի խաւով մը ծածկւած զոր կը քողարկէր բաղեղի վարագոյր մը:

Այդ երկու անուններուն կ'ընկերանային երկու թւականներ, «Բարրիս և Քորալի, 1904»... «Բարրիս և Քորալի, 1907»:

— Տասնըմէկ տարի առաջ, և ութը տարի առաջ, ըսաւ սպան: Միշտ մեր երկուքին անունները Բաթրիս և Քորալի:

Իրարու ձեռք կը սեղմէին անոնք: Մեծ զաղտնիքը իրարու կը մօտեցնէր, ինչպէս նաև այն խորունկ սէրը որ կը յորդէր իրենց մէջ և որուն վրայ չէին խօսեր բնաւ:

Սակայն, հակառակ իրենց կամքին, առանձնութիւնը կը փնտռէին անոնք: այսպէս, օրին մէկը, էսարէս պէյի սպաննութենէն երկու շաբաթ յետոյ, գոհիին փոքր դրան առջեւէն անցած ատենին, որոշեցին դուրս ելլել ու մինչեւ Մէնի ափը իջնել: Զանոնք տեսնող չեղաւ, որովհետև այդ դրան շրջակաները և հոն առաջնորդող ճամբան ծածկւած են խոշոր օսախիներու վարագոյրով: Ծիշդ այդ միջոցին Պ. Տէմալիօն իր մարդոց հետ կը խուզարկէր պարտէզին անդիի ծայրը գտնուող հին ծաղկանոցները, ինչպէս նաև հին ծիսակոյղը, որ իբր ազդանշան կը ծառայէր:

Բայց դուրսը, Բաթրիս կանգ առաւ: Հանդիպակաց պատին դրեթէ գիմացը, ճիշդ նոյն ձեւովը դուռ մը կար: Բաթրիս խորհրդածութիւններ ըրաւ այդ մասին, ու Քորալի ըսաւ.

— Զարմանալու բան չկայ. այս սրտը կը սահմանագծէ ու

րիշ պարտէզ մը, որ ատենօք կախում ունէր այն պարտէզէն, ուրիշ հեռացանք քիչ մը առաջ:

— Ո՞վ կը բնակի հոն:

— Ոչ ոք: Այն փոքր տունը, որ այդ պարտէզին վրայ կը նայի և Բէյնուար փողոցի իմ տունէս առաջ կը գտնուի, միշտ փակւած է:

Բաթրիս մրմնջեց.

— Միւսնոյն դուռը... միւսնոյն բանալին թերևս:

Բաթրիս փականքին մէջ խօթեց իրեն զրկւած բանալին:

Փականքը դարձուց:

— Օ՛հ, հրաշքներու շարքը կը շարունակէ, ըսաւ Բաթրիս: Այս անգամ ալ մեզի նպաստուոր պիտի ըլլա՞յ:

Բաւական նեղ հողամաս մըն էր, ուր ամէն տեսակ բուսականութիւն կար: Սակայն առատ խոտին մէջ կը գտնուէր արահետ մը, ուրիշ յաճախ կ'անցնէին. այդ արահետը դռնէն կը մեկնէր և դէպի միակ թէրասը կը հասնէր, որուն վրայ կառուցւած էր տաղաւար մը գոց փեղկերով, աւերուն վիճակի մէջ. այդ շէնքը լապտերի ձեւով արեւնակ մը ունէր:

Մասնաւոր մուտք մը ունէր Բէյնուար փողոցին մէջ. բակ մը և խիստ բարձր պատ մը կը բաժնէին զայն: Այդ մուտքը ամրափակւած էր իրարու դամբած տախտակներով և գերաններով:

Տանը չուրջը դարձան և զարմանքով դիտեցին աջ կողմին վրայ գտնուող տեսարանը:

Դալարազարդ ցանկապատի մը կը նմանէր այդ տեղը, որ քառանկիւն էր ու կանոնաւոր կա-

մարներ ունէր, խնամով պահուած, տօսախիներու և սմիղակներու մէջ հաստատուած: Մանրանկար պարտէզ մը կար այդ անջրպետին մէջ, ուր լուսութիւնը և անդորրութիւնը կը տիրապետէին:

Հոն ալ զանազան տեսակէ ծաղիկներ կային: Յանկապառին չորս անկիւններէն յառաջացող չորս արահետները կը վերջանային կեղերոնական ածուով մը, ուր կը բարձրանային հինգ սիւները փոքր տաճարի մը, որ անարևոտօրէն շինուած էր դալարազարդ ու մանրաքարերով:

Այդ փոքր տաճարին կամարին տակ տապանաքար մը կար, ու այդ տապանաքարին առջև փայտէ հին աղօթարան մը, որուն ձողերուն ձախակողմը կախւած էր փղոսկրէ քրիստոս մը, իսկ աջա-

կողմը՝ համրիչ մը, մեղեխիկէ հատիկներով և ոսկիէ ցանցադրուածով:

— Քորալի, Քորալի, ո՞վ թաղած է հոս, մրմնջեց Բաթրիս յուզումէն դողողուն ձայնով մը... ո՞վ թաղւած է հոն:

Իրարու մօտեցան:

Մարդարտէ պսակներ շարւած էին տապանաքարին վրայ: Տասնըինը պսակները համրեցին, որ վերջին տասնըինը տարիներու ամաթիւերը կը ներկայացնէին:

Իրարմէ հեռացնելով զանոնք, սա արձանագրութիւնը կարդացին, ոսկեղօծ ու մաշած տառերով ու անձրեւէն աղտոտած.

Աստ հակզիկե Բարրիս եւ Քորալի Երկուսն ալ սպաննուած 1895 Ապրիլ 14ին Վրեմիկե պիտի յուծի

Կ Ա Ր Մ Ի Ր Լ Ա Ր Ը

Քորալի զգալով որ սրունքները կը կքէին, աղօթարանին վրայ նետուեցաւ, ուր ջերմեռանդաբար ու խելայեղօրէն կ'աղօթէր: Որո՞ւ համար: Ո՞ր անծանօթ հոգիներու հանդատին համար: Ինքն ալ չէր գիտեր: Բայց տենդահար ու յափշտակւած, աղօթքի բառերը միայն կրնային հանդարտեցնել զինքը:

Բաթրիս մանկամարդ կնոջ ականջն ի վար ըսաւ.

— Քորալի, ձեր մօր անունը ի՞նչ էր:

— Լուիզ, պատասխանեց ան: — Իսկ հայրս կը կոչուէր Արման: Ուրեմն ո՞չ ձեր մօր, և ոչ ալ հօրս վրայ կը դառնայ խընդիլը. սակայն...

Բաթրիս ալ չափազանց վերդովուճ ցոյց կուտար: Մտելով քննեց տասնըինը պսակները և տապանաքարը, ու յետոյ յարեց.

— Սակայն, Քորալի, շատ անբնական զուգարդութիւն մըն է: Հայրս մեռած է 1895ին:

— Մայրս ալ նմանապէս այդ

Թւականին մեռած է, թէեւ չեմ կրնար ճշդել Թւականը ըսաւ, Գորալի:

— Պիտի հասկնանք, Գորալի, հաւատեց Բաթրիս: Այդ ամէնը կարելի է ստուգել: Բայց ճշմարտութիւնը այժմէն երեւան կուգայ: Բաթրիսի և Գորալիի անունները իրարու միացնող անձը միայն մեր վրայ չէր խորհեր, ու միայն ապագային չէր նայեր: Թերեւս ա՛լ աւելի կը մտածէր անցեալին, Գորալիի, Բաթրիսի մասին, որոնց բռնի մահէն տեղեկութիւն ունէր, յանձն առած ըլլալով անոնց վրէժը լուծել: Եկէք Գորալի, այս տեղէն հեռանանք, որպէս զի չկասկածին որ մինչև հոս եկած ենք:

Արահետէն իջան ու գոլիին երկու դռներէն անցան: Ոչ ոք տեսաւ անոնց վերադարձը: Բաթրիս խկոյն իր բնակարանը առաջնորդեց Գորալին: Եւ Պօնի և իր ընկերներուն յանձնարարեց հսկողութիւնը խտացնել, յետոյ դուրս ելաւ:

Իրիկան, Բաթրիս նորէն եկաւ, առտուն վերադառնալու համար. հետեւեալ օրը, ժամը երեքին միայն Գորալիէ կը խընդրէր զինքը ընդունելու: Մանկամարդ կինը խկոյն հարցուց.

— Իմացա՞ք...

— Շատ բաներ իմացայ, Քորալի, որոնք չեն փարստեր ներկային խաւարը. դրեթէ պիտի փորձուիմ հակառակը ըսելու. սակայն շատ զօրաւոր նշոյլներ կը լուսաբանեն անցեալը:

— Առջի օր մեր տեսածները կը բացատրեն, հարցուց մանկամարդ կինը անձկութեամբ:

— Մտիկ ըրէք զիս, Գորալի: Բաթրիս անոր առջև նստաւ և ըսաւ.

— Ձեզի չորիտի դատեմ ըրած բոլոր դիմումներս: Միայն պիտի պարզեմ արդիւնքը այն դիմումներուն որոնք բանի մը յանգած են: Նախ՝ Բասիի քաջապետարանը դիմեցի, յետոյ սերպիական դեպանատունը:

— Ուրեմն կը պնդէ՞ք ձեր այն ենթադրութեան վրայ թէ իմ մօրս վրայ կը դառնար խընդիրը, հարցուց Գորալի:

— Այո՛, իր մահուան թուղթին պատճէնը առի: Ձեր մայրը մեռած է 1895 ապրիլ 14ին:

— Օ՛հ, տապանաքարին վրայ արձանագրուած թւականն է:

— Միեւնոյն թւականն է:

— Բայց Գորալի անունը ի՞նչ է...: Մայրս Լուիզ կը կոչուէր:

— Ձեր մայրը կը կոչուէր Լուիզ-Գորալի, կոմսուհի Օտօլովիչ:

Մանկամարդ կինը ակռաներուն մէջէն կրկնեց.

— Օ՛հ, մայր իմ... սիրեցեալ մայր իմ... ուրեմն ան է սպանուողը... ուրեմն անոր համար աղօթեցի հոն:

— Գորալի, ձեր մօր և իմ հօրս համար աղօթած էք: Հայրս կը կոչուէր Արման-Բաթրիս Պէլվալ: Իր բուն անունը գտայ Տրուօ փողօցի քաղաքապետարանին մէջ: 1895 Ապրիլ 14ին մեռած է ան:

Բաթրիս իրաւունք ունէր ըսելու թէ զօրաւոր նշոյլներ կը լուսաւորէին անցեալը: Բացորոշապէս հաստատուած էր որ տապանաքարի արձանագրութիւնը

իր հօր և մօր մասին էր, երկուքն ալ միեւնոյն օրը սպաննուած: Որո՞ւ կողմէ և ի՞նչ դրդապատճառներով: Ի՞նչ պարագաներու հետեւանք էին այդ տառամերը: Այդ բանն էր որ մանկամարդ կինը հարցուց:

— Տակաւին չեմ կրնար պատասխանել ձեր հարցումներուն, ըսաւ Բաթրիս: Բայց ուրիշ հարցում մը ըրած եմ մտովի, որ աւելի դիւրաւ կը լուծւի և էական կէտ մը կը շուտբանէ: Որո՞ւ կը պատկանի տաղաւարը: Բէյնուար փողօցին վրայ արտաքուստ ու է նշան չկայ: Բակին պատը և դուռը տեսաք, մտնաւոր բան մը չկայ անոնց վրայ: Բայց շէնքին թիւը կը բաւէ: Թաղին հարկահաւաք պաշտօնեայէն իմացայ որ տուրքերը կը վճարուէին Օրէրա ծառուղին բնակող նօտարի մը կողմէ: Այցելուութիւն տւի այդ նօտարին ու սա բանը իմացայ...

Բաթրիս պահ մը ընդհատելէ յետոյ խօսքը, յայտարարեց.

— Տաղաւարը քսանըմէկ տարի առաջ գնուած է հօրս կողմէ: Երկու տարի յետոյ հայրս կը մեռնէր, և այս տաղաւարը, որ իր ժառանգութեան մաս կը կազմէր, նախորդ նօտարին կողմէ ծախու հանուած է, հելլէն հպատակ Սիմէօն Տիօտօքիս գնած է զայն:

— Ա՛ն է, գոչեց Գորալի: Սիմէօնի անունն է Տիօտիքիս:

— Արդ, Սիմէօն Տիօտիքիս իմ հօրս բարեկամն էր, յարեց Բաթրիս, քանի որ իր կտակին համաձայն, կտակակատար կարգուած էր. Սիմէօն Տիօտօքիս

նախորդ նօտարին և Լոնտոն գտնուող անձի մը միջոցաւ կը վըճարէր իմ դպրոցական թոշակօ և չափահաս ըլլալէս յետոյ ինծի յանձնել կուտար երկու հարիւր հազար ֆրանք, իբր միացորդ հօրենական ժառանգութեան:

Երկարատեւ լուսթիւն մը պահեցին անոնք: Շատ մը բաներ կը պարզուէին իրենց առջև, թէև տարտամ ու սուերազուած, այն տեսարաններուն պէս զոր մարդ կը նշմարէ իրիկան մշուշին մէջ:

Բան մը միայն կը տիրապետէր միւսներուն վրայ: Բաթրիս շարունակեց.

— Ձեր մայրը և հայրս զիրար սիրած են, Գորալի:

Այդ գաղափարը ա՛լ աւելի իրարու կը միացնէր զանոնք: Իրենց սէրը կը կրկնապատկէր ուրիշ սէրով մը, ինչպէս անոնցը աւելի եղբրական փորձութիւններով ճմլուած էր, արեան ու մահուան մէջ վերջ գտնելու համար:

— Ձեր մայրը և իմ հայրս իրար սիրած են, յարեց Բաթրիս: Անտարակոյս, յափշտակուած սիրահարներու կը նմանին, որոնց սէրը հմայիչ տղայամտութիւններ կունենայ, որովհետև անոնք ուզած էին ուրիշներու չզործածած անունով յորթորջել, այն է ձեր և իմ անունները ընտրել: Օրին մէկը, ձեր մայրը գետին ձգեց մեղեցիկի հատիկներէ համրիչը: Ամենէն խոշոր հատիկը կտորելով երկուքի բաժնեցաւ: Հայրս պրըլօքի մը վրայ ազուցանելու աւա և ժամացոյցին շրջաթայէն կախեց զայն: Ձեր հայրը և իմ մայրս երկուքն ալ ամուրի

էին: Դուք երկու տարու էիք, իսկ ես՝ ութը տարու: Իր կնոջ նւիրելու համար լիովին, հայրս Անդրիա զրկեց զիս, ու տաղաւարը գնեց. ձեր մայրը, որ մօտակայ շէնքը կը բնակէր, հոն կ'երթար միանալ ուսնոր, դռնին տնցնելով և այս բանալին գործածելով: Այս աղաւարին կամ զայն շրջապատող պարտէզին մէջ սպաննւած ըլլալու են անոնք: Պիտի հասկնաք այդ բանը, որովհետեւ այդ սպանութեան ակներեւ ապացոյցները գոյութիւն ունենալու են, զոր Սիմէօն Տիօտօքիս երեւան հանած է, քանի որ տապանաքարին վրայ արձանագրութիւն ընելէ չէ վախցած ան:

— Ո՞վ է մարդասպանը, մորմընջեց մանկամարդ կինը:

— Քօրալի, դուք ալ, կատկած ունիք մէկուն վրայ: Այդ ատելի անունը ձեր մտքին առջեւ կը ներկայանայ, թէեւ ոչ մէկ նշան կայ, որպէս զի կարենանք ստուգել:

— Էսարէսն է ան, գոչեց Քօրալի անձկութեան աղաղակով:

— Եստ հաւանական է:

Իլուխը ձեռքերուն մէջ ծածկեց ու յարեց.

— Ոչ... ոչ... կարելի բան չէ... կարելի բան չէ որ հօրս սպանիչին կինը եղած ըլլամ:

— Անոր անունը կրած էք, բայց երբեք կինը չէք եղած: Այդ բանը ըսիք իր մահուան նախընթաց իրիկունը, իմ ներկայութեանս: Միայն հաստատենք այն բանը զոր կրնանք հաստատել, ու միեւնոյն ասին յիշենք որ ձեր չար ոգին եղաւ ան.

նոյնպէս յիշենք որ Սիմէօն, հօրս բարեկամը և կտակակատարը, երկու սիրահարներուն տաղաւարը գնողը, անոնց գերեզմանին վրայ վրէժնին լուծելու երդում ընողը, ձեր մօր մահէն քանի մը ամիս յետոյ՝ Էսարէսի բնակարանին պահապանը, քարտուղարը կը դառնար ու տակաւ անոր կեանքին մէջ կը մտնէր: Ինչո՞ւ, պարզապէս վրէժի ծրագիրներ գործադրելու համար:

— Բայց վրէժ չէ լուծւած:

— Ինչէ՞ն գիտէք: Տեղեկութիւն ունի՞նք թէ ի՞նչպէս սպաննուած է Էսարէս պէյ: Անտարակոյս, Սիմէօն չէ սպանչած զայն, քանի որ Սիմէօն հիւանդանոցը կը գտնէր: Թերեւս սպաննել տւած է զայն: Մնաց որ, վրէժին գրութիւնը արտայայտութեան հաղարձմէկ ձեւեր ունի: Վերջապէս Սիմէօն իմ հօրս հրամաններուն կ'անսարանչուչտ: Նախ կ'ուզէր հասնիլ նպատակի մը զոր առաջադրած էին իմ հայրս և ձեր մայրը, այն է մեր ճակատագրի սերտ միացումը: Ու այդ նպատակը տիրապետած է իր կեանքին: Ակներեւօրէն, տղայական խաղալիկներուն միջեւ Սիմէօն դրած է մեղեսիկի այն կէս կտորը, որուն միւս կէսը կը ձեւացնէր ձեր համբիչին մէկ հատիկը: Ան հաւաքածոյ շինած է մեր լուսանկարներէն: Վերջապէս ան, մեր անձանօթ բարեկամը, ինծի զըրկած է բանալին, համակի մը հետ մէկտեղ... զոր չստացայ, աւա՛ղ:

— Ուրեմն, Բաթրիս, չէք խորհիր որ մեռած է այդ անձա-

նօթ բարեկամը և դուք լսած էք անոր անձկութեան ճիշերը:

— Չեմ գիտեր: Սիմէօն առանձին գործած է: Խորհրդակից մը, օգնական մը ունէ՞ր իր ձեռնարկած գործին մէջ: Ժամը եօթը տասնըինը անցած սպաննուեր է ան: Չեմ գիտեր. այդ չարաշուք առուան անցուղարձերը մտթին մէջ կը մնան: Միակ համոզումը զոր կրնանք ունենալ, սա է թէ քսանըութը տարիէ ի վեր Սիմէօն Տիօտիքիս ի նպատակի և ընդդէմ մեր ծրագրներու սպանիչին շարունակած է իր անշուք ու համբերատար աշխատանքը: Նոյնպէս համոզելու ենք թէ Սիմէօն Տիօտօքիս կենդանի է:

Ու Բաթրիս յարեց.

— Կենդանի է, բայց խենթեցած է: Ուստի չենք կրնար ոչ շնորհակալութիւն յայտնել և ոչ զինքը հարցափորձել այն մտայլ պատմութեան մասին, որուն տեղեակ է, ինչպէս նաև ձեզի սպառնացող վտանգներու մասին: Եւ սակայն, ան միայն...

Բաթրիս անգամ մը ևս ուզեց փորձել, թէեւ վստահ էր որ նոր անյաջողութիւն մը պիտի ունենար. Սիմէօն ատենօք ծառաներու բնակութեան յատկացւած շէնքին աջ թեւին մէջ կը գտնէր, ուր երկու խեղանդամներու դրացի էր: Բաթրիս հոն գնաց: Սիմէօն սենեակը կը գտնէր:

Թիկնաթուին մէջ կէս մը քնացած ու դէմքը պարտէզին դարձուցած, բերանը ունէր մարած ծխափող մը: Սենեակը փոքր էր, հազիւ կահաւորւած, բայց մաքուր ու պայծառ: Այդ ձե-

րունիին ամբողջ թաքուն կեանքը հոն սահած էր: Իր բացակայութեանը, Պ. Տէմալիօն քանիցս այդ սենեակը այցելած է: Բաթրիս ալ նմանապէս այցելած էր, մորաքանչիւրը իր տեսակէտին համաձայն:

Յիշատակութեան արժանի միակ բան մը երեւան հանւեցաւ, այն է պատինձերմակթուղթերուն վրայ, հեշտադարասին ետին մատիտով նկարւած պատկեր մը. իրար խաչաձեւող երեք գիծեր էին, որոնք մեծ եռանկիւն մը կը ձեւացնէին: Այդ երկրաչափական պատկենին մէջտեղը, ոսկիի փոշի քսւած էր անձաշակ կերպով: Ոսկիէ եռանկիւնը: Ոչ մէկ նշան ատկէ զատ, որով Պ. Տէմալիօնի հետազոտութիւնները ազարդիւն կը մնային:

Բաթրիս ձերուկին քով գնաց ուղղակի և ուսը ձեծեց, ըսելով.

— Սիմէօն:

Սիմէօն դեղին ակնոցը ուղղեց Բաթրիսի վրայ, ու այս վերջինը յանկարծ փափագ դաջ ապակիէ այդ խոջընդոսը վերցնելու, որ մարդուկին աչքերը կը ծածկէր և թոյլ չէր տար որ անոր հոգիին խորը ու հեռաւոր յիշատակներուն մէջ թափանցէ:

Սիմէօն սկսաւ տխմարօրէն ծիծաղել:

— Ա՛հ, իմ բարեկամս և հօրս բարեկամս է ան, խորհեցաւ Բաթրիս: Իմ հայրս սիրած, անոր կամքը յարգած, յիշատակին հաւատարիմ գտնւած ու անոր գերեզման մը յատկացուցած է, որուն վրայ կ'աղօթէր, երդում ընելով որ հօրս վրէժը պիտի լուծէ: Բայց իր խելքին տէ՛րը չէ ալեւս:

Բաթրիս զգաց որ անօգուտ էր Սիմէօնի խօսք ուղղելը: Բայց եթէ իր ձայնը ու է արձագանգ չէր արթնցներ Սիմէօնի խանդարւած ուղեղին մէջ, աչքերը թեքուս կը պահէին ու է յիշատակ: Ճերմակ թուղթին վրայ գրեց բառեր զոր Սիմէօն այնքան անգամներ դիտած ըլլալու էր.

Բարթիս եւ Քորալի. — 14 Ապր. 1895

Մերունին նայեցաւ, զուլսը ցնցեց, և վերսկսաւ իր ցուազին ու տխմար ծիծաղը:

Սպան շարունակեց գրել.

Արման Պեղլալ

Մերուկը միեւնոյն թերութեան մէջ թաղւած էր: Բաթրիս նորէն փորձեց: Էսարէսի և գնդապետ Ֆաքիի անունները գրեց, ու եռանկիւն մը գծեց: Սիմէօն բան մը չէր հասկնար ու հեղնօրէն կը ծիծաղէր:

Բայց յանկարծ նւազ մանկական ծիծաղ մը արձակեց: Բաթրիս գրած էր Պուրնէֆի մեղսակցին անունը, կարելի է ըսել թէ այս անգամ յիշատակ մը կը յուզէր ծերուկ քարտուղարին միտքը: Սիմէօն փորձեց սաքի ելլել, իր թիկնաթոռին մէջ ինկաւ, յետոյ նոթէն շտկեցաւ և պատէն կախւած գլխարկը առաւ:

Սիմէօն սենեակէն հեռացաւ, ու Բաթրիսը ունենալով իր ետին, տունէն դուրս ելաւ, ու ձախակողմ դառնալով դէպի Օթէօյ ուղղեցաւ:

Սիմէօն կը յառաջանար այնպիսի մարդոց երեւոյթով, որոնք թելագրութեան մը ազդեցութեան տակ կը բռնադատուին յառաջանալու, առանց գիտնալու

թէ ուր կ'երթան: Պուրնէֆի ժողոցը մտաւ, Սէնը անցաւ, դէպի Կլընէլ թաղը ուղղեցաւ անվարան քայլերով:

Յետոյ ծառուղիի մը վրայ կանգ առաւ, ու ձեռքը երկարելով Բաթրիսի, նշան ըրաւ որ կանգ առնէ:

Կրպակ մը կը ծածկէր գանձը: Բաթրիս զուլսը ներս խօթեց: Բաթրիս ալ անոր հետեւեցաւ:

Դիմացը, այդ ծառուղիին և միւս ծառուղիին կազմած անկիւնը սրճարան մը կար, ուր չորս յաճախորդներ նստած էին: Այդ անձերուն երեքը դարձուցած էին կունակին: Բաթրիս ծառուղիին կողմը նստող մարդուն դէմքը միայն տեսաւ ու ձանչցաւ որ Պուրնէֆին էր ան:

Այդ պահուն ծերուկ Սիմէօն կը հեռանար իր դերը աւարտած մարդու մը պէս, ուրիշներու թողով գործը ճւարտելու հոգը: Բաթրիս աչքերով բան մը փնտռեց, նամակատուն մը նշմարեց և խոյն ներս մտաւ: Գիտէր որ Պ. Տէմալիօն այդ պահուն կը գտնէր Բ. յնուար փողոցը: Հեռաձայնով անոր իմաց տուաւ Պուրնէֆի ներկայութիւնը: Պ. Տէմալիօն պատասխանեց թէ ընդհուպ հոն պիտի գայ:

Էսարէ պէյի սպանութենէն յետոյ, գնդապետ Ֆաքիի և չորս մեղսակիցներու մասին Պ. Տէմալիօնի կողմէ կատարւած քննութիւնը յառաջացած չէր: Երեւան հանւեցան Կրէկուարի թաքստոցը և որմագարաններ ունեցող սենեակները, բայց թափուր էին անոնք: Մեղսակիցները խոյս տուած էին:

— Մերուկ Սիմէօն իրազեկ էր անոնց սովորութիւններուն, կ'ըսէր Բաթրիս մտովի: Գիտէր թէ շարթւան մէջ այս ինչ օրը, այս ինչ ժամուն կը հաւաքէին այդ սրճարանը: Յանկարծ յիշողութիւնը արթնցած էր, Պուրնէֆի անունը արտասանելուն պէս:

Քանի մը բոպէ յետոյ՝ Պ. Տէմալիօն օթօմայիլէն վար կ'իջնէր ոստիկաններուն հետ: Գործը երկար չտեւեց: Թէրասը պաշարւեցաւ: Մեղսակիցները դիմադրութիւն ցոյց չուին: Պ. Տէմալիօն անոնցմէ երեքը հսկողութեան տակ բանտ դրկեց, իսկ Պուրնէֆը մասնաւոր սրահ մը տարաւ:

— Ներս եկէք, պիտի հարցաքննենք զայն, ըսաւ Բաթրիս:

Բաթրիս առարկեց.

— Տիկին Էսարէս առանձին է հոն...

— Առանձին չէ: Ձեր մարդերէն երեք հոգի կայ հոն:

— Այո՛, բայց կը նախընտրեմ հոն գտնուիլ: Առաջին անգամն է որ առանձին կը ձգեմ զայն. հետեւաբար ամէն վախ ներելի է:

— Քանի մը վայրկեանի խընդիր է, պնդեց Պ. Տէմալիօն: Պէտք է միշտ օգտուիլ ձերբակալութեան առաջ բերած շփոթութենէն:

Բաթրիս հետեւեցաւ դատաւորին, բայց երկուքն ալ հասկցան թէ Պուրնէֆ դիւրաւ շփոթող մարդոցմէ չէր: Ուսերը ցնցելով պատասխանեց իրեն եղած սպառնալիքներուն:

— Պարո՛ն, անօգուտ է զիս վախցնելը: Բան մը չեմ վտանգ

դեր. հրացանի՞ պիտի բռնեն զիս: Տրանսպի մէջ մարդ հրացանի չեն բռներ այո՛ի մը կամ ոչի մը համար. մենք չորսս ալ չէ՞՞՞ պետութեան մը հպատակներն ենք: Դատի՞ պիտի քաշեն: Պիտի դատապարտեն: Պիտի բանտարկեն: Երբեք: Քանի որ այս ինչերը գոցած էք, Մուսթաֆայի, Ֆաքիի և Էսարէսի սպանութիւնները պարտկած էք, հիմա չպիտի ուզէք այդ բաները արծարծել առանց բանաւոր պատճառի: Ոչ, պարոն, չեմ վրդովւիլ: Կեդրոնացման բանակետին մէջ պիտի արգելափակուիմ. ահա՛ ինձի տրեւիք պատիժը:

— Ուրեմն չէ՞ք ուզեր ինձի պատասխանել, ըսաւ Պ. Տէմալիօն:

— Ոչ, կը հաւանիմ որ կեդրոնացման բանակետը զրկւիմ: Բայց այդ բանակետներուն մէջ քսան տեսակ բէժիմ կայ, ու ես կը փափագիմ ձեր շնորհներուն արժանանալ և այսպէս հանգստաւէտ կերպով վերջացնել պատերազմը: Բայց ձեր գիտցածը ի՞նչ է:

— Գրեթէ ամէն բան գիտեմ:

— Աւելի գէշ, իմ արժէքս կը նւազի: Էսարէսի վերջին գիշերւան մասին բան մը գիտե՞ք:

— Այո՛, և չորս միլիոններու սակարկութիւնն ալ գիտեմ: Ի՞նչ եղան այդ միլիոնները:

Պուրնէֆ կատաղութեան շարժում մը ընելով ըսաւ.

— Ետ առնւեցան, գողցեցան. ծուղակ մը լարւած էր:

— Ո՞վ ետ առաւ:

— Կրէկուար անուն մէկը:

— Ո՞վ էր ան:

— Յետոյ հասկցանք այդ անիծեալին ո՛վ ըլլալը: Երևան հանեցինք որ Կրէկուար անոր օթօմօպիլին վարիչն էր:

— Որ իր պանքայնն բնակարան կը փոխադրէր ոսկիի տոպրակները:

— Այո՛, կը կարծենք որ այդպէս է... նոյն իսկ կարելի է ըսել թէ ստուգութիւն մըն է ան: Բայց Կրէկուար կոչուած անձը կին մըն է:

— Կին մի:

— Այո՛, իր սիրուհին: Մէկ քանի ապացոյցներ ունինք այդ մասին: Կայտառ, յանդուգն, էրիկ մարդու պէս հուժկու կին մը, որ բանի մը առջև չընկրկիր:

— Հասցէն գիտէ՞ք:

— Ոչ:

— Ոսկիի մասին նշան մը գտած էք, կասկած մը ունի՞ք:

— Ոչ: Ոսկին կը գտնուի Րէյնուար փողոցի տան կամ պարտեղին մէջ: Ամբողջ շաբաթ մը տեսանք որ այդ ոսկին տուն կը փոխադրուէր: Այնուհետեւ ոսկի դուրս չէ հանուած: Ամէն գիշեր դարանակալ կը սպասէինք: Կը հաւատեմ որ տոպրակները հոն են:

— Էսարէսի սպաննութեան մասին ու է նշան չկա՞յ:

— Ոչ մէկ նշան:

— Վստահ ես այդ մասին:

— Ինչո՞ւ ստեմ:

— Իսկ եթէ այդ սպանիչը դուք էք... կամ ձեր բարեկամներէն մէկը:

— Մենք ալ խորհեցանք որ այնպէս պիտի ենթադրէին: Բարեբախտաբար, ու գիպածաւ, ուրիշ տեղ գտնուած ենք այդ պահուն:

— Կարելի՞ է դիւրաւ ապացուցանել:

— Անմխտելիօրէն:

— Պիտի քննենք այդ պարսղան: Ուրիմն ուրիշ յայտնութիւն չկա՞յ:

— Ոչ: Ձեզի հարցում մը պիտի ընեմ որուն կրնաք պատասխանել ուղածնուդ պէս: Ո՞վ մատնեց մեզ: Ձեր պատասխանը կրնայ լուսաբանել զիս, որովհետեւ միակ անձ մը գիտէր ամէն շաբաթ մեր ժամադրութիւնները... այդ միակ անձը էսարէս պէյն էր... Ինքն ալ յաճախ հոն կուգար՝ մեզի հետ խորհրդակցելու համար: Էսարէս մեռած է: Ո՞վ բերան տուաւ մեզ:

— Ծերուկ Սիմէօնը:

— Ի՞նչ Սիմէօն, Սիմէօն Տիօտիքիս:

— Սիմէօն Տիօտօքիս, էսարէս պէյի քարտուղարը:

— Ա՛հ, այդ անզգամին պիտի հասկցնեմ...: Բայց ո՛չ, անկարելի է:

— Ինչո՞ւ անկարելի կը նկատէք:

— Ինչո՞ւ: Որովհետեւ...

Պուրնէֆ երկարօրէն խորհեցաւ, վստահ ըլլալու համար թէ անպատեհութիւն մը կա՞ր այդ մասին խօսելուն մէջ: Յետոյ աւարտեց իր պարբերութիւնը:

— Որովհետեւ ձերուկ Սիմէօն մեզի համախոհ էր:

— Ի՞նչ կ'ըսէք, յարեց Բաթրիս, չափազանց զարմացած:

— Կ'ըսեմ ու կը հաստատեմ թէ Սիմէօն Տիօտօքիս մեզի համախոհ էր: Մեր մարդն էր ան: Էսարէս պէյի երկրորդի խաղերուն իրազեկ կը պահէր մեզ: Իրիկան

ժամը իննին, ան հեռաձայնով մեզի իմաց տուաւ թէ էսարէս վառած էր հին ծաղկանոցներուն կաթսան ու կայծերու աղդանչանը պիտի տրուէր: Ան մեր առջեւ դուռը բացաւ, դիմադրութիւն ձեռացնելով և ձգելով որ զինքը կաշկանդեն դռնապանի խցիկին մէջ, վերջապէս ան ձամբեց ծառաները ու անոնց դրամը վճարեց:

— Բայց զնդապետ Ֆաքհի անոր խօսք չուղղեց իբր մեղսակից...:

— Կատակերգութիւն մըն էր ատ, էսարէսը խաբելու համար: Մէկ ծայրէն միւսը կատակերգութիւն էր:

— Լա՛ւ, Բայց ինչո՞ւ Սիմէօն կը մատնէր էսարէսը: Դըրամի՞ համար:

— Ոչ, ատելութեամբ: Էսարէս պէյի դէմ այնպիսի ատելութիւն մը ունէր որ յաճախ սարսուռ աղղած է մեզի:

— Ծարժառիթը ի՞նչ է:

— Ձեմ գիտեր: Սիմէօն լըռակեաց մարդ մըն է:

— Ոսկիի թաքստոցը գիտէ՞ր, հարցուց Պ. Տէմալիօն:

— Ոչ, փնտռած ըլլալը յանցանք մը չէ: Ան բնաւ չէ հասկըցած թէ տոպրակները ի՞նչպէս դուրս կը հանուէին նկուղէն, որ առժամայ թաքստոց մըն էր:

— Սակայն չէնքէն դուրս կը հանուէին անոնք: Ո՞վ կրնայ ըսել թէ այս անգամ այդպէս չեղաւ:

— Այս անգամ դուրսը, ամէն կողմ կը սպասէինք, ինչ որ Սիմէօն առանձին չէր կրնար ընել: Բաթրիս յարեց:

— Աւելի բան մը չէ՞ք գիտեր անոր վրայ:

— Հաւատացէ՛ք որ չեմ գիտեր: Սակայն հետաքրքրաշարժ դէպք մը պատահած է: Հռչակաւոր իրիկան նախընթաց օրը, նամակ մը ստացայ, որով Սիմէօն կարգ մը տեղեկութիւններ կը հաղորդէր ինծի: Միևնոյն պահարանին մէջ ուրիշ նամակ մը կար, որ անհաւատալի սխալումով մը հոն գրած էր, որովհետեւ շատ կարեւոր կ'երեւար այդ նամակը:

— Ի՞նչ կ'ըսէր այդ նամակը, հարցուց Բաթրիս անձկութեամբ:

— Բանալիի մը վրայ կը խօսէր անոր մէջ:

— Ձէ՞ք կրնար ճշդել:

— Ահաւասիկ նամակը: Պահած էի զայն, վերադարձնելու և զինքը զգուշացնելու համար: Տէսէ՛ք, իր զիրն է...:

Բաթրիս առաւ թուղթի կըտորը, և իսկոյն իր անունը անսաւ անոր վրայ: Նախկը իրեն ուղղած էր, իր կանխազգացումին համաձայն: Այդ նամակը չէր ստացած Բաթրիս: Ահա այդ նամակը:

«Բաթրիս,

«Այս իրիկուն, բանալի մը պիտի ստանաս: Այս բանալիով կը բացելն գէպի Սէն Իլնոզ գոհին մէջտեղը գտնուող երկու դռներ, մէկը ալակողմ, ձեր սիրած կնոջ պարտէզին դուռը, իսկ միւսը ձախակողմ, այն պարտէզին դուռը, ուր ձեզի ժամադրութիւն կուտամ ապրիլ 14ին, առաւան ժամը 9ին: Քու սիրած անձը այ հոն պիտի գտնուի: Պիտի հասկնաք թէ ո՞վ եմ ես և

ի՛նչ նպատակի կը ձգտիմ: Երկուքնիդ ալ անցեալի մասին այնպիսի բաներ պիտի իմանաք որովա՛լ աւելի իրարու պիտիմօտենաք:

«Ապրիլ 14ին սկսող կռիւը աւելի սոսկալի պիտի ըլլայ: Եթէ ես մեռնիմ, ապահովաբար, սիրած կինդ մեծ վտանգներու պիտի մատնուի: Բաթրիս, հսկէ անոր վրայ, ու մէկ վայրկեան իսկհսկողութիւնդ անպակաս ըրէ: Բայց ես չպիտի մեռնիմ, և դուք երջանկութիւնը ձեռք պիտի բերէք: զոր երկար ատենէ ի վեր ձեզի համար կը պատրաստեմ:

«Ձերդ համակ սիրով:»

— Ստորագրած չէ, յարեց Պուրնէֆ, բայց կը կրկնեմ թէ Սիմէօնին գիրն է: Գալով կնոջ, ակներեւօրէն, Տիկին Էսարէսի վրայ կը դառնայ խնդիրը:

— Ի՛նչ վտանգի մատնուած է, գոչեց Բաթրիս մտահոգութեամբ: քան իորէսարէս մեռած է: Ուրեմն վախնալու բան չկայ:

— Ո՞վ գիտէ: Սոսկալի մարդ էր ան:

— Որո՞նք պաշտօն յանձնած էր իր վրէժը լուծելու: Ո՞վ պիտի շարունակէր իր գործը:

— Չեմ գիտեր, բայց պէտք է կասկածիլ:

Բաթրիս մտիկ չէր ըներ ալևս: Նամակը Պ. Տէմալիօնի երկարեց, և առանց ուրիշ բան ըսել ուղեւոր, դուրս ելաւ:

— Շո՛ւտ, Բէյնուար փողոցը տար, ըսաւ Բաթրիս օթօթօպիլի վարիչին, անոր մէջ ցատկելով:

Բաթրիս կ'աճապարէր Բէյնուար փողոցը հասնիլ: Իրեն այնպէս կը թւէր որ Քօրալիի

զլխին վրայ կախած էին այն վտանգները որոնց մասին կը խօսէր ծերունկ Սիմէօն: Արդէն իսկ թշնամին իր բացակայութենէն օգուտ քաղելով, յարձակում պիտի գործէր նշանածին վրայ: «Ո՞վ պիտի կրնայ պաշտպանել զայն, եթէ մեռնիմ», ըսած էր Սիմէօն: Արդ, մասամբ իրականացած էր այդ ենթադրութիւնը, քանի որ խենթեցած էր ան:

— Օ՛ն, տխմարութիւնէ ըսածս կը մըմնջէր Բաթրիս...: Ինքնիրենս գաղափարներ կը դարբնեմ...: Ո և է շարժառիթ չի կայ...:

Բաթրիսի մտալլկումը կ'աւելնար ամէն վայրկեան: Ան կը խորհէր թէ ծերունկ Սիմէօն տակաւին խելագարած չէր երբ այդ նամակը կը գրէր ու այդ խորհուրդները կուտար: Մտովի կ'ըսէր թէ Սիմէօն դիտմամբ իմաց տւած էր որ այդ բանալին կը բանայ Քօրալիի պարտէզին դուռը, որպէս զի Բաթրիս կարենար տղոք հսկողութիւն մը կատարել, ի հարկին մուտ գործելով հոն, մինչեւ մանկամարդ կնոջմօտ երթալու համար:

Բաթրիս հեռուէն տեսաւ Սիմէօնը: Գիշեր եղած էր ու մարդուկը բնակարան կը դառնար: Բաթրիս զռնապանի խցիկին հանդէպ աւելի առաջ անցաւ և լրսեց որ կը մուտար ան:

Բաթրիս պահակ գինւորին հարցուց.

- Նոր բան մը կա՞յ:
- Ոչինչ, հարիւրապետս:
- Ի՛նչ կ'ընէ քոյր Քօրալին:
- Պարտէզը պտոյտ մը կատարեց ու կէս ժամ առաջ վեր ելաւ:

— Եա-Պօն ի՛նչ կ'ընէ:

— Քոյր Քօրալիի կը հետեւէր ան: Իր դրան առջեւ ըլլալու է:

Սպան սանդուխէն բարձրացաւ աւելի հանդաւտ սրտով: Բայց առաջին յարկը հասնելուն պէս, մեծ զարմանքով տեսաւ որ ելեկտրական լոյսը մարած էր: Կոճակը դարձուց: Այն ատեն նրբանցքին ծայրը նշմարեց Եա-Պօնը, որ քոյր Քօրալիի սենեակին առջեւ ծունկի եկած էր, զլուխը պատին կրթնցուցած: Սենեակին դուռը բաց էր:

— Ի՛նչ կ'ընես հոտ, աղաղակեց Բաթրիս վազելով:

Եա-Պօն չպատասխանեց: Բաթրիս ստուգեց որ արիւն կար անոր բաճկոնին վրայ: Այդ պահուն Սենեակացի զինւորը գետին փռուեցաւ:

— Կրո՞ղ, վիրաւորուած է... թերեւս մեռած է:

Եա-Պօնի մարմինն վրայէն ցատկեց ու սենեակ վազեց, որուն ելեկտրական լոյսը վառեց իսկոյն:

Քօրալի նստարանի մը վրայ տարածուած էր: Կարմիր մետաքսէ փոքր ու սոսկալի լարը կը շըրջապատէր մանկամարդ կնոջ վիզը: Սակայն Բաթրիս այն ահ-

ուելի անձկութիւնը չէր զգար զոր մարդ կուրենայ նման անդարմանելի դժբախտութիւններու առջեւ: Իրեն այնպէս կը թւէր որ Քօրալիի դէմքը մահացու տոգուներութիւն մը չունէր: Արդարեւ, մանկամարդ կինը կը շնչէր:

— Մեռած չէ ան, մեռած չէ ան, ըսաւ Բաթրիս մտովի: Ապահով եմ որ չպիտի մեռնի... և ոչ ալ Եա-Պօն...: Հարածը ի դերեւ ելած է:

Հարը թուցուց:

Քանի մը բոպէ յտոյ՝ մանկամարդ կինը լայնօրէն կը շնչէր ու կը սթափէր: Ժպտեցաւ, Բաթրիսը տեսնելով:

Բայց իսկոյն յիշելով, Քօրալի իր երկու թեւերովը բռնեց Բաթրիսը, և դողդոջուն ձայնով մը ըսաւ.

— Օ՛հ, Բաթրիս, կը վախնամ ձեզի համար...

— Ինչէ՛ն կը վախնաք, Քօրալի. ո՞վ է այն թշուառահանը:

— Չտեսայ դէմքը... լոյսը մարած էր... կոկորդէս բռնելով իսկոյն, մեղմաձայն ըսաւ. «Նախ դուռն... այս գիշեր կարգը պիտի գայ սիրահարիդ...»: Օ՛հ, Բաթրիս, կը վախնամ ձեզի համար... Բաթրիս, կը վախնամ ձեզի համար...:



Թ.

Դ Է Պ Ի Ա Ն Դ Ո Ւ Ն Դ

Բաթրիս անմիջապէս աւաւ իր որոշումը: Իսկոյն իր անկողնին վրայ փոխադրեց մանկամարդ կինը և խնդրեց որ տեղէն չչարժի ու մարդ չկանչէ: Յետոյ ստուգեց որ Եւ-Պօն ծանրապէս վիրաւորուած չէր: Ի վերջոյ ելեկտրական զանգակը հնչեցուց ուժգնօրէն, որոնք տան մէջ գտնուող կայաններու հետ հաղորդակցութիւն ունէին:

Զինուորները աճապարանքով հասան:

— Անբաններ էք դուք, ըստե Բաթրիս: Մէկը հոս մտած է: Քոյր Քօրալի և Եւ-Պօն քիչ մնացեր է որ սպաննուէին...:

Անոնք սկսան զարմացական բացազանչութիւններ արձակել:

— Լռեցէք, ըսաւ Բաթրիս հրամայական շեշտով: Գաւազանի հարւածներու արժանի էք: Ձեզի կը ներեմ այն պայմանով որ այս իրիկուն և գիշեր Քօյր Քօրալի մեռած ըլլալու լուրը տարածայնէք:

Անոնցմէ մէկը առարկեց.

— Բայց որո՞ւ հետ խօսինք, մարդ չկայ մէջտեղը, հարիւրապետս:

— Տխմար, կայ մէկը, քանի որ քոյր Քօրալի և Եւ-Պօն յարձակում կրած են, եթէ երբեք ձեր կողմէ չէ եղած այդ յարձակումը: Դուք չէք ըրած: Ու-

րեմն...: Անմտութիւն չուզեր: Ուրիշ անձերու հետ խօսելու պէտք չկայ, այլ ձեր միջեւ խօսեցէք... ու նոյն իսկ անոր վրայ խոկացէք ձեր էութեան խորը: Ձեզ մտիկ կ'ընեն, կը լրտեսեն ու ձեր խօսքերը կը լսեն և կը կռահեն ինչ որ չէք խօսիր իսկ: Ուրեմն մինչեւ վաղը առտու, քոյր Քօրալի իր սենեակէն դուրս չպիտի ելլէ: Կարգաւ պիտի հսկեն անոր վրայ: Միւսները ձաչէն անմիջապէս յետոյ պիտի պառկին: Տան մէջ երթեւեկ չպիտի ըլլայ, այլ լռութիւն պէտք է տիրէ:

— Հապա ծերուկ Սիմէօն ի՞նչ պիտի ընէ, հարիւրապետս:

— Թո՛ղ սենեակին մէջ բանտարկեն: Իբր խելագար վտանգաւոր է: Անոր յիմարութենէն օգտուած են, դուռը բանալ տալու համար: Թո՛ղ արգելափակ ընեն զայն:

Բաթրիսի ծրագիրը պարզ էր: Թշնամին կարծելով որ Քօրալի մեռնելու վրայ էր, մանկամարդ կնոջ յայտնած էր իր նպատակը, այն է սպաննել նաև Բաթրիսը. Թշնամին այնպէս կարծելու էր թէ ինք գործելու ազատութիւն ունէր, առանց կասկածելու Բաթրիսի ծրագրի մասին և զգուշութիւններ ձեռք առնելու: Թշնամին պիտի գար, կռիւ-

պիտի մղէր ու ծուղակի մէջ պիտի իյնար:

Բաթրիս այդ կռիւն սպասելով, զոր սրտանց կը մաղթէր, Եւ-Պօնը դարմանել աւաւ: Անոր վէրքը ծանր չէր: Թէ՛ Եւ-Պօնը և թէ՛ քոյր Քօրալին հարցաքննեց:

Համանման պատասխաններ տւին անոնք: Մանկամարդ կինը պատմեց թէ քիչ մը յոգնած ըլլալուն, ընկողմանած վիճակի մէջ կը կարդար, մինչ Եւ-Պօն նրբանցքին մէջ կը կենար, բաց դրան առջեւ, արարական ձեւով կծկոտած: Երկուքն ալ կասկածելի բան մը չլսեցին: Յանկարծ Եւ-Պօն նրբանցքին մէջ ստուեր մը տեսաւ իր և նրբանցքին լոյսին միջեւ: Այդ լոյսը, որ ելեկտրական լամպարէ մը առաջ կուգար, սենեակի լամպարին հետ միեւնոյն ատեն մարեցաւ: Եւ-Պօն, որ կէս մը ելած էր տեղէն, սաստիկ հարւած մը ընդունեց ծո՞րակին վրայ և ինքզինքը կորսնցուց: Քօրալի փորձեց խոյս տալ զարդախուցի փոքր դռնէն, բայց չկրցաւ բանալ, ու սկսաւ աղաղակել. իսկոյն բռնեցաւ և գետին նետեցաւ: Քանի մը երկվայրկեանի մէջ տեղի ունեցած էր այդ ամէնը:

Բաթրիս սա միակ ցուցմունքը կրցաւ ձեռք բերել թէ մարդը սանդուխէն չէր եկած, այլ շէնքին ծառաներու բաժնէն: Այդ մասը աւելի փոքր սանդուխ մը ունէր և խոհանոցին միջոցաւ կը հաղորդակցէր մառանի մը հետ, ուր կը գտնուէր Ռէյնուար փողոցին վրայ նայող ծառաներու դուռը:

Բաթրիս դոց գտաւ այդ դուռը:

առ: Բայց կրնար մարդուն մէկը այդ բանալին ձեռք անցնել:

Իրիկուն, Բաթրիս պահ մը Քօրալի մնարին քով մնաց. յետոյ ժամը իննին, իր սենեակը քաշեցաւ, որ քիչ մը հեռուն, միեւնոյն կարգին վրայ կը գրտնէր: Նախապէս իբր ծխարան կը գործածէր էսարէս պէյի կողմէ:

Բաթրիս չէր սպասեր որ կէս գիշերէն առաջ յարձակում գործուէր, որուն տալիք լաւ արդիւնքներուն վրայ յուսալից էր. ուստի գրասեղանի մը առջեւ նստաւ, որ պատին դէմ դրած էր, և դուրս հանեց այն տետրակը որուն մէջ սկսած էր արձանագրել դէպքերու մանրամասն օրագիրը:

Երեսուն-քառասուն վայրկեան գրեց, ու տետրակը գոցելու վրայ էր, երբ տարտամ հպանցում մը զգաց: շնորհիւ ջրղերուն չափազանց լարւած ըլլալուն: Պատուհանէն, դուրսէն կուգար քնն: Ու յիշեց այն օրը, ուր հրազէն քաշած էին Քօրալի և իր վրայ: Սակայն պատուհանը ոչ բաց և ոչ ալ կիսաբաց էր:

Բաթրիս շարունակեց գրել, առանց գլուխը դարձնելու, կարծես առանցուէ բանի ուշադրութիւն դարձնելու. իրեն այնպէս կը թւէր որ անգիտակցօրէն կ'արձանագրէր իր անձկութիւնը յայտնող պարբերութիւնները:

«Հո՛ն է» ինձի կը նայի ան: Ձեմ կարծեր որ սպակի մը ջախխուս: Այդ կերպը անստոյգ է և ատոր մէջ չէ յաջողած: Ոչ, իր ծրագիրը տարբեր ու աւելի բա-

նաւոր ըլլալու է: Կ'ենթադրեմ որ պառկելուս կը սպասէ, որպէս զի քունիս մէջ լրտեսէ զիս. այն ատեն միայն ներս պիտի մտնէ ինծի անծանօթ եզող ու է միջոցով:

«Այժմէն ճշմարիտ հեշտանք մը կը զգամ, երեւակայելով որ անոր նայւածքներուն ենթարկւած եմ: Ան կ'ատէ զիս, և մեր երկու ատելութիւնները իրարու կը բաղխին երկու սուրերու պէս որոնք իրար կը փնտռեն, հարւածելու համար: Մութին մէջ կծկաած, վայրի գալանի մը պէս կը դիտէ զիս, իր որսին կը նայի և կ'ընտրէ այն տեղը զոր պիտի խածնէ իր ժանիքներով: Բայց ես վստահ եմ որ ինք պիտի ըլլայ զոհը, նախապէս պարտելով ու ջախջախելով: Իր դանակը կամ կարմիր լարը կը պատրաստէ: Իմ երկու ձեռքերս պիտի վերջացնեն կռիւը: Արդէն իսկ զօրաւոր, կորովի, յաղթական են այդ ձեռքերը, ու անողոք պիտի ըլլան...»:

Բաթրիս վար դբաւ գրիչը, յետոյ սիկառ մը վառեց, հանդարտօրէն ծխեց, ինչպէս կ'ընէր ամէն իրիկուն: Յետոյ զգեստները հանեց, խամով ծալեց ու աթոռի մը յենարանին վրայ դբաւ, ժամացոյցը լարեց, պառկեցաւ ու ելեկտրական լոյսը մարեց:

— Վերջապէս պիտի հասկընամ թէ ո՛վ է այդ մարդը: Ես սարէսի մէկ բարեկամը: Իր գործը շարունակողը: Բայց ինչո՞ւ այդ ատելութիւնը Քօրալի նըկատմամբ: Արդեօք կը սիրէ՞ զայն, քանի որ զիս ալ մէջտե-

ղէն վերցնել կ'ուզէ: Հիմա պիտի հասկնամ... հիմա պիտի հասկընամ...:

Ժամ մը անցաւ. յետոյ ուրիշ ժամ մը, սակայն ոչինչ չպատահեցաւ պատուհանին կողմը: Ճարճատիւն մը լսուեցաւ դրասեղանին կողմը: Կարասիներու ճարճատիւն մը ըլլալու էր, ինչպէս կը պատահի գիշերային լուռութեան մէջ:

Բաթրիս սկսաւ յոյսը կտրել, կը խորհէր թէ Քօրալի կարծեցեալ մահւան համար սարքած կատակերգութիւնը միջակ արժէք մը ունէր, ու իր զօրաւոր թըշնամին չէր կրնար խաբուիլ: Շըւարուն, պառկելու վրայ էր, երբ միեւնոյն ճարճատիւնը լսեց:

Գործելու պէտքէն մղւած, անկողնէն վար ցատկեց: Լոյսը վառեց: Ամէն ինչ իր տեղն էր: Օտար մարդու մը ներկայութեան հետքը չկար:

— Իրա՛ւ որ, անոր հետ չափուելիք մարդ չեմ: Թշնամին իմ դիտաւորութիւններս կռահած է, հասկնալով որ իրեն դէմ ծուղակ մը լարւած էր: Պառկի՛նք, այս գիշեր բան մը չպիտի պատահի:

Արդարեւ, ու է իրարանցում չեղաւ:

Հետեւեալ օրը, պատուհանը քնած ատեն Բաթրիս դիտեց որ պարտէզին վրայ նայող շէնքի ճակատին երկայնքը քարէ ծնօտ մը կար, գետնայարկին վերեւ. բաւական լայն ըլլալուն՝ մարդ կրնար անոր վրայէն յառաջանալ պատշգամները և ջուրի խողովակները բռնելով:

Բաթրիս պտտեցաւ բոլոր այն սենեակները, որոնք կը նայէին

այդ ծնօտին վրայ: Ծերուկ Սիմէօնի սենեակն ալ հոտ կը գտնուէր:

— Տեղէն չերերաց, հարցուց Բաթրիս, խօսքը ուղղելով հսկող երկու զինւորներուն:

— Այնպէս ըլլալու է, հարիւրապետս: Ամէն պարագայի մէջ՝ դուռը չբացինք:

Բաթրիս ներս մտաւ, և առանց զբաղելու Սիմէօնով, որ միշտ կը ծխէր իր մարած սիկառը, խուզարկեց սենեակը, սայտին մտածուսով թէ ան կրնար իբր սպաստան ծառայել թշնամիին:

Մարդ չգտաւ հոն: Բայց որմադարանի մը մէջ երեւան հանեց քանի մը առարկաներ զոր բնաւ չէր տեսած Պ. Տէմալիօնի հետ կատարած խուզարկութիւններուն ատեն. այդ առարկաներն էին չւանէ սանդուխ մը, կապարէ խողովակներ, որոնք օղայի կաղի խողովակներ կը թւէին և զօդելու յատուկ փոքր լամբար մը:

— Այս ամէնը չափազանց կասկածելի է, ըսաւ Բաթրիս մտովի: Այս առարկաները ինչպէս հոս մտցւած են: Արդեօք Սիմէօն հաւաքած է մեքենաբար, առանց որոշ նպատակի: Պէտք է ենթադրել որ Սիմէօն թշնամիին մէկ գործիքն է միայն: Իր խելքը կորսնցնելէ առաջ կը ճանչնար այդ թշնամին, և այսօր, անոր ազդեցութիւնը կը կրէ:

Սիմէօն, պատուհանին առջեւ նստած, կռնակը դարձուցած էր: Բաթրիս անոր մօտենալով սարսուռ մը զգաց: Մարդը իր ձեռքերուն մէջ բռնած էր մեռելական պսակ մը. սեւ ու ճերմակ

Միլիոններու Գաղսնիք

մարգրիտներէ բաղկացած: Սաթլականը նշանակւած էր անոր վրայ. 14 Ապրիլ 1915: Քսաներօրդ պսակն էր որ Սիմէօն պիտի դնէր իր մեռած բարեկամներու գերեզմանին վրայ:

— Այդ պսակը պիտի գետեղէ, ըսաւ Բաթրիս բարձրաձայն: Բարեկամի ու վրէժխնդիրի իր բնագրը, որ ամբողջ կեանքին մէջ առաջնորդած է զինքը, յիմարութեան ատեն իսկ կը յարատուէ: Վաղը, այդ պսակը պիտի դնես, Սիմէօն, այնպէս չէ՞: Որովհետեւ վաղը, Ապրիլ 14, նւիրական տարեդարձն է...:

Բաթրիս ծռեցաւ դէպի այդ անիմանալի էակը, ուր, քառուղիի մը յանգող ճամբաներու պէս իրարու կը հանդիպէին աղէկ կամ գէշ, նպաստաւոր կամ նենգաւոր բոլոր էնթրիկները, որոնցմէ կը բաղկանար անլուծելի տաճար: Սիմէօն կարծեց որ պսակը ձեռքէն պիտի առնէին ուստի ուժգնօրէն կուրծքին վրայ սեղմեց զայն:

— Մի՛ վախնար, Սիմէօն, ձեռքէդ չեմ առնիր: Վաղը, Սիմէօն, վաղը, Քօրալի ու ես ճըշդապահ պիտի ըլլանք մեզի տըրւած ժամադրութեան: Ահռելի անցեալին յիշատակը թերեւս վաղը փարատի ուղեղիդ մէջ:

Այդ օրը երկար թւեցաւ Բաթրիսի: Շատ կ'աճապարէր նշոյլ մը ձեռք բերելու տիրող խաւարին մէջ: Ու այդ նշոյլը չպիտի՞ ծագէր ապրիլ 14ի քսաներօրդ տարեդարձին պարագաներէն:

Կէս օրէն յետոյ, Պ. Տէմալիօն եկաւ, ու Բաթրիսի ըսաւ.

— Ահա թէ ինչ ստացայ,

հետաքրքրական է... անստորագիր ու կեղծւած զիրով նամակ մը...: Մտիկ ըրէք. «Պարոն, ձեզի իմաց կը տրւի որ ոսկին պիտի զրկուի: Ուշադրութիւն ըրէ՛ք: Վաղը իրկուեն, հազար ութը հարիւր տոպրակները արտասահմանի ճամբան պիտի բռնեն. — Ֆրանսայի քարեկալ մը»:

— Վաղը, ապրիլ 14 է, ըսաւ Բաթրիս, որ իսկոյն զուգորդութիւն մը տեսաւ այդ երկու իրողութիւններուն միջեւ:

— Այո՛, ինչո՞ւ այդ դիտողութիւնը կ'ընէք:

— Օ՛հ, ոչինչ... գաղափար մը միայն...

Քիչ մնաց որ Պ. Տէմալիօնի պատմէր ապրիլ 14 թւականին հետ առնչութիւն ունեցող բոլոր դէպքերը, ինչպէս նաև ծերուկ Սիմէօնի տարօրինակ անձին հետ կապ ունեցող բոլոր անցքերը: Մութ պատճառներով չխօսեցաւ այդ մասին. թերեւս կ'ուզէր առանձին ու մինչեւ ծայրը գլուխ հանել գործին այդ մասը. թերևս տեսակ մը ամօթխածութեամբ չէր ուզեր Պ. Տէմալիօնը իրազեկ ընել անցեալին գաղտնիքներուն. ուստի լռութիւն պահելով այդ մասին, ըսաւ.

— Ի՞նչ է այս նամակը:

— Իրաւ որ ես ալ չեմ գիտեր: Արդարացի ազդարարութիւն մըն է թէ հնարք մը տարբեր ընթացք մը պարտադրելու համար: Պարնէֆի հետ պիտի խօսիմ ատոր վրայ:

— Այդ կողմէն մասնաւոր բան մը չկա՞յ:

— Բան մը չեմ սպասեր: Նոյն գիշերը ուրիշ տեղ գտնւած ըլլա-

լը իրական է: Ի՞նչ է իր բարեկամներուն դերը աւարտած է ալ եւս:

Բաթրիս այդ խօսակցութենէն միակ բոն մը հասկցաւ, այն է թւականներու զուգադիպութիւնը:

Այն երկու ուղղութիւնները, որոնց կը հետեւէին Պ. Տէմալիօն ու Բաթրիս, այդ թւականին մէջ իրարու կը միանային, թւական մը զոր բախտը երկար ատենէ ի վեր որոշած էր: Անցեալը եւ ներկան իրարու պիտի միանային: Վերջաբանը կը մօտենար, ճիշդ ապրիլ 14ի օրը առ յաւէտ պիտի անհետանար ոսկին. անձանօթ ձայն մը Բաթրիսն ու Քորալին այն միեւնոյն ժամադրութեան կը հրաւիրէր, զոր իրենց ծնողքները տւած էին քսան տարի առաջ:

Յաջորդ օրը, ապրիլ 14ն էր: Ժամը իննին, Բաթրիս տեղեկութիւն ուղեց ծերուկ Սիմէօնի մասին:

— Հարիւրապետս, Սիմէօն դուրս ելած է: Դրած արգելքնիդ վերցուցած էիք:

Բաթրիս սենեակ մտաւ ու պսակը փնտռեց: Պսակն ալ հոն չէր: Բայց որմազարանին երեք առարկաները, այն է չուանէ սանդուխը, կապարէ խողով կները և զօղելու լամբարն ալ հոն չէին գտնուեր:

— Սիմէօն բան մը տարա՞ւ իր հետ, հարցուց Բաթրիս:

— Այո՛, հարիւրապետս, պըսակ մը:

— Ուրիշ ոչինչ:

— Ոչ, հարիւրապետս:

Պատուհանը բաց էր: Բաթրիս եզրակացուց որ այդ առարկա-

ները պատուհանէն դուրս հանւած էին. այսպէս կը հաստատէր իր այն կարծիքը թէ Սիմէօն անգիտակցօրէն մեղսակցութիւն ունէր:

Ժամը տասնէն քիչ առաջ, Քորալի պարտէզ իջնելով միացաւ Բաթրիսի: Սպան վերջին միջադէպերը իմաց տւած էր մանկամարդ կնոջ: Քորալի տագոյն ու մտահոգ էր:

Անոնք մարգագետիններուն շրջանը ըրին ու առանց տեսնելու հասան այն պուրակները որոնք գոիին դուռը կը ծածկէին:

Բաթրիս բացաւ այդ դուռը: Միւս դուռը բացած ատեն Բաթրիս վարանեցաւ: Ցաւ կը զգար որ Պ. Տէմալիօնի իմաց տւած չէր, ու Քորալիի հետ առանձին կը կատարէր այդ ուխտագնացութիւնը, որ վտանգաւոր կը համարէր կարգ մը նշաններու համաձայն: Բայց թօթափեց այդ տպաւորութիւնը: Երկու թվով էր առած էր: Ի՞նչ կար վախնալու:

— Ներս պիտի մտնենք, այնպէս չէ՞, Քորալի, ըսաւ Բաթրիս:

— Այո՛, ըսաւ մանկամարդ կիներ:

— Սակայն վարանոտ ու մտահոգ երեւոյթ մը ունիք...

— Այո՛, սիրտս կը սեղմուի, մրմնջեց մանկամարդ կիներ:

— Ինչո՞ւ, կը վախնա՞ք:

— Ոչ... կամ աւելի ճիշդը, այո՛...: Այսօր չեմ վախնար, այլ ուրիշ ատենի համար կը վախնամ: Իմ խեղճ մօրս վրայ կը խորհիմ, որ ինձի պէս այս ուսնէն անցած է ապրիլի առտու-

մը: Շատ երջանիկ էր ու իր քայլերը կուղղէին դէպի սեր...: Կարծես թէ այն ատեն կ'ուզէի վար դնել զայն ու աղաղակել. «մի՛ յառաջանար... մահը քեզի կը սպասէ... մի՛ յառաջանար»: Այդ սոսկումի բառերը կը լսեմ հիմա... իմ ականջներուս մէջ կը ըզզան անոնք... հիմա ես չեմ համարձակիր յառաջանալ: Կը վախնամ...:

— Ետ դառնանք, Քորալի: Մանկամարդ կնոջ թեւէն բռնեց Բաթրիս, և ամուր ձայնով մը ըսաւ.

— Քալե՛նք: Կ'ուզեմ աղօթել: Ազօթքը բարերար ազդեցութիւն պիտի գործէ իմ վրաս: Քորալի յանդգնօրէն հետեւեցաւ կողմնակի այն փոքր արահետին, որուն հետեւած էր, չորս կողմէյր պատուած տերեւներու և ճիւղերուն մէջէն յառաջանալով: Իրենց ձախակողմը ձգեցին տաղաւարը և այն կանաչագեղ մեծաստանը հասան, ուր կը հանգչէին իրենց ծնողքները: Իսկոյն, առաջին ակնարկով տեսան որ քսաներորդ պսակը հոն կը գտնուէր:

— Սիմէօն հոս եկած է, ըսաւ Բաթրիս: Բնագղը, ամէն բանէ աւելի զօրաւոր, բռնադատած է զայն հոս գալու: Մօտերը ըլլալու է ան:

Մինչդեռ Քորալի կը ծնրադրէր, Բաթրիս մինչեւ պարտէզին կէսը իջաւ: Բայց Սիմէօն աներեւոյթ եղած էր: Կը մնար տաղաւարը այցելել. սոսկալի գործ մըն էր, որուն կատարումը կ'ուշացնէին եթէ ոչ վախերնուն, գէթ իրենց նւիրական սոսկումիին

պատճառով զոր մարդ կըզգայ, երբ մահաբոյր և ոճրաբոյր տեղէ մը ներս կը մտնէ:

Դարձեալ մանկամարդ կի՛նն էր որ ազդանշանը տուաւ:

— Եկէք, ըսաւ Քօրալի:

Բաթրիս չէր գիտեր թէ ի՛նչ պէս պիտի մտնէին այն տաղաւարէն ներս, որուն պատուհանները ու մուտքերը բոլորովին փակուած կը թւէին իրենց: Բայց մտեանալով ստուգեցին որ բակին վրայ նայող ետեւի դուռը կընակի վրայ բացուած էր. անոնք իսկոյն խորհեցան որ Սիմէօն ներսը իրենց կըսպասէր:

Ժամը ճիշդ տասն էր, երբ տաղաւարին սեմէն ներս մտան: Մէկ կողմէն փոքր անդամտակ մը դէպի խոհանոց կառաջնորդէր, իսկ միւս կողմէ՝ դէպի սենեակ մը: Դիմացը՝ զլիսաւոր սենեակը ըլլալու էր: Դուռը կէս մը բաց էր ու Քօրալի կակաղեց:

— Հոս եղած ըլլալու է այն բանը... ատենօք:

— Այո՛, Սիմէօնը հոս պիտի գտնենք, ըսաւ Բաթրիս: Բայց եթէ գէշութիւն կը զգաս, Քօրալի, լաւագոյն կ'ըլլայ որ ներս չմտնենք:

Անխորհուրդ կամք մը ուժ կուտար մանկամարդ կնոջ: Ոչ մէկ բան պիտի կասեցնէր իր խոյանքը:

Քօրալի յառաջացաւ:

Թէեւ սենեակը մեծ էր, բայց այնպէս մը կահաւորուած էր որ մտերմական տպաւորութիւն մը կը ձգէր: Բազմոցներ, թիկնաթոռներ, գորգեր, օթոցներ, ամէն ինչ կը նպաստէր հանգստաւէտ դարձնելու զայն. կարծես

թէ սենեակին երեւոյթը չէր փոխուած հոն գտնուած անձերու եղբերական մահէն ի վեր:

Աշխատանոցի մը երեւոյթը ունէր, խիստ բարձր ձեղունին մէջտեղը գտնուող ապակիին պատճառով, որ արեւնակին տեղը կը բռնէր. հոնկէ լոյսը ներս կը թափանցէր: Երկու պատուհաններ կային վարագոյրներով ծածկուած:

— Սիմէօն հոս չէ, ըսաւ Բաթրիս:

Քօրալի չպատասխանեց: Իրերը կը քննէր այնպիսի յուզումով մը որ դէմքը կը կծկէր: Անցեալ դարուն վերաբերող գիրքեր էին ատոնք: Դեղին ու կապոյտ կողքերուն վրայ սա ստորագրութիւնը կար մատիտով. Քօրալի: Կային նաև կանացի աշխատանքներ՝ անաւարտ մնացած, ասեղնագործութեան քանէվա մը, օթոց մը ուրկէ կը կախէր ծայրը բուրդէ թելի մը անցուած ասեղ մը: Նոյնպէս կը տեսնուէին «Բաթրիս» ստորագրութեամբ գիրքեր. հոն կը գտնուէին նաև սիկառի տուփ մը, սու-մեկ մը, գրչակալներ ու կաղամար մը: Երջանակներու մէջ անցուած երկու փոքր լուսանկարներ կը տեսնուէին, որոնք երկու տղոց՝ Բաթրիսի և Քօրալիի լուսանկարներն էին:

Այսպէս կը շարունակէր երբեմնի կեանքը. ան ոչ միայն կը ներկայացնէր բուռն ու վաղանցիկ տարփանքով մը զիրար սիրող երկու սիրահարներու կեանքը, այլև կեանքը երկու էակներու, որոնք զիրար կը վերագտնեն հանդարտութեան մէջ վըստահ ըլլալով թէ երկար ու հասարակաց կեանք մը պիտի ապրին:

— Օ՛հ, մայրիկ, մայրիկ, մըմնջեց Քօրալի:

Իր յուզումը կ'աւելնար այդ յիշատակներէն իւրաքանչիւրին հանդէպ: Բաթրիսի ուսին վրայ կրթնեցաւ սարսուռն:

— Հեռանա՛նք հոսկէ, ըսաւ Բաթրիս:

— Այո՛, լաւ կ'ըլլայ որ հեռանանք. Պիտիվերադառնանք... անոնց մօտ պիտիվերապրինք... հոս պիտի վերսկսինք անոնց խորտակուած կեանքին մտերմութիւնը: Հեռանանք հոսկէ: Այսօր ուժ չունիմ այլևս:

Բայց հազիւ թէ քանի մը քայլ յառաջացած, կանգ առին չփոթահար:

Դուռը գոցուած էր:

Մտահոգ նայուածքներ ուղղեցին իրարու:

— Դուռը չէինք գոցած, այնպէս չէ՞, հարցուց Բաթրիս:

— Ոչ, չէինք գոցած, պատասխանեց Քօրալի:

Բաթրիս դրան մտեանալով նշմարեց որ դուռը ոչ բռնատեղի ունէր և ոչ ալ փականք:

Մէկ թևով ուժիտապաղաղ դուռ մըն էր, կարծր ու խիտ փայտէ: Կարծես թէ կաղնիի մը մէջտեղէն առնուած միակտոր փայտ մըն էր: Ոչ ջնարակ ունէր և ոչ ալ ներկ: Հոս հոն ձաթառոտքներ կը տեսնուէին, որոնք գործիքի մը միջոցաւ առաջ բերուած էին:

Յետոյ, դէպի աջ, սա բաւերը գրեւոր էին մատիտով.

Բարրիս և Քօրալի — 14 ապրիլ 1915

Աստուծ մեր վրեժը պիտի բռնէ Տակր խաչ մը կար, և այդ խաչին ներքեւ՝ ուրիշ թւական մը, բայց տարբեր ու աւելի թարմ գիրերով,

14 ապրիլ 1915

— 1915... 1915', գոչեց

Բաթրիս, ոտակալի՛ բան է...: Այսօրուս, թւականը՝ Ո՞վ գրած է աս: Օ՛հ, ստակալի բան է: Նոր գրեւոր ըլլալու է...: Օ՛հ, չպիտի...:

Բաթրիս պատուհաններէն մէկուն առջեւ վազեց, մէկ անգամէն վեր քաշեց վարագոյրը, և պատուհանը բացաւ:

Աղաղակ մը արձակեց ան:

Պատուհանը մանրաքարերով փակուած էր, որոնք ապակիին և փեղկին միջեւ կը գտնուէին:

Միւս պատուհանին քով վազեց. նոյն խոչընդոտը:

Երկու դռներ կային, որոնք աջակողմէն կը նայէին սենեակին, իսկ ձախակողմէն՝ խոհանոցին քով գտնուող սրահին վրայ:

Սրագորէն բացաւ դանոնք:

Երկուքին առջեւ ալ պատեր քաշուած էին:

Բաթրիս ամէն կողմ վազեց անարկուժի վայրկեանի մը մէջ. յետոյ երեք դռներէն առաջինին վրայ խոյացաւ, զոր փորձեց ցընցել:

Դուռը տեղէն չերերաց: Կարծես թէ անշարժ զանգուած մըն էր ան:

Յետոյ Բաթրիս և Քօրալի իրարու երես նայեցան խելայեղ. միեւնոյն ստակալի մտածումը պաշարեց իրենց միտքը: Անցեալի դէպքը կը կրկնէր: Տուամը կը վերսկսէր համանման պարագաներու մէջ: Մօրմէն ու հօրմէն յետոյ՝ կարգը եկած էր աղջկան ու տղուն: Երբեմնի սիրահարներուն պէտ, այսօրուս սիրահարներն ալ արգելափակ եղած էին: Թշնամին իր զօրաւոր ճանկին տակ բռնած էր զանոնք, ու անկասկած, իրենց մահովը պիտի հասկնային թէ ի՛նչպէս մեռած էին իրենց ծնողքները... 1895 Ապրիլ 14ին... 1915 Ապրիլ 14ին...:

Ժ.

Ս Ո Ս Կ Ո Ւ Մ Ը

— Ա՛ն, ո՛ն, ո՛ն, այդ բանը չպիտի ըլլայ, գոչեց, Բաթրիս:

Այս վերջինը պատուհաններուն և դռներուն վրայ վազեց, փայտէ կոճղ մը առաւ և սկսաւ զարնել դռներուն և մանրաքարերէ շինուած պատերուն: Աճուր շարժումներ էին ատոնք: Հայրն ալ ատենօք այդ միեւնոյն շարժումները ըրած էր. Բաթրիս ալ անօգուտ ճաթրուքներ առաջ պիտի բերէր դռներուն և պատերուն վրայ:

— Ա՛ն, քոյր Գորալի, յանցանքը իմս է, ըսաւ Բաթրիս յուսահատական ճիչով մը: Ի՞նչ անդունդի մէջ մղեցի քեզ: Բայց յիմարութիւն է առանձին պայքարիլը: Հարկ էր օգնութիւն ուզել անոնցմէ, որոնք տեղեկութիւն ու վարժութիւն ունին...: Ոչ, ես կարծեցի որ պիտի կրնայի...: Ներեցէք, Գորալի:

Մանկամարդ կինը թիկնաթոռի մը մէջ ինկած էր: Բաթրիս գրեթէ ծնրադիր, թեւերովը կը շրջապատէր զայն ու կը թախանձէր:

Գորալի ժպտեալ, հանդարտեցնելու համար զայն, և մեղմօրէն ըսաւ.

— Օ՛ն, բարեկամս, քաջութիւննիս չկորսնցնենք, թերևս կը սխալինք... Որովհետեւ ո՛չ մէկ բան կ'ապացուցանէ թէ

դիպածի մը արդիւնքեղած չըլլայ ասիկա:

— Հապա թւակա՛նը, այս տարւան թւակա՛նը, այսօրւան թւակա՛նը, որ ուրիշի մը ձեռքովը գրուած է. մեր ծնողքները դրած էին միւս թւակա՛նը... բայց ասիկա, Գորալի, ցոյց չի՞ տար թէ կանխամտածութիւն և անողոք կամք մը կայ՝ մեր գործը լմնցնելու համար:

Մանկամարդ կինը սարսուռ մը զգաց: Սակայն Գորալի յամառեցաւ Բաթրիսը խրախուսելու մէջ:

— Լա՛ւ, ես ալ կ'ուզեմ որ այնպէս ըլլայ, բայց գործը այդ տեղւանքը չէ հասած: Եթէ թըշնամիներ ունինք, բարեկամներն ալ անպակաս են...: Մեզ փընտռելու պիտի գան...:

— Մեզ պիտի փնտռեն, բայց ի՛նչպէս պիտի գտնեն, Գորալի: Ամէն միջոց ձեռք առինք, որպէս զի չիմացելի թէ ո՛ւր կ'երթայինք. ոչ ոք զիտէ այս տունը:

— Ծերուկ Սիմէօնն ալ:

— Սիմէօն հոս եկած ու պըռակը դրած է, բայց անոր վրայ տիրական ազդեցութիւն ունեցող ուրիշ մէկալ եկած է հոս: Սիմէօն իր դերը կատարելէ յետոյ՝ թերեւս հեռացւած է այդ մարդուն կողմէ:

— Ուրե՛մն, Բաթրիս:

Այս վերջինը զգաց որ Գորալի վրդովուած էր, ու ամչցաւ իր սկարութենէն:

— Ուրեմն, սպասե՛նք, ըսաւ Բաթրիս, ինքզինքը զսպելով: Արգելափակուած ըլլալը չի նշակեր թէ կորստեան մատնուած ենք: Մնաց որ, պիտի պայքարինք, այնպէս չէ՞. հաւատացէք որ ո՛չ ուժասպառ եմե ոչ ալ ճարհատ: Սպասե՛նք, Գորալի, ու գործե՛նք: Էսկան է տեղեկանալ թէ ու է մուրք կայ, մեր վրայ յարձակում գործելու համար

կէս ժամու հետազոտութիւններէ յետոյ՝ բան մը չկրցին գտնել: Պատերը ամէն կողմ միեւնոյն ձայնը կը հանէին: Գորգը մէկդի առնելով տեսան որ քարայտակ էր գետինը, ու քարերը անսովոր երեւոյթ մը չունէին:

Արդօրև, միայն դուռը կը մնար, և որովհետեւ չէին կրնար արդիւլ անոր բացուելը, քանի որ դէպի դուռս կը բացւէր ան, սենեակին կ'րասխներուն մեծ մասը դիպեցին դրան առջև, այսպէս պատնէջ մը ձեւացնելով, որ զիրենք պիտի պաշտպանէր անակընկալէ մը:

Յետոյ Բաթրիս շինեց իր երկու ըէվովէրները և աչքի զարնող տեղ մը դրաւ, իր մօտ:

— Այսպէս հանդարտ պիտի մնանք, ըսաւ Բաթրիս: Հոս ներկայացող ամէն թշնամի պիտի սպաննուի:

Բայց անցեալին յիշատակը իր ահագին ծանրութեամբը կը ճնշէր երկուքին վրայ: Ուրիշներ այդ խօսքերը ըրած ու այդ արարքները գործած էին արդէն համա-

նման պարագաներու մէջ, միեւնոյն մտածումներով և վայներով: Բաթրիսի հայրն ալ պատրաստած էր իր զէնքերը: Գորալիի մայրը ձեռքերը իրարու միացուցած ու աղօթած ըլլալու էր: Երկուքն ալ դուռը ամրացուցած, պատերը պրպտած և գորգը վեր առած էին:

Անձկութիւնը աւելի կը սաստկանայ, երբ նմանօրինակ անձկութիւն մը կը խառնուի անոր:

Սոսկալի մտածումը վտարելու համար, թղթատեցին գիրքերը, վէպերը և պրօշիւրները, զոր իրենց ծնողքները կարդացած էին: Գլխուն կամ հատորին վերջը, կարգ մը էջերու վրայ, տողեր գրուած էին: Բաթրիսի հայրը և Գորալիի մայրը իրարու հետ կը թղթակցէին սապէս.

«Իմ սիրեցեալ Բաթրիսս, այս առտու մինչեւ հոս վազեցի, երէկի կեանքը վերապրելու և երբեմնի կեանքը երազելու համար: Ինչ առաջ հոս գալուդ համար, պիտի կրնաս այս տողերը կարգալ: Քեզ սիրելիս յայտնող տողերը պիտի կարդաս...»

Ուրիշ գրքի մը վրայ.

«Իմ սիրեցեալ Գորալիս,

«Քիչ մը առաջ մեկնեցար. վաղը միայն պիտի կրնամ քեզ տեսնել. հեռանալէ առաջ այն սպաստարանէն, ուր մեր սէրը այնքան ուրախութիւններ ճաշակած է, կ'ուզեմ անգամ մը եւս արտայայտել այդ սէրը...»

Այսպէս թղթատեցին գիրքերուն մեծ մասը, և փոխանակ ցուցմունքներու, զոր կը փնտրուէին, գորով ու տարփանք միայն գտան հոն:

Երկու ժամեր սահեցան սպասուով և անձկութեան մէջ:

— Բան մը չպիտի ըլլայ, ըսաւ Բաթրիս: Ամենէն սոսկալին սա է որ եթէ երբեք բան մը չպատահի, այն ատեն պիտի դատապարտուինք ասկէ դուրս չելլելու: Այդ պարագային...

Խօսքին եզրակացութիւնը զոր Բաթրիս չէր աւարտած, ֆորալի ըմբռնեց երկու քրու անօթութենէ մեռնելու ցնորքը ունեցան: Բայց Բաթրիս գոչեց.

— Ո՛չ, ո՛չ, ատկէ վախնալու բան չկայ: Մեզի պէս մարդիկ անօթութենէ մեռնելու համար, երեք, չորս ու ալ աւելի օրեր պէտք է անցնին:

— Ի՞նչպէս կ'ըլլայ, յարեց ֆորալի,

— Մեր զինուորները, Եւ-Պօն, Պ. Տէմալիօն մտահոգութեան պիտի մատնուին այս զիշերը անցընելէ յետոյ:

— Բաթրիս, դուք ըսիք որ ո՛ւր ըլլալնիս չեն գիտեր:

— Պիտի իմանան: Դիւրին է հասկնալը: Գուրդ միայն իրարմէ կը բաժնէ երկու պարտէզները: Մնաց որ, մեր բոլոր արարքները արձանագրուած են իմ օրագրիս մէջ, որ իմ սենեակիս գրասեղանին մէջ պահուած է: Եւ-Պօն տեղեակ է այդ օրագրին գոյութեան: Անպատճառ, Պ. Տէմալիօնի պիտի խօսի այդ մասին: Մնաց որ... Սիմէօնն ալ կայ... Ի՞նչ եղած է ան: Իր երթեւեկները ուշադրութիւն չպիտի գրաւեն: Ան իրարանցուած մը չպիտի հանէ:

Բայց այդ խօսքերը անզօր էին անոնց սպահովութիւններ-

չնչելու: Եթէ երբեք անօթութենէ չմեռնէին, ատոր պատճառը սա է որ թշնամին ուրիշ չարչարանք մը երեւակայած էր: Անգործութիւնը կը չարչարէր զանոնք:

Բաթրիս իր հետադատութիւնները վերսկսաւ նոր ուղղութեամբ մը, շնորհիւ հետաքրքիր դիպածի մը:

Իր չթղթատած գիրքերէն մէկը բանալով, գիրք մը որ 1895ին հրատարակուած էր, ծայրերը միասին կոտրած երկու էջեր նշմարեց Բաթրիս: Իրարմէ անջատեց էջերը և հօրը կողմէ իրեն ուղղուած սա զեկոյցը կարդաց.

«Չաւակո, Բաթրիս, եթէ երբեք զիպուածը աչքերուդ տուչեւ պարզէ այս զեկոյցը, պատճառը սա է որ մեզի սպասող բուռն մահը չէ թոյլատրած ջրնջելու զայն: Ուրեմն, Բաթրիս, այս մահուան առթիւ ճշմարտութիւնը փնտռէ աշխատանոցի պատին վրայ, երկու պատուհաններուն միջեւ: Թերեւս ատեն ունենամ արձանագրելու զայն»:

Այսպէս, այդ թւականին, երկու զոհերը նախատեսած էին իրենց վերապահուած եղբրական ճակատագիրը: Բաթրիսի հայրը և ֆորալիի մայրը գիտէին թէ ի՞նչ վտանգի պիտի մատնուէին այդ տաղաւարը մտնելով:

Կը մնար գիտնալ թէ Բաթրիսի հայրը կրցած էր իր ծրագիրը գործադրել:

Երկու պատուհաններուն միջեւ, ինչպէս նաև սենեակին շուրջը, ջնարակուած փայտէ որմադրուած մը կար, երկու մէթը

բարձրութեան վրայ ծնօտ մը ունենալով: Ծնօտին վերեւ, գածէ պարզ պատ մը կը տեսնուէր: Բաթրիս և ֆորալի, առանց մասնաւոր ուշադրութիւն ընծայելու, զիտած էին որ այդ որմադրուածը վերաշինուած էր, քանի որ ապիտակներու ջնարակը միեւնոյն գոյնը չուէր:

Բաթրիս փայտի կոճղերէն մէկը իբր մուրճ գործածելով ծնօտը քակեց և առաջին տախտակը վեր առաւ:

Տախտակը դիւրաւ կոտրեցաւ: Այդ տախտակին տակ, պատին գածին վրայ դրուած տողեր կային:

— Միեւնոյնն կերպն է, զոր այնուհետեւ կը գործածէ Սիմէօն ալ, ըսաւ Բաթրիս, այն է պատերուն վրայ գրել, յետոյ փայտով ու գածով ծածկելու համար զայն:

Բաթրիս ուրիշ տախտակներ ալ կոտրեց, ու այսպէս ամբողջական քանի մը տողեր երեւան եկան, մատիտով ու ածապարանքով գրուած. ժամանակը եղծած էր զանոնք:

Բաթրիս մեծ յուզումով կարդաց այդ տողերը: Հայրը գրած էր այն պահուն երբ մահը կը թափառէր իր շուրջը: Քանի մը ժամ յետոյ, ալևս չէր ապրեր ան: Իր հոգեվարքի վկայութիւնն էր, թերևս իր անէծքը թշնամիին դէմ, որ կը սպաննէր զինքը եւ իր սիրեցեակը:

Բաթրիս մեղմաձայն կարդաց. «Ասիկա կը գրեմ, որպէս զի աւագակը ի գլուխ չհանէ իր դիտաւորութիւնը և պատիժէ զերծ չմնայ: Անտարակոյս, պիտի

մեռնինք ֆորալի և ես, բայց չպիտի մեռնինք, առանց յայտնելու մեր մահուան պատճառը:

«Քանի մը օր առաջ, աւագակը ֆորալիի կ'ըսէր.

«Կը մերժեք իմ սէրս ու ձեր ատելութեամբ կ'ընկճէք զիս: Լա՛ւ. պիտի սպաննեմ ձեր սիրահարը և ձեզ, ու այնպէս մը պիտի սպաննեմ որ չպիտի կրնան զիս ամբաստանել մահուան մը համար, որ անձնասպանութիւն մը պիտի թւի: Զգուշացէք ֆորալի»:

«Սրբարեւ, ամէն ինչ պատրաստ էր: Բնաւ չէր ձանձնար զիս, բայց գիտնալու էր թէ ֆորալի ամէն օր ժամադրութիւն կուտար հոս. այս տաղաւարին մէջ է որ պատրաստուած է մեր զերեզմանը:

«Ի՞նչ մահով պիտի մեռնինք: Չենք գիտեր: Անտարակոյս, մնունդի չգոյութենէն: Չորս ժամէ ի վեր արգելափակ եղած ենք հոս: Դուռը մեր վրայ գոցուած է, ծանր դուռ մը զոր այս զիշեր զետեղած ըլլալու են: Բոլոր բացուածքները, դուռ և պատուհան, մեր վերջին տեսակցութենէն յետոյ գոցած են իրարու հետ շաղախուած քարի կոտրներով: Փախուտը անկարելի է: Ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը:

Երեւան հանուած դուռը հոտ կանգ կ'առնէր: Բաթրիս ըսաւ.

— Պ. ֆորալի, ինչպէս կը տեսնէք, անոնք ալ միեւնոյն անձկութիւններուն մատնուած են: Անոնք ալ անօթութեան վախը ունեցած են: Անոնք ալ երկար ժամեր անցուցած են սպասումի մէջ, ուր անգործութիւնը այն-

քան ցաւափին կը դառնայ . իրենց մտածումները փարատելու համար է որ այս տողերը գրած են :

Բաթրիս պահ մը գննելէ յետոյ յարեց .

— Անոնք կը կարծէին թէ —ինչ որ պատահած է արդէն— գիրենք սպաննող մարդը չպիտի կարդար այդ փաստաթուղթը : Միակ մեծ վարադոյր մը կախած էր այդ պատուհաններուն առջև . պատուհանները իրարմէ անջատող անջրպետին մէջ միակ ձողի մը գոյութիւնը ապացոյց էր որ ուրիշ վարադոյր չկար : Մեր ծնողքներուն մահէն յետոյ , ոչ ոք խորհած է մէկդի առնելու վարադոյրը , որով ճշմարտութիւնը սքողած կը մնար . . . մինչեւ այն օրը երբ Սիմէօն երեւան հանեց , ու զգուշութեան համար , փայտէ միջնորմի մը տակ ծածկեց դարձեալ , երկու վարադոյր դնելով միակ վարադոյրին տեղ : Այսպէս ամէն ինչ բնականոն երեւոյթ մը ունէր :

Բաթրիս գործի սկսաւ նորէն : Քանի մը տողեր ևս երեւան ելան :

«Ա՛հ , երանի թէ առանձին չարչարէի ու առանձին մեռնէի . բայց սոսկալին սա է որ իմ հետս կը քշեմ տանիմ սիրելի Քորալիս : Ան նւաղած է և հիմա կը հանգչի՝ իր զգացած սարսափէն ընկճած , զոր կը ջանայ զսպել : Հէ՛զ սիրեցեալս , իր քաղցր դէմքին վրայ արդէն իսկ կը տեսնեմ մահւան դալուկը : Ներողութիւն , սիրելիս , ներողութիւն» :

Բաթրիս և Քորալի իրարու ներս նայեցան : Միեւնոյն զգացումները կը յուզէին երկուքն

ալ , միեւնոյն խղճահարուսթիւնները , փափկանկատութիւնները և ինքնամոռացումը ունէին միւսին վշտին առջև :

— Ան կը սիրէր ձեր հայրը , ինչպէս ես կը սիրեմ ձեզ , մըրմնջեց Բաթրիս : Մահը զիս ալ չահաբեկեր : Քանիցս դիմադրաւած եմ զայն ժպտելով : Բայց , Քորալի , ձեզի համար ամէն չարանքներու պիտի հանդուրժեմ :

Ու Բաթրիս սկսաւ քայլել : Զայրոյթը կը վերարծարձէր իր մէջ :

— Քորալի , կ'երդնում որ պիտի ազատեմ ձեզ : Այն ատեն ի՛նչ մեծ հաճոյք մը պիտի ըլլայ վրէժ լուծելը : Թշնամին այն վիճակին պիտի մատնւի , զոր մեզի կը վերապահէր , կը լսէ՞ք : Քորալի , հոս պիտի մեռնի ան . . . հո՛ս : Ա՛հ , ամբողջ ատելութիւնս պիտի թափեմ անոր վրայ :

Բաթրիս նորէն տախտակի կտորներ փրցուց այն յոյսով թէ պիտի կրնար օգտակար բաներ իմանալ , քանի որ պայքարը կը վերսկսէր համանման պայմաններու մէջ :

Բայց հետեւեալ պարբերութիւնները նախորդներուն պէս վրիժառութեան երդումներ էին .

«Քորալի , պիտի պատժւի ան , եթէ ոչ մեր կողմէ , դէժ աստուածային արդարութեան կողմէ : Ո՛չ , անոր դիւային ծրագիրը չպիտի յաջողի : Ոչ ոք հաւատ պիտի ընծայէ թէ մենք անձնասպանութեան դիմած ենք , վերջ տալու համար մեր կեանքին , որ ուրախութեամբ ու երջանկութեամբ միայն լեցած էր . ոճիրը

երեւան պիտի ելլէ : Հոս , ժամէ ժամ պիտի արձանագրեմ այդ ոճիրին անժխտելի փաստերը . . . »

— Բառերու բռնե՛ր , միայն , գոչեց Բաթրիս զայրացած : Սպառնալից ու ցաւազին բռնե՛ր : Բայց ոչ մէկ իրողութիւն չկայ որ մեզ առաջնորդէ . . . : Հայր իմ : Ինծի բան մը չպիտի՞ ըսէք , որպէս զի ազատեմ ձեր Քորալիին աղջիկը : Եթէ ձերինը մեռած է , թո՛ղ իմինս ազատի դժբախտութեանէ , ձեր շնորհիւ հայր իմ : Օգնեցէք ինծի : Խորհուրդ տէ՛ք ինծի :

Բայց հայրը զաւակին պատասխանեց յուսահատական ուրիշ կոչերով :

«Ո՞վ պիտի օգնէ մեզի : Այս գերեզմանին մէջ արդելափակւած և ողջ ողջ թաղւած , տանջանքի դատապարտւած ենք , առանց կարենալու ինքզինքնիսպաշտպանելու : Հոն , սեղանիս վրայ է իմ րէվոլվերս : Բայց ի՛նչ օգուտ :

«Թշնամին մեր վրայ յարձակում չի դործեր : Ան իր կողմը ունի անողոք ժամանակը , որ իր միակ ուժովը կը սպաննէ : Ո՞վ պիտի օգնէ մեզի : Ո՞վ պիտի ազատէ մեր սիրեցեալ Քորալին : »

Ահռելի կացութիւն մը որուն եղբրական բովանդակ սարսափը կը զգային անոնք : Իրենց այնպէս կը թւէր որ անգամ մը մեռած էին արդէն , և թէ ուրիշներու կրած փորձութեան իրենք ալ ենթարկւած էին ու կ'ենթարկւէին տակաւին , տուանց խուսափելու բոլոր այն երեւոյթներէն , ուր գտնւած էին միւսները , այսինքն իրենց հայրը և մայրը : Իրենց ճակատագրին ու իրենց

ծնողքներու ճակատագրին միջեւ այնքան նմանութիւն կար որ երկու տառապանք կը զգային և իրենց երկրորդ հոգեվարքը կը սկսէր :

Քորալի , պարտւած , սկսաւ արտասուել : Բաթրիս , արցունքներու տեսքէն վրդոված , իր կատաղութիւնը թափեց որմադրւազին վրայ , որուն ամբացած տախտակները կը դիմադրէին իր ձիգին :

Ի վերջոյ Բաթրիս կարդաց .

«Ի՛նչ կայ : Սա տպաւորութիւնը ունեցանք թէ ոտնաձայներ կան պարտէզին վրայ նայող շէնքի ճակտին առջև : Այո՛ , մեր ականջը դրինք պատուհանին խորշին մէջ , մանրաքարերով շինւած պատուհանին , ու կարծեցինք ոտնաձայներ լսել : Օ՛հ , կարելի՞ բան է միթէ : Օ՛հ , եթէ հնարաւոր ըլլար , վերջապէս պայքարը պիտի սկսէր . . . : Ամէն ինչ նախընտրելի է քան թէ հեղձուցիչ լռութիւնը և անվերջ անտուգութիւնը :

« . . . Այսպէս է . . . : Այսպէս է . . . : Աղմուկը կը ճշդւի . . . : ուրիշ աղմուկ մը , որ կը նմանի մարդու մը հանած աղմուկին , երբ անիկա հողը կը փորէ բրէչով մը : Մարդուն մէկը կը պեղէ հողը , ոչ թէ տան առջև , այլ աջակողմը , խոհանոցին մօտ » :

Բաթրիս կրկնապատկեց իր ձիգերը : Քորալի մօտեցած ըլլալով կ'օգնէր անոր : Այս անգամ կը զգար որ քօղին մէկ անկիւնը վեր պիտի առնէր : Արձանագրութիւնը սապէս կը շարունակէր .

«Ժամ մը ևս անցաւ աղմուկի

և լուսթեան մէջ... փորւած հո-
ղի միեւնոյն աղմուկը ու միեւ-
նոյն լուսթիւնը ուր մարդ կը
գուշակէ թէ շարունակող աշ-
խատութիւն մըն է որ կը կա-
տարւի:

«Յետոյ անդատակ մտաւ...
միակ անձ մը... ան է, անկաս-
կած: Ճանչցանք իր ոտնաձայնը
...: Ան կը քայլէ, առանց մեղ-
մացնելու իր ոտնաձայնը...:
Յետոյ դէպի խոհանոց յառաջա-
ցաւ, ուր առաջւան պէս քարին
մէջ փորձեց բրիչով մը: Կտորը-
ւած ապակիի մը աղմուկն ալ
լսեցինք:

«Հիմա դուրս ելաւ ան. տան
դէմ ուրիշ աղմուկ մը լսեցաւ,
աղմուկ մը որ կարծես տան եր-
կայնքը կը բարձրանար. այնպէս
կը թւէր որ թշուառականը ստիպ-
ւած էր վեր ելլել, իր ծրագիրը
գործադրելու համար...»

Բաթրիս դադրեցուց ընթեր-
ցումը և չորս դին նայեցաւ:

Երկուքն ալ ահանջ դրին:
Բաթրիս մեղմաձայն ըսաւ.

— Մտիկ ըրէ'...:

— Այո', այո', կը լսեմ, ը-
սաւ Քորալի...: Դուրսէն ոտ-
նաձայններ կը լսէին...: Տան
առջեւ ու պարտէզին մէջ ոտնա-
ձայններ կան...:

Երկուքը միասին յառաջացան
մինչեւ այն պատուհաններէն մէկը
որուն ապակին չէր գոցւած
մանրաքարերուն վրայ. ահանջ
դրին անոնք:

Իսկապէս ոտնաձայններ էին.
Թշնամիին մերձեցումը կռահելով
իրենց ծնողքներուն պէս ոփո-
փանք զգացին:

Տանը չըջանը ըրին երկու

անգամ: Բայց իրենց ծնողքնե-
րուն պէս չճանչցան այդ ոտնա-
ձայնը: Անծանօթի մը քայլա-
փոխերն էին, որոնց համաչա-
փութիւնը կը խանգարէր:

Յետոյ քանի մը վայրկեան
անդորրութիւն տիրեց: Յանկարծ
ուրիշ աղմուկ մը լսեցաւ. թէև
կը սպասէին այդ ձայնին, սա-
կայն շփոթահար եղան լսելով:
Բաթրիս խուլ կերպով արտա-
սանեց քսան տարի առաջ հօրը
կողմէ արձանագրւած սա պար-
բերութիւնը.

«Այս աղմուկը կելլէ երբ
հողը կը փորեն բրիչով մը»:

Այո', այդպէս ըլլալու էր:
Մէկը կը փորէր հողը՝ բայց ոչ
թէ տան առջեւ այլ խոհանոցին
աջակողմը:

Ուրեմն կը շարունակէր վե-
րանորոգւած առամին նողկալի
հրաշքը: Հոն ալ երբեմնի իրո-
ղութիւնը կը պարզէր, շատ
պարզ իրողութիւն մը ինքնին,
որ չարաշուք կը դառնար, ար-
դէն իսկ պատահած ըլլալուն, որ
կը ծանուցանէր և կը պատրաս-
տէր ատենօք ծանուցւած ու
պատրաստւած մահը:

Ժամ մը սահեցաւ: Աշխատու-
թիւնը երբեմն կը շարունակէր
ու երբեմն կը դադրէր. կարծես
թէ գերեզման մը կը փորէին:
Մեռելաթաղը չէր աճապարեր:
Պահ մը կը հանգչէր ու յետոյ կը
վերսկսէր աշխատանքը:

Բաթրիս ու Քորալի մտիկ կ'ը-
նէին ոտքի վրայ կեցած, իրարու
մօտ, իրենց ձեռքերը և նայւածք-
ները միացուցած:

— Կանգ կ'առնէ, ըսաւ Բաթ-
րիս մեղմաձայն...:

— Այո', Քորալի, անդատակ
կը մտնեն...: Ահ, մտիկ ընելու
իսկ պէտք չկայ... կը բաւէ յի-
շել...: Մտիկ ըրէք... «դէպի
խոհանոց կ'ուղղուի, և քիչ մը
առաջւան պէս, բրիչով մը կը
փորէ քարին մէջ...» Յետոյ...
յետոյ...: Օհ, Քորալի, կտորած
ապակիի միեւնոյն աղմուկն
է...»:

Արդարեւ, յիշատակներ էին
ատոնք, յիշատակներ որոնք ե-
ղերական իրականութեան կը
խառնէին: Ներկան ու անցեալը
միացած էին իրարու: Իրողու-
թիւնները կը նախատեսէին այն
պահուն իսկ երբ անոնք կը պա-
տահէին:

Թշնամին դուրս ելաւ և իս-
կայն «այնպէս թւեցաւ որ աղ-
մուկը կը բարձրանար տան եր-
կայնքը, որպէս թէ թշուառ-
կանը ստիպւած ըլլար վեր ելլե-
լու, իր ծրագիրը գործադրելու
համար»:

Յետոյ ինչ տեղի պիտի ու-
նենար:

Բաթրիս ու Քորալի ալ եւս
չէին խորհեր պատին արձանա-
գրութեան նայիլ. թերևս չէին
համարձակեր այդ բանը ընելու:
Իրենց բովանդակ ուշադրու-
թիւնը դարձած էր աներեւոյթ
ու երբեմն անզգալի երեւոյթնե-
րու վրայ, որոնք դուրսը և
իրենց դէմ կը պատահէին. թա-
քուն ու անընդհատ ճիգ մը,
խորհրդաւոր ծրագիր մըն էր,
որուն ամենայեւոյն մանրամաս-
նութիւններն իսկ կանոնաւոր-
ւած էին ժամացոյցի մը շարժու-
մին պէս, ու ասիկա՝ քսան տա-
րիէ ի վեր:

Թշնամին տան մէջ մտաւ.
Բաթրիս ու Քորալի լսեցին որ
դրան վարի մասին կը դպչէր.
Կարծես թէ կակուղ բաներ կը
դիզէր դրան տակ: Յետոյ խառ-
նաշփոթ շշուկներ լսեցան մօ-
տակայ երկու սենեակներուն
մէջ, որմածածկ դռներուն դէմ.
միեւնոյն շշուկները կը լսէին
դուրսը, պատուհաններու ման-
րաքարերուն ու բաց փեղկերուն
մէջ: Տանիքին վրայ ալ աղմուկ
կար:

Բաթրիս ու Քորալի վեր ա-
ռին աչքերնին, Այս անգամ ալ
ևս չէին տարակուսեր որ վախ-
ճանը, կամ վախճանի տեսարան-
ներէն մէկը կը մօտենար: Զե-
ղունին կեդրոնը գրաւող ապա-
կեպատ մասը կը ձեւացնէր տա-
նիքը, և հոնկէ միայն ներս կը
թափանցէր լոյսը:

Նոյն անձկալից հարցումն էր
որ կը ներկայանար անոնց մտքին
առջեւ: Ի՞նչ պիտի պատահէր:
Թշնամին իր դէմքը ցոյց պիտի
տար այդ ապակեպատ տանիքէն,
իր դիմակը վար առնելով վեր-
ջապէս:

Բաւական երկար ատեն, այդ
աշխատութիւնը շարունակեցաւ
տանիքին վրայ: Քայլափոխերը
կը դրդէին ատնիքը ծած-
կող շինքօն. քայլափոխերը կը
յառաջանային այն ուղղութեամբ
որ տան աջակողմը կը միացնէր
լուսանցքին:

Յանկարծ, թեթեւօրէն վեր
առնւեցաւ այդ լուսանցքը, կամ
աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել՝ քա-
ռանկիւն մը ձեւացնող չորս ա-
պակիներ. ձեռք մը գաւազանի
միջոցով կիսաբաց թողուց լու-
սամուտը:

Թշնամին տանիքին վրայէն անցաւ նորէն ու վար իջաւ:

Յուսախաբուծիւն մը եղաւ գրեթէ. Բաթրիս ա՛լ աւելի բաներ իմանալու այնպիսի մեծ պէտք մը կըզգար որ սկսաւ խորտակել որմաղբազներու տախտակները, վերջին կտորները, արձանագրութեան վերջին մասը:

Այդ արձանագրութեան շնորհիւ վերապրեցան այն վերջին վայրկեանները, որոնք դեռ նոր սահած էին: Թշնամիին վերադարձը, դռներուն և որմածածկ պատուհաններուն հետ եղած շփումը, տանիքին աղմուկը, լուսամուտին կիսաբացումը, զայն կիսաբաց պահելու եղանակը, ամէն ինչ կարգադրած էր միեւնոյն կարգաւորութեամբ և համանման ժամանակներու մէջ: Բաթրիսի հայրը ու Քորալի մայրը միեւնոյն տպաւորութիւնները ունեցած էին: Ճակատագիրը կը ջանար միեւնոյն արշահտներէն յառաջանալու, նոյն շարժումները ընելով ու նոյն նպատակը հետապնդելով:

Ու այսպէս կը շարունակէր: «Նորէն կը բարձրանայ... նորէն կը բարձրանայ... դարձեալ իր ոտնաձայնը կը լսուի տանիքին վրայ...: Լուսամուտին կը մօտենայ...: Պիտի նայի՞ հոնկէ...: Պիտի տեսնե՞ք իր գարշելի դէմքը...: — Նորէն կը բարձրանայ ան, կակազեց Քորալի, Բաթրիսի քով սեղմւած:

— Այո՛, ըսաւ Բաթրիս, ան վեր կ'ելլէ, ինչպէս ատենօք ըրած էին, առանց չեղելու այն ծրարքէն, որուն հետեւեցաւ միւսը: Միայն չենք գիտեր թէ ի՞նչ դէմք

պիտի տեսնենք...: Մեր ծնողքները կը ճանչնային իրենց թշնամին:

Քորալի սարսուռ, մտքին առջեւ բերելով պատկերը այդ մարդուն որ սպաննած էր մայրը, ու հարցուց.

— Ան էր, այնպէս չէ՞...: Աւաստի անոր անունը զոր հայրս արձանագրած է:

Բաթրիս գրեթէ ամբողջովին երեւան հանած էր արձանագրութիւնը:

— Օ՛ն... կարդացէք սա անունը... էսարէս... կը տեսնէ՞ք... հոտ: Հօրս գրած վերջին բառերէն մէկն էր...: Կարդացէք, Քորալի:

«Լուսամուտը ա՛լ աւելի վեր ելաւ... ձեռք մը կը հրէր զայն...: Ու տեսանք զինքը...: Մեզի նայեցաւ ծիծաղելով...: Ահ, թշուառականը... էսարէս... էսարէս...:

«Յետոյ բան մը սահեցուց բացւածքէն, բան մը որ վար իջաւ, սենեակին մէջտեղը ինկաւ, մեր գլուխներուն վերեւ... սանդուխ մըն էր, չուանէ սանդուխ մը...:

«Ձեռք հասկնար...: Մեր առջեւ կը տատանի սանդուխը...: Ի վերջոյ կը նշմարեմ զայն...: Գնդասեղի մը միջոցաւ թուղթ մը անցւած է սանդուխի վարի ատիճանին վրայ...: Այդ թուղթին վրայ սա բառերը կը կարդամ, որոնք էսարէսի ձեռքով գրւած էին.

«Թող Քորալի առակնիկն վեր երի: Կեակիր ազատ յիսի ըրչայ: Տասը վարկեան կուտաւ ընդունելու հարկ: Երե ոչ...:

— Ահ, յարեց Բաթրիս, ոտքի ելլելով, միեւնոյն բանը պիտի վերսկսի: Հապա՛ սա սանդուխը... չուանէ սա սանդուխը զոր ծերուկ Սիմէօնի որմաղբառնին մէջ գտայ:

Քորալի աչքերը չէր բաժներ լուսամուտէն, որովհետեւ քայլափոխերը կը դառնային անոր շուրջը: Պահ մը կանգ առին վերը: Բաթրիս ու Քորալի բնաւ չէին տարակուսեր որ ատենը եկած էր ու իրենք ալ պիտի տեսնէին...:

Բաթրիս խուլ ու այլայլած ձայնով մը ըսաւ.

— Ո՛վ կրնայ ըլլալ: Երեք անձեր կան որոնք կրնան այս չարաշուք դերը կատարել, ինչպէս ատենօք կատարւած է արդէն: Անոնցմէ երկուքը մեռած են. էսարէս և հայրս: Իսկ երրորդ անձը, Սիմէօն, խենթեցած է: Արդեօք իր խելագարութեան մէջ ան շարունակած է բոլոր այս մեքենայութիւնը, բայց ի՞նչպէս կարելի է ենթադրել որ այդքան ճշգրտորէն գործած ըլլայ: Ոչ... ոչ...: Միւսն է, ան որ կը վարէ, և որ մինչեւ հիմա մուծին մէջ մնացած է:

Բաթրիս իր թիւին վրայ ըզգաց Քորալի կծկւած մատները:

— Լռեցէք, աւաստի... ըսաւ Քորալի:

— Ոչ... ոչ... պատասխանեց Բաթրիս:

— Այո՛... վստահ եմ...:

Քորալի կը կռահէր միւս եղելութիւնը որ կը պատրասուէր. երբեմնի այս լուսամուտը ալ աւելի վեր առնւեցաւ...: Ձեռք մը կը հրէր զայն... Յանկարծ անոնք տեսան...:

Կիսաբաց ապակիին տակ գըլուխ մը տեսան:

Ծերուկ Սիմէօնի գլուխն էր ան:

Արդարեւ մեծ զարմանք չզգացին: Զիրենք հալածողը այդ մարդը ըլլար թէ ուրիշ մը, տարօրինակ չէր թւեր իրենց, քանի որ Սիմէօն քանի մը շաբաթ է ի վեր իրենց կեանքին խառնւած էր տուամ ներկայացնող դերասանի մը պէս: Ամէն տեղ կը գտնէին Սիմէօնը, որ իր խորհրդաւոր ու անիմանալի դերը կը կատարէր:

Անգիտակց մեղսակից մըն էր ան: Ճակատագրին մէկ կոյր զօրութիւնն էր: Ի՛նչ փոյթ. ան կը գործէր, անխոնջ կերպով կը յարձակէր, և անոր դէմ ոչ ոք կրնար ինքզինքը պաշտպանել: Բաթրիս մրմնջեց.

— Խելագարն է... խելագարն է...:

Բայց Քորալի ըսաւ.

— Թերեւս յիմար չէ ան...: Պէտք չէ որ յիմար ըլլայ:

Քորալի անվերջ սարսուռով մը կը ցնցւէր:

Վերը, մարդը կը դիտէր զանոնք դեղին ակնոցներուն ետեւէն, առանց ատելութեան կամ գոհունակ արտայայտութիւն մը տեսնելու իր անզգած դէմքին վրայ:

— Քորալի, ձգէ՛ որ գործեմ... հո՛ս եկուր, ըսաւ Բաթրիս...:

Ու յամբարէն, Քորալիի զօրավիգ ըլլալու երեւոյթով, կը մղէր ու դէպի թիկնաթոռ կ'առաջնորդէր զայն: Արդարեւ, միակ զաղափար մը ունէր ան. մօտե-

նալ այն սեղանին ուր դրած էր բեկովէրը, վերցնել զայն ու պարպել:

Սիմէօն տեղէն չէր շարժեր: փոթորիկը շղթայազերծելու պաշտօն ունեցող չար ոգիի մը պէս...: Քորալի չէր կրնար աչքերը բաժնել իր վրայ ծանրացող նայւածքէն:

— Ոչ, պէտք չէ այդպէս ընել, կը մրմնջէր Քորալի դիմադրելով ու վախնալով որ Բաթրիսի ծրագրերը չգահավիժէ գործին վախճանը:

Բայց Բաթրիս աւելի հաստատամիտ, իր նպատակակէտին կը հասնէր: Ծիգ մըն ալ, ու իր ձեռքը կը դպչէր բեկովէրին:

Կարուկ որոշում մը տուաւ: Մէկ անգամէն կրակ ըրաւ: Զէնքը պայթեցաւ:

Վերը անհետացաւ գլուխը:

— Ա՛հ, սխալ ըրիք, Բաթրիս, վրէժ պիտի լուծէ հիմա, յարեց Քորալի:

— Ոչ... թերեւս... ըսաւ Բաթրիս, բեկովէրը բռունցքին մէջ սեղմած: Ո՛վ գիտէ թէ վիրաւորած չեմ զայն... գնդակը ապակեպատ շրջանակին եզերքին հանդիպեցաւ...: Թերեւս շեղեցաւ, ու այն ատեն...:

Ձեռք ձեռքի տուած, սպասեցին քիչ մը յուսալից:

Այդ յոյսը քիչ տեւեց: Աղմուկը վերսկսաւ տանիքին վրայ:

Յետոյ, երբեմնի պէս, սա տպաւորութիւնը ունեցան թէ բան մը կ'անցնէր բացւած քէն, վար կ'իջնէր և սենեակին մէջտեղը կը գլորէր... սանդուխ մը, չուանէ սանդուխ մըն էր... զոր Բաթրիս տեսած էր ծերուկ Սիմէօնի որմադարանին մէջ:

Երբեմնի պէս, Բաթրիս ու Քորալի կը դիտէին և շատ լազիտէին թէ ամէն ինչ կը վերսկսէր, դէպքերը իրարու կը շարժայւէին անողոք խտութեամբ մը. իսկոյն իրենց նայւածքներով փնտռեցին այն անխուսափելի թուղթը, որ գնդասեղով մը պիտի անցնէր սանդուխի վարի աստիճանին:

Ծալւած թուղթ մը կը գտնուէր սանդուխին վրայ: Իեղնած, չոր ու մաշած թուղթ մըն էր:

Երբեմնի թուղթն էր ան, քըսան տարի առաջ՝ էսարէսի կողմէ դրած, և երբեմնի պէս, փորձութեան ու սպառնալիքի միևնոյն գործին յատկացւած:

«Թո՛ղ Քորալի առանձին վեր ելլէ: Կեանքը ազատած պիտի ըլլայ: Տասը վայրկեան կուտամ՝ ընդունելու համար...: Եթէ ոչ...»:

ԺԱ.

ԴԱԳԱՂԻՆ ԳԱՍԵՐԸ

Եթէ ոչ...: Բաթրիս քանիցս մեքենաբար կրկնեց այդ բառը, մինչդեռ անոր անուելի նշանակութիւնը հասկնալի էր երկուքին ալ: Եթէ ոչ... ըսել կ'ուզէր թէ Քորալի եթէ չհնազանդէր, թշնամիին անձնատուր չըլլար, բանտէն խոյս չտար և անոր բանալիները քովը ունեցողին չհետեւէր, այն ատեն պիտի մեռնէր:

Այդ պահուն, Բաթրիս ու Քորալի չէին խորհեր իրենց վերապահւած մահւան կերպին և ոչ իսկ մահւան վրայ:

Անոնք միայն կը խորհէին թշնամիին հաղորդած հրամանին վրայ, իրարմէ բաժնուելու համար: Մէկը պարտ էր հեռանալ, իսկ միւսը՝ մեռնիլ: Կեանք խոստացած էր Քորալի, եթէ երբեք Բաթրիսը զոհէր. բայց այդ խոստումը ի՞նչ գնով պիտի ըլլար և ինչպէ՛ս պիտի հատուցէր պարտադրած զոհողութիւնը:

Երկու երիտասարդներուն միջեւ երկար լռութիւն մը տիրեց, անստուգութեամբ ու անձկութեամբ լցւած: Հիմա բան մը կը ճշդւէր, ու տաճը իրենցմէ բոլորովին դուրս չէր գտնուեր. իբր անզոր զոհեր չէ որ կը մասնակցէին: Տուամը իրենց մէջն էր, ու կարող էին վախճանը փոխել: Սոսկալի հարց: Երբեմնի Քորա-

լիին առջեւ դրած էր այդ հարցը, ու ան ի նպաստ սիրոյ լուծւած ըլլալով մեռած էր...:

Այդ հարցը նորէն կը ներկայանար:

Բաթրիս կարդաց սա արձանագրութիւնը. արագօրէն գրւած բառերը նւազ որոշ կը դառնային:

«Քորալիին աղաչեցի... Ծունկերուս առջեւ նետուեցաւ: Կ'ուզէ ինձի հետ մեռնիլ»:

Բաթրիս դիտեց մանկամարդ կինը: Ծատ ցած ձայնով խօսած ըլլալուն, Քորալի չէր լսած:

Այն ատեն Քորալին իր մօտ քաշեց սիրոյ խոյանքով մը, ու զօջեց:

— Քորալի, հոսկէ պիտի հեռանաս: Լաւ կ'ըմբռնես որ քիչ մը առաջ չըսելուս պատճառը վարանումը չէր: Ոչ... միայն թէ կը խորհէի այդ մարդուն առաջարկին վրայ... քեզի համար կը վախնայի...: Սոսկալի բան է ուզածը...: Եթէ կը խոստանայ կեանքը ազատել, պատճառը սա է որ քեզ կը սիրէ...: Այն ատեն կ'ըմբռնես որ...: Քորալի, պէտք է հնազանդիլ... պէտք է ապրիլ...: Գնա՛...: Անօգուտ է սպասել որ տասը վայրկեանը անցնի...: Կրնայ յուշաբերիլ... ու մահւան դատապարտել քեզ: Ոչ, Քորալի, գնա՛, անմիջապէս գնա՛:

Մանկամարդ կինը պարզապէս պատասխանեց .

— Հոս կը մնամ :

Բաթրիս ընդոստ շարժում մը ընելով ըսաւ .

— Բայց յիմարութիւն է : Ինչո՞ւ այդ անօգուտ զոհողութիւնը : Կը վախնաս որ բա՛ն մը կը պատահի , եթէ հնապանդիս :

— Ոչ :

— Ուրեմն հեռացի՛ր :

— Հոս կը մնամ :

— Բայց ինչո՞ւ այդ յամառութիւնը , քանի սր բանի մը չի ծառայեր : Ինչո՞ւ :

— Որովհետեւ ձեզ կը սիրեմ , Բաթրիս :

Բաթրիս շփոթահար մնաց : Ան գիտէր թէ մանկամարդ կինը կը սիրէր զինքը , ու այդ բանը ըսած էր իրեն : Բայց թէ ան կը նախընտրէր իր մօտ մեռնիլ , յեղակարծ , հեշտալի ու սոսկալի ուրախութիւն մըն էր ատ :

— Ահ , Քորալի , կը սիրե՛ս զիս . . . կը սիրե՛ս զիս . . . :

— Բաթրիս , կը սիրեմ քեզ :

Մանկամարդ կինը Բաթրիսի վիզը փաթեցեցաւ . այս վերջինը զգաց որ կարելի չէր ազատիլ այդ գրկախառնութենէն : Սակայն տեղի չտուաւ , վճռած ըլլալով ազատել զայն :

— Պէտք է ինծի նազանդիս ու ապրիս , ճիշդ անոր համար է որ կը սիր եողիս , ըսաւ Բաթրիս , հաւտա՛որ ինծի համար հարիւր անգամ աւելի ցաւագին պիտի ըլլայ առանձին մեռնիլը : Եթէ գիտնամ որ ազատ ու կենդանի ես , այն ատեն մահը քաղցր պիտի թւի :

Քորալի մտիկ չէր ընել , ու խոստովանութիւնը կը շարունակէր ,

նակէր , ինքզինքը երջանիկ գդալով որ վերջապէս կ'արտաբերէր այն խօսքերը զորս երկար ատենէ ի վեր իր մէջ պահած էր :

— Բաթրիս , առաջին օրէն իսկ կը սիրեմ քեզ : Պէտք չունէի որ ինծի ըսես այդ բանը , որպէս զի հասկ'ամ . աւելի կանուխ չըսելուս պատճառը սա է որ հանդիսաւոր եղելութեան մը , պարագայի մը կը սպասէի , ուր լաւ պիտի ըլլար որ քեզի ըսէի , աչքերուդ խորը նայելով և լիովին քեզի նւիրելով : Քանի որ մահուան սեմին վրայ կը պարտաւորւիմ խօսիլ , մտիկ ըրէ զիս և մի պարտադրեր զիս բաժանումի մը , որ մահուանէ աւելի գէշ պիտի ըլլայ :

— Ո՛չ , ո՛չ , քու պարտքդ է մեկնիլ , յարեց Բաթրիս , փորձելով Քորալի գրկէն ազատել ինքզինքը :

Բաթրիս ճիգ մը ըրաւ և Քորալիի ձեռքերը բռնեց :

— Պարտաւոր ես խոյս տալ , և երբ ազատ ըլլաս , ամէն ինչ փորձել իմ փրկութեանս համար :

— Ի՞նչ կ'ըսես Բաթրիս :

— Այո՛ , յարեց , իմ փրկութեանս համար : Ոչ մէկ բան կ'պացուցանէ թէ չպիտի կրնաս ազատիլ այդ թշուառականին ճակատէն , բերան տալ , օգնութիւն խնդրել , մեր բարեկամներուն իմաց տալ . . . : Պիտի ազադակես , խորամանկութիւն մը պիտի բանեցնես . . . :

Քորալի այնքան ախուր և տարակուսական ժպտով մը կը դիտէր Բաթրիսը որ այս վերջինը ընդմիջեց խօսքը :

— Կը փորձես զիս համոզել ,

բայց հէզ սիրեցեալս , դուն ալ չես հաւատար քու խօսքերուդ : Ո՛չ , Բաթրիս , դուն լաւ գիտես որ եթէ այդ մարդուն անձնատուր ըլլամ , լռութեան պիտի դատապարտէ ու տեղ մը պիտի բանտարկէ զիս , ձեռքերս ու ոտքերս կաշկանդուած , մինչեւ որ վերջին շունչը աւանդեմ :

— Ապահո՞՞վ ես :

— Քեզի պէս , Բաթրիս , որ վստահ ես թէ ի՛նչ պիտի պատահի յետոյ :

— Ի՞նչ պիտի պատահի :

— Օ՛հ , Բաթրիս , այդ մարդը վեհանձնութեան համար չէ որ զիս կ'ազատէ : Կը գուշակես թէ ի՛նչ գարշելի ծրագիր ունի , անգամ մը զիս ձեռք անցնելէն յետոյ : Նոյնպէս կը գուշակես այն միակ միջոցը զոր ունիմ , անոր չենթարկելու համար : Ուրեմն , Բաթրիս , եթէ քանի մը ժամէն պիտի մեռնիմ , ինչո՞ւ հիմա չմեռնիմ քու թեւերուդ մէջ . . . քեզի հետ , շրթունք շրթունքի : Մա՞հ է տսիկա : Կեանքերու ամենէն զեզեցիկը ապրիլ չի՞նք շանակեր այդ մէկ վայրկեանի կեանքը :

Բաթրիս կը դիմադրէր Քորալիի սեղմումին : Գիտէր թէ մանկամարդ կնոջմէ համբոյր մը քաղածին պէս կամքը պիտի կորսնցնէր ընդորովին :

— Սոսկալի՛ բան է , մըմնջեց Բաթրիս : Ի՞նչպէս կ'ուզես որ ընդունիմ քու զոհողութիւնդ : Դուն այնքան երիտասարդ ես ու երջանկութեան տարիներ կը սպասեն քեզի :

— Սուգի և յուսահատութեան տարիներ , եթէ դուն չապրիս . . . :

— Պէտք է ապրիլ , Քորալի : Ամբողջ հոգւովս կը թախանձեմ :

— Բաթրիս , առանց քեզի չեմ կրնար ապրիլ : Դուն միակ ուրախութիւնս ես : Քեզ սիրելուս համար միայն զոյրութեան իրաւունք ունիմ : Դուն սէրը ուսուցիր ինծի , կը սիրեմ քեզ . . . :

Օ՛հ , ատուածային բառերը : Ասոնք երկրորդ անգամ ըլլալով կը թնդային սենեակին չորս պատերուն միջեւ : Սիրոյ միեւնոյն խօսքերը կ'արտասանէին աղջկան կողմէ , մինչ մայրը միեւնոյն տարփանքով ու աւիւնով արտասանած էր զանոնք : Մահուան յիշատակը և մահը կրկնապէս նւիրական յուզումով մը կը տողորէին այդ խօսքերը : Քորալի առանց սոսկումի կ'արտաբերէր զանոնք : Իր ամբողջ երկիւղը կարծես կ'անհետանար իր սիրոյն մէջ , ու սէրն էր որ կը դողացնէր ձայնը , կը սղտորէր աղւոր աչքերը :

Բաթրիս հիացիկ նայածքով մը կը դիտէր մանկամարդ կինը : Հիմա ինք ալ կը հասկնար թէ կ'արժէր այդպիսի վայրկեաններու մէջ մեռնիլ :

Սակայն գերագոյն ճիգ մը ընելով ըսաւ .

— Քորալի , ձեզի կը հրամայեմ հեռանալ հոսկէ :

— Այո՛ինքն , ինծի կը հրամայես այդ մարդուն միանալ և անոր յանձնելի , մըմնջեց Քորալի : Այդ բանն է որ չպիտի ուզես ընել , Բաթրիս :

Սարսուռ մը զգաց ալ ըսաւ .

— Օ՛հ , սոսկո՛ւմ . . . : Այդ մարդը . . . այդ մարդը . . . : Դուն ,

Քօրալի, այնքան անբիժ... այնքան թա՛րմ...:

Ոչ Բաթրիս և ոչ ալ Քօրալի այդ մարդը չէին մտաբերեր Սիմէօնի ճշգրիտ պատկերով: Հակառակ իրենց գլխուն վերեւ տեսած անուելի ցնորքին, թշնամին խորհրդուոր նկարագիր մը ունէր անոնց համար: Թերեւս Սիմէօնն էր: Թերեւս ուրիշ մէկն էր, որուն գործիք կ'ըլլար Սիմէօն: Ամէն պարագայի մէջ թշնամին էր, չար ոգին, իրենց գլխուն վերեւ կծկտած, որ հոգեվարքը կը պատրաստէր ու իր աղտոտ ցանկութեամբ կը հետապնդէր մանկամարդ կիւնը:

— Երբեք չե՞ս նշմարած որ Սիմէօն քեզ փնտռած ըլլայ, հարցուց Բաթրիս.

— Երբեք... երբեք...: Զիս չէր փնտռեր բնա՛ւ...: Թերեւս կը խուսափէր ինէ...:

— Ուրեմն խենթ է ան...:

— Խենթ չէ ան... չեմ կարծեր... վրէժ կը լուծէ ան:

— Անկարելի բան է: Հօրս բարեկամն էր: Ամբողջ կեանքին մէջ աշխատած է, մեզ միացնելու համար: Ի՞նչպէս կ'ըլլայ որ հիմա ուզէ մեզ սպաննել կամաւորապէս:

— Զեմ գիտեր, չեմ հասկնար, Բաթրիս:

Այլեւս չլսօսեցան Սիմէօնի վրայ. կարեւորութիւն չունէր թէ մահը ո՛ւրկէ կու գար, Սիմէօնէ՛ն թէ ուրիշէ մը. պէտք էր մահուան դէմ պայքարիլ, առանց փոյթ ընելու թէ ո՛վ կը վարէր զայն: Արդ, ի՞նչ կրնային ընել մահուան դէմ:

— Կ'ընդունիս, Բաթրիս, այնպէս չէ՞, յարեց Քօրալի մեղմա՛ձայն:

Բաթրիս չպատասխանեց, ու մանկամարդ կիւնը յարեց.

— Զպիտի հեռանամ, բայց պէտք է որ համամիտ ըլլաս ինձի: Կ'աղաչեմ: Տանջանք մըն է խորհիլ թէ դուն աւելի շատ կը տանջուիս: Պէտք է որ հաւաստաբապէս չարչարուինք: Կ'ընդունիս այնպէս չէ՞:

— Այո՛, ըսաւ Բաթրիս:

— Զեռեքդ ինձի տո՛ւր: Աչքերուս խորը նայէ, ու ժպտինք, Բաթրիս:

Բոպէ մը խորասուզեցան տեսակ մը հոգեգմայլանքի, սիրոյ ու տենչանքի մէջ, բոլորովին խելակորոյս դարձած:

— Ի՞նչ ունիս, Բաթրիս: Նորէն վրդովու՛մի մատնւած ես...:

— Նայէ՛... նայէ...:

Բաթրիս խապոտ ճիչ մը արձակեց: Այս անգամ վստահ էր տեսածին վրայ:

Սանդուխը վեր կ'ելլէր: Տասը վայրկեան անցած էր:

Բաթրիս խոյանալով ուժգնօրէն բռնեց ձողերէն մէկը:

Քօրալի տեղէն չչարժեցաւ:

Ի՞նչ ընել կ'ուզէր ան: Զէր գիտեր: Այդ սանդուխը Քօրալիի փրկութեան միակ միջոցն էր:

Պիտի հրաժարէ՛ր անկէ, անխուսափելիին համակերպելու համար: Մէկ վայրկեան, երկու վայրկեան անցան: Վերը, նորէն իր տեղը կախած էին սանդուխը, որովհետեւ Բաթրիս կը զգար ամուր կերպով հաստատուած բանի մը զիմադրութիւնը:

Քօրալի աղաչական շեշտով մը ըսաւ.

— Բաթրիս, Բաթրիս, ի՞նչ կը յուսաս...:

Բաթրիս իր շուրջը և իր վերեւը կը նայէր, կարծես զազափար մը փնտռելու համար. կը թւէր ինք իր մէջ դիտել, գոգցես այդ գաղափարը որոնելով բոլոր այն յիշատակներուն մէջ զոր հաւաքած էր այն պահուն երբ հայրն ալ սանդուխը կը բռնէր կամքի վերջին պրկումով մը:

Յանկարծ ձախ սրունգին մէկ ոստումովը սանդուխին հինգերորդ աստիճանին վրայ դբաւ ոտքը, սանդուխն ի վեր շուրջելով բազուկներուն միջոցաւ:

Անհետեւ փորձ: Կարելի՞ բան էր սանդուխէն վեր բարձրանալ, լուսամուտին հասնիլ, թշնամին ձեռք անցնել, և հոնկէ խոյս տալ Քօրալիի հետ: Երբ իր հայրը անյաջողութեան մատնւած էր, Բաթրիս ի՞նչպէս պիտի կարենար յաջողիլ:

Երեք բոպէէն աւելի չտեւեց ասիկա: Բաթրիս յանկարծ վար ինկաւ: Սանդուխը իր տեղէն ելած ու Բաթրիսի քով ինկած էր: Միեւնոյն ատեն սուր քրքիլ մը պոռթկաց վերը: Յետոյ սղմուկ մը լսեցաւ: Լուսամուտը գոցւած էր:

Բաթրիս ոտքի կանգնեցաւ կատղած և հայհոյեց թշնամիին. իր յարածուն կատաղութեան մէջ հրազենի երկու հարւածներ պարպեց, որոնք երկու ապակիներ ջախջախեցին:

Յետոյ դռները և պատուհանները հարւածեց խանձողներու միջոցաւ: Պատերը հարւածեց, տախտակամա՛ճը հարւածեց, բռունցքները ցոյց տուաւ աներե-

ւոյթ դեւին, որ իր քթին կը խնդար: Բայց, պարագութեան մէջ քանի մը շարժումներ ընելէ յետոյ անշարժութեան դատապարտեցաւ: Թանձր քողի պէս բան մը սահած էր վերէն: Մթութիւնն էր ան:

Բաթրիս հասկցաւ: Թշնամին լուսամուտին վրայ ծածկած էր փեղկ մը, ամբողջովին գոցելով զայն:

— Բաթրիս, Բաթրիս, ո՛ւր ես, ո՛ւր ես: Ա՛հ, կը վախնամ, ո՛ւր ես, աղաղակեց Քօրալի, որուն վախ կը պատճառէր խաւարը և որ կորսնցուցած էր հոգեկան բոլոր կորովը:

Այնատենկոյրերու պէս զիրար փնտռեցին խարխափանքով, ու իրենց ոչ մէկ բան այնքան սոսկալի չէր թւած որքան մոլորիլը այդ անողք մթութեան մէջ:

— Բաթրիս, ո՛ւր ես, Բաթրիս, կը գոչէր մանկամարդ կիւնը:

Քօրալիի սառ ձեռքերը եւ Բաթրիսի հրատոչոր ձեռքերը իրարու կը զարնէին, իրարու քով կը սեղմւէին, կը պլլւէին ու կը կառչէին, որպէս թէ իրենց գոյութեան էն շօւափելի նշանները ըլլային անոնք:

— Ա՛հ, մի՛ ձգեր զիս, Բաթրիս, կը թախանձէր մանկամարդ կիւնը:

— Հոս եմ, մի՛ վախնար, մեզ չեն կրնար բաժնել, պատասխանեց Բաթրիս:

Քօրալի կակաղեց.

— Իրաւունք ունիս, չեն կըրնար մեզ բաժնել... մեր գերեզմանին մէջ կը գտնուինք արդէն: Այդ բառը այնքան սոսկալի

էր որ Քորալի ցաւազին ձայնով մը արտասանեց զայն, ու Բաթրիս ընդզղումի ընդօստ շարժում մը ըրաւ:

— Բայց ոչ... Ի՞նչ կըսես: Պէտք չէ յուսահատիլ... Փրկութիւնը հնարաւոր է մինչեւ վերջին վայրկեանը:

Բաթրիս մէկ ձեռքը ազատեց ու հրազէնը ուղղեց լուսամուտին շուրջը գտնուող ծակտիքներէն մղուող լոյսին: Երեք անգամ քաշեց գէնքը: Անոնք լսեցին տախտակներու շառաչումը և թշնամիին հեզնական ծիծաղը:

Բայց փեղկը մետաղով ծածկըւած ըլլալուն, ու է ձեռքըւածք առաջ չեկաւ:

Այդ ծակերը գոցեցան իսկոյն: Բաթրիս ու Քորալի վերահասու եղան որ թշնամին պատուհաններուն և դռներուն պէս ալ այդ ծակերն ալ կը գոցէր: Ասիկա բաւական երկար տեւեց ու մանրակրկիտ կերպով կատարեցաւ այդ աշխատանքը: Յետոյ ուրիշ լրացուցիչ աշխատանք մըն ալ կատարեցաւ: Թշնամին լուսամուտին շրջանակը զամեց փեղկին հետ:

Չարհուրելի ազմուկ մը կ'ելլէր: Մուրճին հարւածները, թեթեւ ու արագ, խորապէս կը թափանցէին երկուքին ուղեղներուն մէջ: Իրենց զագաղն էր որ կը գամէին, մեծ դագաղը, որ վրանին կը ծանրացնէր ամրապէս գոցուած կափարիչ մը: Ալ յոյս չկար: Օգնութիւնն ալ անկարօել էր:

Մուրճի իւրաքանչիւր հարւած կ'ամրացնէր սեւ բանտը ու կը բազմապատկէր խոչընդոտները,

աշխարհի ու իրենց միջեւ բարձրացնելով պատեր զոր չպիտի կրնար տապալել մարդկային ոչ մէկ զօրութիւն:

— Բաթրիս, կը վախնամ, կակաղեց Քորալի: Օ՛հ, այս հարւածները գէշ կ'ազդեն վրաս:

Մանկամարդ կիւնը Բաթրիսի թեւերուն մէջ կ'իջնար նւազուն: Բաթրիս զգաց որ արցունքներ կը հոսէին այտերն ի վար:

Սակայն, գործը կ'աւարտէր վերը: Մահապարտներու վերջին օրուան այգուն տպաւորութիւնը կը ձգէր:

— Մի թողուր զիս, մի՛ թողուր զիս, ըսաւ Քորալի հեծկըլտալով:

— Մէկ քանի բոպէ միայն... ապագային պիտի լուծեն մեր վրէժը:

— Ի՞նչ փոյթ, Բաթրիս, ի՞նչ օգուտ մեզի, ըսաւ Քորալի:

Տուփին մէջ քանի մը լուցկի մնացած էին: Բաթրիս իրարու ետեւէ վառելով զանոնք, Քորալին առաջնորդեց դէպի արձանագրութիւնը:

— Ի՞նչ կ'ուզես, հարցուց Քորալի:

— Չեմ ուզեր որ անձնասպանութեան մը վերագրուի մեր մահը. կ'ուզեմ կրկնել ինչ որ ըրած են մեր ծնողքները և ապագան պատրաստել: Մէկը պիտի կարգայ զրեւիքս և մեր վրէժը պիտի լուծէ:

Բաթրիս ծռեցաւ և գրողանէն մատիտ մը հանեց: Խոյակին վարի կողմը պարապ տեղ մը կար: Ան գրեց.

«Բաթրիս Պէլվալ և իր նշանածը Քորալի կը մեռնին միեւ-

նոյն մահով, Սիմէօն Տիօտիքիսի կողմէ սպաննուած, 1915 Ապրիլ 14ին»:

Գիրը աւարտած պահուն Բաթրիս հին արձանագրութենէն նըմարեց քանի մը բառեր, զոր չէր կարդացած մինչեւ այն ատեն, քիչ մը դուբըր զետեղուած ըլլալուն. կարծես թէ արձանագրութեան մէկ մասը չէր կազմեր:

— Լուցկի մըն ալ վառենք, ըսաւ Բաթրիս: Տեսա՞ր... բառեր կան հոն... անշուշտ, այն վերջին բառերը զոր հայրս գըրած է:

Քորալի լուցկի մը վառեց: Դանդաշուն լոյսով կրցան կարդալ կազ մը տնեւ ու քծապարանքով արձանագրուած սա երկու գրերը.

«Շնչահեղձ... Օխիս...»

Լուցկին մարեցաւ: Ոտքի ելան լուկ: Կը հասկնային որ շնչահեղձութեամբ պիտի մեռնէին իրենց ծնողքներուն պէս: Բայց չէին ըմբռնեց թէ ի՞նչպէս պիտի ըլլար ատիկա: Այդ ընդարձակ սենեակին մէջ գտնուող օղը պիտի բաւէր քանի մը օր ապրեցնելու:

— Միայն թէ այս օդին որակը փոխելու է, մըմնջեց Բաթրիս: Հեռեւաբար...

Բաթրիս քիչ մը յետոյ յարեց.

— Այո՞... այսպէս է... կը յիշեմ...:

Քորալիի յայտնեց իր կասկածները կամ ինչ որ իրականութեան կը համապատասխանէր:

Ծերուկ Սիմէօնի որմադարանին մէջ բացի չւանէ սանդուխէն, կապարէ խողովակներ տեսած էր: Երկուքին արգելափակ ըլլալէն յետոյ Սիմէօնի կատա-

րած աշխատանքը և երթեւեկը ճշգրտորէն կը բացատրէր ամէն բան: Սիմէօն, հաւանաբար, տանիքին վրայ երկարած էր օդային կազի խողովակը:

Ուրեմն իրենց ծնողքներուն պէս, Բաթրիս ու Քորալի օդային կազով շնչահեղձ պիտի ըլլային: Երկուքն ալ սոսկումի նուազի մը մատնուած, իրարու ձեռքէ բռնած, սկսան սենեակին մէջ վազվզել խելայեղ, զաղափարազուրկ ու անկամ, ամենասաստիկ փոթորիկներէ ցնցըւած առարկաներու պէս:

Քորալի ակամայ խօսքեր կ'ընէր: Բաթրիս կը թախանձէր, Քորալին հանդարտեցնելու համար բայց ինքն ալ անզօր էր հակադդելու այն սոսկալի անձկութեան դէմ որ խաւարը առաջ կը բերէ հոն ուր մահը դարանակալ եղած է: Ուղեցին խոյս տալ այդ պազ շունչէն որ ծոծրակը կըսառեցնէր: Բայց ո՛ւրիշ: Պատերը անանցանելի էին ու խաւարը՝ աւելի անգուրջ:

Կանգ առին յոգնած, Թեթեւ սուլում մը կը լսէր, որ կարծես դուբս կուգար կազի գէշ գոցուած կտուցէ մը: Մտիկ ընելով հասկցան որ վերէն կուգար այդ ձայնը:

Չարչարանքը կը սկսէր: Բաթրիս մըմնջեց.

— Կէս ժամ, առ առաւելն մէկ ժամ հարկաւոր է:

— Կտրի՞ ըլլանք, պտտասխանեց Քորալի, որ ինքզինքը գտած էր:

— Ա՛հ, եթէ առանձին ըլլայի, բայց դուն, հէգ Քորալիս...:

— Չպիտի տառապիմ, ըսաւ Քորալի մեղմաձայն:

— Դուն պիտի տառապիս, քանի որ տկար ես:

— Մարդ որքան տկար ըլլայ, այնքան նւազ կը տառապի:

Անոնք լռեցին, բազմոցին վրայ նստած, ու ձեռքերնին իրարու միացուցած: Տակաւ մեծ անդորրութեամբ կը տոգորուէին, որ կատարւած իրողութիւններէն առաջ կուգայ, գերազանց ուժերու հանդէպ համակերպելով: Այդ նկարագիրը ունեցող անձեր չեն ընդվզիր ալեւ, երբ ճակատագրին հրամանը բացայայտ է, ու հնազանդելէ և աղօթելէ զատ ուրիշ բան չի մնար ընելիք:

Քորալի փաթեթեցաւ Բաթրիսի վիզը ու ըսաւ.

— Աստուծոյ առջեւ իմ նշանածս ես: Թո՛ղ ան մեզ ընդունի իբր ամուսիններ:

Մանկամարդ կինը համոզյուներով չորցուց արցունքները ու Բաթրիսի երկարեց շրթունքները:

— Ա՛հ, իրաւունք ունիս. այսպէս մեռնիլը ապրիլ է:

Օղային կազի արտաթորումները զգացին, բայց սարսափի չմտնուեցան: Բաթրիս մրմնեց.

— Ամէն ինչ անցեալին պէս պիտի ըլլայ մինչեւ վերջին բոպէն, Մայրդ և հայրս, որոնք մեզի պէս իրար կը սիրէին, իրարու զրկի մէջ մեռած են, շըր-

թունքնին միացուցած: Անոնք որոշած էին մեզ միացնել, ու միացուցին:

— Մեր գերեզմանը անոնց գերեզմանին մօտ պիտի ըլլայ, մրմնեց Գորալի:

Յարածուն մշուշ մը կը պատէր երկուքին մտքերը: Անօթութիւնն ալ խառնւած էր գլխու պտոյտին: Ու է անձկութիւն չէին զգար, քանի՛ կ'աւելնար գլխու այդ պտոյտը: Հոգեզմայլուսի, թմրութեան, անէացումի և անդորրութեան մէջ կը մտնային մահւան սոսկումը:

Նախ Գորալի նւազուն, զառանցանքի խօսքեր ըրաւ.

— Սիրեցեալս, վարդեր կը թափին: Օ՛հ, որքան հեշտալի է:

Բաթրիս ալ միեւնոյն վիճակին կը մատնէր: Առանց սարսափի զգաց որ Գորալի թեւերուն վրայ կը ծանրանար ինքնալքումով. սա տպաւորութիւնը ունեցաւ թէ ինք ալ Գորալիի պիտի հետեւէր լուսողող անդունդին մէջ, դէպի երջանիկ աշխարհ մը իջնելու համար:

Ժամեր սահեցան: Լոյսի ալիքները մթազնեցան: Թանձր ամպ մը եկաւ, որուն յաջորդեցին ուրիշներ ալ, արձամուտի յորձանք մը առաջ բերելով: Եւ անհա՛, Բաթրիս քրտնաթաթաւ ու զողողջուն, սեւ ու մեծ ծակի մը մէջ ինկաւ...

ԺԲ.

ՏԱՐՈՒՆԱԿ ՄԱՐԴ ՍԸ

Բուն մահը չէր հասած տակաւին: Հոգեվարքի վիճակին մէջ Բաթրիս կ'երեւակայէր որ ծերուկ Սիմէօն պիտի գար ստուգելու իր զոհերուն մահը:

Ժամեր կամ րոպէներ սահեցան: Ի վերջոյ Բաթրիս սա տըպաւորութիւնը ունեցաւ թէ դժոխային քուն մը կը քաշէր, մղձաւանջներով լեցուն:

Սակայն աղջամուղջը տակաւ կը սկսէր փարատիլ: Պտոր լոյս մը կը խառնէր: Բաթրիս նւազ ճնշւած կը զգար ինքզինքը: Աչքերը բացաւ, քանիցս շնչեց և զարմանք զգաց, տեսնելով բաց դուռ մը, որուն մօտ, բազմոցի մը վրայ պառկած էր բացօթեայ: Ուրիշ բազմոցի մը վրայ, իր մօտ, նշմարեց որ Գորալին ընկողմանած էր: Մանկամարդ կինը շատ կը չարչարէր:

Երկուքին միջեւ փոքր սեղան մը կար, և անոր վրայ՝ ջուրի երկու գաւաթներ: Բաթրիս, սաստիկ ծարաւած, գաւաթ մը առաւ: Բայց չհամարձակեցաւ խմել: Այդ պահուն մէկը դուրս ելաւ բաց դռնէն: Բաթրիս ստուգեց որ տաղաւարին դռնէն դուրս ելլողը ծերուկ Սիմէօնը չէր, այլ օտարական մը որուն դէմքը չէր տեսած բնաւ: Բաթրիս մտովի ըսաւ.

— Ապահով եմ թէ քունի մէջ չեմ և այս օտարականը բարեկամ մըն է:

— Հարիւրապետ, մի յոգնեցնէք ինքզինքնիդ, ըսաւ օտարականը մօտենալով: Ամէն ինչ լաւ կ'ընթանայ: Պէտք է ջուր խմէք:

Օտարականը գաւաթ մը ջուր երկարեց Բաթրիսի, որ մէկ անգամէն կուլ տաւ, առանց կասկած մը անցնելու մտքէն: Քօրալի ալ ջուր խմեց:

— Այո՛, ամէն ինչ լաւ կ'ընթանայ, ըսաւ Բաթրիս: Տէր Աստուած, որքան լաւ է ապրիլը, այնպէս չէ՞:

Տրւած պատասխանը չիմացաւ և խոր քուն մը քաշեց Բաթրիս:

Երբ Բաթրիս արթնցաւ, նուպան անցած էր ալ ևս. ոտքի ելաւ, ու հասկցաւ որ տաղաւարին մուտքին վրայ կը գտնուէր: Քօրալի երկու գաւաթ ջուր խմելէ յետոյ հանդարտօրէն կը քնանար:

Բաթրիս չհամարձակեցաւ տաղաւարէն ներս մտնելու, հակառակ դռները բաց ըլլալուն: Հոնկէ հեռացաւ ըստ դիպւածի յառաջանալով, բայց նորէն տաղաւար վերադարձաւ, ու պարտէզին վրայ նայող ճակտին առջև կանգ առաւ յանկարծ:

Այն ատեն միայն Բաթրիս հասկցաւ որ Քօրալի և ինք մահւ-
ւընէ ազատած էին ու կենդանի,
և իրենց փրկիչը ըլլալու էր այն
մարդը, որ արահետին մէջ, բազ-
կաթոռի մը վրայ բնկողնանած,
կը մրափէր: Ծուռ կերուն վրայ
գիրք մը կար:

Բաթրիս զննեց այդ մարդը:
Նրբամարմին, լայն սուսերով,
անփայլ դէմքով, նուրբ պիւտով,
քունքերուն վրայ քանի մը ալե-
խառն մազերով այդ անծանօթը
առ առաւելն յիտուն տարեկան
կ'երեւար: Ծատ վայելուչ հագ-
ւած էր: Բաթրիս ծռեցաւ ու
կարգաց գրքին խորագիրը. Պեկ-
մառեկ Ֆրանսիկի յիշատակներ:
Խոտին վրայ դրւած գլխարկին
վերև գտնուող սկզբնատառերը
կարդաց. Լ. Բ.:

— Ան մեզ ազատեց, ըսաւ
Բաթրիս մտովի, երկուքս ալ
տաղաւարէն դուրս հանելով ու
դարմանելով: Բայց ի՞նչպէս եղաւ
այդ հրաշքը ու ո՞վ մեզի զրկեց
այդ անձը:]

Անծանօթին ուսը ծեծեց:
Մարդը ոտքի կանգնեցաւ, դէմքը
ժպտով մը լուսաւորւած:

— Հարիւրապետս, այնքան
չատ զբաղում ունիմ որ երբ
պարապոյ քանի մը վայրկեան-
ներ ունենամ, անկէ կ'օգտուիմ
և կը քնանամ ուր որ ալ ըլլայ...
Նաբօլէօնի պէս, այնպէս չէ՞:
Իսկ դուք, հարիւրապետս, ի՞նչ-
պէս էք: Քոյր Քօրալի անհան-
գըստութիւնը անցած է միթէ:
Դուք բանալէ և ձեզ դուրսը
փոխադրելէ յետոյ անօգուտ
նկատեցի արթնցնել: Երկուքնիդ
ալ կը շնչէիք: Մաքուր և բաց օդը

պիտի կատարէր մնացեալը: Չէ՞ք
ճանչնալ, զիս: Իրաւ է որ ձեզի
ուղղած նամակս ուրիշին ձեռքը
անցած է: Պէտք է որ ինքզինքս
ներկայացնեմ. Տօն Լուի Բէրէն-
նա, սպանիական հին բնտանիքէ
մը, որուն ազնւականութիւնը
վաւերական է, կանոնաւոր թուղ-
թերով...: Անշուշտ, Եա-Պօն
այլապէս ներկայացուցած է զիս,
երբ անունս կը գրէր այն փողո-
ցի պատին վրայ, տասնընից օր
առաջ, իրիկուն մը: Այո՛, ես
այն անձն եմ զոր ձեր օգնու-
թեան կը կոչէիք: Պէտք է ա-
նունս արտասանեմ բացէ ի բաց.
Արտէն Լիւբէն կը կոչուիմ:

Բաթրիս, սպառնալով, ձեռքը
երկարելով, ըսաւ.

— Ծնորձակալ եմ:

— Ծնորձակալութեան պէտք
չկայ: Ձեռքի սեղմում մը կը
բաւէ: Եթէ երբեք քանի մը թե-
թեւ յանցանքներ գործած եմ,
ստոր փոխարէն, կարգ մը բա-
րիքներ ըրած եմ պարկեշտ մար-
դոց:

Յետոյ պահ մը խորհեցաւ ու
Բաթրիսի զգեստին կոճակներէն
մէկը բռնելով, ըսաւ.

— Տեղերնուդ մի՛ շարժիք...
մեզ կը լրտեսեն:

— Բայց ո՞վ:

— Քարափին վրայ, պարտէ-
զին ծայրը գտնուող մէկը: Պատը
բարձր չէ: Վրան վանդակապատ
մըկայ, որուն ձողերուն մէջէն մեզի
կը նային ու կը ջանան մեզ
տեսնել:

— Ինչէ՞ն գիտէք: Կանակնիդ
դարձուցած էք քարափին. սակէ
զատ՝ ծառեր ալ կան:

— Կեցած օթօժօպիլի մը մօ-

թէօրին ձայնը կուզայ...: Արդ,
ո՞վ իր օթօժօպիլը պիտի կեցնէր
քարափին վրայ, պատի մը դի-
մաց, որուն մօտ բնակութիւն
չկայ. ձերուկ Սիմէօնն է ան:

— Սիմէօնը մի:

— Անշուշտ: Կուզէ հասկնալ
թէ իսկապէս ազատած եմ եր-
կուքնիդ ալ:

— Ինչնթ չէ ան:

— Ան խենթ չէ, ինչպէս
դուք և ես, Պիտի ըսէք թէ Սի-
մէօն կը պաշտպանէր ձեզ, թէ
իր նպատակն էր երկուքնիդ
միացնել, թէ ձեզի զրկած էր
պարտէզին բանալին և այլն...:

— Այդ ամենէն տեղեկութիւն
ունի՞ք:

— Պէտք է որ գիտնամ, եթէ
ոչ՝ ինչպէս օգնութեան պիտի
հասնէի ձեզի:

— Կարգ մը նախազգուշու-
թիւններ ձեռք առնելու չէ՛, երբ
այդ անձը նորէն շահատա-
կութեան սկսի: Տաղաւար վե-
րադառնանք: Քօրալին առան-
ձին է:

— Ոչ մէկ վտանգ կը սպառ-
նայ անոր, քանի որ հոս եմ:

— Սիմէօն կը ճանչնայ՞ ձեզ.
գիտէ՞ թէ հոս կը գտնուիք, հար-
ցուց Բաթրիս զարմանքով:

— Այո՛, ձեզի զրկւած նա-
մակիս շնորհիւ: Իմ ժամանումս
ձանուցած ըլլալով փութացու-
ցած է իր գործը: Ըստ սովորու-
թեան, իմ ժամանումս քանի մը
ժամ կանխած ըլլալով գործի
վրայ բռնեցի զայն:

— Այդ պահուն չէիք գիտեր
թէ ան էր թշնամին...:

— Բան մը չէի գիտեր:

— Այս առաու հասկցա՞ք:

— Ոչ, այսօր յետ միջօրէին,
ժամը մէկին քառորդ մնացած:

— Հիմա ժամը չորսն է: Ըսել
է երկու ժամէ ի վեր:

— Եւ ոչ իսկ ժամ մը չընեք
հոս դալս:

— Եա-Պօնը հարցաքննեցի՞ք:

— Կը կարծէ՞ք որ ատեն կոր-
սընցնեմ: Եա-Պօն զարմանքով
ըսաւ թէ հոս չէիք:

— Յետոյ:

— Ձեզ փնտռեցի:

— Ինչպէս:

— Նախ ձեր սենեակը խու-
զարկելով երեւան հանեցի որ
գրասենեակին մէջ ճեղքւածք մը
կար, որ մօտակայ սենեակի պա-
տին մէջ բացւած ճեղքւածքին
վրայ կը նայէր: Ձեր օրագիրը
կարդալով ծանօթացայ դէպքե-
րուն: Սիմէօն ալ այդպէս տեղե-
կացած էր ձեր ամենափոքր մտա-
դրութիւններուն: Այսպէս՝ ձեր
վրայ յարձակելէ առաջ, նախընտ-
րած է հասկնալ թէ ի՞նչ կը
գրէիք: Գիտնալով որ կը զգու-
շանայիք, ետ կեցած է յարձա-
կում գործելէ: Պ. Տէմալիօն ալ
պիտի յաջողէր ձեզ ազատել,
բայց... վաղը միայն: Այո՛, շատ
ուշ պիտի մնար: Կը նախընտրեմ
որ գործին չխառնուի, քանի որ
ոստիկանութեան կը պատկանի:
Լուսութիւն պատերեցի ձեր հաշ-
մանդամներուն: Ձեր տեղեկու-
թիւններուն շնորհիւ, ու Եա-
Պօնի ընկերակցութեամբ, գոհի՞ն
անցնելով պարտէզ մտայ:

— Դուք բաց էք:

— Ոչ, բայց միեւնոյն պա-
հուն Սիմէօն պարտէզէն դուրս
կ'ելլէր: Միտքին ներս մտանք,
մինչ ան չհամարձակեցաւ բողո-

քել, գիտնալով որ ո՛վ եմ: Ձեր օրագրին շնորհիւ հասկցայ որ Սիմէօն ամէն միջադէպերու խառնուած և ամէն չարիք պատրաստած է:

— Անոր օձիքը ձգելու չէիք:

— Ազատ ձգելով պիտի կրնայի կորստեան մատնել զայն: Տեսէ՛ք, տան շուրջը կը թափառի, փոխանակ կծիկը դնելու: Նախընտրեցի ձեզի օգնութեան հասնիլ: Մինչեւ տաղաւարին դուռը վաղեցինք: Բաց էր ան, սակայն սանդուխինը փականքով գոցուած էր: Դիւրին եղաւ փականքը կոտորել: Կազի հոտ առնելով հասկցայ: Փողոցի լապտերներէն օդային կազ առնող հին ֆօնթօր մը զետեղուած էր արտաքին խողովակի մը վրայ, շնչահեղձութեան մատնելու համար ձեզ: Կը մնար ձեզ դուրս հանել ու դարմաններ շռայլել: Ազատած էիք այլեւս: Ան յետոյ պիտի վերցնէր իր մահասփիւռ գործին, որպէս զի խորհրդաւոր անձնասպանութիւն մը կարծէէր այդ մահը ինչպէս ձեր հօր և քոյր Քօրալի մօր մահը:

— Ուրեմն գիտէ՞ք...:

— Հարիւրապետս, ձեզի չափ տեղեկութիւն ունիմ պատին վրայ ձեր հօր կատարած արձանագրութիւններէն. թերեւս աւելի տեղեկ եմ: Ինծի շատ պարզ ու յստակ կ'երեւան այն հարցերը որոնք անլուծելի կը թւին ուրիշներու, շնորհիւ որ ձերութեան և փորձառութեան: Այսպէս...: Նախընտրելի է որ չխօսիմ: Մըթութիւնը պիտի փարատի տակաւ: Առ այժմ սպասենք: Ան տեսած ըլլալու է ձեզ, քանի որ

կը հեռանայ, տեղեկութիւն առնելէ յետոյ, ըսաւ տօն Լուի ականջ դնելով:

— Կը հեռանայ մի: Պէտք է օձիքէն բռնել: Մէյ մըն ալ պիտի՞ կրնանք գտնել այդ թշուառականը: Պիտի կրնա՞նք վրէժ լուծել:

— Թշուառական կը կոչէք այն մարդը որ քսան տարիէ ի վեր կը հսկէ ձեր վրայ, ու Քօրալին միացուցած է ձեզի: Ձեր բարերարն է:

— Ա՛հ, ի՛նչ գիտնամ. ամէն ինչ մութի մէջ մնացած է: Ատելութենէ զատ ուրիշ զգացում չեմ կրնար ունենալ անոր նրկատմամբ...: Կը ցաւիմ խոյս տուած ըլլալուն համար: Կ'ուզէի չարչարել զայն, բայց...:

— Մի վախնաք: Ան երբեք մահուան այսքան չէ մօտեցած, որքան հիմա: Սա ծառի տերեւին պէս իմ տրամադրութեանս տակ կը գտնուի ան: Իմ մարդս է վարիչը այն օթօմօպիլին որ զայն կը տանի: Իմ հրահանգիս համաձայն, այդ օթօմօպիլը կը թափառէր գոի՛ն վարի կողմը: Սիմէօն անոր մէջ ցատկած ըլլալու է:

— Այսինքն կ'ենթադրէք որ այնպէս ըլլայ, ըսաւ Բաթրիս շարուն:

— Պարտէզին վարի ծայրէն եկող մօթէօրին ձայնը ճանչցայ, երբ ազդարարութիւն ըրի ձեզի: Իմ մարդուս վրայ վստահութիւն ունիմ:

— Սիմէօն կրնայ Բարիզէն հեռու երթալ և սպաննել այդ մարդը...: Ե՞րբ լուր պիտի առնենք:

— Կը կարծէ՞ք որ առանց մասնաւոր արտօնագրի թոյլ տան Բարիզէն դուրս ելլելու և թափառելու մեծ ճամբաներուն վրայ: Եթէ երբեք Սիմէօն հեռանայ Բարիզէն, նախ կայարան մը պիտի ուղղուի. քսան վայրկեան յետոյ պիտի իմանանք: Մենք ալ ետեւէն կը հասնինք օթօմօպիլով: Ամբողջ Յրանսայի համար վաւերական անցադիր մը ունիմ տօն Լուի Բէրէննա անուանով և հանրապետութեան նախագահին ու ներքին գործերու նախարարին ստորագրութեամբ:

Բաթրիսի ահաբեկումը բուռն յուզումի փոխուեցաւ: Իր դժբախտ ճակատագրին ուղղութիւնը կը փոխուէր, մահուան սպառնալիքին ենթակայ ըլլալէ յետոյ:

— Հարիւրապետս, կարծես թէ դուք ալ պիտի արտասուէք քոյր Քօրալի պէս: Ձեր ջիղերը շատ ձգուած են: Թերեւս անօթի ալ էք: Պէտք է ճաշէք: Օ՛ն, երթանք:

Դէպի տաղաւար առաջնորդեց Բաթրիսը յամրաքայլ, թեւէն բռնած, ու քիչ մը ծանր շեշտով ըսաւ.

— Հարիւրապետս, բացարձակ գաղտնապահութիւն կը խնդրեմ: Բացի քանի մը հին բարեկամներէ, ու Նա-Պօնէ, որ Ափրիկէի մէջ կեանքս փրկած է, իմ բուն անուանովս ոչ ոք զիս կը ճանչնայ Յրանսայի մէջ: Տօն Լուի Բէրէննա կը կոչուիմ: Մարտի մէջ կուած ու ծառայութիւն մատուցած եմ Յրանսայի զրացի ու չէզոք ազգի մը շատ համակրելի թագաւորին, որ թէև ստիպուած է իր ճշմարիտ զգա-

ցումները ծածկելու, բայց ջերմապէս կը բազմայ որ յաղթանակը շահինք: Ուստի ուզեցի որ անցաթուղթ մը տրուի ինծի: Կէս պաշտօնապէս զաղտնի պաշտօն մը ունիմ, որ երկու օրէն կաւարտի: Երկու օրէն պիտի դառնամ հո՛ն, ուրկէ եկած էի, և ուր Յրանսայի կը ծառայեմ իմ հասկցած ձեւովս, ինչպէս պիտի տեսնէք օրին մէկը:

Երկուքը միասին հասան այն աթոռին մօտ, ուր կը քնանար Քօրալի: Տօն Լուի կեցնելով Բաթրիսը, յարեց.

— Վերջին խօսք մըն ալ, հարիւրապետս: Երդուած եմ որ իմ ստանձնած պաշտօնիս մէջ միմիայն պիտի նւիրուի երկրիս շահերը պաշտպանելու՝ կարողութեանս չափով: Հետեւաբար, չեմ կրնար վայրկեան մը իսկ երկարաձգել բնակութիւնս, սկսեալ այն բողբոջէն, երբ երեւան հանած եմ ոսկիով լեցուն 1800 տոպրակները: Այդ պատճառաւ միայն պատասխանեցի իմ բարեկամի՝ Նա-Պօնի կոչին: Երբ ոսկիի տոպրակները մեր ձեռքը անցնին մինչեւ վաղաջորդ իրիկունը, այն ատեն պիտի մեկնիմ: Արդէն երկու գործերը իրարու հետ կապ ունին: Կը բաւէ այսքան բացատրութիւն: Հիմա քոյր Քօրալի ներկայացուցէք ինծի, որպէսզի աշխատիմք:

Ու խնդալով աւելցուց.

— Հարիւրապետս, բանմը գաղտնի մի պահէք քոյր Քօրալիէն: Իմ բուն անունս յայտնեցէք: Վախնալու բան չունիմ: Բոլոր կիները Արսէն Լիւրէնի կողմն են:

Քառասուն վայրկեան յետոյ, քոյր Քորալի իր սենեակը կը գտնուէր, լաւ դարմանուած ու պահպանուած: Բաթրիս լաւ ճաշ մը ըրած էր, մինչդեռ տօն Լուի թէրասին վրայ կը պտտէր ծխելով:

— Փամը հինգուկէսն է, դեռ մէկ ժամ կայ. կը բաւէ՛, այնպէս չէ՞, հարցուց տօն Լուի:

— Չեմ յուսար որ յաւակնութիւն ունենաք ժամէ մը նպատակին հասնելու:

— Ոչ թէ վերջնական նպատակին, այլ այն նպատակին որուն կը ձգտիմ: Եւ ատիկա կրնայ իրականանալ նոյնիսկ մէկ ժամէն առաջ. մէկ քանի վայրկեանէն տեղեկութիւն պիտի առնենք ոսկրի թաքստոցի մամին:

Տօն Լուի առաջնորդեցաւ մատենադարանին տակ գտնուող նկուղին մէջ, ուր էսարէս պէյ կը պահէր ոսկրի տոպրակները մինչեւ որ ուղարկուէին անո՛ք:

— Հարիւրապետս, այս լուսամուտէն վար կը նետուէր՞ տոպրակները:

— Այո՛:

— Ուրիշ մուտք չկար:

— Մատենադարան բարձրացող սանդուխէն և լուսամուտէն զատ ուրիշ մուտք չկայ:

— Որ թէրասին վրայ կը բացուի, այնպէս չէ՛:

— Այո՛:

— Ուրեմն որոշ է: Պարկերը առաջինէն կը մտցուէին և վերջինէն դուրս կը հանուէին:

— Բայց...:

— Տարասուսելու բան չկայ, հարիւրապետ. ի՞նչպէս կուզէք որ այլապէս ըլլայ: Մարդ սխալ

գործած կ'ըլլայ, երբ կ'ընտրուէ թիւններ կը ստեղծէ:

Թէրաս բարձրացան: Տօն Լուի լուսամուտին մօտ կեցաւ ու քննեց շրջակաները: Մատենադարանին պատուհաններէն չորս մէթր անդին, կլոր աւազան մը կար, կեդրոնը ունենալով տղու մը արձանիկը, որ ջուր կը ցայտէր:

Տօն Լուի մօտեցաւ, աւազանը քննեց, և ծռելով հասաւ արձանիկին մօտ զոր ինք իր վրայ դարձուց աջէն դէպի ձախ: Պատուանդանը միեւնոյն ատեն դարձաւ մէկ քառորդ շրջանակի մեծութեամբ:

— Հասկցայ, ըսաւ տօն Լուի ոտքի ելլելով: Աւազանը պիտի պարպուի:

Արդարեւ, ջուրը իջաւ ու աւազանին խորը տեսնեցաւ: Տօն Լուի վար իջաւ և կծկտեցաւ: Ներքին պատը ծածկուած էր մարմարէ մօզաիքով, որ ճերմակ ու կարմիր լայն նկարներ ունէր: Այդ նկարներէն մէկուն մէջտեղը օղակ մը կ'ընդելուզէր զոր տօն Լուի վերցուց ու քաշեց: Նկարներով ծածկուած մասը տեղի տուաւ, երեսունըհինգ սանթիմէթր բարձրութեամբ և քանոնիսկ սանթիմէթր լայնութեամբ ծակ մը բացուելով: Տօն Լուի հաստատական շեշտով մը ըսաւ.

— Տոպրակները ասկէ կ'ուղարկուէին: Երկրորդ կայան մըն ալ կայ: Միեւնոյն կերպով կ'ուղարկէին կեռի մը միջոցաւ, որ երկաթէ թելի մը վրայ կը սահէր: Ահա՛, խողովակին վերեւ կը գտնուի երկաթէ թելը:

— Բայց չն՞ք կրնար հետեւիլ այդ երկաթէ թելին:

— Ոչ: Միայն կը բաւէ հասկնալ թէ ո՛ւր կը յանգի ան: Տան հետ ուղղահայեաց գիծով հետեւեցէք պատին, մինչեւ պարտէզին ծայրը: Հոն, քիչ մը բարձր ծառի մը մէկ ճիւղը կտրեցէք: Ոչ, գոհնէն դուրս ելլելու է: Դրան բանալին քովերնիդ է: Տէք ինծի:

Բաթրիս բանալին տուաւ. յետոյ քարափը եղերող պատին քով գնաց:

— Քիչ մը աւելի աջակողմ, ըսաւ տօն Լուի: Քիչ մըն ալ: Հիմա սպասեցէք:

Տօն Լուի քարափ ուղղեցաւ և պատին միւս կողմէն գոչեց.

— Հո՞տ էք, հարիւրապետ:

— Այո՛:

— Ձեր ծառի ճիւղը այնպէս տնկեցէք որ հոսկէ կարենամ տեսնել: Հրաշալի՛ է:

Տօն Լուի քարափէն անցաւ, իր հետ ունենալով Բաթրիսը: Սէնի երկայնքը փոքր շոգենաւեր կային, ապրանքներու փոխադրութեան համար: Քարափին այն տեղը ուր Բաթրիս և տօն Լուի վար կ'իջնէին սանդուխի մը աստիճաններէն, նաւագործարաններ կային: Գործարան մը մտան, որ պատերազմէն ի վեր լքուած ըլլալու էր: Անօգուտ շինուածանիւթերուն մէջ կը տեսնուէին մանրաքարերու և ազիւսներու դէզեր, կտորած ապակիներով խճիթ մը: Գերանի մը վրայ կը տեսնուէր սա արձանագրութիւնը. «Նաւագործարան Պէրթու»:

Տօն Լուի յառաջացաւ երեք չորս մէթր բարձր պատի մը երկայնքը, որուն վերեւ քարափը

թէրասի ձև առած էր: Կիտովին ծածկուած էր աւազով. պատին մէջ կը տեսնուէին երկաթէ վանդակապատի մը ձողերը: Տախտակներով ամրացած աւազը կը ծածկէր վարի մասը:

Տօն Լուի վանդակապատը բացաւ և կատակելով ըսաւ.

— Դիտած էք որ ո՛չ մէկ դուռ դոց չըլլար իմ առջեւ...: Յուսանք որ այս դուռն ալ բաց պիտի ըլլայ:

Այդ ենթացողութիւնը հատատեցաւ: Երկուքը միասին մտան այն խորշերէն մէկը, ուր գործաւորները կը պահէին իրենց գործիները:

— Մինչեւ հիմա անտովոր բան մը չկայ, մրմնջեց տօն Լուի. ելեկտրական լամբար մը վառելով: Դոյլեր, բահեր, ձեռնասայլեր, սանդուխ մը կան...: Ա՛հ. նեղ դժի համար երկաթէ ձողեր կան եղեր: Հարիւրապետ, մաքրե՛նք խորը:

Գետնին հաւասար, ու վանդակապատին դիմաց, ուղղանկիւն ծակ մը կար, աւազանին համանման: Վերը կը նշմարէր երկաթէ թելը: Կեռեր կախուած էին հոն: Տօն Լուի բացատրութիւններ տուաւ.

— Տոպրակերը հոս հասնելէն յետոյ՝ սա անիւնը գտնուող փոքր վակոններու մէջ կը նետուէին: Վակոններու պարունակութիւնը, պիչեր ատեն, փոքր շոգենաւերու մէջ կը պարպուէր... Պասքիլի պարզ շարժում մըն էր:

— Ուրե՞մն:

— Ուրեմն Ֆրանսայի ոսկին հոսկէ կ'ուղարկուէր արտասահման, չեմ գիտեր ո՛ւր:

— Կը կարծէ՞ք որ վերջին հազար ութը հարիւր տոսպրակերն ալ դրկեամ ըլլան:

— Կը վախնամ որ այնպէս ըլլայ:

— Ըսել է ո՞ւր միացինք:

Տօն Լուի սկսաւ խորհիլ: Բաթրիս յուսախար եղած էր, բայց կ'զարմանար այդ մարդուն ճարտարութեան վրայ, որ յաջողած էր կծիկին մէկ մասը քակել: Ուստի մրմնջեց.

— Ճշմարիտ հրաշք մըն է: Ինչպէ՞ս կրցիք երեւան հանել:

Տօն Լուի առանց բառ մը արտաբերելու, գրպանէն հանեց «Պէնժամէն Ֆրանքլինի յիշատակները» անուն գիրքը, ու նշան ըրաւ որ կարգայ մատնանշած տողերը: Լուի Ժ.Պ. թագաւորութեան վերջին տարիներուն մէջ գրեւոր այդ տողերը կ'ըսէին.

«Ամէն որ Բասի գիւղը կերթանք, որ բնակարանիս մօտէ, և ուր հիանալի պարտէզո մը ջուր կառնեն: Հոն ամէն կողմ կը հոսին վտակները և շատրանները, լաւ տեղաւորեւած խողովակներու միջոցաւ: Դիտնալով որ մեքենական գեղեցիկ բաներու սիրահար եմ, ինծի ցոյց տւին այն աւազանը ուր հաւաքեւած են բոլոր ջուրերը: Կը բաւէ շրջանակին մէկ քառորդը դարձնել զէպի ձախ, զէպի մարմարէ փոքր մարդ մը, որ յէսզի բոլոր ջուրը վազէ ուղիղ գծով, մինչև Սէն, պատին մէջ բացեւած խողովակի մը միջոցաւ:

Բաթրիս գոցեց գիրքը, ու տօն Լուի բացատրութիւն տուաւ.

— Անշուշտ, անկէ ի վեր իրերը փախեւած են էսարէս պէյի

պատճառաւ: Ջուրը այլապէս կը վազէ, ու խողովակը կը ծառայէր ոսկիի հոսումին: Գեան ալ պզտիկցած է: Գարափներ շինեւած են, որոնց վրայէն կ'անցնին ջուրի ուղիները: Հարիւրապետս, ինչպէս կը տեսնէք, այս ամէնը դիւրին էր երեւան հանել այս գրքին տեղեկութիւններուն վրայ հիմնուելով: Այս գիրքը դիպուածաւ գտայ Սիմէօնի սենեակին մէջ, ու գրպանս դրի, հետաքրքրելով թէ ինչո՞ւ կը կարդար զայն:

— Այսպէս երեւան հանած ըլլալու է էսարէս պէյի գաղտնիքը զոր կ'անգիտանար: Սիմէօն իր տիրոջ թուղթերուն մէջ գտած ըլլալու է գիրքը: Դուք ալ այնպէս չէ՞ք կարծեր:

Տօն Լուի Բէրէննա չպատասխանեց: Գետը կը զիտէր. հոն քարափներուն երկայնքը, գործարանէն քիչ մը հեռու, խարսխած էր փոքր նաւ մը, ուր մարդ չէր տեսնուեր: Բայց ծուխի բարակ ցայտք մը դուրս կ'ելլէր ծխնելոյզէն: Լա Նօնշալանք Թրոռա կը կոչէր այդ նաւը:

— Երթանք տեսնենք, ըսաւ տօն Լուի:

Նաւը մտան սանդուխէ մը որ զիրենք առաջնորդեց տեսակ մը խցիկ. ան իբր սենեակ ու խոհանոց կը ծառայէր: Կայտառ և լայնիրան, սեւ ու գանդուռ մազերով ու անմազ դէմքով մարդ մըն էր: Ազոտտ հագուստ մը կը կրէր:

Տօն Լուի քսան ֆրանքնոց մը երկարեց մարդուն, որ իսկոյն առաւ զայն.

— Ընկե՛ր, այս օրերս փոքր

նաւ մը տեսա՞ր Պէրթու գործարանին առջեւ:

— Այո՛, մօթէրաչարժ նաւ մը, որ երէկ մեկնեցաւ:

— Սնունը ի՞նչ է:

— Պէր Էյիւն: Հոն բնակող մտրդիկը, երկու այրեր և կին մը, օտարական, կը խօսակցէին չեմ գիտեր ի՞նչ լեզուով, կարծեմ թէ անգլիերէն կամ ֆրանսերէն լեզուով:

— Պէրթու նաւագործարանը չաշխատի՞ր:

— Ոչ, գործատէրը և գործավարները զինուորագրեւած են...: Ամէն մարդ զինուոր կ'ըլլայ, նոյն իսկ ես: Հրաւերի կը սպասեմ, թէ և սիրտս հիւանդ ըլլայ:

— Ի՞նչ կ'ընեն այս նաւուն մէջ, քանի որ չեն աշխատիր նաւագործարանին մէջ:

— Չեմ գիտեր: Սակայն ամ-

բողջ գիշերը աշխատեցան, երկաթէ զիծեր հանեցին քարափին վրայ. կը լսէի որ վակօններուն մէջ բան մը կը բեռնէին: Յետոյ այդուն, ճամբայ կը հանէին:

— Ուր կ'երթային:

— Մանթի կողմէ գեանի վար կիջեցնէին:

— Շնորհակալ եմ, ընկեր: Ատիկա կ'ուզէի գիտնալ:

Տասը վայրկեան յետոյ՝ էսարէս պէյի բնակարանը դառնալով Բաթրիս ու տօն Լուի հոն կը գտնէին վարիչը այն օթօմօպիլին ուր Սիմէօն Տիօմօքիս նստած էր, տօն Լուիի հանդիպելէ յետոյ: Սիմէօն օթօմօպիլով Սէն-Լազար կայարանը երթալով տոմսակ առած էր:

— Ո՞ւր գնաց ան, հարցուց տօն Լուի:

— Մանթ, պատասխանեց օթօմօպիլին վարիչը:

ԺԳ.

“ՊԵՆ ԷԼԷՆ”

— Ամէն ինչ իրարու կը համապատասխանէ, յարեց Բաթրիս, ինչպէս Պ. Տէմալիօնի եղած ազդարարութիւնը թէ ոսկիները զրկեւած էին, գիշերը արագօրէն կատարեւած աշխատութիւնը նաւուն մարդոց կողմէ, որոնք օտարական էին, ու նաւուն բռնած ուղղութիւնը: Հաւանական է որ, նկուզին և խորշին միջև թաքստոց մը կայ, ուր ոսկին կը պահուէր, եթէ երբեք ոսկիի տոսպրակ-

ները իրարու հետեւ կախեւած ըլլային ստորերկրեայ ճամբուն մէջ: Կարելորը սա է թէ Պէր Էյիւն պատեհ առիթին կը սպասէ՞ր հոն, անկիւն մը կծկաւ: Ասկէ առաջ, իսարէս պէյ ազդանշան կուտար կայծերու անձրեւով, զոր տեսայ: Այս անգամ ձերուկ Սիմէօն կը շարունակէ անոր գործը, անշուշտ իր հաշիւին, իմաց տալով նաւագրներուն, որոնք Ռուանի ու Հավրի կողմէն փախցուցած են ոսկիները,

ուր նաւմը դէպի արեւելք պիտի փոխադրէ զանոնք: Իսկիները և աւազակը պիտի անհետանան, այնպէս չէ՞:

Տօն Լուի համամիտ գտնուելով յայտարարեց.

— Լա՛ւ, հոն պիտի երթամ: Տեղներէք ի՞նչ պիտի ըլլայ...:

Ու շօֆէօրին դառնալով, ըսաւ.

— Կայան գնա՛ և օթօժօպիլը բե՛ր: Կ'ուզեմ Մանթ դտնելի մէկ ժամ չանցած: Գալով ձեզի, հարիւրապետս...:

— Ձեզի կ'ընկերանամ:

— Ո՞վ պիտի պահպանէ...:

— Քոյր Քօրալի՛ն: Արդեօք վտանգի՞ մատնած է: Հիմա ոչ ոք չի կրնար յարձակում դործել անոր վրայ: Սիմէօնի փորձը ձախողեցաւ, ու ան իր անձնական ապահովութեան և իր ոսկիի տպարակներուն վրայ միայն կը խորհի:

— Կը պնդէ՞ք:

— Բացարձակապէս:

— Թերեւս կը սխալիք: Բայց վերջապէս ձեր դիտնալիք բանն է: Սակայն նախզուշութիւն մը հարկաւոր է...:

Եւ Պօնը: Կանչեց, որ ներս մտաւ: Ան երկի դած պաշտանք մը ունէր տօն Լուիի նկատմամբ:

— Եւ Պօն, վիճակդ լաւ է, վերքդ գոցած է, յողնութիւն չես զգար, այնպէս չէ՞: Ուստի ինձի հետեւէ:

Մինչեւ քարտի առաջնորդեց զայն, Պէրթուի նաւագործարանէն քիչ մը հեռու, ըսելով.

— Այս իրիկուն, ժամը իննէն սկսեալ, պահակութիւն պիտի ընես այս նստարանին վրայ: Ու-

տելիք և խմելիք պիտի տանիս հետդ, ու մասնաւորաբար պիտի հսկես անցած դարձածին վրայ: Թերեւս բան մը չպիտի պատահի:

Հոգ չէ, դուն տեղէդ չպիտի շարժիս մինչեւ որ դամ... Եթէ երբեք բան մը պատահի՛ պարագային համեմատ կը գործես: Ամենէն աւելի կասկածէ՛ Սիմէօնէն: Ան վիրաւորեց քեզ, եթէ նշմարես զայն, փաթթէ անոր ու հոս բեր: Բայց մի՛ սղաններ զայն: Կատակ չընես: Ձեմ ուզեր որ ինձի յանձնես դիակ մը, այլ կենդանի մարդ մը: Հասկըցա՞ր, Եւ Պօն:

Բաթրիս մտաւանջւած, հարցուց.

— Այս կողմէն վախ մը ունի՞ք: Հաւանական չէ, քանի որ Սիմէօն մեկնած է:

— Հարիւրապետս, երբ լաւ գորավար մը կը ձեռնարկէ թըշնամին հետապնդելու, զանց չընէր պահակաօրքեր թողուլ իր նւածած հողամասերուն մէջ: Անտարակոյս, Պէրթու գործարանը մեր հակառակորդին էն կարեւոր միացման կէտերէն մէկն է: Կը հսկեմ անոր վրայ:

Տօն Լուի լուրջ զգուշութիւններ ձեռք առաւ քոյր Քօրալիի նկատմամբ: Մանկամարդ կիներ շատ յողմած ըլլալուն, հանգիստի ու խնամքի պէտք ունէր: Օթօժօպիլին մէջ գրին քոյր Քօրալին, ու Բարիզի ծայրը տարին սրարչաւ, որպէս զի հաւանական լրտեսութեան մը առաջը առնելի, Յետոյ Մայիօ ծառուղիի շէնքի յարակից մասը առաջնորդեցին, ուր Բաթրիս նկող կնոջ յանձնեց քոյր Քօրալին և

պատուիրեց որ բժիշկը դարձանէ զայն: Արգիււած էր օտարականներուն այցելութիւն տալ մանկամարդ կնոջ:

Քոյր Քօրալի ոչ մէկ նամակի չպիտի կրնար պատասխանել, եթէ երբեք այդ նամակը ստորագրւած չըլլար հարիւրապետ Բաթրիսի կողմէ:

Ժամը իննին օթօժօպիլը կը սուրբար Սէն-ժէրմէնի և Մանթի ճամբուն վրայ: Բաթրիս, օթօժօպիլին խօրը, տօն Լուիի մօտ նստած, յաղթութեան զմայլանքի մէջ թաղւած, ենթադրութիւններ կ'ընէր, որոնք անժընտելի ստուգութիւններ կը թըւէին իրեն: Սակայն կարգ մը կէտեր մօտ ի կերեւային, որոնց մասին կ'ուզէր Արսէն Լիւբէնի կարծիքը ստանալ:

— Ինձի համար երկու բաներ անհասկնալի կը մնան: Նախ, ո՞վ սպաննւած է հարեւա պէյի կողմէ, Ապրիլ 14ին, առաւան ժամը 7ը 19 անցած: Հողեւարքի հօքնդիւններ լսեցի: Ո՞վ էր մեռնողը, և ի՞նչ եղած էր դիակը:

Տօն Լուի չպատասխանեց, ու Բաթրիս յարեց.

— Սիմէօնի ընթացքը տարօրինակ է: Մարդ մը որ իր ամբողջ կեանքը նւիրած է միակ նպատակի մը, այն է իր բարեկամին՝ Պէլլալի վրէժը լուծելու, ու միեւնոյն ատեն իմ և Քօրալիի երջանկութիւնը ապահովելու: Եւ ահա, որին մէկը, իր թշնամին հարեւա պէյ կը մեռնի, ու ինք կը սկսի մեղ հալածել, մինչեւ իսկ գործադրելով այն անելի դաւադրութիւնը, որուն զո՞ւ պացած են մեր ծնողքները: Արդեօք

ընչաքաղցութեան բնագրը արթնցած է իր մէջ: Պարկեշտ մարդը աւազակ զարձած է միթէ:

Տօն Լուի լուռ մնաց դարձեալ: Սակայն Բաթրիս կ'ուզէր ամէն առեղծւած լուծել: Ուստի վերջին փորձ մը ընելու համար, հարցուց.

— Ոսկիէ եռանկիւնն ալ գազանիք մըն է, քանի որ այս ամենուն մէջ եռանկիւնի հետք չկայ: Դուք ի՞նչ կարծիք ունիք այդ մասին:

Տօն Լուի դարձեալ չպատասխանեց:

— Բայց ի՞նչ կայ: Պատասխան չէք տար: Մտահոգ կ'երեւաք:

— Թերեւս, ըսաւ տօն Լուի:

— Ի՞նչ պատճառով:

— Պատճառ չկայ: Մեր գործը լաւ կ'ընթանայ: Հարիւրապետս, անկեղծ համակրութիւն մը ունիմ ձեր նկատմամբ, բայց պէտք է խոստովանիմ թէ հարց մը կայ որ մտածումներուս վրայ կը տիրապետէ, ու նպատակ մը կայ որուն կը ձգտին բոլոր ջանքերս: Փախցւած ոսկիի հետապնդումն է ատշեմ ուզեր որ մեր ձեռքէն ելլէ այդ դրամը: Ձեր կողմէ յաջողեցայ, բայց միւս կողմէ՛ ոչ: Դուք ողջ առողջ ազատեցաք, սակայն ես ձեռք չանցուցի հազար ութը հարիւր տպարակները: ձեռք անցնելու եմ զանոնք:

— Այդ դրամները ձեռք պիտի բերէք: քանի որ դիտեք անոնց ո՛ւր ըլլալը:

— Եթէ աչքերուս առջեւ փուած ըլլան...: Մինչեւ այն ատեն անձանօթին առջեւ կը գտնուինք:

Մանթի մէջ իսկոյն իմացան որ ծերուկ Սիմէօնի կերպարանքով մէկը Օթէլ տէ Թրուա զ'Ամբրէօր իջեւանած էր ու այդ պահուն կը քնանար երրորդ յարկի մը սենեակը: Տօն Լուի գետնա-յարկը հաստատուեցաւ, իսկ Բաթրիս կրան Օթէլ գնաց:

Բաթրիս ուշ արթնցաւ հետեւեալ օրը: Տօն Լուի հեռաձայնով իմաց տուաւ որ Սիմէօն նամակատուն հանդիպելէն յետոյ՝ Սէնի եղերքը, կայարան գացած էր, իր հետ ունենալով բաւական վայելուչ կին մը, որուն դէմքը ծածկւած էր թանձր քօղով մը: Երկուքն ալ կը ճաշէին երրորդ յարկի սենեակին մէջ:

Ժամը չորսին, տօն Լուի հարիւրապետէն կը խնդրէր որ ընդհուպ իր մօտ դար, գետին դիմաց գանուղ սրճարան մը, քաղաքին մուտքին վրայ: Հոն Բաթրիս տեսաւ որ Սիմէօն քարտիկն վրայ կը պտտէր, ձեռքերը ետին կապած՝ թախառաչըրջիկ մարդու մը պէս:

— Քթապահ, ակնոց, միշտ նոյնգգեստաւորուժեկերպարանքը ունի, ըսաւ Բաթրիս: Անփոյթ կը ձեւանայ, բայց իր աչքերը ուղղւած են դէպի այն կողմը, ուրկէ Պիլ-Էյիկ պիտի հասնի:

— Ահա՛, կինը, մրմնջեց տօն Լուի:

— Ա՞ն է, ըսաւ Բաթրիս: Փողոցին մէջ երկու-երեք անգամ տեսած եմ զայն:

ան կարգաց իսկոյն: Յետոյ պահ մը խօսեցան, ու սրճարանին անջեւէն անցնելով քիչ մը հեռու կեցան:

Սիմէօն քանի մը տող գրելով թուղթի մը վրայ, ընկերուհիին յանձնեց: Այս վերջինը քաղաք վերադարձաւ, իսկ Սիմէօն շարունակեց գետին երկայնքը յառաջանալ:

— Գուք հոս պիտի մնաք, հարիւրապետ:

— Սակայն թշնամին զգուշանալու երեւոյթ չունի, քանի որ չի վերադառնար, դիտել տուաւ Բաթրիս:

— Պէտք է խոհեմ՝ ըլլալ: Մե՛ղք որ չհասկցանք Սիմէօնի գրած նամակին ի՛նչ ըլլալը:

— Կնոջ ետեւէն երթա՞մ:

— Ոչ, ձեր ուժէն վեր է: Ես կրնամ... Բաթրիս սկսաւ մեքենաբար դիտել գետակին վրայ յառաջացող նաւերուն անուները: Տօն Լուիի մեկնումէն կէս ժամ յետոյ, մօթէօրաչարժ նաւու մը համաչափ աղմուկը լսեց:

Երբ այդ նաւը Բաթրիսի անջեւէն անցաւ, ան յուզումով կարգաց Պիլ-Էյիկ անունը: Նաւը բաւական արագօրէն կը յառաջանար կանոնաւոր պայթուիներու աղմուկով: Զուրբին մէջ բաւական ընկզմած էր, թէեւ բեռ ունենալու երեւոյթ չունէր: Բաթրիս նշմարեց որ երկու նաւազներ նստած՝ կը ծխէին: Նաւուն ետին կապուած նաւակ մը կը ծփար: Բաթրիս ժամ մը սպասելէ յետոյ՝ տօն Լուի վերադարձաւ:

— Հոսկէ երկու քիլոմէթր

անդին, իրենց նաւակը քակած ու Սիմէօնը փնտռելու եկած են:

— Ուրեմն անոնց հետ մեկնած է:

— Այո՛:

— Ստանց կասկած ունենալով:

— Քիչ մը շատ հարցում կ'ընէք ինձի:

— Ի՛նչ փոյթ, յաղթանակը շահեցանք: Օթօմպիլով պիտի հասնինք ետեւէն, Վէրնօնի մէջ զինուորական իշխանութեանց իմաց տալու համար, որպէս զի ձերբակալին անոնք ու ոսկիները գրաււին:

— Ի՛նչ զոյգէս:

— Կը վախնա՞ք որ երեք հարիւր միլիոնը հետս կը տանիմ: Գրպան պահելիք ծրար մը չէ:

— Ի՛նչ մտադրութիւն ունիք այդ մասին:

— Ներեցէք որ մինչև վաղը յետաձգեմ պատասխանս: Հիմա նաւը գտնելու է:

Օթէլ վերադարձան, ու օթօմպիլով դացին Վէրնօն: Այն պահուն երբ Թօնի հասան, Պիլ-Էյիկն կը մտնէր հոն, որուն գաղաթը կը գտնէր Թօն-Կիւյօն, դէպի Պօնիէրի ուղղութեամբ: Նաւը երեք ժամէն կրցաւ կտրել այդ ճամբան, մինչ օթօմպիլը բլուրին վրայէն անցնելով երեք քառորդէն Պօնիէր կը հասնէր: Գիւղէն անցնելով պանդօկի մը առջև կեցան, ու տօն Լուի օթօմպիլի վարիչին ըսաւ:

— Եթէ կէս դիշերին չպիտի կրնանք Բարիզ գանել, ի՞նչ անելու վերադարձիր:

Բաթրիս ու տօն Լուի գետին եղերքը պտտեցան մէկ քառորդ

ժամ: Վերջապէս տօն Լուի գտաւ ցիցի կապուած նաւակ մը, վիլլայէն քիչ մը հեռու, որուն փեղկերը զոց էին: Նաւակին չղթանքակեց, Իրիկան ժամը եօթն էր: Մութը կը կօխէր արագօրէն, բայց պայծառ լուսին մը կը լուսաւորէր ամէն կողմ:

— Նախ պիտի սպասենք նաւուն, որ ժամը 10ին հոս պիտի հասնի: Նաւուն պիտի հրամայենք որ կանգ առնէ: Զեր համազգեստը տեսնելուն պէս, պիտի կեցնեն նաւը: Յետոյ ներս կը մտնենք:

— Եթէ չհնազանդին:

— Անոնք երեք հոգի են, իսկ մենք՝ երկու: Ուրեմն...:

— Յետոյ:

— Այդ երկուքը Սիմէօնի մարդիկն են, բայց անոնք չեն գիտեր Սիմէօնի արարքները և նաւուն բեռը: Սիմէօն անշարժութեան դատաստարուելէ յետոյ՝ առատօրէն պիտի վարձատրեմ այդ երկու անձերը, որոնք ուղած տեղս պիտի առաջնորդեն: Պէտք է ըսեմ որ այդ նաւը պիտի գործածեմ այնպէս ինչպէս հաճոյ կը թւի ինձի: Անոր բեռը ուղած ատենս պիտի յանձնեմ: Իմ աւարս է ան: Ոչ ոք ինձի չափ իրաւունք ունի անոր վրայ:

— Սակայն չեմ կրնար ընդունիլ այդպիսի դեր մը, ըսաւ սպան:

— Այն ատեն պատուի իօսք տէք որ ձեզի չպատկանող գաղտնիք մը ուրիշի չպիտի հաղորդէք: Գիշեր բարի: Ես առանձին նաւ կ'երթամ: Զեր գործերովը զբաղեցէք դուք: Անմիջական պատասխան չեմ ուզեր ձեռնէ: Ատեն

ունիք խորհելու և որոշում առ-
լու ձեռ շահերուն ու խղճմտու-
թեան համաձայն: Եթէ տան ու-
նենամ, պիտի քնանամ:

Ու տոն Լուի վերարկուին մէջ
փաթթելով նաւակ նետուցաւ
ու հոն պառկեցաւ:

Բաթրիս բուռն ճիգ մը ըրած
էր, իր գայրոյթը զսպելու հա-
մար: Տօն Լուիի հեզնական հան-
դարտութիւնը և քաղաքավար
չեշտը գրգռած էին իր ջիղերը,
մանաւանդ որ այդ օտարական
մարդուն ազդեցութիւնը կը կը-
րէր, և չէր կրնար առանց անոր
աջակցութեան գործել: Բայց
կարելի էր մտանալ որ տօն Լուի
ազատած էր զինքը ու Քօրա-
լին:

Ժամերը կը սահէին: Բախ-
տախտիկը կը քնանար: Բաթրիս
կը վարանէր ու կը ջանար ծրա-
դիր մը պատրաստել, որպէս զի
այդ անողոք թշնամին չտիրա-
նար անազին գանձին:

Երբ մօթէօրաչարժ նաւուն
ձայնը լսեցաւ հեռուէն, տօն
Լուի արթնցաւ ու իր մօտ գտաւ
Բաթրիսը: Ժամը տասներմէկն էր:
«Պէլ-էլէն» կը մօտենար հետպնտէ:
Տօն Լուի թիերը ձեռք առած էր
և ուժգնօրէն կը քայլէր, զետին
մէջտեղը հասնելու համար:

Յանկարծ հեռուն տեսնուցաւ
սեւ դանդաւ մը, որ ձերմակ
լոյսին մէջ կը լողար: Տասներհինգ
վայրկեանէն հոն պիտի գտնուէր
նաւը:

— Կուզէ՞ք որ ձեզի օգնեմ, հո-
սանքը ձեզ կը քշէ, մրմնջեց
Բաթրիս:

— Վաս չունի, ըսաւ տօն
Լուի:

Բաթրիս ապշութեամբ կը
դիտէր որ նաւակը դէպի եզերք
կը յառաջանար:

— Ի՞նչ, կ'ունի կը դարձնէ՞ք
անոր... Ետ կը կենա՞ք...:
Ձեմ հասկնար: Երեքի դէմ երկու
հողի չէ՞նք միթէ: Կը վախնա՞ք
արդեօք:

Տօն Լուի ցամաք ցատկեց,
ու Բաթրիսի երկարեց ձեռքը:
Այս վերջինը հարցուց.

— Բացատրութիւն պիտի տա՞ք
ինձի:

— Շատ երկար է: Հարցում
մը ընեմ ձեզի. ձեր հետադառու-
թիւններուն ատեն նշմարեցի՞ք
Պեմամեկ Յրանկիմի Յիշատակ-
ները զոր ձերուկ Սիմէօնի սեն-
եակը գտայ:

— Կարծեմ թէ ուրիշ գործեր
ունինք տեսնելիք:

— Սօխոզական հարցում է,
հարիւրապետ:

— Այ, հոն չէր գտնուէր այդ
գիրքը:

— Ուրիմն խազի եկանք,
աւելի ճիշդը, խազի եկայ: Ծամ-
բայ ելլենք, հարիւրապետ:

Բաթրիս նաւակին մէջ տեղէն
չէր շարժած: Յախուռն շարժումով
մը ետ հրեց նաւը և թին ձեռք
առաւ, մրմնջելով.

— Կ'երեւայ թէ յաճ-խորդը
ինձի կարեւորութիւն չի տար,
ըսաւ տօն Լուի մտովի:

Ու եզերքէն տասը քայլ հե-
ռու, գոչեց Բաթրիս.

— Եթէ կը վախնաք, առան-
ձին կ'երթամ: Մարդու պէտք
չկայ:

— Հարիւրապետ, ընդհուպ
ձեզի կըսպասեմ պանդոկը:

Բաթրիսի արշաւանքը ոչ մէկ

դժւարութեան հանդիպեցաւ:
Հարիւրապետին արձակած առա-
ջին հրամանին վրայ, նաւը կե-
ցաւ: Բաթրիս ներկայացաւ իր
զինուորական իշխանութեան պաշ-
տօնեայ, Ասոր վայ, երկու նա-
ւազները թոյլ տաին որ հարիւ-
րապետը խուզարկէ նաւը, Բաթ-
րիս հոն չգտաւ ո՛չ Սիմէօնը և ոչ
այ ոսկիի ո եւ է տողրակ: Նա-
ւուն յատակն ալ բան մը չկար:
Կարճ հարցաքննութիւն մը կա-
տարեց.

— Ո՛ւր կ'երթաք:

— Թուան. . . պարենաւորման
վարչութեան կողմէ գրաււած է
նաւը:

— Ծամբան մէկը սուրճ ձեր
նաւուն մէջ:

— Այո՛, Մանթի մէջ:

— Անո՞ւնը:

— Սիմէօն Տիօսօքիս: Անիկա
քիչ մը յետոյ շոգենաւէն
դուրս ելաւ, կառախուժը նըս-
տելու համար:

— Ի՞նչ կ'ուզէր:

— Մեզի վճարել կ'ուզէր:

— Ի՞նչ բանի համար:

— Բանի մը համար զոր երկու
օր առաջ բեցուցած էինք:

— Տուրակներ:

— Ձեռք դիտեր թէ ի՞նչ
տուրակներ են անոնք: Կը բաւէ
որ լաւ կը վճարէին մեզի:

— Ո՛ւր է նաւուն բեռը:

— Անցած դիշեր յանձնեցինք
փոքր նաւի մը, որ Բուստի առ-
ջև հանդիպեցաւ:

— Այդ շոգենաւին անունը
ի՞նչ է:

— Շամուա, վեց նաւազ ու-
նի: Արագօրէն կը սուրար: Հի-
մա Թուան հասած ըլլալու է:

Սիմէօն Տիօսօքիս նաւուն ետե-
ւէն պիտի հասնի:

— Ո՛րքա՞ն ատենէ ի վեր կը
ձանջնաք Սիմէօն Տիօսօքիսը:

— Առաջին անգամ ըլլալով
կը տեսնէինք: Բայց գիտէինք
թէ Պ. Էսարէսի ծառայութեան
մէջ կը գտնուէր ան:

— Պ. Էսարէսի հաշիւն աչ-
խատած էք:

— Մէկ քանի անգամ: Մի-
կնոյն աշխատութիւնը և միեւ-
նոյն ուղեւորութիւնը:

— Ազդանշանի մը միջոցաւ
կը կանչէ՞ք ձեզ:

— Գործարանի հին շրմինէ
մը կը վտռէր:

— Ոսկիի առարակներ կը փո-
խադրէի՞ք միշտ:

— Այո՛, առարակներ, բայց
չէինք գիտեր թէ ի՞նչ է պա-
րունակութիւնը: Լաւ կը վճա-
րէր մեզի:

Բաթրիս ուրիշ բան չհարցուց
ալեւս, նաւակ իջաւ իսկոյն, ե-
զերք հասնելով ցամաք ելաւ ու
տօն Լուին գտաւ սեզանի մը
առջև, ուր ճոխընթրիք մը կար:

— Շուտ ըրէք: Բեռը կը
գտնուի Շամուա անուն շոգենաւի
մը մէջ, որուն ետեւէն կրնանք
հասնիլ Թուանի և Հավրի միջև:

Տօն Լուի ձերմակ թուղթով
պատած ծրար մը երկարեց Բաթ-
րիսի ու ըսաւ.

— Ահա երկու սանտոխչ:
Գիշերը պիտի նեղուինք, կը ցա-
ւիմ որ ինձի պէս չքնացաք:
Բայց մեկնինք: Իմ քովս նստե-
ցէք, հարիւրապետ:

Երկուքնին միասին օթօմօպիլ
նստան: Հաղիւ թէ ձամբայ ե-
լած, Բաթրիս գոչեց:

— Մանթի և Բարիզի ուղ-
ղութեամբ կը յառաջանանք:

— Իմ ուղածս ալ ատ է, ը-
սաւ տօն Լուի:

— Ի՞նչ, Բարի՞զ կ'երթանք:

— Անշուշտ:

— Տարօրինակ բան: Երկու
նաւազներուն յայտարարութիւն-
ները ըսի ձեզի:

— Ձեր նաւազները խաբերայ
են:

— Բայց Շառնուա՞ն:

— Շոգեհաւ մըն է, կը կրկնեմ
որ խաղի եկած ենք: Մերուկ
Սիմէօն շատ վարպետորդի մարդ
է: Այնպիսի ծուղակ մը լարած է
որ մինչեւ կիրք ընկղմեցայ անոր
մէջ: Լաւագոյն կատակն ի կ
սահման մը ունի: Գո՛հ չէք, հա-
րիւրապետս: Պէ՛ղ-Էլիենէն յետոյ
կ'ուղէք Շառնուայի վրայ յարձա-
կիլ: Ձեզի կ'ըսեմ որ Սիմէօն
մենէ երեք-չորս ժամ առաջ Բա-
րիզ հասած է:

Բաթրիս սարսուռ մը զգաց,
լսելով որ Սիմէօն հասած էր
Բարիզ, ուր կը գտնէր նաեւ
Քօրալի:

Տօն Լուի շարունակեց.

— Ա՛հ, թշուառական, աղէկ
խաղ խաղաց: Վարպետի գործ է,
չիտակը: Իմ ժամանումս իմա-
նալով մտովի ըսած է. «Արսէն
Լիւբէն վտանգաւոր մարդ է, և
կարող խնդիրը լուծելու և իր
գրպանը գնելու թէ՛ զիս և թէ՛
ոսկիի տոպրակները: Միակ մի-
ջոց մը կայ՝ օձիքս ազատելու
համար, այն է մղել Արսէն Լիւ-
բէնը, որպէս զի կեղծ հեռքի մը
ետեւէն երթայ, այնպէս ձեւա-
երնելով որ ճշմարտ հեռք մըն
է ան»: Յրանքիկի գործը խայծ

մըն էր, ցոյց տալու համար հեռ-
ք: Բայց հարկ եղած տեղեկու-
թիւնները ստանալէ յետոյ է որ
կորստեան կը մատնւիմ:

— Ուրեմն ո՞վ է այդ մար-
դը...:

— Սիմէօնի մեղսակիցն է:
Ան կը խորհէր որ իրեն հետեւող
պիտի ըլլար մինչեւ Սէե-Լազարի
կայարանը: Այսպէս երկու ան-
գամ ինծի ցոյց կը տուէր Ման-
թի ուղղութիւնը: Ուրեմն խաղը
յաջողած է: Միլիոնները անհե-
տացած են, ինչպէս նաև Սի-
մէօն: Մեզի կը մնայ ետ կենալ
հետազօտութիւններէ: Մարդուն
նպատակը ատ էր, և նպա-
տակին պիտի հասնէր, եթէ...

Օթօն կը սուրար: Մերթ կանգ
կ'առնէր, անցաթուղթերը ցոյց
տալու համար երկրագահ զին-
ւորներուն: Յետոյ կը շարունա-
կէր խօս վաղքը:

— Ի՞նչ բան անոր հետքը ցոյց
կուտայ ձեզի:

— Այդ կնոջ ներկայութիւնը
Մանթի մէջ, թէև տարտամ նշան
մը ըլլայ, Այն տարօրինակ ու
անբացատրելի տպաւորութիւնը
ունեցայ որ Նօնշալանք նաւուն
մէջ մեզի տեղեկութիւններ տը-
ւող անձը ծպտուած կին մըն էր:
Հիմա միեւնոյն տպաւորութիւնը
արթնցաւ իմ մէջս: Մանթի կնոջ
և այդ մարդուն միջև նմանու-
թիւն մը կը տեսնեմ: Բայց ո՞վ է
այդ կինը:

— Կրէկուարն է, անտարա-
կոյս:

— Հէ՛, ի՞նչ ըսիք, Կրէկուա՞ր:

— Այո՛, քանի որ այդ Կրէ-
կուարը կին մըն է:

— Ինչե՛ր կ'ըսէք:

— Յիշեցէք ինչ որ ինծի ըսին
մեղսակիցները, այն օրը երբ գա-
նոնք ձերբակալելու սրճարանի
մը թէրասին վրայ:

— Բայց ձեր օրագիրը բան մը
չըսեր այդ մասին:

— Մոռցայ այդ մանրամաս-
նութիւնը գրելու:

— Հարիւրապետ, շատ կա-
րեւոր է այդ մանրամասնու-
թիւնը: Եթէ գիտնայի, այն ա-
տեն պիտի կռահէի թէ այդ նա-
ւաւարը Կրէկուարն էր, և ամ-
բողջ գէշեր մը ի դուր չպիտի
կորսնց էինք:

Տօն Լուի ուրախ էր, մինչ
Բաթրիսի դէմքը մռայլ երեւոյթ
մը կ'առնէր: Տօն Լուի յարեց.

— Աւելի լաւ, Կուրը ծանրա-
կըչիւ հանգամանք մը կը ստա-
նայ: Բայց պիտի յաղթենք: Ա-
մէն ինչ պիտի պարզուի... Ոսկիէ
եռանկիւնն իսկ գաղտնի չպիտի
մնայ, Ա՛հ, չեմ յաւակնիր թան-
կագին մետաղէ գեղեցիկ եռան-
կիւն մը բերելու ձեզի: Բաւերէն
չլանալու չէ: Թերեւս ոսկիի
տոպրակներուն մէկ երկրաչա-
փական շարուածքն է... կամ թէ
եռանկիւնն ձեւով դիզուած մըն է
... կամ թէ հողին մէջ փորուած
այդ ձեւով ծակ մը: Ի՛նչ փոյթ,
ոսկիի տոպրակները մերը պիտի
ըլլան: Այն ատեն Բաթրիս ու
Քօրալի քաղաքապետին պիտի
ներկայանան, ամուսնական օրհ-
նութիւնը պիտի ստանան ու շատ
գաւակներ պիտի ունենան:

Բարիզի դռներուն առջև հա-
սան: Բաթրիս, որ հետզհետէ
մտահոգ կը դառնար, հարցուց.

— Ուրեմն վախնալիք բան
չկայ:

— Օ՛հ, օ՛հ, չեմ ըսեր թէ
տոսմը վերջացած է: Դաւադրու-
թեան երրորդ արարուածէն յետոյ,
չորրորդ ու թերեւս հինգերորդ
արարուած մըն ալ ըլլայ. թշնա-
մին զինաթափ չէ եղած տակա-
ւին:

Քարափներուն երկայնքը կը
յառաջանային:

— Վար ի՞նչենք, ըսաւ տօն
Լուի:

Մէկ յանի անգամ սուրեց:

— Ոչ մէկ պատասխան: Եւ-
Պօն հոն չէ: Պայքարը սկսած է:

— Բայց Քօրալին...:

— Ինչո՞ւ կը վախնաս անոր
մասին: Սիմէօն չի գիտեր հաս-
ցէն:

Պէրթու գործարանին մէջ ու
քարափին վրայ ոչ ոք կար: Բայց
լուսնկային տակ, Նօնշալանք
նաւը կը նշմարէր:

— Օ՛ն, երթանք, ըսաւ տօն
Լուի: Այդ նաւը Կրէկուար անուն
մարդուն սովորական բնակարանը
չէ՞ միթէ: Վերադարձած է ան,
կարծելով թէ Հավրի ճամբուն
վրայ կը գտնուինք: Այնպէս կը յու-
սամ. Ամէն պարագայի մէջ՝ Եւ-
Պօն հոնկէ անցած ըլլալու է,
աղդանշան մը ձգելով: Միա-
սին կուգա՞ք, հարիւրապետ:

— Այո՛, միայն տարօրինակ
վախ մը կը զգամ:

— Ինչէ՛ն:

— Մեր տեսնելիքէն:

— Թերեւս բան մը չպիտի
տեսնենք:

Ամէն ոք վառեց իր գրպանի
լապտերը և բէվոլվէրին բունը
չօչափեց: Նաւ մտան: Սցիկին
դուռը գոց էր:

— Կնկեր, դուռը բացէ՛ք:

Ոչ մէկ պատահան: Ուստի հարկադրեցաւ զժւարաւ խորտակել միաձոյլ զուռը, որ խցիկի զբան մը չէր նմաներ բնաւ:

— Ասոր չէի սպասեր, ըսաւ տօն Լուի սպասելով: Տեսէք, կրէկուար յորջորջւած կինը մեռած կը թփի...:

Երկաթէ փոքր մահճակալի մը վրայ ընկողմանած էր ան, էրիկ մարդու պուզը բացւած, կուրծքը հոլանի: Դէմքը ծայրայեղ սոսկումի արտայայտութիւն մը ունէր: Խցիկին մէջ տիրող անկարգութիւնը ցոյց կուտար թէ կատաղի կուր մղւած էր:

— Ձեմ սխալած: Աւաստիկ իր մօտ կը գտնուին Մանթի մէջ կըրած զգեստները: Բայց ի՞նչ կայ, հարիւրապետ:

Բաթրիս խեղդուկ ճիչ մը արձակելով ըսաւ.

— Հոն... մեր դիմաց... պատուհանին տակ...:

Դետին վրայ նայող փոքր պատուհանի մը ապակիները ջախջախւած էին:

— Արդարեւ, մէկը այդ պատուհանէն վար նետուած ըլլալու է...:

— Այս կապոյտ քօղը հիւանդապանուհիի, Բօրալիի քօղն է, կակաղեց Բաթրիս:

— Անկարելի բան է: Մարդ չի գիտեր անոր հասցէն, ըսաւ տօն Լուի զայրացած: Անոր բան մը գրեցի՞ք, հեռագրեցի՞ք:

— Այո, Մանթի հեռագրեցի:

— Յիմարութիւն ըրեր էք: Ձեմ հաւատար որ ըրած ըլլաք: Մէկը կա՞ր Մանթի նամակատան մէջ:

— Այո՛, կին մը:

— Ո՞ր կինը: Սպաննւածը:

— Այո՛:

— Ձեր գրածը կարդա՞ց:

— Ոչ, բայց երկու անգամ գրեցի հեռագիրը:

— Ու դիպւածաւ գետին նետեցիք առօջին անգամ գրածնիդ: Այսպէս՝ առօջին հանդիպողը ձեռք անցուցած է զայն...:

Բաթրիս հեռանալով յդէպի օթօն կը սուրար արագօրէն:

Կէս ժամ յետոյ, իր ձեռքը երկու հեռագիր բռնած վերադարձաւ: Բօրալիի սեղանին վրայ գտնուած երկու հեռագիրներն էին: Առաջին հեռագիրը կը պարունակէր սա բառերը.

«Ամէն ինչ լաւ կ'ընթանայ... հանդարտեցէք ու զուրս մի ելլէք: Գորովալեց ողջօյններ.— Հարիւրապետ Բարրիս»

Երկրորդ հեռագիրը, Սիմէօնի կողմէ մեզի զրկւած, սապէս գրւած էր.

«Ծանր դէպքեր: Ծրագիրները փոխւած: Կը վերադառնանք: Այս իրիկուան ժամը իննին ձեզի կը պատենք ձեր պարտէզին փոքր դրան առջեւ: Հարիւրապետ Բարրիս»:

Բօրալի այդ երկրորդ հեռագիրը ժամը ութին ստանալուն պէս, մեկնած էր:

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱԾԸ

— Հարիւրապետ, երկու աղւոր սխալներ գործեցիք: Առաջին սխալնիդ սա է որ կրէկուարի կին ըլլալը ինծի իմաց չուիք: Իսկ երկրորդը...:

Բայց տօն Լուի այնքան ընկճւած տեսաւ Բաթրիսը որ չուզեց շարունակել իր ամբաստանագիրը: Ձեռքը անոր ուսին վրայ դնելով ըսաւ.

— Մի՛ յուզւիք, կացութիւնը ձեր կարծածէն նազ գէշ չէ:

— Այդ մարդուն ձեռքէն ազատելու համար, Բօրալի ինքզինքը դուրս նետած է այս պատուհանէն, մրմնջեց Բաթրիս:

— Տիկին Բօրալի ողջ է և Սիմէօնի ձեռքը կը գտնուի:

— Ինչէ՞ն գիտէք: Մնաց որ, այդ մարդուն ձեռքը անցնի՞ կը նշանակէ մահուան սարսափին ենթարկել:

— Մահուան սպանալիքը բրած է, բայց ողջ է ան, եթէ ատենին հասնինք, ու պիտի հասնինք:

— Հետք մը գտած էք:

— Կը կարծէ՞ք որ թեւերս ծալլած նստած ըլլամ: Ինծի պէս փորձառու մարդ մը կէս ժամուան մէջ կարող է լուծելու այս խցիկին առեղծւածը:

— Ուրեմն երթանք, թշնամիին ետեւէն վազենք, զոչեց Բաթրիս:

— Ոչ տակաւին, ըսաւ տօն Լուի, որ կը շարունակէր բան մը փնտռել իր շուրջը: Փաստեր առաջ չպիտի բերեմ, այլ չոր կերպով ձեր առջեւ պիտի պարզեմ մերկ իրականութիւնը:

— Ուրե՞մն:

— Քոյր Բօրալի ժամը իննին գացած է ժամադրութեան: Սիմէօն հոն կը գտնուէր իր մեղսակիցին հետ: Երկուքը միաօին կաշկանդած ու մինչեւ հաս բերած են զայն: Անոնք ապահով կը նկատէին այդ նահանջը, քանի որ մենք չէինք կրցած երեւան հանել ծուղակը: Իրաւ է որ առժամեայ նահանջ մըն էր, և Սիմէօն կը յուսար Բօրալին յանձնել իր մեղսակցին ու վերջնական ապաստանարան մը գտնել: Բայց Եա-Պօն հոն էր բարերախտաբար, ու նստարանին վրայ կը հակէր մութին մէջ: Քարափին վրայէն այդ մարդոց յառաջանալը տեսած ըլլալով ճանչցած է Սիմէօնի քալւածքը: Եա-Պօն խոյն սկսած է հետապնդել, ու նաւուն կամրջակին վրայ ցատկելով հոս հասած է երկու յարձակողներուն հետ: Սոսկալի կը ուրի մը առաջ եկած է այս նեղ սենեակին մէջ, ուր խոր մթնութիւն կը տիրէ: Եա-Պօնը կը ճանչնամ: Ահարկու է այդ պատեմ:

բազաներուն մէջ: Դժբախտաբար Սիմէօն չէ որ կառչած է անոր ձեռքին, այլ այդ կինը: Սիմէօն օգտուած է անկէ: Քոյր Քորալին օձիքը ձեռք ձգած չէ ան: Իր թեւերուն մէջ առնելով սանդուխի աստիճաններուն վրայ նետած է: Յետոյ դուռը փականքով գոցած է երկու կուռղներուն վրայ:

— Կը կարծէ՞ք որ Եա-Պօն և ոչ թէ Սիմէօն սպաննած ըլլայ այդ կինը:

— Անշուշտ, խոչափողին ձեզքըւած ըլլալը ապացոյց է որ Սիմէօն գործած է սպանութիւնը, քանի որ անոր յատուկ է ատ: Միայն չեմ հասկնար որ Եա-Պօն ինչո՞ւ դուռը խորտակած չէ ուսի հարւածով մը, իր հակառակորդը զգետնելէ յետոյ: Կ'ենթադրեմ որ զիրաւորւած ըլլայ ան, որով չէ կրցած հարկ եղած օգնութիւնը ընծայել: Կ'ենթադրեմ որ կինը մեռած չէ իսկոյն և Սիմէօնի դէմ խօսած է, զինքը լքած ըլլալուն համար, փոխանակ պաշտպանելու: Իրողութիւնը սա է որ Եա-Պօն շախջախած է ապակիները:

— Սէն գետին մէջ նետելու համար վիրաւորւած մէկ թեւով, առարկեց Բաթրիս:

— Երբեք: Սա պատուհանը եզերք մը ունի, ուրկէ կրնայ հեռացած ըլլալ ան:

— Բայց Սիմէօնին վրայ տասը քսան վայրկեան յապաղում ունեցած է:

— Ի՛նչ փոյթ, եթէ այդ կինը ատեն ունեցած է մեռնելէ առաջ յայտնելու թէ ո՛ւր կ'ապաստանէր Սիմէօն:

— Ի՞նչպէս հասկնալու է ատիկա:

— Երեւան հանեցի ո՛ւր ըլլալը:

— Հո՞ս:

— Այդ պահուն է որ կինը խցիկին մէջ տեղ մը ցոյց տուած է, ուր կը գտնուէր սա այցելուութիւնը, որ հասցէ մը կը պարունակէ: Եա-Պօն այդ այցելուութիւնը սա վարագոյրին վրայ անցուցած է գնդասեղով, ինծի իմաց տուած ըլլալու համար: Արդէն նըշմարած էի զայն, բայց հիմա այդքիս զարկաւ գնդասեղը: Ոսկիէ գնդասեղ մըն է. այդ գնդասեղին միջոցաւ ձեռքովս Մարօքի խաչը կախած եմ Եա-Պօնի կուրծքին վրայ:

— Հապա հասցէ՞ն:

— Ամէտէ վաշրօ, Կիմար փողոց, թիւ 18, այդ փողոցը շատ մօտերը կը գտնուի, ինչ որ կը հաստատէ այդ տեղեկութիւնը:

Ու երկուքը միասին հեռացան, կնոջ դիակը հոն ձգելով: Տօն Լուի ոստիկանութեան ձգեց այդ գործին մէջէն ելլել:

Պէրթու գործարանէն անցած ատենին ակնարկ մը ձգեցին խորշին վրայ, ու տօն Լուի դիտել տուաւ.

— Սանդուխ մը կը պակսի: Սիմէօն հոնկէ անցած ըլլալու է: Ան ալ սկսած է սխալներ գործել:

Օթօն Կիմար փողոցը առաջնորդեց զանոնք, ուր թիւ 18 տունը ընդարձակ և հին շէնք մըն էր: Դրան զանգակը հնչեցուցին: Առտուան դէմ, ժամը երկուքն էր: Ուշ բացին դուռը: Դանսպանը հարցուց ո՛վ ըլլալնին:

— Անպատճառ պէտք ունինք ատենելու Ամէտէ վաշրօն:

— Ես եմ:

— Դո՞ւք էք:

— Այո՛, դանսպանը: Բայց ի՞նչ իրաւունքով:

— Ոստիկանութեան մը հրամանով, ըսաւ տօն Լուի, որ ցոյց տուաւ ու է մէտայլ մը:

Դանսպանին խցիկը մտան: Ամէտէ վաշրօ փոքրակազմ ծերունի մըն էր, պարկեշտ դէմքով, ճերմակ կիսամօրուքով: Լուսարարի երեւոյթ ունէր:

— Որոշ պատասխան տւէք, ըսաւ տօն Լուի հրամայական ու բիրտ շեշտով մը: Տիար Սիմէօն Տիօտօքիսը պիտի փնտուենք:

— Եթէ անոր չարիք մը հասցնելու համար է, անօգուտ է զիս հարցաքննել: Կը նախընտրեմ մաղմաղ կրակի վրայ մեռնիլ քան թէ փասել այդ բարեհամրոյ Պ. Սիմէօնին:

— Ընդհակառակը, մեծ վրասանդէ մը ազատելու կ'աշխատինք, ըսաւ տօն Լուի:

— Մե՛ծ վտանդէ մը: Չեմ զարմանար: Երբեք այդքան վերջովւած չէի տեսած զայն:

— Ուրեմն հո՞ս եկաւ:

— Այո՛, կէս գիշերէն քիչ յետոյ ու մեկնեցաւ:

— Թերեւս մէկը ձգած է հոս, հարցուց Բաթրիս յուսահատական շարժումներով մը:

— Ոչ, կ'ուզէր իր հետ մէկը տանիլ:

— Կի՞ն մը:

Պ. վաշրօ վարանում ցոյց տուաւ:

— Գիտենք թէ Սիմէօն Տիօտօքիս կը փորձէ ապաստանարան

մը գտնել կնոջ մը համար, որուն նկատմամբ խոր ակնածանք ունի, ըսաւ տօն Լուի:

— Կրնա՞ք այդ կնոջ անունը ըսել, հարցուց դանսպանը կասկածոտ:

— Անշուշտ, տիկին Էսարէս, սեղանաւորին այրին, որուն մօտ քարտուղարի պաշտօն կը վարէր:

Տիկին Էսարէս հալածուած ըլլալով թշնամիներու դէմ կը պաշտպանէ զայն: Եւ որովհետեւ կ'ուզենք օգնութեան հասնիլ երկուքին ալ, ու ձեռք առնել այդ ոճրագործութեան խնդիրը, ձեզի դիմում կ'ընենք...

— Տարին է ի վեր կը ճանշնամ Սիմէօն Տիօտօքիսը: Կահագործ եղած ատենս ինծի ծառայութիւն մատուցած, փոխ դրամ տուած ու այս գործը գտած է: Երբեմն հոս կուգայ, չազակրատելու համար շատ մը բաներու վրայ:

— Էսարէս պէյի պատմութիւնները ընելու և Բաթրիս Պէլլալի մասին ունեցած ծրագիրները յայտնելու համար, անշուշտ, հարցուց տօն Լուի անփոյթ շեշտով մը:

— Պ. Սիմէօն պատուական մարդ մըն է և շատ բարիք կ'ընէ: Քիչ առաջ տակաւին, իր կեանքը կը վտանգէր տիկին Էսարէսի համար...

— Էսարէս պէյի մահընէն յետոյ տեսած էք զայն:

— Ոչ, առաջին անգամ ըլլալով հոս եկաւ ժամը մէկի ատենները: Ցած ու շնչատ ձայնով մը կը խօսէր և փողոցին աղմուկները մտիկ կ'ընէր: «Կ'երդնում որ ինծի կը հետեւին, կ'ըսէր

Սիմէօն...» Բայց ո՞վ է, հարցուցի: — «Չես ճանչնար... Մէկ ձեռք ունի, բաց վիզդ կը դաւարէ»: Քիչ մը լուռ մնալէ յետոյ, յարեց խիստ մեղմածայն. «Հիմա ինձի հետ պիտի գաս: Տիկին էսարէսը պիտի փնտռենք: Կ'ուզեն սպաննել զայն...: Լաւ տեղ պահեցի, բայց նւազած է...: Պէտք է փոխադրել զայն: Ոչ, առանձին պիտի երթամ. գործին մէջէն կ'ելլեմ...: Բայց կ'ուզեմ գիտնալ թէ ընակարանս տրամադրելի՞ է»: Պէտք է ըսել որ հոս ընակարան մը ունի այն օրէն ի վեր, երբ ինք ալ ստիպուած թէ պահուրիւ: Երբեմն հոս կուգար ու այդ ընակարանը կը մնար, որ միւս վարձակալներու շէնքերէն կղզիացած է:

— Յետո՞յ:

— Մեկնեցաւ:

— Բայց ինչո՞ւ չվերադարձաւ:

— Թերեւս իրեն հետեւող մարդը յարձակում գործած է վրան: Թերեւս այդ կնոջ գլխուն փորձանք մը եկած է:

— Ի՞նչ կ'ըսէք:

— Կը վախցի որ այնպէս ըլլայ: Սիմէօն ինձի ըսաւ. «Շո՛ւտ, աճապարե՛նք: Մակի մը մէջ պահեցի զայն, աղտոելու համար: Երկու-երեք ժամ հող չէ. բայց եթէ աւելի երկար ատեն հոն մնայ՝ օդի պակասութենէն կը խեղդուի»:

Բաթրիս, զայրացած, ձերուներին օձիքէն բռնեց: Խելայեղու-թեան մատնւած էր, լսելով որ Քորալի օրհասական վիճակի մը մէջ կը գտնուէր, և սասկուծի մատնւած էր:

— Հիմա, անմիջապէս ըսէք թէ ո՛ւր կը գտնուի ան: Ձեզի յայտնած ըլլալու է: Գիտէք ո՛ւր ըլլալը, կը գոռար Բաթրիս:

Պ. Վաչրօյի ուսերէն բռնած՝ կը ցնցէր զայն, և իր զայրոյթը կը թափէր անոր վրայ:

— Շատ լաւ, հարիւրապետս, շնորհաւորութիւններս, ըսաւ ասն Լուի հեղինօրէն: Իմ աշխատակցութեանս շնորհիւ իրական յստակութիւններս ըրած էք: Պ. Վաչրօն ձեռք անցուցած էք:

— Հիմա կը տեսնէք թէ ի՞նչ պէս այդ մարդուկին բերանը բանալ պիտի տամ:

— Անօգուտ է, յարեց զըռնապանը հանդարտ ու պնայլայլ շեշտով: Պարոններ, խաբեցիք զիս: Դուք Պ. Սիմէօնին թշնամի էք: Ոչ մէկ տեղեկութիւն չպիտի տամ:

— Չպիտի՞ խօսիս, չպիտի՞ խօսիս, յայտարարեց Բաթրիս, իր բէվօլվէրը ուղղելով Պ. Վաչրօյի վրայ: Մինչեւ երեք պիտի համբերեմ, եթէ չսպաստախառնեմ՝ այն ատեն պիտի հասկնաս իմ ո՞վ ըլլալս:

Դռնապանը օտարաց: Հարիւրապետին դէմքին արտայայտութենէն կը հետեւեցնէր որ նոր բան մը պատահած ըլլալուն՝ կացութիւնը փոխւած էր:

— Ի՞նչ, դուք հարիւրապետ Պէլլալն էք, հարցուց դռնապանը:

— Կ'երեւի թէ այդ բանը մտածել կուտայ քեզի:

— Հարիւրապետ Պէլլալ, Բաթրիս Պէլլալն է՞ք դուք:

— Ձեր ծառան, եթէ երբէք երկու ըրպէն բացատրութիւն չտաք:

— Դուք Բաթրիս Պէլլալն էք ու իբր Պ. Սիմէօնի թշնամին կը ներկայանաք: Կ'ուզիք բան չէ:

— Այո՛, կ'ուզեմ՝ շան պէս ստակեցնել. քու սինդրոք Սիմէօնը: Ա՛հ, անզգամներ: Բայց որոշումդ պիտի տաս:

— Խեղճ մարդ, բրածնիդ չէք գիտեր, Դուք Պ. Սիմէօնը սպաննէ՞ք: Դո՛ւք, դո՛ւք, բայց ամենէն ստոր մարդը պիտի ըլլաք, եթէ այդ ոձիքը գործէք:

— Յետո՞յ, Խօսէ՛, ձեր անըզգամ:

— Դո՛ւք, Բաթրիս, հարիւրապետ Պէլլալ, սպաննէ՞ք Պ. Սիմէօնը:

— Ինչո՞ւ չէ:

— Բայց...

— Աստու սիրոյն, խօսէ:

Դռնապանը քանի մը բոպէ լուռ մնաց: Յետոյ մընչեց.

— Դուք անոր զուակն էք: Բաթրիս խոշոր քրքիլ մը արձակեց, ըսելով.

— Սիմէօնի զուակը: Ինչե՛ր կ'ըսես: Ձւարձալի՛ բան է: Լաւ խորհր ես, զայն աղտոելու համար: Դիւրին է ըսելը. «Այդ մարդը մի սպաններ. քու հայրդ է ան»: Այդ աղտոտ մարդը իմ հո՛յրս ըլլայ: Մարդ խնդալէն կը ճաթի:

Տօն Լուի մտիկ ըրած էր լուիկ: Բաթրիսի նշան մը ընկելով ըսաւ.

— Հարիւրապետս, թոյլ տէ՛ք որ ես լուծեմ այս կնճիռը, մէկ քանի վայրկեանէն:

Ու մարդուկին վրայ ձռելով, յամբօրէն հարցուց.

— Պարոն Վաչրօ, բացատրութիւն տէ՛ք մեզի, աւելորդ պարբերութիւններու պէտք չկայ:

Շատ բան ըսեք, առանց ամբողջացնելու ձեր յայտնութիւնը: Սիմէօն Տիտօքիս ձեր բարերարին բռն անուներ չէ՞:

— Այո՛, բռն անուներ է:

— Արման Պէլլալ կը կոչուի, բայց սիրող կինը զայն կը կոչէր Բաթրիս Պէլլալ:

— Այո՛, ինչպէս իր զուակը:

— Սակայն, այդ Արման Պէլլալը իր սիրած կնոջ պէս Քորալի էսարէսի պէս զօհ գացած է միեւնոյն սպաննութեան:

— Այո՛, բայց Քորալի էսարէսի մայրը մեռած է: Ան չէ մեռած:

— 1895 Ապրիլ 14ին էր: Բաթրիս բռնեց ասն Լուիի թեւէն ու կակաղեց.

— Եկէ՛ք, Քորալի հողեվարք է: Հրէշը թաղ. ձ է զայն:

— Չէ՞ք կ'սրծեր որ ձեր հայրը ըլլայ այդ հրէշը:

— Խե՛րթ էք դուք:

— Սակայն, կը դողաք, հարիւրապետ:

— Թերեւս... բայց Քորալի պատճառով: Չեմ հասկնար այդ մարդուն ըսածները: Ա՛հ, ի՛նչ մղձաւանջ է: Թո՛ղ լուէ: Խեղդելու էի զայն:

Բաթրիս աթոռի մը մէջ ինկաւ, արմուկները սեղանին վրայ, գլուխը ձեռքերուն միջեւ: Արդարեւ, անտելի վայրկեան մըն էր: Ոչ մէկ աղէտ այդքան չէր կրնար վրդովել մէկը:

— Պարոն Վաչրօ, քանի մը խօսքով քացատրութիւն տէ՛ք, առանց մանրամասնութեան: Յետոյ կը խօսինք: Ուրեմն 1895 Ապրիլ 14ին...:

— 1895 Ապրիլ 14ին, նոտարի

գրադիր մը, հաստիկանակաւ քոմիսէրի մը ընկերակցութեամբ, գործատիրոջն առաջարկեց երկու դազազ յանձնել իսկոյն: Իրիկուան, ժամը տասնին, Ռէյնուար փողոցը տաղաւար մը հասանք գործատէրս, ես ու ընկերներէս մէկը: Երկու դիակներ կային հոն: Պատանքեցին ու դազազներուն մէջ դրին զանոնք: Յետոյ, ժամը տասնըմէկին, զիս առանձին ձգեցին մայրապետի սը հետ: Կը մնար դազազները գամելու գործը: Մայրապետուհին, որ կը հսկէր ու կ'աղօթէր, սկսաւ քնանալ: Այն ատեն պատահեցաւ քան մը, որ մազերս քստմնեցուց, և զոր երբեք չպիտի մոռնամ...: Վախէս կը դողայի...: Պարոն, մարդուն մարմինը տեղէն շարժած էր...: Մարդը կենդանի էր:

— Այն ատեն գործուած ոճիբէն, դաւաղութենէն տեղեկութիւն չունէիք, հարցուց տօն Լուի:

— Այո՛, մեզի ըսած էին թէ երկուքն ալ հեղձամահ եղած էին կազով: Մարդ մէկ քանի ժամէն սթափեցաւ: Թունաւորուած էր:

— Բայց ինչո՞ւ իմաց չտրիք մայրապետին:

— Ապշուրեան մատնեցայ: Մեռաւը կը դիտէի որ յարուրթիւն կ'առնէր ու տակաւ կ'ոգեւորէր. ի վերջոյ աչքերը բացաւ: Իր առաջին խօսքը եղաւ. «Մեռած է չէ, այնպէս չէ»: Յետոյ ըսաւ ինձի. «Ոչ մէկ խօսք: Պէտք է լուռ մնալ: Մեռած պիտի կարծին զիս. աւելի լաւ»: Չեմ գիտեր ինչո՞ւ համար հաւանեցայ: Այդ հրաշքը կամազուրկ կ'ընէր զիս...: Տղու մը

պէս կը հնազանդէի: Ի վերջոյ սօքի ելաւ: Միւս դազազին վրայ ծռեցաւ, պատանքը մէկդի առաւ և քանիցս համարեց մեռեալին դէմքը, մրմնջելով. «Բու վրէժդ պիտի լուծեմ: Ամբողջ կեանքս պիտի նւիրեմ վրէժդ լուծելու և մեր դաւակները միացրնելու համար, քու փափաքիդ համաձայն: Ինքզինքս չեմ սպաններ, Բաթրիսի և Քորալիի համար»: Յետոյ դառնալով ինձի, յարեց. «Օգնէ՛ ինձի»: Մեռաւը դազազէն դուրս հանելով մօտակայ փոքր սենեակը տարինք: Յետոյ պարտէզ երթալով երկու խոշոր քարեր առինք ու դիակներուն տեղը դրինք: Այս գործը տեսնելէ յետոյ՝ երկու դազազները զամեցի ու մեկնեցայ, մայրապետը արթնցնելէ ետքը: Յարութիւն առնողը սենեակին մէջ փակուած էր մեռեալ կնոջ հետ: Առտուն, մեռելակիրները եկան ու տարին երկու դազազները:

Բաթրիսի դաժան աչքերը դռնապանին վրայ յառած էին: ան յարեց.

— Հապա դերեղմանը: Արձանադրութեան մէջ ըսած է որ երկու մեռեալները կը հանգչին այն տաղաւարին մօտ, ուր տեղի ունեցած է սպանութիւնը...:

— ԱրմանՊէլվալ ուղեց որ այնպէս ըլլայ: Այն ատեն այս բնակարանին մէջ ձեզնայարկը հաստատուած էր: Իրեն համար բնակարան մը վարձեցի, ուր գազ տազողի բնակեցաւ Սիմէօն Տիօտօքիս անունով, քանի որ Արման Պէլվալ օրինաւորապէս մե-

ռած էր: Քանի մը ամիս հոն մընաց առանց դուրս ելլելու: Յետոյ իր նոր անունով և իմ միջնորդութեամբս, վերագնեց իր տաղաւարը: Միասին փորեցինք իր և Քորալիի գերեզմանները: Յուսահատութենէն՝ քիչ մը կորսընցուցած էր իր հաւասարակշռութիւնը: 1895 ապրիլ 14ին մեռած կնոջ համար միևնոյն յիշատակը ու պաշտամունքը ունէր: Իր և անոր անունը կը գրէր գերեզմանին, պատերուն, ծառերուն վրայ և մինչեւ իսկ ծաղիկի աճուներուն մէջ: Չեր եւ Քորալի էսարէսի անուններն էին: Մարդասպանին դէմ ունեցած վրէժխնդրութեան համար բնաւ խնջը չէր կորսնցներ:

— Իսկոյն փաստեր պէտք է ցուցնէք, գոռաց Բաթրիս, կըծկըւած բռունցքները և խելայեղ դէմքը երկարելով: Կին մը կայ որ հիմա կը մեռնի այդ աւազակին ոճրապարտ կամքովը:

— Մի՛ վախնաք, պատասխանեց Պ. Վաչրօ: Իմ բարեկամս միակ գաղափար մը ունի, այն է ազատել այդ կինը և ոչ թէ սպաննել զայն:

— Քորալին և զիս տաղաւարը տարաւ, մեզ սպաննելու համար, ինչպէս ըրած էր մեր ծնողքին:

— Ան կը ջանայ ձեզ և ան միացնել:

— Այո՛, մահւան մէջ:

— Ո՛չ, կեսնքի մէջ: Իր սիրեցեալ զաւակն էք: Չեր մասին հպարտութեամբ կը խօսէր ինձի:

— Աւազակ մը, հրէշ մըն է ան, ըսաւ Բաթրիս ակռաները կըձտելով:

— Չեր հայրը աշխարհի էն պարկեշտ մարդն է:

Բաթրիս տեղէն վեր ցատկեց ընդօստ, այդ ծանր նախատինքն խարազանուած:

— Փաստ կ'ուզեմ, փաստ, ազաղակեց սպան: Կ'արգիլեմ քեզ բառ մը զրուցելու, մինչեւ որ անժխտելի կիրպով չապացուցանես ճշմարտութիւնը:

Մարդուկը տեղէն չերերաց: Միայն բազուկները երկարեց դէպի մահոգենիէ գգրոց մը, որուն խորշերէն մէկը բացաւ, զսպանակի մը վրայ կոխելով: Յետոյ թղթածրար մը երկարելով ըսաւ.

— Հարիւրապետ, ձեր հօր գիրը կը ճանչնաք, այնպէս չէ՞: Անոր նամակները պահած էք հարկաւ, երբ Անգլիա, վարժարան մը կը զտնէիք: Լա՛ւ, կարդացէք ինձի գրած նամակները: Հոն հարիւր անգամ պիտի տեսնէք իր զաւակն, այսինքն ձեր և Քորալիի անունը, զորձեղի սահմանած էր: Չեր բոլոր կեանքը, ուսումը, ճամբորդութիւնը, աշխատութիւնները և ամէն ինչ հոն են: Չեր և Քորալիի լուսանկարները պիտի զտնէք հոն: Այդ նամակներուն շնորհիւ իրազեկ պիտի ըլլաք էսարէս պէյի դէմ ունեցած ատելութեանը ու վրէժխնդրական ծրագրինմէջ ունեցած յամառութեան: Պիտի տեղեկանաք թէ որքա՛ն յուսահատած է Քորալիի և էսարէսի ամուսնութենէն. յետոյ ուրախացած է, խորհելով որ իր վրէժխնդրութիւնը աւելի անգութ պիտի ըլլար, երբ յաջողէր իր զաւակը միացնել էսարէսի կնոջ հետ իսկ:

Ծերուկ դռնապանը Բաթրիսի աչքին տակ կը դնէր նամակները: Ան իսկոյն ճանչցաւ հորը գիրը, ու տենդոտ կերպով կադրաց պարբերութիւնները, ուր իր անունը յիշատակւածէր միշտ:

Պ. Վաչրօ, որ զայն կը դիտէր, ի վերջոյ ըսաւ.

— Հարիւրապետ, ալ եւս չէք տարակուսիր, այնպէս չէ՞:

— Իր դէմքը տեսայ լուսամուտին բարձունքը, ան տաղաւարին մէջ, ուր մեզ բանտարկած էր: Ատելավառ դէմքով մը կը դիտէր մահը: Էսարէսէն աւելի կ'ատէր մեզ, ըսաւ Բաթրիս բռունցքները կծկած:

— Պատրանք մըն է ատ:

— Կամ յիմարութիւն, մրմնջեց Բաթրիս:

Ու նոպայի մը մէջ սեղանին զարնելով, բացազանչեց.

— Ո՛չ, ոչ, այդ մարդը, այդ անզգամը իմ հայրս չէ: Օ՛ն, երթանք: Ես ալ պիտի խենթեանամ: Մղձաւանջ մըն է աս... ուրիշ բան չէ... մղձաւանջ մը ուր իրերը բոլորովին հակառակ կը դառնան և ուղեղը կը շրջի: Օ՛ն, երթանք: Քօրալի վտանգի մէջ է: Ուրիշ բան ու է կարելորութիւն չունի:

Ծերունի դռնապանը զլուխը ցնցելով ըսաւ.

— Կը վախնամ որ իմ խեղճ բարեկամին ետեւէն հասած ըլլայ իրեն հետեւող մարդը: Որովհետեւ այն ատեն չպիտի կրնայ սղատել տիկին հարստը. խեղճ կինը հազիւ թէ չունչ կ'առնէ, ինծի ըսածին համաձայն:

Բաթրիս գինովի պէս դուրս ելաւ դռնապանին խցիկէն, ու տօն լուրի կառչելով, ըսաւ.

— Կորուած է Քօրալի, այնպէս չէ՞:

— Բնաւ: Սիմէօն ալ քեզի պէս տենդոտ գործունէութեան մը մէջ է: Սարսափէն կը դողայ ու բառերը չի կրնար: Հաւատացէք որ Քօրալի անմիջական վտանգի մատնուած չէ: Դեռ մէկ քանի ժամ ունինք:

— Ապահով էք:

— Բացարձակապէս:

— Եթէ երբեք Ես-Պօն ձեռք անցուցած է զայն:

— Ես-Պօնի հրաման տւի չսպաննելու զայն: Ի՛նչ որ ալ ըլլայ, Սիմէօն կենդանի է: Կարելորը ատ է: Որքան ատեն որ ան ողջ ըլլայ, վախնալիք բան չկայ: Ան թոյլ չպիտի տայ որ քոյր Քօրալի կորստեան մատնի:

— Ինչո՞ւ, քանի որ կ'ատէ զայն: Այդ մարդը ամբողջ կեանքը նւիրած է սիրոյ գործի մը հանդէպ մեզի, ու մէկ վայրկեանէն միւսը՝ այդ սէրը նողկանք մը կը դառնայ:

Յանկարծ Բաթրիս տօն լուրի թելը սեղփեց ու նւազուն ձայնով մը ըսաւ.

— Կը հաւատա՞ք որ իմ հայրս է ան:

— Մտիկ ըրէ՛ք, չէ կարելի ժխտել կարգ մը զուգահիշութիւններ:

— Կ'աղաչեմ, դարձւած քներու պէտք չկայ: Որոշ պատասխան մը տւէք: Ձեր կարծիքը, երկու խօսքով:

— Սիմէօն Տիօտօքիս ձեր հայրն է, հարիւրապետս, ըսաւ տօն լուրի:

— Ա՛հ, լռեցէ՛ք, լռեցէ՛ք: Սոսկալի բան է: Տէր Ասուած, ի՛նչ աղջամուղջ է աս:

— Ընդհակառակը, աղջամուղջը կը փարատի քիչ մը: Կը խոստովանիմ որ մեր խօսակցութիւնը Պ. Վաչրոյի հետ՝ նշոյլ մը ընծայեց:

— Բաց կայելի՞ բան է:

Սակայն Բաթրիսի մտքին մէջ դադափարները իրարու ետեւէ կը սուրային: Յանկարծ կանգ առնելով ըսաւ.

— Սիմէօն թերեւս խցիկ պիտի դառնայ, ու մենք հօն չպիտի գտնուինք: Թերեւս Քօրալին իր հետ պիտի բերէ:

— Ոչ, արդէն իսկ բերած պիտի ըլլար, եթէ կարենար ընել այդ բանը: Ոչ, մենք անոր մօտ երթալու ենք:

— Բայց ո՞ր կողմէ:

— Այն կողմէն, ուր պայքարը մղեցաւ, այսինքն ոսկիի կողմէն: Թշնամիին բոլոր գործողութիւնները այդ ոսկիին շուրջը կը դառնան. եթէ ան նահանջէ իսկ, չի կրնար շատ հեռանալ: Արդէն զիտենք որ Պէրթուի գործարանէն շատ հեռու չէ ան:

Բաթրիս առանց ձայնը հանելու ձգեց որ զինքը տանի տօն լուրի: Այս վերջինը գոչեց յանկարծ.

— Լսեցի՞ք:

— Այո՛, պայթում մը:

Այդ պահուն Ռէյնուար փողոցի մուտքին վրայ կը գտնուէին: Տուներու բարձրութեան պատճառով՝ չէին կրնար զանազանել թէ՛ ո՛ւր տեղէն եկած էր հրազէնի ձայնը: Բայց հաւանաբար Էսարէսի բնակարանէն կամ շրջականերէն լսւած էր ձայնը: Բաթրիս մտահոգութեամբ հարցուց.

— Ես-Պօնն է արդեօք:

— Կը վախնամ որ ան ըլլայ, յարեց տօն լուրի: Եւ որովհետեւ ան չի կրնար զէնք քաշել, ուրեմն իր վրայ զէնք պարպած են: Գուցէ զո՞ գացած ըլլայ...:

— Թերեւս Քօրալի վրայ զէնք քաշած են, մրմնջեց Բաթրիս:

— Ա՛հ, հարիւրապետ, կը ցաւիմ այս գործին խառնուած ըլլալուս, ըսաւ տօն լուրի: Իմ ժամանուածէս առաջ աւելի պայծառամիտ էիք: Ինչո՞ւ Սիմէօն յարձակում գործէ՞ք Քօրալի վրայ, քանի որ իր ազդեցութեան տակ կը գտնուի:

Աճապարանքով անցան Էսարէսի բնակարանին առջեւէն, ու տեսան որ ամէն ինչ հանդարտ էր: Իրենց ճամբան շարունակեցին մինչեւ դուրսը: Պրկէ վար իջան:

Բաթրիսի քով կը գտնուէր բանալին, բայց պարտէզին վրայ նայող փոքր դուռը ներսէն գոցուած էր փականքով:

— Հարիւրապետ, քարափ գացէք: Ես Պէրթու գործարանը կ'երթամ, իրազեկ ըլլալու համար:

Բանի մը բոպէէ ի վեր, տրամոյն լոյս մը կը խառնէր գիշերային մթութեան: Սակայն քարափը ամայի էր: Տօն լուրի մասնաւոր բան մը չնշարեց գործարանին մէջ, բայց երբ միացաւ Բաթրիսի, այս վերջինը ցոյց տուաւ տաղաւարին պարտէզը եզերող մայթին վրայ գետինը դրւած սանդուխ մը. տօն լուրի հակցաւ որ գործարանէն անհետացած սանդուխն էր: Ուստի սա բացատրութիւնը տուաւ.

— Սիմէօնի քով կը գտնուի պարտէզին բանալին. ակներեւ է թէ Եւ-Պօն այդ սանդուխտ գործածած է, ներս մտնելու համար: Ուրեմն ան տեսած էր որ Սիմէօն հոն ապաստարան մը կը փնտռէր: Վաշրոյի տւած այցելութենէն դարձին՝ քոյրՔորալին իր հետ առնելէ յետոյ: Հիմա չեմ գիտեր թէ Սիմէօն կրցած է քոյրՔորալին ձեռք անցնել դարձեալ կամ փախչիլ անկէ առաջ: Բայց սա ստոյգ է ուր Եւ-Պօն գիտէ այն թաքստոցը, որ դիզւած են ոսկիները. թերեւս հոն է Քորալի, եթէ երբեք թշնամին ատեն չէ ունեցած հեռացնելու զայն, իր անձնական ապահովութեան վրայ խորհելով:

— Ապահով էք:
— Հարիւրապետ, Եւ-Պօն միշտ իր վրայ կը կրէ կաւիճի կտոր մը: Եւ որովհետեւ Եւ-Պօն իմ անունէս զատ գրել չի գիտեր, այս երկու ուղիղ գիծերը քաշած էր, որոնք պատին գծին հետ կը ձեւացնեն եռանկիւն մը, ոսկիէ եռանկիւնը: Եւ-Պօն կախարդ կը կարծէ զիս. ան լնաւ չէ տարակուսած մինչեւ հոս հասնելուս վրայ, շնորհիւ այդ երեք գիծերուն:

— Ձեր ըսածին նայելով, այդ ամէնը տեղի ունեցած է մեր Բարիզ ժամանումէն առաջ, այսինքն գիշերուան ժամը մէկին:

— Այո՛:
— Հապա չորս-հինգ ժամ յետոյ արձակւած հրազէնի հարւածը:

— Ձեմ կրնար հաստատական պատասխան տալ այդ մասին: Սիմէօն մթութեան մէջ պահուած ըլլալու է: Այգուռն միայն քանի մը քայլ յառաջացած է, տեսնելով որ Եւ-Պօն ձայն չէր հաներ: Եւ-Պօն, որ լռիկ կը հսկէր, Սիմէօնի վրայ յարձակում գործած ըլլալու է: Կ'ենթադրեմ որ կռիւ պատահած ու Եւ-Պօն վերաւորւած է, և թէ Սիմէօն մեռած է: Մէկ քանի բոլորէն, տեղեկութիւն պիտի ստանանք:

Բաթրիս վանդակապատին կրթնոցուց սանդուխտը: Տօն Լուիի աջակցութեամբ, հարիւրապետը անցաւ վանդակապատին վրայէն. տօն Լուի ալ անոր հետեւեցաւ, սանդուխտը քաշեց, պարտէզ նետեց զայն և ուշադիր կերպով քննեց շուրջը: Բարձր խոտերու և թաւ թուփերու մէջէն ուղղեցան դէպի տաղաւար: Արշալոյսը ծագած էր ու ամէն ինչ կը տեսնէր: Տաղաւարին շուրջը դարձան: Բակին դիմաց հասած ատեն տօն Լուի ետին դարձաւ ու ըսաւ.

— Ձէի սխալած:
Իսկոյն խոյացաւ: Անդաստակին դրան առջեւ փուած էին երկու հակառակորդներուն մարմնները, իրարու հետ ընդելուզւած ու շփոթւած: Եւ-Պօնի գլխուն վրայ անուելի վէրք մը կար, ուրկէ արիւն կը հոսէր ամբողջ դէմքն ի վար: Սիմէօնի կոկորդէն բռնած էր ալ ձեռքովը:

Տօն Լուի իսկոյն ստուգեց որ Եւ-Պօն մեռած էր: Սիմէօն Տիօտօքիս կ'ապրէր:

ԺԵ.

ՍԻՄԷՕՆ ԿՈՒԻ ԿՐ ՄՂԷ

Բաւական դժւարութիւն քաշեցին Սիմէօնը և Եւ-Պօնը իրարմէ՛ բաժնելու համար: Սենեկալցին մեռնելէն ետքը իսկ չէր ուզեր իր որսը լքել: Երկաթի պէս կարծր մատները, վագրի ճանկերու նման պողպատէ եղունգներով դիւլած, թշնամիին վիղը կը մխրճէին, որ կը հոռնդար նւաղած ու անուժ: Բակին սալաշատակին վրայ կը տեսնէր Սիմէօնի բէվովէրը:

— Ծեր աւազակ, բախտ ունիս եղեր որ Եւ-Պօն կոկորդչէ սեղմեր, հրազէնի հարւածդ պարպելէ առաջ: Բայց շատ մի ուրախանար: Թերեւս խնայած ըլլայ քեզի, մինչդեռ Եւ-Պօն մեռնելէ յետոյ, կրնաս ընտանիքիդ գրել և դժոխքին մէջ թիկնաթոռ մը վարձել: Տիօտօքիս, այս աշխարհի չես պատկանիր ալ ևս: Խեղճ Եւ-Պօն, Ափրիկէի մէջ, անուելի մահէ մը ազատած էր զիս... ու այսօր իմ հրամանովս կը մեռնի:

Տօն Լուի փակեց Եւ-Պօնի աչքերը: Անոր մօտ ծնրադրեց, արիւնոտ ճակատը համբուրեց, և մեղմաձայն խօսեցաւ մեռեալին տկանջն ի վար: Վրէժխնդրութիւն խոստանալով: Բաթրիսի օգնութեամբ, դիակը փոխադրեց փոքր սենեակը:

— Հարիւրապետ, երբ այս իրիկուն տուամը վերջանայ, ոս-

տիկանութեան իմաց կուտանք: Առ այժմ անոր և միւսներուն վրէժը լուծելու է:

Ու սկսաւ մանրակրկիտ քննութիւն մը կատարել կուրն տեղը. յետոյ գննեց Եւ-Պօնի և Սիմէօնի զգեստները ու կօշիկները: Բաթրիս Պէլլալ սեւեռուն և առեւլավառ նայած քներ կ'ուղղէր Սիմէօն Տիօտօքիսի, այդ գարշելի դեւին, որ առջի իրիկուն անուելի դաւադրութիւն մը սարքած էր, իրենց սոսկալի հոգեվարքը դիտելով լուսամուտէն: Նոյնպէս Քորալին ծակի մը մէջ բանտարկած էր, յետոյ ուղածին պէս չարչարելու համար զայն:

Սիմէօն դժւարութեամբ կը շնչէր, խռչափողը միասուած ըլլալուն: Կուր ատեն դեղին ակնոցը վար ինկած էր: Ալեխառն յօնքեր կը տեսնէին ծանր արտեւանունքներուն վրայ:

— Հարիւրապետ, խուզարկեցէք վրան, ըսաւ տօն Լուի:

Սակայն Բաթրիսի նողկանք կ'աղդէր այդ բանը: Տօն Լուի ինք նայեցաւ Սիմէօնի զրպանները ու թղթապանակ մը հանելով Բաթրիսի երկարեց: Թղթապանակին մէջ կային բնականութեան արտօնագիր մը հելլենականատակ Սիմէօն Տիօտօքիսի անունով, քարթօնի վրայ փակցուած լուսանկարին հետ, ինչպէս նաև ակնոցներ, քթապահ մը,

երկար մազեր... Այդ լուսանը-
կարը նոր էր և ոստիկանութեան
դրոշմը կը կրէր, 1914 դեկտեմ-
բերին թւագրւած: Նոյնպէս
կային գործի թուղթեր, հաշւե-
ցուցակներ, էսարէս պէյի քար-
տւղար Սիմէօնի ուղղւած: Այդ
թուղթերուն մէջէն երեւան ելաւ
դռնապան Ամէտէ Վաչրօյի ուղ-
ղւած նամակ մը:

Աւասիկ այդ նամակը.

«Սիրելի պարոն Սիմէօն,
«Յաջողեցայ: Իմ երիտասարդ
բարեկամներէս մէկը կըրցաւ հի-
ւանդանոցէն առնել տիկին էսա-
րէսի և Բաթրիսի լուսանկարը,
որոնք իրարու քով կը գտնուէին
այս պահուս: Ինքզինքս բարե-
բախտ կը զգամ, ձեզի հաճոյք
պատճառելու համար: Բայց երբ
ճշմարտութիւնը պիտի յայտնէք
ձեր զակին: Որքան պիտի ու-
րախանայ ան...»:

Այդ նամակին տակ սա խօս-
քերը գրւած էին Սիմէօն Տիտօ-
քիսի կողմէ, իբր անձնական
նօթ.

«Անդամ մը եւս ինքզինքիս
նկատմամբ հանդիսաւոր յանձնա-
ռութիւն կը ստանձնեմ, բան մը
չյայտնելու իմ սիրեցեալ զաւ-
կիս, մինչեւ որ նշանածիս՝ Գօ-
րալիի վրէժը լուծւի, և Բաթրիս
ու Քօրալի ազատ ըլլան իրար
սիրելու և միանալու»:

— Ձեր հօր դիմն է աս:

— Այո՛, պատասխանեց Բաթ-
րիս վրդովւած... Այդ թշու-
ռականին կողմէ իր բարեկամին՝
Վաչրօյի ուղղւած նամակներուն
գիրն ալ այդ ձեւը ունի: Օ՛հ,
ինչ անւանարկութիւն... այդ
մարդը աւազակ ըլլայ...:

Սիմէօն չարժում մը ըրաւ:
Թարթիչները քանիցս բացեցան
ու գոցեցան: Յետոյ յանկարծ
արթննալով Բաթրիսի նայեցաւ:
Այս վերջինը խեղդուկ ձայնով մը
գոչեց.

— Ի՞նչ եղաւ Քօրալին:

Սիմէօն կարծես չէր հասկնար,
չմտած ըլլալուն, ու ապշու-
թեամբ կը դիտէր Բաթրիսը:

— Ո՛ւր է Քօրալին: Ո՛ւր
պահած էք զայն: Մեռնելու
վրայ է ան, հարցուց Բաթրիս
բիրա շեշտով մը:

Սիմէօն տակաւ կը սթափէր:

— Բաթրի՛ս, Բաթրի՛ս, մըր-
մնջեց ան:

Իր շուրջը նայելով տօն լուին
նշմարեց. անշուշտ յիշեց իր մը-
ղած անողոք կռիւր և Եւ-Պօնը
ու այքերը գոցեց դարձեալ:
Բայց Բաթրիս, որուն կատաղու-
թիւնը սաստկացած էր, գոչեց.

— Մտիկ ըրէք, վարանելու
բան չկայ... Պէտք է պատաս-
խանել: Ձեր կեանքը վտանգի
մէջ է:

Մարդուն արիւնալից և կար-
մրած աչքերը բացեցան. չար-
ժուծեւ մը ըրաւ դէպի խոչա-
փողը, հասկցնելու համար թէ
դժւարութիւն կը քաշէր խօսելու
համար: Վերջապէս զգալի ճիգեր
ընելով ըսաւ.

— Դ՞ո՞ւն ես Բաթրիսը: Եր-
կար ատենէ ի վեր կը սպասէի
այս բոպէիս... Ու հիմա իբր
թշնամի է որ կը ներկայանանք:

— Իբր մահացու թշնամի,
յարեց Բաթրիս: Մահը մեր միջև
կը գտնուի... Եւ-Պօնի մահը...
Քօրալիի մահը թերեւս... ո՛ւր
կը գտնուի ան: Պէտք է խօսիք...
եթէ ոչ...:

— Բաթրիս, դ՞ու՞ն ես, կրկ-
նեց մարդը:

Այդ դուռը մը կը զայրացնէր
Բաթրիսը: Հակառակորդին զգես-
տին օձիքէն բռնելով ցնցեց զայն:

Բայց Սիմէօն տեսած էր որ
Բաթրիսի միւս ձեռքին մէջ կը
գտնէր թղթապանակը, ու ա-
ռանց՝ դիմադրելու, աւելցուց.

— Բաթրիս, չարիք չպիտի
հասցնես ինձի, քանի որ հիմա
գիտես թէ ի՞նչ կապ իրարու կը
միացնէ մեզ... Ա՛հ, որքան եր-
ջանիկ պիտի ըլլայի...:

Բաթրիս անոր օձիքը ձգած,
խորչէնքով կը դիտէր ու մեղմա-
ձայն կ'ըսէր.

— Ձեզ թոյլ չեմ տար որ այդ
մասին խօսիք: Անկարելի բան է:

— Ը՛շմարտութիւն է, Բաթ-
րիս:

— Կը ստես, կը ստես, գոչեց
սպան, ինքզինքը զսպելու ան-
կարող և վշտէն դէմքը անձանա-
չելի դարձած:

— Ա՛հ, կը տեսնեմ որ կու-
հած էիր: Ուրեմն անօգուտ է
բացատրութիւն տալը...:

— Կը ստես: Դուն աւաղակ
մըն ես: Եթէ ճշմարիտ էր, ին-
չո՞ւ այդ դաւադրութիւնը ինձի
և Քօրալիի դէմ: Ինչո՞ւ այդ
կրկնակ սպանութիւնը:

— Բաթրիս, խելագարած
էի... Այո՛, երբեմն խելքիս
կուգայ... Բոլոր այդ աղէտ-
ները խելքս գլխէս տարին: Եր-
բեմնի Քօրալիիս մահը... յետոյ
էսարէսի մօտ վարած անշուք
կեանքս... և յետոյ, յետոյ, ոս-
կին մահաւանդ: Ա՛հ, իրա՞ւ ու-
ղեցի սպաննել ձեր երկուքը:
Ձեմ յիշեր... Դէթ չեմ յիշեր

տեսած երազս: Տաղաւարին մէջ
տեղի ունեցաւ ատիկա, այնպէս
չէ՞, ինչպէս ատենօք: Ա՛հ, ի՞նչ
չարչարանք է յիմարութիւնը.
Թիապարտի մը պէս մարդ կը
բռնադատուի ակամայ բաներ ը-
նելու... Միեւնոյն տաղաւարին
մէջ ու միեւնոյն գործիներով
տեղի ունեցած է, այնպէս չէ՞:
Արդարեւ, երազիս մէջ վերսկսաւ
իմ և սիրեցեալիս հողեվարքը,
այնպէս չէ՞: Ու փոխանակ չար-
չարելու, ես էի որ կը չարչարէի:
Ա՛հ, ի՞նչ տանջանք:

Սիմէօն մեղմաձայն կը խօսէր
վարանումներով ու աննկարա-
գրելի տառապանքով: Բաթրիս
յարածուն անձկութեամբ մտիկ
կ'ընէր: Տօն լուի աչքերը չէր
բաժներ Սիմէօնի վրայէն:

Բաթրիս յարեց.

— Խեղճ Բաթրիսս, որքան կը
սիրէի քեզ, մինչդեռ հիմա քեռէ
աւելի կատաղի թշնամի չունիմ:
Կրնա՞ր այլապէս ըլլալ: Ի՞նչպէս
պիտի կրնայիր մօռնալ: Ա՛հ, ին-
չո՞ւ համար զիս արգելափակ չը-
րին էսարէս պէյի մահւընէն յե-
տոյ: Այն ստեն է որ խելագա-
րեցայ:

— Ուրեմն դ՞ու՞ք սպաննե-
ցիք, հարցուց Բաթրիս:

— Բուն սպաննողը ես չեմ:
Ուրիշ մը իմ վրէժս լուծեց: Ձեմ
գիտեր թէ ո՞վ: Անհասկնալի է
այդ ամէնը: Չխօսի՛նք այդ մա-
սին. գէշ կ'ըլլամ: Քօրալիի մահ-
ընէն, այսինքն սիրած կնոջս
մահւընէն ի վեր շատ տառապե-
ցայ: Դալով փոքր Քօրալիին,
պէտք չէ որ ամուսնանար էսա-
րէսի հետ. թերեւս այն ատեն
շատ մը բաներ չպատահէին:

— Ո՞ւր է ան, մրմնջեց Բաթ-
րիս սեղմած սիրտով:

— Չեմ կրնար ըսել:

— Որովհետեւ մեռած է, ը-
սաւ Բաթրիս բարկածայթ:

— Ոչ, կ'երդնում որ կեն-
դանի է ան:

— Ուրեմն ո՞ւր կը գտնուի:
Կարեւորը ատ է: Մնացածը անց-
եալին կը վերաբերի:

Սիմէօն ակնարկ մը ձգելէ յե-
տոյ տօն Լուրի վրայ, ըսաւ.

— Պիտի ըսեմ, բայց... ո՛չ
այս մարդուն ներկայու-
թեանը, Բաթրիս: Նախ ան թող
հեռանայ հոսկէ:

— Այդ մարդը ես եմ, այն-
պէս չէ՞, ըսաւ տօն Լուրի ծիծա-
ղելով:

— Դո՛ւք էք:

— Պէ՞տք է հեռանամ հոսկէ:

— Այո՛:

— Ծեր աւագակ, ատոր փո-
խարէն պիտի՞ մատնանշես քոյր
Քօրալի թաքստոցը:

— Այո՛:

Տօն Լուրի ա՛լ աւելի դարթ
չեչտով մը յարեց.

— Քոյր Քօրալի ոսկիի տոպ-
րակներուն պէս միւսնոյն թաքս-
տոցին մէջ կը գտնուի: Քոյր Քօ-
րալին ազատել կը նշանակէ ոս-
կիի տոպրակները յանձնել: Ու-
րեմն չեմ յուսար որ յարգելի Պ.
Սիմէօնը ազատ թողուք երթալ
գտնելու Քօրալին, եթէ երբէք
պատուին վրայ իսկ խօսք տայ:

— Ոչ:

— Ամենափոքր վստահութիւն
մը չունիք, և իրաւացիօրէն:
Յարգելի Պ. Սիմէօն թէ և յիմար,
Մանթի մէջ մեզ տեսած ատեն
մտքի այնպիսի գերակշռութիւն

և հաւասարակշռութիւն մը ցոյց
տաւ որ վստահաւոր է փոքր
հաւատմը ընծայել իրխոստումնե-
րուն: Յարգելի Պ. Սիմէօն սա-
կարկութիւն մը պիտի առաջարկէ
մեզի. «Քօրալին կուտամ քեզի,
բայց ոսկին վար կը դնեմ: Եթէ
առանձին մնաք այդ ճէշթլմէնին
հետ, սակարկութիւնը շուտ պի-
տի աւարտի: Բայց ես կամ...:

Բաթրիս յարձակողական շեչ-
տով մը ըսաւ, տօն Լուրի մօ-
տենալով.

— Կարծեմ դուք ալ չպիտի
ընդդիմանաք: Կնոջ մը կեանքին
վրայ կը դառնայ խնդիրը:

— Անշուշտ, բայց երեք միլ-
լիոնի խնդիր մըն ալ կայ:

— Ուրեմն կը մերժէք:

— Եթէ մերժեմ...:

— Դուք կը մերժէք, ելք
այդ կինը հոգեվարքի մէջ է: Կը
նախընտրէք որ մեռնի ան: Կը
մոռնաք թէ այդ խնդիրը ինծի
հետ կապ ունի:

Երկուքը իրարու դիմաց
կանգնած էին: Տօն Լուրի հան-
դարտ ու հեզնական զէմքով,
կ'ուզէր ա՛լ աւելի տեղեկութիւն
ստանալ, ինչ որ զայրոյթ կը
պատճառէր Բաթրիսի: Այս վեր-
ջինը սրտնեղած էր աշխատակից
մը ունենալուն համար, որուն
անցեալին ալ ծանօթ էր:
Բռունցքները սեղմած, զոչեց.

— Կը մերժէք:

— Այո՛, ըսաւ տօն Լուրի
միշտ հանդարտ շեչտով:

— Այո՛, կը մերժեմ այդ ան-
հեթեթ և խաբէական սակարկու-
թիւնը: Կարելի՞ է երեք հարիւր
միլիոնի գումար մը թողուլ: Կը
հաւանիմ ձեզ առանձին թողուլ

յարգելի Պ. Սիմէօնին հետ,
պայմանաւ որ այս կողմերէն
չհեռանամ: Այսչափով կը գոհա-
նա՞ս, Սիմէօն:

— Այո՛:

— Լաւ, ուրեմն, համաձայ-
նեցէք: Յարգելի Պ. Սիմէօն, որ
իր դաւկին վրայ կատարեալ վըս-
տանութիւն ունի, պիտի ըսէ թէ
ո՞ւր է թաքստոցը և ձեզի պիտի
յանձնէ քոյր Քօրալին:

— Բայց դո՞ւք, ըսաւ Բաթ-
րիս, ակռաները կրճտելով:

— Ես փոքր քննութիւնս
պիտի լրացնեմ ներկային ու
անցեալին մասին, դարձեալ այ-
ցելելով այն սրահը, ուր քիչ
մնաց պիտի մեռնէիք, հարիւրա-
պետ: Լաւ երաշխաւորութիւններ
առէք:

Տօն Լուրի գրպանի ելեկտրա-
կան լապտերը վառելով տաղաւար
ու յետոյ աշխատանոց մտաւ:
Սպան Սիմէօնի քով եկաւ իսկոյն
և հրամայական շեչտով մը ըսաւ.

— Մեկնեցաւ ան: Ծուռ ը-
սէ՛ք:

— Վստահ ես որ մտիկ չը-
նեմ:

— Բացարձակապէս վստահ եմ:

— Բաթրիս, կասկածէ՛ անոր
վրայ: Ան կ'ուզէ ոսկիները առնել
ու վար դնել իրեն համար:

— Ատեն չկորսնցնենք, Քօ-
լարին ո՛ւր է...:

— Ձեզի ըսի որ կենդանի էր
ան:

— Բաժնւած ատեննիդ կեն-
դանի էր, բայց անկէ ի վեր...:

— Կարելի չէ պատասխան մը
տալ: Այս գիշեր, հինգ-վեց ժամ

առաջ ողջերու կը վախնամ որ:
Բաթրիս կը զգար թէ քրտին-

Միլիոններու Գաղսնիք

քը կը հոսէր կանակէն: Փորձու-
թիւն կ'ունենար ձերուին խեղ-
դելու, զայն պատժելու համար:

— Ատեն չկորսնցնենք: Խօսքը
անօգուտ է: Անոր մօտ առաջնոր-
դեցէք զիս, ըսաւ Բաթրիս:

— Միասին կ'երթանք:

— Ուժ չունիք:

— Այո՛, այո՛... ուժ պիտի
ունենամ: Հոսկէ հեռու չէ: Միայն
մտիկ ըրէ՛ զիս...:

Ծերունին ուժասպառ էր:
Ընդհատ շնչառութիւն մը ունէր.
Կարծես թէ Ես-Պօն տակաւին կը
սեղմէր կօկորդը: Հեծիւն արձա-
կելով կքեցաւ ինք իր վրայ:

— Մտիկ կ'ընեմ ձեզ, Բայց
Աստու սիրոյն, աճապարեցէք:

— Քանի մը վայրկեանէն ա-
զատ պիտի ըլլայ Քօրալի... բայց
միակ պայմանով մը, Բաթրիս:

— Կ'ընդունիմ. ի՞նչ է այդ
պայմանը:

— Անոր գլխուն վրայ պիտի
երդնուս որ ոսկին պիտի ձգես ու
աշխարհի վրայ ո՛չ ոք չպիտի
գիտնայ...:

— Անոր գլխուն վրայ կ'երդ-
նում:

— Դուն կ'երդնուս... բայց
անիծապարտ ընկերդ մեզի պիտի
հետեւի ու պիտի տեսնէ:

— Ոչ:

— Պայմանաւ որ չհաւանիս...:

— Ա՛հ, ի՞նչ բանի, Աստու
սիրոյն համար ըսէ:

— Սա բանին... մտիկ ըրէ՛

... բայց յիշէ որ Քօրալի օգ-
նութեան հասնելու է փութով,
եթէ ոչ...:

Բաթրիս գրեթէ ծունկիկեկած,
զժաւորութեամբ շունչ կ'առնէր:

— Եկո՛ւր, ըսաւ Բաթրիս իր

Թշնամին դիտելով: Եկո՛ւր, քանի որ Բորալի...:

— Բայց այդ մարդը...:

— Քորալին ամէն բանէ առաջ:

— Եթէ մեզ տեսնէ ու ինչէ առնէ ոսկիները:

— Ի՛նչ փոյթ:

— Օ՛հ, Բաթրիս, մի՛ ըսեր այդ բանը: Ամէն ինչ այդ ոսկիներուն մէջն է: Այդ ոսկիները իմա ըլլալէն ի վեր կեանքս փոխուած է: Նկատի ունենալու չէ ո՛չ անցեալը, ոչ առեւտրութիւնը և ոչ ալ սէրը... միայն ոսկիի տոպրակները կան: Կը նախընտրեմ մեռնիլ, թո՛ղ Բորալի մեռնի, ու աշխարհ անհետանայ...:

— Վերջապէս ի՛նչ կ'ուզես, ի՛նչ կը պահանջես:

Բաթրիս այդ մարդուն երկու թեւերէն բռնեց, որ իր հայրն էր և զոր այդքան չէր առած երբեք: Իր ամբողջ էութեամբ կը պահատէր Սիմէօնի: Արցունք ալ պիտի թափէր, եթէ համոզուած ըլլար որ ծերուկ: պիտի փղձկէր:

— Այդ մարդը հոն է, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Աշխատանոցի՞ն մէջ:

— Այո՛:

— Պէտք չէ որ հոնկէ դուրս ելլէ: Մինչեւ մեր գործին աւարտիլը՝ հոն պէտք է մնայ, կը բաւէ որ դուռը գոյէք անոր վրայ: Կը հասկնա՞ս ըսածս:

— Բայց դուք խենթ էք: Ես կը հաւանիմ: Բայց մարդ մը որ իմ և Քորալիի կեանքը ազատած է, կը հաւանի՞ միթէ:

Եթէ այդ մարդը հետոս չըլլար, ու գործի չխառնուէր, Քորալի ազատած պիտի ըլլար հիմա: Կ'ընդունի՞ս:

— Ոչ, Գիտես թէ ո՞վ է այդ մարդը: Աւազակ մը, թշուառ կան մըն է, որ միակ զտափար մը ունի, այն է միլիոնները ձեռք անցնել: Բաթրիս, անհեթեթ բան է, կ'ընդունի՞ս:

— Ոչ, հազար անգամ ո՛չ:

— Աւելի գէշ Բորալիի համար...: Կը տեսնեմ որ ճշգրիտ գողափար մը չունիս կացութեան մասին: Թերեւս առեւն է հիմա: Թերեւս շատ ուշ է արդէն:

— Օ՛հ, լսեցէք:

— Պէտք է որ չ'իտնաս և պատասխանատուութիւնը ստանձնես: Երբ սա անիծեալ սեւամորթը կը հետապնդէր գիս, Քորալին ձգեցի, կարծելով թէ մէկ երկու ժամէն պիտի կարենամ ազատել զայն: Յետոյ գիտես թէ ի՛նչ պատահեցաւ: Ժամը տասնըմէկն էր. ութը ժամ անցաւ անկէ ի վեր: Ուրեմն խորհէ՛...:

Բաթրիս բռունցքները կը գալարէր: Երբեք չէր երեւակայած որ առանկ չարչարանքի մը կրնար ենթարկել մէկը: Սիմէօն անողոք շեշտով մը կը շարունակէր:

— Քորալի չի կրնար շնչել: Հազիւ թէ քիչ մը օդ կը հասնի իրեն: Կը խորհիմ թէ զինքը պաշտպանող տեղն ալ փլած է: Ուստի հեղձամահ ըլլալու վիճակին մէջ կը գտնուի ան, մինչ դուն վիճաբանելով առեւն կ'անցնես: Ի՛նչ վնաս կ'ընես, եթէ այդ մարդը տաքը վայրկեան բանտարկես: Տասը վայրկեան միայն, ո՛չ աւելի: Կը վարանի՞ս:

Ուրեմն դուն սպաննած կ'ըլլաս Քորալին: Խորհէ՛ որ ողջ ողջ պիտի թաղուի ան...:

— Ի՛նչ կուզես: Հրամայէ՛:

— Գիտես թէ ի՛նչ կուզեմ: Շատ պարզ է, մինչեւ դուռը գնա՛, գոցէ՛ ու վերադարձի՛ր:

— Վերջի՞ն պայմանդ է: Ուրիշ պայման չկայ:

— Ոչ մէկ պայման: Եթէ առիկա ընես, Քորալի մէկ քանի րոպէէն ազատած պիտի ըլլայ:

Սպան տաղաւար մտաւ և անդաստակէն անցաւ: Լոյսը կը պարէր աշխատանոցին խորը: Ուժգնօրէն գոցեց դուռը, մէկ հարւածով հրեց երկու փականքները ու աճապարանքով վերադարձաւ: Հրամայական պատահանութիւն մըն էր ատ, թէ եւ դձուճ գործ մը ըլլար:

— Գոցեցի: Աճապարենք:

— Օգնէ՛ ինձի, ըսաւ ծերուկը: Չեմ կրնար ոտքի ելլել: Բաթրիս անոր երկու թեւերէն բռնելով ոտքի կանգնեցուց: Բայց ստիպեցաւ կրթնիլ, որովհետեւ ծերունին կը դանդաղէր սրունդներուն վրայ:

— Օ՛հ, այդ անիծեալ սեւամորթը քայքայեց զիս: Կը խեղդուիմ, չեմ կրնար քալել:

Բաթրիս գրեթէ շալկելով կը տանէր զայն:

— Հոսկէ յառաջանանք ուղղակի, կակազեց Բաթրիս ու ժասպառ:

Տաղաւարին անկիւնէն անցան ու գերեզմաններուն կողմը ուղղեցան:

— Վստա՞հ ես դուռը գոցած ըլլալուդ վրայ, կը շարունակէր ծերունին: Չայնը լսեցի, Սոսկալի

մարդ է ան: Պէտք է կասկածիլ անկէ: Ինձի երդում ըրիր բան մը չըսելու, այնպէս չէ: Նոյնպէս քու մօրդ յիշատակին վրայ, ոչ Քորալիի գլխուն վրայ երդում ըրէ՛...: Թող ան հոգին աւանդէ, եթէ դրժես երդումդ:

Սիմէօն լսեց: Աղաճառութիւններ կ'ունենար, որպէս զի քիչ մը օդ չնչէր: Բայց հակառակ իր վիճակին, շարունակեց:

— Կրնամ ապահով ըլլալ, այնպէս չէ՞: Մնաց որ դուն դժբախտ չես սիրեր: Այդ պարագային ինչո՞ւ այդ մասին կը խօսիս, հոգ չէ, երդում ըրէ՛ որ լուռ պիտի մնաս: Պատուի խօսք տուր...:

Բաթրիս անոր մէջքէն բռնած էր միշտ: Սպային համար անուելի գողգոթա մըն էր այդ դանդաղ գնացքը: Քորալիի սիրոյն համար, փորձութիւն կ'ունենար այդ զարչելի մարդը այն աստիճան սեղմելու որ ան խեղդուէր: Սակայն նողկալի պարբերութիւն մը կը կրկնէր միշտ. «Իր զաւակն եմ... իր զաւակն եմ...»:

— Հոս է, ըսաւ ծերունին:

— Հո՞ս: Բայց գերեզմաններ կան:

— Քորալիի և իմ գերեզմաններս են: Հոս կը գտնուի ան: Վերադարձին, կը ջնջես ոտքի հետքերը, որպէսզի չկարենայ մեզ գտնել ու իմանալ թէ հոս է ան...:

— Վախնալու բան չկայ, գոչեց Բաթրիս: Աճապարենք: Ուրեմն, Քորալին, հոս, խո՞րը կը գտնուի, թողա՞՛մ է արդեօք:

Բաթրիսի այնպէս կը թւէր

որ սահած մէկ վայրկեանը մէկ
ժամուան յապաղում կը նշանա-
կէր, և թէ Գորալիի փրկու-
թիւնը կախում ունէր վարանու-
մէ մը կամ սխալ քայլէ մը: Պա-
հանջւած բոլոր երդումները ը-
րաւ: Գորալիի գլխուն վրայ եր-
դուընցաւ: Պատուի խօսք տուաւ:
Այդ միջոցին չկար գործ մը զոր
ընելու պատրաստ չըլլար Բաթ-
րիս:

Սոտին վրայ կծկտած, փոքր
տաճարին տակ, մատը երկարած,
Սիմէօն կրկնեց.

— Հոս է... տակը...:

— Գերեզմանին տա՞կ: Ան-
հաւատալի բան է: Գերեզմանա-
քարը վեր կ'ելլէ՞ միթէ, հարցուց
Բաթրիս անձկութեամբ:

— Այո՛:

— Առանձին չեմ կրնար վեր-
ցընել: Երեք հոգիի պէտք կայ:

— Պատրիարք շարժում մըն
է, ըսաւ ծերունին: Դիւրաւ պի-
տի կրնաս վերցնել, կը բաւէ որ
աջ ծայրին վրայ կոխես:

Բաթրիս մօտենալով տապա-
նաքարը բռնեց, որուն վրայ
գրւած էր. «Աստ հոսն չի Բաթ-
րիս և Գորալի...»: Ան ճիգ մը
ըրաւ ու քարը վեր ելաւ:

— Սպասէ, ըսաւ ծերունին,
պէտք է բռնել քարը, եթէ ոչ՝
վար կիյնայ ան: Երկաթէ ձողով
մը կարելի է բռնել: Սանդուխին
երկրորդ աստիճանին վրայ ատանկ
ձող մը կայ:

Սանդուխի երեք աստիճաններ
երեւան ելած էին, որ փոքր խո-
ռոչ մը կառաջնորդէին, ուր
մարդ մը հազիւ կրնար կենալ,
հասակը ծռած: Բաթրիս նշմարեց
երկաթէ ձողը և ուսով բռնելէ

յետոյ քարը, անոր տակ դրաւ
ձողը:

— Հիմա քարը տեղէն չի
շարժիր: Սոտոյին մէջ ծռէ՛: Հոն
ըլլալու է իմ դազազս, ուր յա-
ճախ կ'երթայի տարածելի իմ
սիրեցեալ Գորալիս մօտ: Ժամե-
րով հոն կը մնայի ու հետը կը
խօսէի: Այո՛, կը խօսակցէինք
անոր հետ... Ա՛հ, Բաթրիս:

Սյդ նեղ անցքին մէջ ծռած
էր Բաթրիս ու դժւարութիւն կը
քաշէր հոն կենալու: Ուստի Սի-
մէօնի հարցուց թէ ի՞նչ պէտք
էր ընել:

— Քու Գորալիդ վրայ չէ
որ կը խօսիմ: Մէկ միջնորմով
բամուած է ձեռք... հողով ծած-
կւած քանի մը աղիւսներ ու
դուռ մը միայն կան: Ետին ու-
րիչ դամբան մը կը գտնուի, Գօ-
րալիի դամբանը...: Անոր ետին
ալ կայ դամբան մը՝ ոսկիէ տոպ-
րակներով:

Ծերունին հասակը ծռած և
մարմանդին վրայ ծնրադիր, հե-
տազօտութիւնները կ'առաջնոր-
դէր:

— Դուռը ձախակողմն է,
ըսաւ Սիմէօն, Ձե՛ս գտներ: Սա-
կայն ածապարելու ես: Ա՛հ, եթէ
կարենայի վար իջնել, բայց մէկ
անձի միայն տեղ կայ:

Երկար լռութիւն մը տիրեց:
Սիմէօն յարեց.

— Աւելի հեռուն գնա՛, կըր-
նա՞ս շարժիլ: Քիչ մը միայն,
այնպէս չէ՛:

— Հազիւ:

— Լա՛ւ, շարունակէ յառա-
ջանալ, գոչեց ծերունին ներգնա-
կան քրքիջով մը:

Յախուռն շարժուածեով մը ան

ետ քաշեցաւ ու երկաթէ ձողը
վար ձգեց: Ահագին գերեզմա-
նաքարը դանդաղօրէն, այլ ան-
դիմադրելի ուժով վար իջաւ:
Թէև քրքրւած հողին մէջ միւր-
ճըւած, Բաթրիս ուղեց վեր ել-
լել, վտանդը կռահելով: Սիմէօն
երկաթէ ձողով հարւած մը իջե-
ցուց Բաթրիսի գլխուն, որ ճիչ
մը արձակեց ու տեղէն չշարժե-
ցաւ այլեւս: Քանի մը երկվայրկ-
եան տեւած էր այդ ամէնը:

— Կը տեսնես որ լաւ ըրեք
եմ, քեզ բաժնելով ընկերօջմէդ:
Ան չպիտի իյնար ծուղակին մէջ:
Բայց ի՞նչ կատակերգութիւն
խաղացի:

Սիմէօն մէկ վայրկեան իսկ
չկորսնցուց: Գիտէր թէ Բաթրիս
վիրաւորւած և նեղ դիրքի մէջ
մնացած ըլլալուն, չպիտի կրնար
հարկ եղած ճիգը ընել, գերեզ-
մանին կափարիչը վեր առնելու
համար: Հետեւաբար այդ կողմէն
վախնալիք բան չկար:

Սիմէօն տաղաւար վերադար-
ձաւ. դժւարաւ կը քաշէր, բայց
առանց կանգ առնելու հասաւ
անդաստակին առջեւ: Իր ըսածին
չափ ուժասպառ չէր: Նոյն իսկ
տքերուն հետքը ջնջելու հոգ
չտարաւ: Ուղղակի իր նպատա-
կին կը դիմէր, ծրագիր ունեցողի
մը պէս, որ կ'աճապարէ ժամ
առաջ գործադրելու զայն, գիտ-
նալով թէ այդ ծրագրին գոր-
ծադրութենէն յետոյ բոլոր ճամ-
բաները բաց են իր առջեւ: Ան-
դաստակ մտնելուն պէս ահանջ
դրաւ:

Աշխատանոցին ներսէն և
տեսնակին կողմէն՝ պատերուն ու
միջնորմներուն կը զարնէր տօն
լուրի:

— Ետ լաւ, ըսաւ Սիմէօն
քրքիջով մը: Աս ալ իր կարգին
ծուղակը ինկաւ: Ստուգիւ, այս
մարդիկը բան մը չեն արժեք
եղեր:

Սիմէօն արագօրէն յառաջա-
ցաւ դէպի խոհանոց, ու օդային
կազի խողովակը բացաւ: Ետն
Լուին հեղձամահ ընելու համար:
Իր ամենէն սոսկալի թշնամին
անշարժութեան դատաւարտած
էր: Բայց իր անձին փրկութեան
վրայ ալ խորհելու էր: Տաղաւա-
րին շուրջը դառնալով դեղին
ակնոցները գտաւ ու աչքերուն
անցնելով դուրս ելաւ և դուռը
գոցեց: Յետոյ գալիէն յառաջա-
նալով քարափ հասաւ:

Պէրթու գործարանին առջեւ
կանգ առաւ: Կարծես կը վարա-
նէր ընելիքին վրայ: Բայց հօնկէ
անցնող սայլապանները, պար-
տիզպանները և արիչ անձեր
տեսնելուն պէս՝ օթօմօպիլ մը
կանչեց ու վաշորոյի բնակարանը
գնաց:

Իր բարեկամը գտաւ խցիկին
սեմին վրայ և յուզումով ընդուն-
ւեցաւ անոր կողմէ:

— Ա՛հ, դո՛ւք էք, պարոն
Սիմէօն, ատ ի՞նչ վիճակ է, գո-
չեց դռնապանը:

— Լռէ՛, անունս մի՛ արտա-
սաներ, մրմնջեց Սիմէօն, խցիկ
մտնելով: Մէկը տեսա՛ւ զիս:

— Ոչ ոք: Ժամը եօթուկէսն
է և տան մէջ հազիւ արթնցած է
ամէն մարդ: Բայց Տէր Աստուած,
այդ թշուառականները ի՞նչ վի-
ճակի մատներ են ձեզ: Կարծես
թէ պիտի խեղդուիք: Յարձակումի
մը ենթարկուեցա՞ք:

— Այո՛, զիս հետապնդող սե-
ւամորթի մը կողմէ:

— Բայց միւսները ի՞նչ եղան :
 — Անոնք ո՞վ են :
 — Հո՞ս եկողները : Բաթրի՞ս :
 — Հէ՛, Բաթրիս հո՞ս եկաւ ,
 յարեց Սիմէօն մեղմածայն :
 — Այո՛, այս գիշեր հոս եկաւ
 իր բարեկամներէն մէկուն հետ :
 — Բան մը ըսի՞ր անոր :
 — Ըսի թէ ձեր զաւակն է :
 Հարկ եղաւ այնպէս ըսելու :
 — Ատոր համար է որ իմ
 յայտնութիւնս զարմանք չպատ-
 ճառեց անոր :
 — Այդ մարդիկը ո՞ւր կը
 գտնուին հիմա :
 — Քօրալիի հետ : Կրցի ազա-
 տել ու անոնց յանձնել Քօրալին :
 Բայց ինչպիսիք անոր վրայ չի դառ-
 նար : Շո՛ւտ բժիշկ մը . . .
 — Տան մէջ բժիշկ մը կայ :
 — Չեմ ուզեր այդ բժիշկը :
 Հեռաձայնի բաժանորդներուն
 տեսրակը ունիս :
 — Աւասիկ :
 — Բացէք և Տօքթ. Ժէրա-
 տէքի անունը փնտռեցէք :
 — Կարելի բան չէ : Տօքթ.
 Ժէրատէք ի՞նչպէս կրնայ գալ :
 — Իր դարմանատունը մօտե-
 րը կը գտնուի Մօնմօրանսի Պուլվար
 ուր բոլորովին կողիացած է ան :
 — Դիտե՛մ : Պարոն Սիմէօն ,
 գէշ զրօյցներ կը շըլին անոր
 վրայ , կեղծ անցազիրներու և
 վկայազիրներու գործ կ'ընէ :
 — Հոգ չէ :
 Սիմէօն հեռաձայնի տեսրակը
 թղթատեց : Բժիշկին հեռաձայնը
 զբաղած ըլլալուն՝ թիւը լրագրի
 կտորի մը վրայ նշանակեց , ու
 յետոյ դարձեալ հեռաձայնեց :
 Պատասխանեցին թէ բժիշկը
 դուրս ելած էր ու առաւան ժամը
 տասնին պիտի վերադառնար :

— Աւելի լաւ , արդէն ուժ
 չպիտի ունենայի անմիջապէս հոն
 երթալու . բժիշկին իմաց տուր
 որ ժամը տասնին հոն պիտի եր-
 թամ :
 — Սիմէօն անունով :
 — Բաւն անունովս . Արման
 Պէլվալ : Ըսէ՛ որ վերաբուժական
 գործողութիւն մը անհրաժեշտ է :
 Դռնապանը հնազանդեցաւ և
 հեռաձայնին գործին տեղը կա-
 խեց :
 — Ա՛յ , խեղճ Սիմէօնս , ի՞նչ
 պատահեցաւ ձեզի պէս բարի ու
 ողորմած մարդու մը :
 — Ատով մի զբաղի՛ր : Բնա՛շ
 կարանս պատրաստ է :
 — Անտարակոյս :
 — Հոն երթանք , առանց
 տեսնելու :
 — Ինչպէս գիտէք , մեզ չեն
 կրնար տեսնել :
 — Աճապարէ՛ : Բէվոլվէրդ
 միասին ա՛ն : Կրնա՞ս խցիկէդ
 բաժնուիլ :
 — Այո՛ , հինգ վայրկեանի
 համար :
 Խցիկին ետուր փոքր բակ մը
 կար , որ երկար նրբանցքի մը
 հետ կը հաղորդակցէր : Այդ նրբ-
 բանցքին ծայրը ուրիշ փոքր բակ
 մը կար , և ուր կը գտնուէր անակ
 մը՝ դետնայարկէ ու ձեղնայարկէ
 բաղկացած :
 Երկուքը միասին ներս մտան :
 Անդաստակ մը կար , և երեք սեն-
 եակ՝ մէջընդմէջ : Երկրորդ սեն-
 եակը միայն կահաւորւած էր :
 Վերջին սենեակը Կիմար փողոցին
 ղուգահեռական եզող փողոցի մը
 վրայ կը նայէր : Երկրորդ սեն-
 եակին մէջ կանգ առին . Սիմէօն
 ուժասպառ կը թւէր : Սակայն

հաստատակամ և աննկուն մար-
 դու մը պէս ոտքի ելաւ իսկոյն :
 — Գեանայարկին դուռը լաւ
 դոցեցի՞ր , հարցուց Սիմէօն :
 — Այո՛ :
 — Մէկը տեսա՛ւ ներս մըտ-
 նելինս :
 — Ոչ ոք տեսաւ :
 — Հոս դռնուելուդ վրայ կաս-
 կածող կայ :
 — Ոչ ոք :
 — Բէվոլվէրդ ինձի տո՛ւր :
 — Աւասիկ , ըսաւ դա՛նա-
 պանը :
 — Եթէ զէնքը քաշեմ , ձայնը
 լսող կ'ըլլա՞յ , մրմնջեց Սիմէօն :
 — Ոչ : Ո՞վ պիտի լսէ :
 Բայց . . .
 — Ի՞նչ կայ որ :
 — Չէնք չպիտի քաշէք :
 — Այո՛ :
 — Չեր վրա՞յ պիտի քաշէք :
 Ինքզինքնիդ պիտի՞ սպաննէք :
 — Տխմար դուն ալ :
 — Ուրեմն որո՞ւ վրայ :
 — Չիս նեղող մէկուն վրայ և
 որ կրնայ մատնել զիս :
 — Բայց որո՞ւն վրայ :
 — Գու վրադ , ըսաւ Սիմէօն
 քրքիջով մը :
 Ու՛ հրազէնի հարւածով մը
 պայթեցուց դռնապանին ուղեղը :
 Պ. Վաչրօ գետին ինկաւ անկեն-
 դան :

Սիմէօն զէնքը նետեց ու ան-
 դգած մնաց , թէեւ քիչ մը դան-
 դաչուն : Մէկիկ մէկիկ մատները
 մինչեւ վեց համբեց : Քանի մը
 ժամէ ի վեր սպաննած մարդիկը
 կը հաշուէ՞ր արդեօք . Կրէկուար ,
 Քօրալի , Եա-Պօն , Բաթրիս , տօն
 Լուի և Վաչրօ : Գոհունակութեան
 քրքիջ մը կծկեց բերանը : Եթէ
 ճիգ մըն ալ ընէր՝ փրկութիւնը և
 փախուստը ապահոված պիտի ըլ-
 լար :
 Առ այժմ անկարող էր այդ
 ճիգը ընելու : Գլուխը կը դառ-
 նար , թեւերը օդին մէջ կը տա-
 տանէին : Գետին ինկաւ նւազած .
 կուրծքը կը հանդար անտանելի
 ծանրութեան մը տակ ճնշւած
 կարծես :
 Բայց տասնին քառորդ մնա-
 ցած , կամքի ընդոստ շարժումով
 մը , ոտքի կանգնեցաւ , ու տան
 միւս դռնէն դուրս ելաւ :
 Երկու անգամ օթօմօպիլ փո-
 խելէ յետոյ՝ ժամը տասնին հասաւ
 Մօնմօրանսի պուլվարը , ճիշդ
 այն պահուն երբ Տօքթ. Ժէրա-
 տէք կառքէն վար կ'իջնէր ու
 շքեղ վիլլային անդաստակի սան-
 դուխէն վեր կ'ելլէր , ուր դար-
 մանատունը հաստատուած էր պա-
 տերազմէն ի վեր :

ԺԶ.

ՏՕՔԹ. ԺԵՐԱՐՏԵՔ

Տօքթ. ժէրարտէքի դարմանաւան շուրջը, գեղեցիկ պարտէզին մէջ, քանի մը տաղաւարներ կային, որոնց իւրաքանչիւրը մասնաւոր հիւանդութիւններու յատկացւած էր: Վիլլան վիրաբուժական մեծ գործողութիւններու վերապահւած էր:

Բժիշկը իր աշխատութեան սենեակը ունէր վիլլային մէջ: Սիմէօն Տիօտօքիս այդ սենեակը մտցուցին: Բայց հիւանդապահի մը հակիրճ հարցաքննութենէն յետոյ, Սիմէօն առաջնորդեցաւ ուրիշ սրահ մը: Բժիշկը հոն կը գտնուէր: Գրեթէ վաթսուն տարեկան մարդ մըն էր, տակաւին երիտասարդ երեւոյթով, ամիւլւած դէմքով. աջ աչքին վրայ միակնոց մը կար միշտ, ինչ որ միտ ծամածռում մը առաջ կը բերէր ամբողջ դէմքին վրայ: Գլխէն մինչեւ ոտքերը ձերմակ գոգնոց մը կապած էր:

Սիմէօնը ժւարաւ պատմեց զըլխուն եկածը, որովհետեւ հազիւ կրնար խօսիլ:

Ան յայտարարեց թէ առջի գիշեր թափառաչը իկ մը կոկորդէն բռնած ու կողոպտած էր զինքը, կիսամեռ վիճակի մէջ ձգելով սալայատակին վրայ:

— Կրնայիք անկէ ի վեր բժիշկ մը կանչել, դիտել տաւ բժիշկը, սեւեռուն նայւածք մը ձգելով Սիմէօնին վրայ: Մնաց

որ, մեծ բան մը չէ: Քանի որ կ'ապրիք, ուրեմն կտորած բան չկայ: Խոչափողի ջղաձգութիւնները կարելի է դիւրաւ դադարեցնել:

Բժիշկը հրամաններ տաւ իր օգնականին: Հիւանդին հագագին մէջ ալիմիւսիօմէ խողովակ մը մտցուցին, որ կէս ժամ հոն մնաց: Բժիշկը, որ կէս ժամ բացակայած էր, սրահ դարձաւ, ու խողովակը հանելէ յետոյ, հիւանդը քննեց: Այս վերջինը բաւական դիւրաւ կը շնչէր:

— Կարծածէս շատ աւելի շուտ անցաւ: Տուն դարձէք և քիչ մը հանգստացէք: Բան մը չպիտի մնայ ալ ևս:

Սիմէօն այցելագիւրը վճարեց և մեկնեցաւ: Բժիշկը մինչեւ դուռ առաջնորդեց զայն: Սիմէօն կանգ առաւ յանկարծ ու մտերմական շեշտով մը ըսաւ.

— Տիկին Ալպուէնի մէկ բարեկամն եմ:

Բժիշկը բան մը չհասկցաւ այդ խօսքէն:

— Թերեւս այդ անունը բան մը չի յայտնեք ձեզի: Բայց եթէ ըսեմ որ այդ անուն տակ ծածկըւած է տիկին Մօսկրանէմի անձնաւորութիւնը, չեմ կարծեր որ իրարու հետ չհամաձայնինք:

— Ի՞նչ բանի մասին, հարցուց բժիշկը, որուն դէմքը ա'լ աւելի կը կծկէր դարմանքէն:

— Օ՛հ, տօքթէօր, իրաւունք չունիք կասկածելու: Առանձին ենք: Ի ուր դռները կրկնակ ու վարագոյրներով պատուած են: Հետեւաբար կրնանք խօսակցիլ:

— Ձեմ մերժեր: Բայց գիտնալու եմ թէ ի՞նչ բանի վրայ կը դառնայ խնդիրը:

— Ի՞նչ մը համարեցէք, տօքթէօր:

— Բայց հիւանդներս կը սպասեն:

— Երկար չպիտի տեւէ, տօքթէօր: Տեսակցութիւն մը չեմ խնդրեր ձեռնէ, այլ քանի մը խօսք պիտի ուղղեմ ձեզի: Նստինք ուրեմն:

Սիմէօն վճռական երեւոյթով մը նստաւ. լսկ բժիշկը անոր դիմաց անցաւ դարմացկոտ դէմքով մը: Սիմէօն առանց նախաբանի ըսաւ.

— Ես հելլէնահպատակ եմ: Յունաստան չէզոք ու մինչեւ այսօր բարեկամ երկիր մը ըլլալուն, ինծի համար դիւրին է անցադիր մը ստանալ ու Ֆրանսայէն դուրս ելլել: Բայց անձնական պատճառներով չեմ ուզեր որ բուն անունովս ըլլայ այդ անցադիրը, այլ ո՛ր է անունով, զոր միասին պիտի ընտրենք: Այսպէս՝ ձեր աջակցութեամբ պիտի կրնամ հեռանալ առանց ո՛ր է վտանգի:

Բժիշկը ոտքի ելաւ զայրացած:

— Խօշոր բառերու պէտք չկայ: Խնդրեք գնին վրայ է: Որքան կ'ուզէք:

Բժիշկը շարժուեցով մը դուռը ցոյց տաւ Սիմէօնին: Այս վերջինը ձայն չհանեց: Գլխարկը դնելով

Միլիոններու Գաղտնիք

դէպի դուռ յառաջացաւ, ու ըսաւ.

— Քսան հազարը կը բաւէ:

— Մարդ կանչե՛մ, ձեզ դուրս նետելու համար, պատասխանեց բժիշկը:

Սիմէօն Տիօտօքիս սկսաւ ծիծաղել, ու հանդարտօրէն յարեց, իւրաքանչիւր թիւին վրայ շունչ առնելով:

— Երեսուն հազար... քառասուն... յիսուն: Օ՛հ, աւելի՞ կ'ուզէք: Կլորիկ դուժար մըն է տաճս: Բայց ամէն բան մէջը ըլլալու պայմանով: Ոչ միայն վաւերական ու անվիճելի անցագիր մը պիտի պատրաստէք, այլև պիտի երաշխաւորէք Ֆրանսայէն մեկնելու միջոցները, ինչպէս ըրիք իմ բարեկամութիւնս՝ տիկին Մօսկրանէմի համար, այլապէս նպաստաւոր պայմաններով, վերջապէս չեմ սակարկեր: Ձեզի պէտք ունիմ: Հարիւր հազարի վրայ համաձայն ենք, այնպէս չէ՞, տօքթէօր:

Բժիշկը երկար տեսն նայեցաւ Սիմէօնին. յետոյ արագ շարժումով մը կողպեց դուռը, ու զրասեղանին առջեւ անցնելով ըսաւ.

— Խօսակցի՛նք:

— Իմ ուզածս ալ ուրիշ բան չէ: Մարդ միշտ կրնայ համաձայնիլ պարկեշտ մարդոց հետ: Բայց նախ կը կրկնեմ. համաձայն ենք հարիւր հազարին վրայ:

— Այո՛, եթէ երբեք կացութիւնը ձեր ըսածէն նւազ պայծառ չըլլայ:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Ըսել կ'ուզեմ թէ հարիւր հազարը խարխիւ մըն է, պէտք

եղածին պէս բանակցելու համար:

Սիմէօն Տրոսօքիս պահ մը վարանեցաւ. բժիշկը շատ սուր ախտով ունէր:

— Կը հաճի՞ք ձեր բուն անունը յայտնել:

— Անկարելի է: Ձեզի կ'ըսեմ թէ անձնական պատճառներով...

— Այն ատեն երկու հարիւր հազար Փրանքի կ'ըլլայ:

— Ի՞նչ ըսիք:

Սիմէօն տեղէն վար ցատկելով, ըսաւ.

— Այդքան գուժար կը պահանջի՞ր:

— Ձեզ ս'ի կը ստիպէ ընդունելու: Սակարկութիւն կ'ընենք: Յղատ էք ընդունելու կամ ոչ:

— Քանի որ կեղծ անցադիր մը հանելու կը հաւանիք, ի՞նչ պէտք ունիք անունս դիտնալու:

— Մեծ կարեւորութիւն ունի ինծի համար: Մեծ վտանգի կը մատնւիմ, լրտես մը փախցընելով քան թէ պարկեշտ մարդ մը:

— Ես լրտես չեմ:

— Ինչէ՞ն դիտնամ: Հոս կուզաք տղեկ գործ մը առաջարկելու համար: Ձեր անունը, անձը կը ծածկէք և կ'աճապարէք կրծիկը դնելու համար, ու հարիւր հազար Փրանք վճարելու պատրաստակամութիւն կը յայտնէք: Հակառակ ամէն բանի, կը յաւանիք պարկեշտ մարդ մը ցուցնել ինքզինքնիդ, Խորհեցէ որ անհեթեթ բան է, պարկեշտ մարդ մը գողի՞չ, կամ մարդասպանի պէս չի շարժիր:

Մերուկ Սիմէօն ձայն չհանեց:

Պահ մը յետոյ թաշկինակով սրբեց նակատը: Կը խորհէր թէ Տօքթ. ժերարտէք շատ նարտար ձեռնածու մըն էր, և թէ լաւ չէր ըրած անոր դիմելով: Բայց կրնար խզել դաշինքը, պայմանաւոր ըլլալուն համար:

— Օ՛հ, ի՞նչ բաւեր կ'ըսէք: Լարեց Սիմէօն փորձելով ծիծաղել:

— Միայն բաւեր, ըսաւ բրժիշկը: Ու է ենթադրութիւն չեմ ընէր: Միայն կացութիւնը կ'ամփոփեմ ու պահանջումներս կ'արդարացնեմ:

— Կատարելապէս իրաւունք ունիք:

— Ուրեմն համաձայն ենք:

— Այո՛, Միայն դիտել պիտի տամ որ կրնայիք աւելի մտերմօրէն վարուիլ տիկին Մօսկրանէի մէկ բարեկամին հետ:

— Ինչէ՞ն դիտէք որ այլապէս վարած եմ անոր հետ, հարցոց բժիշկը: Տեղեկութիւններ ունի՞ք այդ մասին:

— Տիկին Մօսկրանէմ ինծի ըսաւ թէ ընաւ դրամ չէիք ստացած իրմէ:

— Արդարեւ, բան մը չտուի, բայց թերեւս ան շատ բան աւաւ ինծի: Տիկին Մօսկրանէմ այն գեղանի կիներէն է, որոնց շնորհները բարձր գնով մը ձեռք կը բերուին:

Պահ մը լուռութիւն տիրեց: Սիմէօն կը նեղւէր իր խօսակցին հանդէպ:

— Իմ անգաղտնապահութիւնս անհասկնալիցաւ ձեզի տեղեկութիւն Մօսկրանէմի և ձեր միջեւ սիրալին կապ մը գոյութիւն ունի, այդ պարագային՝ ներողութիւն

կը խնդրեմ...: Միրելիս, արդէն իսկ առիկա կարեւորութիւն չունի մեր բանակցութենէն յետոյ: Խնդճ Տիկին Մօսկրանէմ, ըսաւ բժիշկը:

— Ինչո՞ւ այդպէս կը խօսիք անոր վրայ, հարցուց Սիմէօն:

— Անցած դարձածին համար:

— Բնաւ տեղեկութիւն չունիմ:

— Ի՞նչ, ահաբա ի՞նչ տուած չի մացա՞ք:

— Մեկնումէն ի վեր նամակ չեմ ստացած անկէ:

— Ա՛հ, տակաւին երէկ իրիկուն նամակ ստացայ, և զարմանքով տեղեկացայ թէ Ծրանսա վերադարձած էր ան:

— Ի՞նչ, Տիկին Մօսկրանէմ ծրանսա դարձած է:

— Եւ նոյն իսկ այս առտու ժամադրութիւն կուտար ինծի... տարօրինակ ժամադրութիւն մը...

— Ո՛ւր, յարեց զգալի մտասանջութեամբ մը:

— Նաու մը մէջ:

— Ի՞նչ կըսէք:

— Այո՛, Նօնշալահը նաոււն մէջ, որ Բասիի քարափին կապուած էր, Պերթու գործարանին երկայնքը:

— Կարելի՞ բան է միթէ, կակոզեց Սիմէօն:

— Իրականութիւնն իսկ է: Գիտէ՞ք թէ ի՞նչ ստորագրութիւն կը կրէր այդ նամակը: Կրէկուար անունով ստորագրուած էր:

— Էրիկ մարդու անուն է, ըսաւ Սիմէօն խօսի ձայնով մը:

— Այո՛, նամակը քովս է: Տիկինը կ'ըսէ թէ շատ վտանգաւոր կեանք մը կը վարէ, թէ կը կասկածի այն մարդուն վրայ, որուն հարստութեան ընկերն է, և թէ կ'ուզէ ինծի խորհուրդ հարցնել:

— Ուրեմն հո՞ն գացիք:

— Այո՛:

— Ե՛րբ:

— Այս առտու: Ես հոն կը գտնուի, երբ դուք կը հեռանալէիք ինծի: Դժբախտաբար ուշ հասայ հոն: Այո՛, պարոն Կրէկուար, կամ աւելի ճիշդը, Տիկին Մօսկրանէմ մեռած էր:

— Մեռած մի:

— Խեղաձ չի՞ն զայն:

— Սոսկալի՛ բան, ըսաւ Սիմէօն հեղձամղձուկ ձայնով: Ուրիշ բան չէ՞ք գիտեր այն անձի մասին որուն վրայ կը խօսէր ան, այսինքն իրեն կասկածելի թւող մարդուն վրայ:

— Այո՛, անոր անունը գրած է իր նամակին մէջ: Սիմէօն Տրոսօքիս անուն Յոյն մըն է: Նոյն իսկ դիմադրիները կը նկարագրէր, զոր կարդացի առանց մեծ ուշադրութեան դարձնելու:

Բժիշկը նամակը հանեց ու ակնարկ մը ձգեց երկրորդ էջին վրայ, մրմնջելով.

«Բաւական ձեր մարդ մը... որ խենթ կը համարուի... որ քթապահ մը և դեղին ակնոցներ կը կրէ»:

Տօքթ. ժերարտէք ընդհատեց իր ընթերցումը և ապշահար երեւոյթով նայեցաւ Սիմէօնին: Երկուքը միասին լուռ մնացին պահ մը: Յետոյ ըսաւ.

— Սիմէօն Տրոսօքիսն էք դուք:

Միւսը ձայն չհանեց: Այդ բոլոր միջադէպերը այնքան տարօրինակ ու ընկալան կերպով իրարու շղթայուած էին որ անօգուտ պիտի ըլլար կեղծելը:

— Ահա ինչ որ կանխատեսուած

էի: Կացութիւնը ձեր ըսածին պէս չէ բ'աւ: Ինծի համար շատ ծանր ու վտանգաւոր բանի մը վրայ կը դառնայ խնդիրը:

— Ի՞նչ ըսել կ'ուզէք:

— Ըսել կ'ուզեմ թէ միևնոյն գիտով չըլար:

— Որքա՞ն կ'ուզէք ուրեմն:

— Մէկ միլիոն:

— Ա՛հ, ոչ, բացազանչեց Սիմէօն բուռն շեշտով մը: Ես ձեռք չդպցուցի Տիկին Մօսկրանէմը: Ես իսկ յարձակում կրեցի այդ կինը խեղդող անձին կողմէ: միեւնոյն անձն է, Ես-Պօն կոչւած սեւամորթ մը, որ ետեւէս 'ատաւ ու կօկորդէս բռնեց:

Բժիշկը Սիմէօնին թեւէն բռնելով ըսաւ.

— Կրկնեցէ՛ք այդ անունը: Ես-Պօն չըսի՞ք:

— Սենեկայցի մըն է, մէկ թեւը կարւած:

— Ես-Պօնի և ձեր միջև կռիւ մը տեղի ունեցա՛ւ:

— Այո՛:

— Սպաննեցի՞ք զայն:

— Ինքզինքս պաշտպանեցի:

— Կա՛ւ: Սպաննեցի՞ք զայն:

— Այսինքն...:

Բժիշկը ուսերը ցնցեց ու ժպտելով ըսաւ.

— Պարո՛ն, մտիկ ըրէք, տարօրինակ զուգարիպութիւն է աս: Նաւէն դուրս ելած պահուս հանդիպեցայ տասներկու քի չափ հաշմանդամ զինուորներու, որոնք խօսք ուզողեցին ինծի: Անոնք կը փնտռէին իրենց ընկերը՝ Ես-Պօն, և հարիւրապետին՝ Պէլլալ, այս վերջինին մէկ բարեկամը, ինչպէս նաեւ կին մը, որուն մօտ կը բնակէին: Այդ չորս անձերը ան-

հետացած էին, ու ատոր համար կ'ամբաստանէին մէկը, որուն անունն ալ տւին: Ա՛հ, տարօրինակ բան: Սիմէօն Տիօտօքիսը, այսինքն ձեզ կ'ամբաստանէին: Հետաքրքրական չէ՞ միթէ: Խոստովանեցէք որ այս ամէնը նոր իրողութիւններ կը ձեւացնեն. հետեւաբար...:

Պահ մը լուռ մնալէ յետոյ՝ բժիշկը շեշտակի ըսաւ.

— Երկու միլիոն:

Այս անգամ Սիմէօն անզգած մնաց: Այդ մարդուն ճանկը ինկած էր, ինչպէս մուկը՝ կատուին ճանկը:

— Ձեր ըրածը շանթած է, ըսաւ Սիմէօն:

— Այո՛, շանթած է, և ես արդարացումը չունիմ այն առիթը ստեղծած ըլլալուս, ուրկէ կ'օգտուիմ: Հրաշալի դիպած մը ներկայացաւ: Իսկոյն օգտուեցայ անկէ, ինչ որ դուք ալ պիտի ընէիք, եթէ իմ տեղս ըլլայիք: Ինչպէս գիտէք, իմ երկրիս դատական իշխանութեան հետ խնդիրներ ունեցած եմ: Բայց՝ իմա հաշտուած ենք իրարու հետ: Իմ նիւթական կացութիւնս այնքան խախտած է որ չեմ կրնար արհամարհել ձեր բարեացակամ առաջարկը:

— Իսկ եթէ չընդունիմ ձեր պայմանը:

— Այն ատեն ոստիկանական պաշտօնատուն պիտի հետաձայնեմ, ուր լաւ աչքով կը դիտուիմ հիմա, կարգ մը ծոռայութիւններ մատուցած ըլլալով ոստիկանութեան:

Սիմէօն պատին ու դրան կողմը նայեցաւ: Բժիշկը հեռաձայնը

ձեռք առած էր: Առայժմ Սիմէօն տեղի տալէ զատ ուրիշ բան չէր կրնար ընել մինչեւ որ նպատուար պարագաներ ներկայանային:

— Աւելի լաւ, դուք կը ձանձնաք զիս, ու ես կը ձանձնամ ձեզ: Կարելի է համաձայնիլ, ըսաւ Սիմէօն:

— Նշանակա՞ծ դումարիս վրայ:

— Այո՛:

— Երկու միլիոն:

— Այո՛: Ձեր ծրագիրը պարզեցէք:

— Ո՛չ, չարժեր: Իմ միջոցներս ունիմ, և աւելորդ կը նըկատեմ կանխու տարածայնել զանոնք: Կենսականը ձեր փախուստն է: Ամէն բան կ'երաշխաւորեմ:

— Ի՞նչ բան կրնայ զիս հաւաստել:

— Կէսը կանխիկ պիտի վճարէք, միւս կէսը՝ յետոյ: Կը մնայ անցագրի խնդիրը: Ինծի համար երկրորդական է ատ: Նոր անցագիր մը շինելու է, բայց ի՞նչ անունով:

— Ձեր ուզած անունով:

Բժիշկը թուղթ մը առաւ, դիմագծերը նշանակելու համար, և իր խօսակցը դիտելով նշանակեց. ալիստան մագեր... անմազ դէմք... դեղին ակոնցներ:

— Ո՞վ պիտի երաշխաւորէ ամբողջական վճարումը... պանքնօթ կ'ուզեմ... վաւերական ու ճշմարիտ պանքնօթ:

— Այո՛:

— Ո՛ւր են:

— Անմարտչելի թաքտոցի մը մէջ:

— Ճշդեցէ՛ք տեղը:
— Կրնամ ճշդել: Բայց եթէ տեղն ալ ցոյց տամ, դարձեալ չպիտի կրնաք գտնել:

— Ուրի՞մն:

— Կրէկուարի յանձնւած էր անոր պահպանութիւնը: Չորս միլիոն կայ հոն, Նաւուն մէջ են: Միասին կ'երթանք հոն, ու առաջին միլիոնը կուտամ ձեզի:

— Հէ՛, ի՞նչ ըսիք, յարեց բժիշկը, ձեռքը սեղանին զարնելով:

— Ըսի թէ նաւուն մէջ կը դանւին միլիոնները:

— Այն նաւուն համար կ'ըսէք, որ Պէրթուի գործարանին մօտ խարսխած է, և ուր տիկին Մօսկրանէմ խողխողւած է:

— Այո՛, հոն չորս միլիոն պահած եմ: Անոնցմէ մէկ միլիոնը ձեզի պիտի յանձնուի:

— Ոչ, այդ տեսակ վճարում չեմ ընդունիր, յայտարարեց բժիշկը, ցնցելով գլուխը:

— Ինչո՞ւ: Խենթ էք դուք:

— Որովհետեւ մարդ իր դրամը միայն կրնայ վճարել:

— Ի՞նչ կ'ըսէք, գոչեց Սիմէօն անարեկումով:

— Այդ չորս միլիոնները ինծի կը պատկանին: Հետեւաբար չէք կրնար ինծի տալ:

— Կը զառանցէք: Նախ պէտք է որ այդ դրամները ունենաք, որպէս զի ձեզի պատկանին անոնք:

— Անշուշտ:

— Ունի՞ք:

— Այո՛, ունիմ:

— Իսկոյն բացատրեցէք, ըսաւ Սիմէօն զայրացած ու ակուաները կրճատելով:

— Հիմա պիտի բացատրեմս Անմատչելի թաքստոցը կը բաղկանար Պօթէնի անգործածելի և հին չորս տարեցոյցներէ: Իւրաքանչիւր հատորի խոռոչացած ներքնամասին մէջ մէկ միլիոն կը գտնուի:

— Կը ստէ՞ք, կը ստէ՞ք:

— Արցիկին քով, փոքր սեղանի մը վրայ դրած էին այդ տարեցոյցները:

— Յետոյ ի՞նչ եղան:

— Հոս են, սասեղանին վրայ, ձեր աչքերուն առջեւ: Հետեւաբար, այս պայմաններուն մէջ, իբր օրինաւոր տէր այդ գումարին, չեմ կրնար ընդունիլ ձեր ըսածը...

— Գո՞ղ, գո՞ղ, դոչեց Սիմէօն կատաղութենէն դողդոջուն ձայնով մը և բռունցքը ցոյց տալով: Իուք գող էք, և ես ձեռնէ պիտի առնեմ շորթած դրամիդ: Ա՛հ, աւազակ...:

Տօքթ. Ժէրատէք հանդարտօրէն ժպտեցաւ և ձեռքը վեր հանեց իբր բողոքի արտայայտութիւն:

— Խոշոր խոշոր կը ջարդես ու անիրաւ խօսքեր կ'ընես: Ձեզի պիտի յիշեցնեմ թէ սիրուհինք, տիկին Մօսկրանէմ, առտու մը ինծի ըսաւ սրտազեղումի վայրկեանէ մը յետոյ. «Բարեկամս, — այդպէս կը կոչէր զիս, և այդ բոպէներուն, կը դուռէր — մեռնելէս յետոյ՝ արարթմանիս մէջ գտնուող գոյքերը ձեզի պիտի կտակեմ»: Իր մահուան բոպէին՝ նաւուն խցիկն էր իր արարթմանը: Այդքան նւիրական կամք մը չյարդելու նախատինքը չեմ կրնար ընել անոր:

Սիմէօն մտիկ չէր ընել: Դըժոխային գաղափար մը կ'արթընար իր մէջ, ու խելայեղ շարժումներ մը կ'ընէր բժիշկին ուղղութեամբ:

— Սիրելի պարոն, ի դուր թանկագին ատեն մը կը վատնենք: Ի՞նչ որոշում կ'ուտագ, ըսաւ բժիշկը:

Այս վերջինը կը խաղար այն թուղթին հետ, ուր արձանագրուած էին անցագրին համար հարկ եղած անդեկութիւնները: Սիմէօն առանց բառ մը արտաբերելու յառաջացաւ դէպի բժիշկը:

— Այդ թուղթը ինծի աւէք: Տեսնեմ ի՞նչպէս շինած էք իմ անցագիրս, և ի՞նչ անունով:

Սիմէօն թուղթը խլեց, աչքէ անցուց զայն ու դէպի ետ ոտու մը ըրաւ:

— Ի՞նչ անուն դրած էք: Ինչո՞ւ այս անունը կուտագ ինծի, ինչո՞ւ:

— Բայց ըսիք թէ իմ ուղած անունս պիտի նշանակեմ:

— Բայց այս անունը ի՞նչ է: Ինչո՞ւ այս անունը նշանակած էք:

— Ես ալ չեմ գիտեր...: Ձէի կրնար Սիմէօն Տիօտօքիս անունը գրել, այնպէս չէ՞, քանի որ այդպէս չէք կոչեր ինքզինքդ: Արման Պէլվալ անունն ալ չէի կրնար նշանակել, քանի որ այդ անունն ալ չէք կրեր: Ուրեմն այս անունը դրի:

— Բայց ինչո՞ւ այդ անունը:

— Որովհետեւ ձեր բուն անունն է:

Ծերունին սոսկումի շարժում մը ըրաւ, ու բժիշկին վրայ ծած, սարսափից շեշտով մը ըսաւ.

— Միակ մարդ մը... միակ մարդ մը կրնար կոհանել...

Երկար լռութիւն մը տիրեց: Յետոյ բժիշկը հեգնօրէն ըսաւ.

— Արդարեւ, միակ մարդ մը կարող էր այդ բանը ընել: Դիցուք թէ ես եղած ըլլամ այդ անձը:

— Նոյնպէս մէկ հողի միայն կրնար երեւան հանել չորս միլիոնի թաքստոցը, ինչպէս դուք գտագ մէկ երկվայրկեանի մէջ, յարեց բժիշկը, շնչնառ ձայնով մը:

Բժիշկը չպատասխանեց: Ան կը ժգտէր, ու դէմքը կծկուսներ կ'ուսնենար: Կարծես թէ Սիմէօն չէր համարձակեր շրթունքներուն ծայրը եկած անունը արտասանել: Գլուխը կը ծռէր, ինչպէս սարուկը՝ իր տիրոջ առջեւ: Ահարկուբան մը, որուն ծանրութիւնը գրապած էր պայքարի ատեն, կը ջախջախէր զինքը: Իր դիմաց գտնուող մարդը մտքին մէջ հրակայի համեմատութիւններ կը ստանար ան ի հարկին կրնար զինքը անէացնել մէկ բառով, մէկ շարժումով: Մէկ մարդ մայն այդ գերմարդկային կարողութիւնը ունէր:

Ի վերջոյ Սիմէօն անկարագրելի սարսափով մը մրմնջեց.

— Արսէն Լիւբէն... Արսէն Լիւբէն...:

— Այո՞, գոչեց բժիշկը ոտքի ելլելով:

Ու միակնոցը վար առաւ: Գրպանէն հանեց փոքր տուփ մը, որ օծանելիք մը կը պարունակէր, ու երեսը քսեց զայն. յետոյ որմագարանէն ջուրի աման մը առաւ և լւացեցաւ. դէմքը պայծառացած էր, և ժպտուն ու հեղնական արտայայտութիւն մը ունէր:

— Արսէն Լիւբէնն է, կրկնեց Սիմէօն քարացած: Կարուած եմ ալ եւս:

— Տխմա՛ր ծերուկ, կարծեցիր որ կազի տուփիդ մէջ խեղդելու չափ անմիտ եմ:

Լիւբէն կը չափափէր սենեակը, ճարտար դերասանի մը պէս, որ արտասանութիւն մը կ'ընէ, կարծուր կէտերը կը շեշտէ, առաջ բերած տպաւորութեան համար կը հրճուի: Ոչ մէկ բանի փոխարէն՝ իր տեղը չպիտի տար և իր դերը չպիտի ձգէր: Ու շարունակեց ան.

— Լաւ ըմբռնէ՛ որ այդ պահուն կրնայի վիզէդ բռնել և անմիջապէս հինգերորդ արարւածը խաղալ, որուն դերակատարութիւնը կ'ընենք այս պահուս: Բայց իմ հինգերորդ արարւածս կարճ էր ու ես թատրոնի մարդ մըն եմ: Որքա՛ն զւածալի է աշխատանոց երթալ, իմ ելեկտրական լամպարս չւանի մը ծայրը կապել, ու Բաթրիսի կարծեցնել տալ թէ խափա բանտարկւած էի: Երբ տասը վայրկեան յետոյ վերադարձար, աշխատանոցի և ճախակողմի սենեակին միջեւ կեցած, դրան կը զարնէի: Ի՞նչ աղւոր կատակերութիւն էր: Միայն թէ աշխատանոցին մէջ չէի գտնուեր, այլ սենեակն էի: Ու ծերուկ Սիմէօն առանց բանէ մը կասկածելու, հանդարտօրէն մեկնեցաւ, համոզուած ըլլալով որ իր ետին կը ձգէր մահապարտ մը: Վարպետի գործ է այնպէս չէ՞ կացութեան տէրն էի լիովին. հետեւաբար պէտք չունեցայ մինչեւ վերջը քեզի հետեւելու: Հարիւրին հարիւր վստահ էի որ

բարեկամիդ՝ դռնապան Պ. Ամէ-
տէ Վաչրոյի մոտ կ'երթայիր։
Արդարեւ, հոն գացիր իսկոյն։

Լիւբէն շունչ առնելէ յե-
տոյ, յարեց.

— Լաւ անխ հեմութիւն մը
գործեցիր, Սիմէօն, և ատոր
չնորհիւ տաղնապէ աղատեցայ։
Երբ դռնապանին խցիկը մտայ,
ոչ ոք գտայ հոն։ Ի՞նչ ընելու
էր, քու հետքդ գտնելու հա-
մար։ Բարեբախտաբար, նախախ-
նամութիւնը կը պաշտպանէր
զիս։ Լրագրի կտորի մը վրայ
կարգացի հեռաձայնի թիւ մը,
որ դեռ նոր գրւած էր մատի-
տով։ Աւասիկ հետք մը։ Այդ թիւը
ուզեցի, ու սկսայ հեռաձայնով
խօսիլ. «Պարոն, քիչ մը տառջ
ես հեռաձայնեցի։ Զեր թիւը
առի, բայց հասցէնիդ չունիմ»
Ասոր վրայ, սա հասցէն տւին
ինծի. «Տօրթէօր փէրատէք,
Պուլվար տը Մօւսօրանսի» Այն
ատեն հասկցայ ըլլալիքը։ Ծե-
րուկ Սիմէօն նախ այդ բժիշկին
մօտ պիտի երթար, դարմանուե-
լու համար։ Յետոյ անցազրի
ինգրով պիտի զբաղէր, քանի
որ այդ բժիշկը կեղծ անցազրի
մասնագէտ էր։ Ուստի հոս ե-
կայ, առանց զբաղելու քու խեղճ
բարեկամդ եղող Պ. Վաչրոյով,
զոր անկիւն մը սպաննեցիր, հա-
ւանական ամբաստանիչի մը
ձեռքէն ազատելու համար։ Ու
բժիշկը տեսայ, որ հաճելի մարդ
մըն է, և որ առտւան մը համար
իր տեղը ինծի տւաւ։ Այդ բանը
քիչ մը սուղի նստաւ ինծի,
բայց հոգ չէ։ Եւ որովհետեւ ձեր
ժամադրութիւնը ժա՛ր տասնին
էր, տակաւին երկու ժամ ունէի.

ուստի նաև գացի, միլիոնները
ձեռք անցնելու և կարդ մը կէ-
տեր ճշդելու համար։

Լիւբէն ձերուկին առջեւ
կանգ առաւ ու ըսաւ.

— Պատրաստ ես։

Սիմէօն սարսուց.

— Ի՞նչ բանի պատրաստ,
յարեց Լիւբէն, առանց սպասե-
լու պատասխանին, Մեծ ուղե-
ւորութեան պատրաստէ։ Ան-
ցազիրդ կոնոնաւոր է։ Բարիզ
դժոխք գիծ, Պարզ տոմսակ։
Արագ գնացք։ Ն՛ջարան դադաղ։
Յետոյ կառք։

Բաւական երկար լռութիւն
մը փրեց։ Ծերունին կը խոր-
հէր, ու ելք մը կը փնտռէր,
թչնամիին ձեռքէն ազատելու
համար։ Արսէն Լիւբէնի կատակ-
ները խորպէս կը վրդովէին
զինքը, որովհետեւ շփոթ վանկեր
միայն կրցաւ արտասանել։ Ի
վերջոյ ճիգ մը ընելով ըսաւ.

— Բաթրիս ի՞նչ պիտի ըլլայ։

— Գազափար մը ունի՞ս այդ
մասին։

— Անոր կեանքը կ'ընծայեմ
իմինիս փոխարէն։

— Ուրեմն մահուան սպառնա-
լիքի տակ կը գտնուի ան, հար-
ցուց Լիւբէն ապշահար։

— Այո՛, և ատոր համար է որ
իմ կեանքիս փոխարէն անոր
կեանքը կ'աւջարկեմ։

Լիւբէն թեւերը խաշածեց
ու գայրացած երեւոյթով ըսաւ.

— Շիտակը, աղէկ համարձա-
կութիւն ունիս։ Բաթրիս իմ
բարեկամս է. կը կարծե՞ս որ
այսպէս պիտի լքեմ զայն։ Ես
կրնամ աւելի կամ նւազ սրամիտ
խօսքեր ը՛նել մօտալուտ մահուանդ

մասին, բայց Բաթրիս մահուան
վտանգի մէջ ըլլա՞յ, կարելի բան
չէ։ Ատենը եկած է որ երթաս
հանգչիս լաւագոյն աշխարհի մը
մէջ։

Լիւբէն վարագոյրը վեր ա-
ռաւ, ու դուռը բացաւ, կանչե-
լով.

— Հարիւրապե՛տ։

Երկրորդ կոչէ մը յետոյ շա-
րունակեց.

— Ա՛հ, կը տեսնեմ որ սթա-
փեր էք։ Շատ չէ՞ք զարմա՛ր
զիս տեսնելով։ Ա՛հ, խնդրեմ,
չնորհակալութեան պէտք չկայ։
Միայն հաճեցէք հոս գալ, Ծե-
րուկ Սիմէօն ձեզ կ'ուզէ։ Ու
այս պահուս ան իրաւունք ունի
ակնածանքի սպասելու։

Յետոյ դէպի ձերունին դառ-
նալով ըսաւ.

— Ահա՛ ձեր զաւակը, վատա-
սերած հայր։

Ժէ.

ՍԻՄԷՕՆԻ ՎԵՐՁԻՆ ԶՈՅՐ

Բաթրիս ներս մտաւ գլուխը
փաթթած, որովհետեւ Սիմէօնի
իջեցուցած հարւածը և գերեզ-
մանաքարին ծանրութիւնը ար-
ծարձած էին ՚ին վէրքերը։ Շատ
գունատ էր ու չափազանց կը
տառապէր, երեւոյթէն դատելով։

Սիմէօն Տիօտօքիսը տեսնելուն
պէս՝ անուրի բարկութեան շար-
ժում մը ըրաւ։ Սակայն զսպեց
ինքզինքը։ Իրարու դէմ կանգ-
նած, այդ երկու անձերը տե-
ղերնուն չէին շարժեր։ Լիւբէն
ձեռքերը շփելով մեղմաձայն կ'ը-
սէր.

— Ի՞նչ հիանալի տեսարան։
Լաւ թատերախաղ է։ Հայր և զա-
ւակ։ Ոճրագործը և զոհը։ Ու-
շադրութիւն, նւագախումբ։

Ի՞նչ պիտի ընեն ՚իմա։ Զաւակը
պիտի սպաննէ իր հայրը, կամ
թէ հայրը՝ իր զաւակը։ Սրտայոյզ
վայրկեան... Ի՞նչ լռութիւն։

Արեան ձայնը կը խօսի, և ի՞նչ-
պէս։ Այո՛, արեան ձայնը խօսե-
ցաւ, ու իրարու վրայ պիտի
նետուին, լաւագոյն կերպով խեղ-
դելու համար զիրար։

Բաթրիս երկու քայլ յառա-
ջացաւ, ու իր երկու թեւերը
բացեցան, կուելու պատրաստ։
Բայց յանկարծ Սիմէօն տառա-
պանքէն տկարացած, աւելի զօ-
րաւոր կամքի մը տիրապետու-
թեան ենթակայ, աղերսական
չեչտով մը ըսաւ.

— Բաթրիս, Բաթրիս, ի՞նչ
պիտի ընես։

Սիմէօն ձեռքերը երկարած,
իր հակառակորդին գթութիւնը
կը հրաւիրէր իր վրայ։ Բաթրիս
վրդոված, երկարօրէն նայեցաւ
այդ մարդուն, որուն հետ զօդ-
ւած էր խորհրդաւոր ու անբա-
ցատրելի կապերով։

Բաթրիս բռունցքները վեր
առած, զոչեց.

— Ո՛ւր է Քօրալի, ըսէ՛ ինծի
ո՛ւր է ան, որպէ՛սդի կեանքդ
փրկես:

Ծերունին սարսուռաց, և ան-
գուլթ ծիծաղով մը պատասխա-
նեց.

— Ոչ, ոչ: Կը նախընտրեմ
մեռնիլ քան թէ Քօրալին ազա-
տել: Ոսկիի թաքստոցին մէջ կը
գտնուի Քօրալի: Ոչ, կը նա-
խընտրեմ մահը...:

— Հարիւրապետ, սպաննէ
զայն, քանի որ կը նախընտրէ
մահը:

Անմիջական սպաննութեան և
վրէժխնդրութեան դաղափարով
տոգորեցաւ դարձեալ, Բայց
վարանում ունեցաւ:

— Ոչ, ոչ, չեմ կրնար ընել,
ըսաւ Բաթրիս մեղմածայն:

— Ինչո՞ւ համար, պնդեց
տօն Լուի: Շատ դիւրին է:
Վառեակի մը պէս գալարէ անոր
վիզը:

— Ոչ, չեմ կրնար:

— Ի՛նչու չես ուզեր խեղդել:
Միթէ գարշանք կ'ազդէ: Իսկ
եթէ Պօշ մը ըլլար, պատերազմի
դաշտին վրայ:

— Այո՛... Բայց այս մար-
դը...:

— Թերեւս ձեռքերդ կը մեր-
ժեն այդ միսը սեղմել: Հարիւ-
րապետ, ըէվոլվէրս ա՛ռ ու անոր
ուղ՛ղը պայթեցողը:

Բաթրիս առաւ այդ զէնքը ու
Սիմէօնի վրայ ուղղեց: Ահարկու
լուսթիւն մը տիրեց: Սիմէօն աչ-
քերը փակած էր, ու քրտինքի
կաթիլներ կը հոսէին գունաթափ
դէմքն ի վար:

Ի վերջոյ սպային թեւը վար
ինկաւ:

— Չեմ կրնար, ըսաւ Բաթ-
րիս:

— Օ՛ն, քաշէ՛, հրամայեց տօն
Լուի անհամբերութեան մատ-
նւած:

— Ո՛չ... ո՛չ...:

— Բայց ինչո՞ւ համար:

— Չեմ կրնար:

— Քեզի ըսեմ թէ ինչո՞ւ չես
կրնար: Դուն կը խորհիս որ այս
մարդը քու հայրդ է:

— Թերեւս, ըսաւ սպան մեղ-
մածայն: Երեւոյթները երբեմն
դիւ կը հարկադրեն հաւատալու
այդ բանին:

— Ի՛նչ փոյթ, եթէ աւազակ
մըն է ան:

— Ոչ, ոչ, իրաւունք չունիմ.
Թո՛ղ մեռնի ան, բայց ոչ իմ
ձեռքովս: Իրաւունք չունիմ
սպաննելու:

— Ուրեմն չես ուզեր վրէժ
լուծել:

— Գարշելի, հրէշային պիտի
ըլլայ:

Տօն Լուի մօտեցաւ, և անոր
ուսը ձեծելով ըսաւ.

— Իսկ եթէ հայրդ չըլլայ:

Բաթրիս նայեցաւ անոր երե-
սը: Բան մը չէր հասկնար:

— Ի՛նչ ըսել կ'ուզէք:

— Իմ ըսածս սա է որ ստու-
գութիւն չկայ, ու է փաստ գո-
յութիւն չունի, հակառակ երե-
ւոյթներուն: Պէտք է նկատի ու-
նենաս նաեւ այն նողկանքը զոր
կը զգաս: Քեզի պէս մաքուր,
ուղղամիտ, պատախանդիր ու
հալարտ մարդ մը կարելի բան չէ
որ ատանկ անզգա՞րի մը զաւակը
ըլլայ: Բաթրիս, խորհէ՛ ատոր
վրայ: Մտքիդ առջեւ բեր նաեւ
ուրիշ բան մը, որ իր արժէքը
ունի:

— Ի՛նչ բան, հարցուց Բաթ-
րիս խելայեղօրէն:

— Ի՛նչ որ ալ ըլլայ իմ անց-
եալս, ի՛նչ որ ալ խորհիս իմ
մասիս, գէթ իբրիւղճի տէր մարդմը
կ'ընդունին զիս: Լաւ զիտես թէ
իմ ընթացքս թելադրած է այն-
պիսի շարժառիթներէ զոր կրնամ
ձակատարաց յայտարարել:

— Այո՛, այո՛, ըսաւ Բաթրիս
ուժգնօրէն:

— Կը կարծե՞ս որ քեզ պիտի
մղէի այդ մարդը սպաննելու,
եթէ քու հայրդ ըլլար ան:

— Օ՛հ, ապահով եմ թէ ստու-
գութիւն մը ձեռք բերած ես:
Օ՛հ, կ'աղաչեմ:

— Կը կարծե՞ս որ քեզի պիտի
թելադրէի ատել զայն, եթէ հայրդ
ըլլար:

— Ուրեմն իմ հայրս չէ՞ ան:

— Ոչ, ոչ, գոչեց տօն Լուի
անդիմադրելի համոզումով մը
ու յարաձուն եռանդով մը: Բայց
անգամ մը դիտէ այդ սրիկային
գլուխը: Բոլոր ոճիրները և մո-
լութիւնները դրօշմած են իր
անբանի դէմքին վրայ: Այս ար-
կածախնդրութեան մէջ, առաջին
օրէն մինչեւ վերջին օրը, չկայ
չարագործութիւն մը որ անոր
գործը չըլլայ, կը հասկնա՞ս: Եր-
կու չարագործներու հանդէպ
չենք գտնուիր, իբր թէ էսարէս
սկսած է դժոխային գործը, ու
Սիմէօն աւարտած է զայն, ինչ-
պէս կը կարծուի: Մէկ ոճրագործ
կայ, կը հասկնա՞ս, Բաթրիս:
Միեւնոյն աւազակն էր որ կըս-
պանէր Եա-Պօնը, դռնապան
Վաչրօն, իր մեղսակիցը, միեւնոյն
աւազակն էր որ իր չարաշուք
գործը սկսած էր ու կըսպանէր

զինքը նեղող անձերը: Ատօնց
մէջ կը գտնուի մէկը, զոր կը
ձանչնաս դուն, և ուրիշ մէկը
որուն միտէն ու ոսկորէն ես:

— Ո՛վ է ան, որո՞ւն վրայ
կը խօսիս:

— Այն անձը, որուն օրհասա-
կանի ճիչերը կը լսէիր հեռաձայնի
մէջէն: Այդ մարդը Բաթրիս կը
կոչէր քեզ ու կապէր քեզի հա-
մար միայն: Ան ալ սպաննած է:
Ու այդ մարդը, Բաթրիս, քու
հայրդ է, Արման Պէլվալը: Հիմա
կը հասկնա՞ս:

Բայց բան մը չէր հասկնար
Բաթրիս: Տօն Լուի խօսքերը
մոլթին մէջ կը կորուսէին, ա-
ռանց ամենափոքր լոյս մը ցայ-
տեցնելու:

— Հօրս ձայնը լսեցի՞ արդ-
եօք: Ուրեմն ա՛ն էր զիս կան-
չողը, կակազեց Բաթրիս:

— Քու հայրդ էր, Բաթրիս:

— Ո՞վ էր զայն սպաննողը:

— Այս մարդն էր, յարեց
տօն Լուի, ծերունին մատնանչե-
լով:

Սիմէօն անշարժ կը մնար,
դաժան աչքերով, մահովճափ
սպասող մարդու մը պէս: Բաթ-
րիս աչքերը չէր բաժներ անոր
վրայէն, և կատաղութեան սար-
սուռներ կը ցնցէին զայն: Սա-
կայն ուրախութիւն մը ի յայտ
կուգար իր վրդոված զգացում-
նիրուն մէջ և իր մարդը մտա-
ծումը կը գրաւէր: Այդ պիղծ
արարածը իր հայրը չէր: Հայրը
մեռած էր. կը նախընտրէր որ
այդպէս ըլլար ու լայն չունչ մը
կ'առնէր: Գլուխը կրնար բարձր
բռնել և ազատօրէն ու իրաւա-
ցիօրէն առել:

— Ո՞վ ես դուն, ո՞վ ես դուն, հարցուց Բաթրիս:

Ու տօն Լուսի ղառնալով, ըսաւ.

— Կ'աղաչեմ, իր անունը ըսէք: Կ'ուզեմ իր անունը իմանալ, զայն ջախջախելէ առաջ:

— Ի՞նչպէս չկռահեցիր իր անունը: Իրաւ է որ ես ալ երկար առեմ փնտռեցի, սակայն միակ ընդունելի ենթադրութիւնը ատ է:

— Բայց ի՞նչ ենթադրութիւն, գոչեց Բաթրիս զայրացած:

— Կ'ուզե՞ս անունը իմանալ:

— Ա՛հ, կ'ուզեմ շուտ մը լինցնել անոր գործը: Բայց կ'ուզեմ նախ անոր անունը հասկնալ:

— Լա՛ւ...:

Պա՛հ մը լուսութիւն տիրեց: Ոտքի վրայ, իրար կը դիտէին երկու անձերը: Բայց տօն Լուսի սա ապաւորութիւնը ունեցաւ որ յայտնութիւնը ընելու առեմը եկած չէր տակաւին: Ուստի յարեց.

— Տակաւին պատրաստ չես ճշմարտութեան. կ'ուզեմ որ եթէ լսես՝ ո՞ն է առարկութիւն չընես: Կատակ չեմ ըներ: Տպաւորութիւն գործելու ջանք չեմ ըներ, այլ կ'ուզեմ անդիմադրելի համոզում մը ներշնչել քեզից առ մարդը քու հայրդ չէ, և ոչ ալ Սիմէօն Տիոտօքիսը, թէեւ անոր կերպարանքը, դիմազօծերը, ինքնութիւնը ստացած ըլլար ու անոր պէս ապրէր: Ինչպէս ըսի քիչ մը առաջ, մէկ ոճրագործ կայ մեր դէմ, որ կենդանի է սկիզբէն ի վեր, միշտ կը գործէ, ընալինջ կ'ընէ զինքը նեղողները, ի հարկին անօնց դէմքը առնելով

կը շարունակէ անիծեալ գործը: Հարկ կա՞յ անունը տալու այդ մարդուն, որ հոգին եղած է այդ հսկայական գործին, նպաստաւոր ելքի մը յանգեցնելով զայն, հակառակ բոլոր խոչընդոտներուն և իր մեղսակիցներուն մղած կատաղի պայքարին: Ոչ միայն քու յիշատակներդ պրպտէ՛, այլ և ուրիշներունը, ինչպէս նաեւ մտաբերէ՛ Գօրալի ըրած բոլոր պատմութիւնները անցեալի մասին: Ո՞վ է այն միակ հալածիչը, միակ աւազակը, միակ չար ոգին բոլոր եղած գէշութեանց: Հիմա կը զգամ որ կը կռահես գրեթէ: Քու առջեւ կը գտնուին նոյն ինքն ոճրագործը, այսինքն...:

Ո՞վ արտասանեց այդ մարդուն անունը: Տօն Լուսի՞ թէ Բաթրիս: Սակայն սպան առաջին չորս վանկերը լսելուն պէս, տարակոյս չունեցաւ ալ եւս: Իսկոյն իբր անվիճելի ճշմարտութիւն ընդունեց, էն ակներեւ իրողութիւններով ապացուցած: Ու քանիցս կրկնեց այդ անունը, որուն վրայ երբեք չէր խորհած, թէեւ անիմանալի հարցին էն տրամաբանական և էն տարօրինակ բացատրութիւնը ըլլար:

— Էսարէ՛ս պէյ... Էսարէ՛ս պէյ...:

— Էսարէս պէյ, կրկնեց տօն Լուսի, այն մարդն է որ քու հայրդ սպաննած է երկու անգամ գրեթէ, մէկ սնդգամ տաղաւարին մէջ, ամէն երջանկութիւն խլելով անկէ, ու մէկ քանի օր առաջ՝ մատենադարանին մէջ, երբ հայրդ կը հեռաձայնէր քեզի: Էսարէս պէյ սպաննած է Գօրալի մայրը և անգտանելի գերեզ-

մանոցի մը խորը թոզած է Գօրալին:

Բաթրիսը աչքերը անդրդուելի որոշում մը տւին. հօրը և Գօրալիի սպաննիչը մեռնելու էր անմիջապէս: Որոշ ու ճշգրիտ պարտականութիւն մըն էր ատ: Ահարկու էսարէս պէտք է մեռնէր զուգահեռ ու նշանածին ձեռքովը:

— Աղօթքդ ըրէ, ըսաւ Բաթրիս ցուրտ շեշտով մը: Տասը բուպէէն պիտի մեռնին:

Բաթրիս համրեց բուպէները, ու տասներորդին, պիտի քաշէր հրազէնը, երբ թշնամին կորովի և ընդոստ շարժում մը ըրաւ, ինչ որ ցոյց կուտար թէ ձերուկ Սիմէօնի հրեւոյթին տակ երիտասարդ ու կորովի մարդ մը կ'որ: Անլուր ուժգնութեամբ մը գոչեց ան, ինչ որ վարանումի մատնեց Բաթրիսը.

— Լա՛ւ, սպաննէ՛ դիս... Օ՛հ, թո՛ղ ամէն ինչ վերջանայ...: Պարտեցայ... կ'ընդունիմ պարտութիւնը: Բայց յաղթանակ մըն է ինձի համար, քանի որ Գօրալի մեռած է և իմ ոսկիներս ազատուած են...: Կը մեռնիմ: Բայց մէկը ձեռք չպիտի անցնէ ոչ իմ սիրած կինս, և ոչ ալ այն ոսկին որ իմ կեանքս եղաւ: Ա՛հ, Բաթրիս, այն կինը զոր երկուքնիս միասին կը սիրէինք, ոչ ևս է... կամ թէ հոգեվարքի մէջ է ու հիմա կարելութիւն չկայ զայն ազատելու: Ինձի պէս դուն ալ ձեռք չպիտի անցնես զայն, իմ վրէժս լուծեցի: Գօրալի կորստեան մատնուած է: Մարդը կ'ոռնար ու կը կապալէր վայրագ ուժգնութեամբ:

Բաթրիս պատրաստ էր դէնքը քաշելու, բայց կը սպասէր տակաւին, մտիկ ընելու համար զինքը տանջող սոսկալի խօսքերը:

— Բաթրիս, կորուած է Գօրալի, շարունակեց թշնամին յարածուն ուժգնութեամբ: Նոյն իսկ անոր դիակը չպիտի գտնես երկրին ընդերքին մէջ, ուր ոսկիէ պարկերու հետ թաղեցի զայն: Գերեզմանաքարին տակ չթաղեցի: Այդքան անմիտ չեմ: Երբեք չպիտի կրնաս գտնել Գօրալին, որովհետեւ ոսկիներուն տակ խեղդուած ու մեռած է: Ա՛հ, ի՞նչ հեշտանք այդ բանը երեսիդ գրուցել: Որքա՛ն կը տառապիս, Բաթրիս: Գօրալի մեռած է:

— Այդքան մի՛ պուար: Հիմա պիտի արթնցնես զայն, ըսաւ տօն Լուսի հանդարտօրէն:

Տօն Լուսի սրկառ մը առաւ սեղանին վրայ դրած ծխատուփէն ու վառեց զայն: Քիչ մը առաջ ըրած խօսքը կարծես տափակ ազդարարութիւն մըն էր, զոր մարդ կ'ուզէր առանց խորհելու:

Այդ յանկարծական պարբերութիւնը, սակայն, ապշութեան մատնեց երկու հակառակորդները: Բաթրիս թեւերը վար ձգեց: Իսկ Սիմէօն դեղեւում մը ունենալով թիկնաթոռի մը մէջ ինկաւ: Երկուքն ալ գիտէին թէ Լիւբէն ինչնէր ընելու կարող էր, և հասկցած էին որ ի՞նչ ըսելու զած էր ան: Սակայն Բաթրիս կ'ուզէր ապահովել: Ուստի հատկապէս ձայնով մը հարցուց.

— Ի՞նչ կ'ըսէք: Պիտի արթնցնէ՞ք զայն:

— Երբ մարդ ուժով պօռայ, ուրիշները կրնայ արթնցնել, յարեց տօն Լուի:

— Ուրեմն կենդանի՛ է ան:

— Մեռելները չեն արթնցներ, ի՛նչ որ ալ ըսուի: Ողջերը միայն կ'արթնցնեն:

— Քօրալի կենդանի՛ է, Քօրալի կենդանի՛ է, կրկնեց Բաթրիս զինքը կերպարանափոխող արքայութեամբ: Կարելի՞ բան է միթէ: Օ՛հ, կ'աղաչեմ, երդում ըրէք: Ոչ, ճշմարիտ չէ: Ձեմ կրնար հաւատալ: Կատակ ըրիք:

Տօն Լուի պատասխանեց:

— Հարիւրապետ, ձեզի ալ հըսեմ ինչ որ քիչ մը առաջ ըսի սա թշուառական մարդուն. «Միթէ կարելի կը գտնէ՞ք որ իմ գործս լքեմ՝ զայն աւարտելէ առաջ»: Ուրեմն լաւ չէք ճանչնար զիս: Յաջողութեամբ գլուխ կը հանեմ այն ամէն բաները որոնց կը ձեռնարկեմ: Սովորութիւն մըն է ատ: Ուրեմն...:

Տօն Լուի դէպի սենեակին մէկ կողմը ուղղւեցաւ: Քանի մը վայրկեան առաջ, Բաթրիսի մտած սենեակին վարագոյրին զուգահեռաբար, կար ուրիշ վարագոյր մը, որ կը ծածկէր երկրորդ դուռը:

Բաթրիս Պէլվալ անիմանալի ձայնով մը կ'ըսէր.

— Ոչ, ո՛չ, հոն չէ... չեմ կրնար հաւատալ...: Շատ մեծ յուսախաբութիւն մը պիտի լլլար...: Երգում ըրէք ինծի:

— Հարիւրապետ, երդում ընելու բան չկայ: Կը բաւէ որ աչքերնիդ բանաք: Գունատեցա՛ք, ինչ որ չի վայլեր սպայի մը: Այո՛, ան է, քոյր Քօրա-

լին. սա անկողնին վրայ պառկած է և երկու հիւանդապահուհիներու կողմէ կը դարմանուի: Ո և է վտանգ չկայ: Վերաւորւած չէ: Միայն տենդ ունի քիչ մը և շատ յոգնած է: Խեղճ քոյր Քօրալի, երբեք այդքան ուժասպառ ու թմրած վիճակի մէջ չեմ տեսած զայն:

Բաթրիս ուրախութենէն զեղուն, յառաջացած էր: Տօն Լուի կեցուց:

— Կը բաւէ, հարիւրապետ, աւելի հեռուն մի՛ երթաք: Փոխանակ տուն փանելու, հոս բերի, որպէսզի օդը և միջավայրը փոխէ: Պէտք չէ յուզում Կրէ: Ան ալ ունեցաւ իր չարչարանքի բաժինը: Ամէն ինչ կը վտանգէք, ինքզինքնիդ ցուցնելով:

— Իրաւունք ունիք, ըսաւ Բաթրիս, բայց ապահով է՞ք...:

— Կենդանի՞ ըլլալուն, յարեց տօն Լուի ծիծաղելով: Ձեզի և ինծի պէս կենդանի է ան, ու պատրաստ՝ ձեզի ընծայելու այն երջանկութիւնը որուն արժանի էք, Տիկին Բաթրիս Պէլվալ կոչւելու համար: Քիչ մը համբերութիւն միայն: Յետոյ, հարիւրապետս, մի մոռնաք որ խոչընդոտ մըն ալ կայ, քանի որ Քօրալի ամուսնացած է...:

Տօն Լուի դուռը փակեց և Բաթրիսը տարաւ Էսարէս պէյի առջեւ, ըսելով.

— Աւասիկ խոչընդոտը, հարիւրապետս: Այս անգամ վճռական որոշում տուի՞ք: Քոյր Քօրալի և ձեր միջեւ այս թշուառականը կը գտնուի դեռ: Ի՞նչ պիտի ընէք այս մարդը:

Էսարէս նոյն իսկ նայած քը

չէր ուղղած մօտակայ սենեակին վրայ, գիտնալով որ տօն Լուի Բէրէննայի խօսքին վրայ կարելի չէր տարակուսիլ: Ուժասպառ ու անզօր, իր թիկնաթոռին վրայ կը դողար:

Տօն Լուի յարեց, խօսքը անոր ուղղելով.

— Սիրելիս, անհանդիստ ես: Թերեւս կը վախնաս: Կը խոստանամ որ բան մը չպիտի ընենք, առանց կանխապէս համաձայնելու երեքս միասին: Զւարթութիւն կը պատճառէ՞ այդ գողափարը: Երեքս միասին պիտի դատենք քեզ, ու անմիջապէս. դատավարութիւնը հրապարակային է: Ոչ ոք խօսք պիտի առնէ, տիար Էսարէս պէյը պաշտպանելու համար: Էսարէս պէյ մահաւան դատաւարուած է: Մեղմացուցիչ պարագաներ չկան և ոչ ալ վճռաբեկ Ատեանին պիտի զրկուի վճիռը: Կեանքի շնորհում ալ չպիտի ըլլայ: Անմիջական գործադրութիւն:

Մարդուն ուսը ձեծելով ըսաւ.

— Ինչպէս կը տեսնես, երկար չպիտի տեւէ գործը: Միաձայնութեամբ վճիռ պիտի արձակուի. անա գոհացուցիչ վճիռ մը, որ ամենուն ալ ուրախութիւն պիտի պատճառէ: Կը մնայ մահաւան տեսակը գտնել: Քու կարծիքդ ի՛նչ է: Բէվոլվէրի հարւած մը: Լա՛ւ: Ինչ արագ եղանակն է: Հարիւրապետ Պէլվալ, ձեզի անկ է գնդակը պարպել: Քարթօնը իր տեղն է և աւասիկ գէնքը:

Բաթրիս տեղէն չէր շարժեր: Իրեն այնքան չարիք հասցնող այդ գարշելի մարդուն կը նա-

չէր: Սոսկալի տտելութիւն մը կ'եռար իր մէջ: Սակայն սա պատասխանը տաւ.

— Չպիտի սպաննեմ այդ մարդը:

— Իրաւունք ունիք, ըսաւ տօն Լուի: Խղճահարութիւննիդ պատիւ կը բերէ ձեզի: Ոչ, իրաւունք չունիք այդ մարդը սպաննելու, գիտնալով որ անիկա ամուսինն է ձեր սիրած կնոջ: Յետոյ սպաննութիւնը նողկանք կ'ազդէ ձեզի, ինչպէս նաև ինծի: Ուրեմն, մարդուկս, միայն դուք պիտի կրնաք օգնել մեզի, այս փափուկ կացութենէն դուրս ելլելու համար:

Տօն Լուի պահ մը լուռ մնաց ու Էսարէսի վրայ ծռեցաւ: Թըշուառականը լսած էր: Կարծես թէ նաղած սւ գիտակցութիւնը կորսնցուցած էր ան:

Տօն Լուի անոր ուսերէն բռնելով ցնցեց: Էսարէս հեծեծազին կ'ըսէր.

— Ոսկին... ոսկիի տոպրակները:

— Ա՛հ, ատոր վրայ կը խորհի՞ս: Քեզ կը շահագրգռէ միթէ:

Տօն Լուի քրքիջ մը արձակեց:

— Աղէկ միտքս ձգեցիր: Մոռցա՛ծ էինք անոր վրայ խօսելու: Մերուկ անզգամ, ատոր վրայ կը խորհի՞ս տակաւին: Բայց, սիրելիս, ոսկիի տոպրակները գրպանս կը գտնուին... որքան գրպան մը կրնայ բովանդակել տասնըութը հազար տոպրակ ոսկի:

— Հապա թաքստո՞ցը, ըսաւ Էսարէս բողբոջի շեշտով:

— Քու թաքստո՞ցդ: Բայց ան ինծի համար գոյութիւն չունի:

ալ եւս : Ապացոյց տալու պէտք չկայ, կարծեմ, քանի որ Գորալի հոս է : Եւ որովհետեւ Գորալի թաղւած էր ոսկիի տոպրակներուն մէջ, ուրեմն կրնաս բանաւոր եզրակացութիւն մը հանել անկէ : Հետեւաբար բանդ բռնուած է : Այն կինը որուն կը տենչայիր՝ ազատ է, և ինչ որ աւելի սոսկալի է, իր պաշտած մարդուն քով կը գտնուի և չպիտի բաժուի անկէ : Ուրեմն ամէն բան վերջացած է, այնպէս չէ : Համաձայն ենք : Ահա՛ ազատարար խաղալիքը :

Ու տօն Լուի րէվոլվէրը երկարեց Էսարէսի : Այս վերջինը մեքենաբար առաւ զէնքը ու Լիւրէնի վրայ ուղղեց : Բայց թեւը ուժ չունենալուն վար ինկաւ :

— Լաւ, յարեց տօն Լուի, խիղճդ կ'ընդզի, ու բազուկդ ինձի դէմ չէ որ կը դառնայ : Իրար կը հասկնանք : Այն արարքը զոր կ'ուզես գործ դնել, պիտի վերադնէ կեանքդ, ծերուկ յելուզակ : Երբ ամէն յոյս ցնդած է, ալ եւս մահը միայն կը մնայ : Մեծ ապաստանն է ան :

Էսարէսի ձեռքը բռնեց ու անոր տկարացած մատերը սեղմելով հրազենին բունին վրայ, րէվոլվէրը ուղղեց Էսարէսի դէմքին :

— Օ՛ն, քիչ մը արիութիւն ունեցէք, աւելցուց տօն Լուի : Տւած որոշումդ շատ լաւ է : Հարիւրապետը ու ես չուղեցինք ինքզինքնիս անպատել, ձեզ սպաննելով : Ուստի որոշում տուի որ դուն գործադրես : Իմարտայոյզ շնորհաւորութիւններս : Ես

միշտ ըսած էի. «Էսարէս վաղեմի չարագործ մըն է, բայց մահուան բռնութիւն, հերոսի պէս գեղեցիկ մահ մը պիտի ունենայ, ժպտաշուրթն ու ծաղկը լամբակին վրայ : Քիչ մը դիմադրութիւն կը տեսնուի, բայց նպատակին կը մօտենանք : Անգամ մըն ալ կը շնորհաւորեմ քեզ : Գործին մէջէն ելլելու եղանակդ շիք է : Դուն ալ կ'ըմբռնես թէ աշխարհի վրայ աւելորդ է գոյութիւնդ, ու նեղութիւն կը պատճառես Բաթրիսի և Գորալի : Այո՛, ամուսին մը միշտ խոչընդոտ է՝ օրէնքին և պատշաճութիւններու պատճառով : Ուրեմն կը նախընտրես քաշուիլ : Ծշմարիտ ճէնթլմէն մըն ես : Որքան իրաւունք ունիս : Ոչ եւս սէր, ոչ եւս ոսկի : Այն փայլուն ոսկիները որոնց կը ցանկայիր, և որոնց շնորհիւ հեշտին կեանք մը պիտի վարէիր, անհետացած են : Արդարեւ, լաւագոյն կ'ըլլայ որ մէջտեղէն վերնաս, այնպէս չէ :

Էսարէս հագիւ կը դիմադրէր : Ձէնքը կը հասնէր մինչեւ ճակատը : Բէվոլվէրին փողը կը դպչէր քունքին : Պողպատին շփումը սարսուռ պատճառեց ու սկսաւ հեծեծել :

— Շնորհ ըրէք :
— Բայց ոչ, ո՛չ, ըսաւ տօն Լուի, պէտք չէ որ ինքզինքիդ շնորհ ընես կեանքդ : Չպիտի օգնեմ քեզի : Եթէ երբեք սպաննած չըլլայիր իմ խեղճ Ես-Պօնս, թերեւս միասին կարենայիք ուրիշ կարգադրութիւն մը ընել : Արդարեւ, կարեկցութիւն չես ներչնչեր ինձի. նոյն իսկ ինքզինքդ չես մեղքնար : Կ'ուզես մեռնիլ,

և իրաւունք ունիս : Այդ բանը չպիտի առգրիւմ : Արդէն անցագիրդ պատրաստ է. առմասկը գրպանդ է : Ընկրկելու միջոց չկայ ալ եւս : Հոն կը սպասեն քեզի : Երբեք տեսած ես Դոմիքը ներկայացնող պատկերներ : Ամէն ոք իր գերեզմանը ունի, խոշոր քարով մը ծածկւած : ամէն մարդ այդ քարը վեր կը հանէ և կոնակովը կը բռնէ, իր տակէն ժայթքող բոցերէն ազատելու համար : Կրակի ճշմարիտ լոգանք մըն է : Արդ, գերեզմանը բռնուած է : Բոցերը կը ժայթքեն : Պարոնին լոգանքը պատրաստ է :

Տօն Լուի, յամբօրէն, Էսարէսի ցուցամատը խոթած էր զէնքի բունին տակ, շնիկին վրայ : Էսարէս բոլորովին ձգած էր ինքզինքը : Գուրջի կտոր մըն էր կարծես : Մահը իր մէջն էր :

— Ինչպէս կը տեսնես, բացարձակ ազատ ես որոշում տալու, եթէ կը յօժարիս : Ես չեմ խառնիր : Ու և է գնով չպիտի ուղէի ազդեցութիւն բանեցնել քու վրադ : Ես հոս կը գտնուիմ, ո՛չ թէ քեզ անձնասպանութեան մղելու, այլ խորհուրդ տալու համար որ ձեռքի հարւած մը տաս :

Արդարեւ, տօն Լուի ձգած էր Էսարէսի ցուցամատը, և անոր թեւը միայն կը բռնէր, բայց իր ամբողջ կամքովը ու կորովովը կը ճնշէր Էսարէսի վրայ, ու այս վերջինը չէր կրնար դիմադրել այդ անընկճելի կամքին :

Ամէն վայրկեան, մահը քիչ մը աւելի մուտ կը գործէր Էսարէսի անշարժ մարմնին մէջ, կը կազմալուծէր բնազդները, կը

մթազնէր գաղափարները և հանգստի ու անգործութեան անհուն պէտք մը կը զգացնէր :

— Ինչպէս կը տեսնես, շատ դիւրին է : Ուղեղդ արբշուութեան մատնուած է : Հեշտանք մըն է գրեթէ, ալ ևս չսպիրիլ, չտառապիլ, չխորհիլ այն ոսկիին վրայ, որ քու ձեռքդ չգտնուիր և որուն չես կրնար տիրանալ, ալ ևս չը մտածել այն կնոջ վրայ, որ ուրիշինն է և անոր պիտի նւիրէ իր ամբողջ հմայիչ էութիւնը : Կրնաս երեւակայել այդ երկու սիրահարներուն անհուն երջանկութիւնը : Այսպէս չէ՞ միթէ : Ուրեմն . . . :

Թշուառականը տեղի կուտար տակաւ : Այն ուժերէն մէկուն առջեւ կը գտնուէր, որուն տակ մարդ կը ջախջախուի. բնութեան ուժ մը՝ ճակատագրի պէս զօրաւոր, որուն մարդ հնազանդելու հարկադրւած է : Գլխի պտոյտ մը կ'ունենար Էսարէս : Անդունդին մէջ կ'իջնէր ան :

— Օ՛ն, մի՛ մոռնար որ անգամ մը մեռած ես արդէն . . . : Միտքդ բե՛ր ատիկա : Էսարէս պէյի յուզարկաւորութիւնը կատարած և թաղած են զայն : Հետեւաբար, երբ այս աշխարհի վրայ երեւան զաս դարձեալ, արդարութիւնը քու օձիքէդ պիտի բռնէ. ի հարկին, արդարութիւնը պիտի ղեկավարեմ, որով պիտի բանտարկուիք ու կախաղան պիտի ելլէք : Յուրտ առտու մը, դանակին հպումը պիտի զգաք :

Էսարէս մտթին մէջ կը խորասուզէր : Իրերը կը պտուտքէին իր շուրջը : Տօն Լուիի կամքը անէութեան կըմատնէր զայն :

Պահ մը Բաթրիսի կողմը դարձաւ ու փորձեց թախանձել: Սակայն Բաթրիս անզգած դրու- թեան մը մէջ կը մնար: Թեւերը խաչածեւած, անկարեկիր նայ- ւածքներ կը ձգէր հորը մարդաս- պանին վրայ: Այդ պատիժին ար- ժանի էր ան: Պէտք էր ճակա- տագրին թողուլ որ գործէ: Բաթ- րիս Պէլվալ չմիջամտեց:

— Բան մը չէ ըլլալիքը: Մեծ հանգիստը պիտի վայելէք: Ի՞նչ աղւոր բան է մոռնալ, ու ալեւ չպայքարիլ: Միտքդ բե՛ր կոր- անցուցած ոսկիներդ, երեք հա- րիւր միլիոն, որոնք ջուրին գա- ցած են: Քորալին ալ կորսնցու- ցած են: Թէ՛ մայրը և թէ՛ աղ- ջիկը ձեռքէդ ելած են: Այդ պարագային՝ կեանքը խաբկանք մըն է միայն: Աւելի լաւ է հե- ոուն փախչիլը: Օ՛հ, փոքր ճիգ մը, փոքր շարժումներ մը ըրէ՛:

Աւազակը ըրաւ այդ փոքր շարժումներ: Անգիտակցօրէն, տեղմեց բլթակը: Գնդակը դուրս ելաւ: Ու ան գետին ինկաւ, ծունկի վրայ:

Տօն Լուի ստիպեցաւ կողմ- նակի ոտուով մը ընել, որպէս ջախջախած գլխին արիւնը վրան չցատկէ:

— Այս անզգամին արիւնը տղիտարեր պիտի ըլլայ ինծի, ըսաւ Տօն Լուի: Բայց, Տէր Աստուած, ի՞նչ սոսկալի անզգամ մըն է ան: Իրաւ որ լաւ գործ մը տեսած եղայ կեանքիս մէջ, ու այդ անձնասպանութիւնը ինծի իրաւունք պիտի տայ տեղ գրաւելու արքայութեան մէջ: Օ՛հ, պահանջկոտ չեմ ընաւ, կը բաւէ որ մութ անկիւն մը տեղ տրւի ինծի: Իրաւունք ունիմ ատիկա ձեռք բերելու, այնպէս չէ՞:

ԺԸ.
Ե Ղ Ի Յ Ի Լ Ո Յ Ս

Այդ իրիկուն, Բաթրիս կը չափչփէր Բասիլի քարափը: Ժամը վեցի մօտ էր: Միշտ թրամւէյ մը կամ բեռան օթօմօպիլ մը կ'անց- նէր: Շատ քիչ անցորդներ կը տեսնէին. Բաթրիս առանձին էր գրեթէ:

Առաւելնէ ի վեր չէր տեսած տօն Լուի Բէրէննան: Այս վեր- ջինը երկտողով մը Բաթրիսէն

խնդրած էր Եա-Պօնը փոխադ- րել Էսարէսի ապարանքը ու Պէրթու գործարանը երթալ յե- տոյ:

Ժամադրութեան ատենը կը մօտենար, ու Բաթրիս կը հըր- ճէր այդ տեսակցութեան հա- մար, ուր ամբողջ ճշմարտու- թիւնը վերջապէս պիտի պար- զւէր իր առջև: Մասամբ կը

կռահէր այդ ճշմարտութիւնը: Բայց շատ մը մութ կէտեր կային տակաւին: Որքա՞ն խնդիրներ անլուծելի մնացած էին: Տաամը վերջացած էր: Վարագոյրը կ'իջ- նէր աւազակին մահւան վրայ: Ամէն ինչ լաւ կ'ընթանար: Ալ եւս վախ չունէր ծուղակներու մէջ իյնալու: Ահաւրի թչնամին ջախջախած էր: Բայց Բաթրիս Պէլվալ մեծ անձկութեամբ կը օպասէր այն րօպէին, երբ տաամը պիտի պարզէր ամբողջովին:

— Լիւբէն կոչուած անճշմար- տանման անձը քանի մը խօսքով պիտի լուսարանէ՝ գաղտնիքը: Կարճ պիտի տեւէ տալիք բա- ցատրութիւնը: Մէկ ժամէն պիտի մեկնի ան: Ոսկիի չգաղտնիքը իր հետ պիտի՞ տանի: Եսանկիւնի խնդիրը պիտի՞ լուծէ: Այդ ոս- կիները իրեն համար վար պիտի դնէ՞: Ի՞նչպէս պիտի տանի գա- նոնք:

Օթօմօպիլ մը կուգար Թրօ- քատէրոյի կողմէն: Ան դանդա- ղեցուց գնացքը ու մայթին եր- կայնքը կանգ առաւ: Տօն Լուի ըլլալու էր օթօմօպիլին մէջ գտնուող անձը: Սակայն Բաթրիս զարմանքով տեսաւ Պ. Տէմա- լիօնը, որ դանակը կը բանար ու իր մօտ կուգար, ձեռքերը եր- կարած:

— Հարիւրապետս, ինչպէ՞ս էք: Ժամադրութեան մէջ ճշդա- պահ եղայ, այնպէս չէ՞: Նորէն վիրաւորեցաք ձեր գլխէն:

— Այո՛... աննշան բան մըն է, պատասխանեց Բաթրիս: Բայց ի՞նչ ժամադրութիւն է ձեր ը- սածը:

— Ձեր տւած ժամադրու- թիւնը:

— Ժամադրութիւն չուի ձեզի: — Օ՛հ, օ՛հ, յարեց Տէմա- լիօն, աս ի՞նչ կը նշանակէ: Ահա ինծի ուղղւած գրութիւնը. «Հա- րիւրապետ Պէլվալի կողմէ Պ. Տէմալիօնի իմաց կը տրւի որ ե- ոանկիւնի խնդիրը լուծւած է: Հազար ութը հարիւր տողակ- ները իր տրամադրութեան տակ կը գտնուին: Կը խնդրուի Բասիլի քարափը գտնուելու, կառավա- րութեան կողմէ տրւած լիազօ- րութեամբ ընդունելու համար յանձնումի պայմանները: Օգտա- կար պիտի ըլլայ, եթէ պնդակազմ քսան ոստիկան բերուին, որոնց կէսը պիտի շարուի Էսարէսի բնակարանին առջև, հարիւր մէթր հեռու, իսկ միւս մասը՝ տան ե- փին, դարձեալ հարիւր մէթր հեռու»: Յաստի է գրւածը, այն- պէս չէ՞:

— Շատ յստակ է, բայց իմ կողմէս գրւած չէ, ըսաւ Բաթ- րիս:

— Որո՞ն կողմէ գրւած է ու- րեմն:

— Տարօրինակ մարդու մը կողմէ, որ լուծած է բոլոր այդ գաղտնիքները, և որ անշուշտ հոս պիտի գայ, ձեզի յայտնելու համար գաղտնիքը:

— Ի՞նչ է անունը:

— Ձեմ կրնար ըսել:

— Օ՛հ, օ՛հ, պատերազմի ա- տեն դժւար կը պահուի այդ գաղտ- նիքը:

— Շատ դիւրին է, պարոն, ըսաւ ձայն մը Պ. Տէմալիօնի ետեւէն, կը բաւէ որ մարդ ուղէ:

Պ. Տէմալիօն և Բաթրիս ե- տեւնին դառնալով տեսան մէկը:

որ սե վերարկու մը հազած էր Ղեւտացիի պէս, վիզը բարձր օձիք մը դրած, անգլ. եկեղեցականի մը պէս:

— Ահա՛ այն բարեկամը, որու մասին ձեզի կը խօսէի ըսաւ Բաթրիս, որ դժւարաւ կրցաւ ճանչնալ տօն Լուին: Երկու անգամ իմ և նշանածիս կեանքը ազատած է:

— Պարո՛ն, ձեր ժամանակը թանկագին է, ինչպէս նաեւ իմինս, որովհետեւ այս իրիկուն Բարիզէն պիտի մեկնիմ, ու վաղը՝ Ֆրանսայէն: Հետեւաբար իմ բացատրութիւններս կարճ պիտի ըլլան, քանի որ այս առտուան առամին իրադարձութիւններուն հետեւած էք, իսկ ձեր չգիտցած դէպքերուն իրազեկ պիտի ընէ հարիւրապետ Պէլվալ: Մնաց որ, դուք ինքնին պիտի լուսաբանէք մութ մնացած կէտերը: Էականը սա է որ մեր խեղճ Եւ-Պօն մեռած է: Այո՛, թշնամիին դէմ արիաբար կուած ատեն այս դիշեր մեռած է ան: Ուրիշ երեք դիակներ ալ պիտի գտնէք, այն է Կրէկուար — իր բուն անունովը՝ Տիկին Մօսկրանէմ — նաև Լիցիկին մէջ, տկար Վաչրօ՛ մէկ անկիւնը թիւ 18 տան որ կը գտնուի Կիմար փողոցը, ու Սիմէօն Տիօտօքիս՝ դարմանատանը մէջ Տօքթ. Ժերատէքի:

— Ծերո՛ւկ Սիմէօնը, հարցուց Պ. Տէմալիօն ապշահար:

— Հապա ծերուկ Սիմէօն անձնատպան եղած է: Հարիւրապետ Պէլվալ այդ անձին և իր ճշմարիտ ինքնութեան մասին ձեզի հարկ եղած տեղեկութիւնները պիտի հազորդէ հարիւրապետ Պէլվալ:

Կարծեմ, դուք ալ ինձի պէս հարկ պիտի զգաք խեղդել այս գործը: Այս ամէնը յետասանայեաց մանրամասնութիւններ են: Ինչ որ ամէնէն աւելի ձեզ կը զբաղեցնէ՝ ոսկիին խնդիրն է, և աւտոր համար մինչեւ հոս եկած էք, այնպէս չէ՞:

— Այո՛:

— Ուրեմն անոր վրայ խօսինք: Ոստիկաններ բերի՞ք հետերնիդ:

— Բայց ինչո՞ւ: Այն թաքստոցը, որուն տեղը ցոյց տւիք ինձի, կը մնայ իր տեղը, բայց չգիտցողներուն համար տնգտանելի է ան:

— Անտարակոյս, բայց կարելի չպիտի ըլլայ գաղտնիքը ալ եւս պահել, թաքստոցին տեղը գիտցողներուն թիւը շատցած ըլլալուն: Ամէն պարագայի մէջ՝ ատ է իմ պայմաններէս մէկը:

— Կանխաւ ընդունուած էր արդէն, ըսաւ Պ. Տէմալիօն ժրպտագին: Մեր մարդիկը իրենց պաշտօնին վրայ են: Իսկ միւս պայմանը ի՞նչ է:

— Պարոն, միւսը աւելի ծանր է, այնքան ծանր որ կը տարակուսիմ թէ բաւարար ըլլան ձեզի տրուած լիազօրութիւնը:

— Ըսէ՛ք տեսնե՞ք:

— Աւասիկ:

Ու տօն Լուի Բէրէննա պաղարիւն ու չոր շեշտով մը պարզեց անհաւատալի առաջարկը, իբր թէ աշխարհի ամենաաննշան պատմութիւնը ըլլար ան:

— Պարո՛ն, շնորհիւ Արեւելքի մէջ ունեցած յարաբերութիւններու, և օսմ. շրջանակ-

ներու մօտ ունեցած ազդեցութիւններու, երկու ամիս առաջ յաղոթեցայ համոզել ներկայիս Թուրքիան ղեկավարող խմբակը, որպէսզի անջատ հաշտութիւն մը կնքէ: Խնդիրը կը դառնար քանի մը հարիւր միլիոն բաժնեկուտ վրայ: Այդ մասին դաշնակիցներուն ըրած առաջարկս մերժեցաւ, ոչ թէ դրամական, այլ քաղաքական պատճառներով զոր դատելու գործը ինձի չիյնար: Չեմ ուզեր դիւանագիտական նոր ձախողած մը ունենալ: Առաջին բանակցութեանս մէջ անյաղութեան մատնեցայ: Չեմ ուզեր երկրորդին մէջ ալ ձախողել: Ահա ինչո՞ւ համար զգուշական միջոցներ ձեռք կ'առնեմ:

Պահ մը շուկայ առաւ մարդը, մինչ Պ. Տէմալիօն՝ չիթթած՝ չընդմիջեց անոր խօսքը: Յետոյ քիչ մը աւելի հանդիսաւոր շեշտով մը յարեց.

— Այս պահուս, 1915ի Ապրիլ ամսուան մէջ, ինչպէս դիտէք, բանակցութիւններ կը կատարուին դաշնակիցներուն ու եւրոպական մեծ պետութիւններէն մէկուն միջեւ, որ չէզոք մնացած է: Այդ բանակցութիւնները եզրակացութեան մը յանգելու վրայ են, որովհետեւ այդ պետութեան ճակատագիրը այդպէս կը պահանջէ ու ժողովուրդը ոտքի ելած է խանդավառութեամբ: Յուզուած խնդիրներուն մէջ կայ հարց մը, որու մասին տարակարծութիւն կը տիրէ. դրամի խնդիրն է ատ: Այդ պետութիւնը երեք հարիւր միլիոն ոսկիի փոխառութիւն մը կ'ուղէ մենէ, հասկցնելով թէ մեր կողմէ

եղած մերժում մը փոփոխութիւն մը չպիտի ներմուծէ այն որոշման մէջ, որ անդառնալի է:

Արդ, ես հիմա տէրն եմ այդ երեք հարիւր միլիոն ոսկիին, ու կը տրամադրեմ մեր նոր բարեկամներուն: Աս է վերջին ու իրականին մէջ միակ պայմանս:

Պ. Տէմալիօն շշմած էր: Ի՞նչ կը նշանակէր ատ: Ով էր այդ անձը, որ էն ծանրակշիռ խնդիրներուն հետ կը խաղար ու անձնապէս կը լուծէր զանոնք, համաշխարհային պատերազմին վերջ տալու համար:

— Բայց, սլարոն, մեզի բնաւ չվերաբերող խնդիրներ են ատոնք և ուրիշներու կողմէ քննելու են:

— Ամէն ոք իրաւունք ունի իր դրամը ուղածին պէս գործածելու:

Պ. Տէմալիօն ցաւալին շարժում մը ըրաւ:

— Բայց քիչ մը առաջ դուք ըսեք թէ յիշեալ պետութիւնը երկրորդական կը նկատէր այդ խնդիրը:

— Այո՛, բայց անոր կատարած վիճարանութիւնը քանի մը օր պիտի յապաղեցնէ համաձայնութիւնը:

— Անշուշտ, քանի մը օր չէ որ մնացած է:

— Պարոն, քանի մը ժամ միայն:

— Բայց ինչո՞ւ:

— Այնպիսի պատճառով մը զոր չէք գիտեր, պարոն, և որուն անտեղեկ է ամբողջ աշխարհ... բացի ինչ և հինգ մղոն հեռու գտնուող քանի մը անձերէ:

— Ի՞նչ պատճառով:

— Ռուսերը ազգամանիւ չունին ալ եւս :

Պ. Տէմալիօն ցնցեց ուսերը, անհամբերութեան մատնւած : Այս քնաբեր պատմութիւնը ի՞նչ նշանակութիւն ունէր :

— Ռուսերը ազգամանիւ չունին ալ եւս, կրկնեց տօն Լուի : Արդ, հոն առեւելի պատերազմ մը կը մղէի, որ անշուշտ, վախճանի մը պիտի յանգի քանի մը ժամէն : Ռուսական ճակատը պիտի ճեղքուի, և ուս բանակները ետ պիտի քաշուին... մինչեւ ո՛ւր : Անտարակոյտ, այդ անխուսափելի պատահականութիւնը չի կրնար ազդել այն մեծ պետութեան կամքին վրայ, որուն մասին կը խօսինք : Ասով հանդերձ, չէզօքներու միջնակատողի ու բուռն մըր ցակցութիւն մը կայ : Ի՞նչ զէնք արւած կ'ըլլայ անոր ձեռքը, երբ համաձայնութիւնը յետաձգուի : Որքան շփոթութեան պիտի մատնէք ամէն անոնք որոնք կը վարեն ու կը պատրաստեն պատերազմը : Աններելի սխալ մը պիտի ըլլայ ատ : Չեմ ուզեր որ իմ երկիրս այդ բանին ենթարկուի : Ահա ինչո՛ւ այդ պայմանը դրի :

Պ. Տէմալիօն բոլորովին շփոթած էր : Շարժումներ կ'ընէր ու գլուխը կը ցնցէր, մըմնջելով :

— Անկարելի է : Այդպիսի պայման մը չպիտի ընդունուի ընաւ : Բանակցութեան պէտք կայ :

— Հինգ վայրկեան... առաւաւելն վեց վայրկեան :

— Բայց, պարոն այնպիսի բաներու վրայ կը խօսիք...

— Այնպիսի բաներու վրայ զօր ես միայն գիտեմ լուսադօն

կերպով, շատ պայծառ կացութեան մը և խիտ իրական վտանգի մը մասին, որուն առաջը կրնայ առնուիլ մէկ ակընթարթի մէջ :

— Սակայն, պարոն, անկարելի բան է, դժարութեանց կը բաղխինք :

— Ի՞նչ դժարութիւն :

— Ամէն տեսակ դժարութիւններու և հազարամէկ խոչընդոտներու, գոչեց Պ. Տէմալիօն :

Մէկը իր ձեռքը դրաւ Պ. Տէմալիօնի բազուկին վրայ. այդ անձը վայրկեանէ մը ի վեր մօտեցած, տօն Լուիի փոքր ճառը մտիկ կ'ընէր : Այդ մարդը վար իջած, քիչ մը հեռուն կեցածէր օթօմօպիլէ մը : Բաթրիս մեծ զարմանքով դիտեց որ այդ անձին ներկայութիւնը տեսնելով ձայն չէին հանած ո՛չ Պ. Տէմալիօն և ո՛չ ալ տօն Լուի Բէրէննա :

Բաւական ծեր մարդ մըն էր, կորովի և չարչարած դէմքով : Ան ըսաւ .

— Սիրելի Տէմալիօնս, խընդիրը այնպէս մը նկատի կ'առնէք որ իրականութեան չի համապատասխաներ :

— Պարոն վարչապետ, իմ կարծիքս է ատ, յարեց տօն Լուի :

— Ահ, պարոն, կը ճանչնա՞ք զիս, հարցուց նորեկը :

— Պ. նախարար Վալէնկլէյ, այնպէս չէ՞, պարոն վարչապետ : Պատիւ ունեցայ ձեր կողմէ ընդունուելու, քանի մը տարի առաջ, մինչ վարչապետ էիք :

— Այո՛, կը յիշեմ, բայց չեմ կրնար ճշդել :

— Մի պրպտէք ձեր յիշողու-

թիւնը, Պարոն վարչապետ : Անցեալը շահեկանութիւն չունի : Կարեւորը սա է որ դուք ալ ինծի համամիտ դառնալ :

— Չեմ գիտեր թէ ձեզի համամիտ եմ : Բայց կը կարծեմ թէ նշանակութիւն չունի ատ : Սիրելի Տէմալիօնս, խնդիրը հոն չէ որ պարոնին առաջարկները պարտիք վիճարանութեան ենթարկել : Խնդիրը սա բանին վրայ կը դառնայ. պէտք է ընդունիլ կամ մերժել, առանց վիճարանութեան : Հետեւաբար, սակարկութիւն չկայ գործին մէջ : Ամէն ոք իր պայմանը կը դնէ սակարկութեան մը մէջ : Մենք ո եւ է պայման չենք ներկայացնել, մինչ պարոնը ամէն պայման կը դնէ ու կը յայտարարէ. «երեք հարիւր միլիոն ոսկի կ'ուզէք : Եթէ հաստատական է ձեր պատասխանը, ահա թէ ի՞նչ պիտի ընէք : Եթէ ոչ՝ ցտեսութիւն» : Աս է ճշգրիտ կացութիւնը, այնպէս չէ՞, Պ. Տէմալիօն :

— Այո՛, Պարոն վարչապետ :

— Լաւ, կրնա՞ք պարոնէն հրաժարիլ : Առանց պարոնին առաջարկութեան կրնա՞ք դառնել ոսկիին թաքստոցը : Նկատեցէք որ ան ձեզի կը մատնանշէ ոսկիին տեղն իսկ : Կը յուսա՞ք երեւան հանել այն դադոնիքը զոր շաբաթներէ, ամիսներէ ի վեր կը փնտռէք :

— Ոչ, վարչապետ, չեմ յուսար, ըսաւ Պ. Տէմալիօն անկեղծօրէն :

— Ուրե՛մն... :

Ու տօն Լուիի դառնալով Վալանկլէյ ըսաւ .

— Իսկ դուք, Պարոն, ձեր վերջին խօսքն է որ կ'ընէք :

— Այո՛, իմ վերջին խօսքս : — Եթէ մերժենք, պիտի՞ բաժնուինք :

— Պարոն վարչապետ, ճիշդ բացատրութիւն մը գործածեցիք :

— Իսկ եթէ ընդունինք, ոսկիին յանձնուը անմիջական պիտի՞ ըլլայ :

— Այո՛, անմիջական :

— Կ'ընդունինք :

Նախկին վարչապետը փոքր շարժուածք մը ըրած էր իր հաստատական խօսքը ընելով, ինչ որ ի վեր կը հանէր խօսքին ամբողջ արժէքը : Ու քիչ յետոյ յարեց .

— Կ'ընդունինք : Այս իրիկուն իսկ դեսպանատան պիտի գեկուցուի :

— Պարոն վարչապետ, խօսք կուտա՞ք :

— Խօսք կուտամ :

— Այդ պարագային՝ համաձայն ենք :

— Այո՛, համաձայն ենք : Խօսեցէք :

Բոլոր այդ խօսքերը արագօրէն փոխանակուած էին : Հինգ վայրկեանէ ի վեր, վարչապետը հոն եկած էր : Տօն Լուի պարտէր իր խոստումը կատարել : Կարելի չէր խուսափիլ : Իրողութիւններու և ապացոյցներու պէտք կար :

Արդարեւ, հանդիսաւոր էր բոպէն : Այդ չորս անձերը իրարու մօտ կեցած էին չըջադայողներու պէս, որոնք պատ մը կը շաղկիրատեն : Վալանկլէյ մէկ թեւը քարափին յենարանին վրայ կը թնցուցած, իր գաւազանը կը բարձրացնէր ու կ'իջեցնէր աւազի դէզին վրայ : Բաթրիս ու Տէմալիօն լուս կը մնային, դէմքեր-

նին քիչ մը կծկած: Տօն Լուի սկսաւ ծիծաղիլ, ու ըսաւ.

— Պարոն վարչապետ, մի՛ յուսաք որ ոսկի պիտի յարուցանեմ մողական գաւազանով մը, կամ թէ ձեզի ցոյց պիտի տամ քարայր մը, ուր դիզուած է թանկագին մետաղ մը: Միշտ խորհած եմ թէ «Ոսկիէ եռանկիւնն» է մողորեցնողը, խորհրդաւոր ու առասպելական բան մը նկատուելուն համար: Իմ կարծիքովս, այդ եռանկիւնը կը մատնանչէ այն անջրպետը, որ իր մէջ կը պարփակէր ոսկին ու եռանկիւնի ձեւ ունէր: Ոսկիէ եռանկիւն ըսածնին սա է. ոսկիի տոպրակները եռանկիւնի ձեւով շարուած են եռանկիւն տեղի մը մէջ: Հետեւաբար, իրականութիւնը աւելի պարզ է. թերեւս յուսախաբ պիտի ըլլաք, պարոն վարչապետ:

— Յուսախաբ չպիտի ըլլամ, եթէ երբեք ոսկիի հազար ութը հարիւր տոպրակներու առջև դնէք զիս:

— Պարոն վարչապետ, ձեր հաւանութիւնը կատարեալ պիտի ըլլայ, ըսաւ տօն Լուի:

— Հաւանութիւնս կատարեալ, բացարձակ ու ամբողջական պիտի ըլլայ, եթէ երբեք ոսկիի տոպրակներու առջև դնէք զիս:

— Պարոն վարչապետ, ոսկիի տոպրակներուն հանդէպ կը զբոսնիք:

— Ի՞նչ ըսել կուզէք:

— Ժիշդ այն բանը զոր ըսի, պարոն վարչապետ: Բացի տոպրակները շօշափելէ, անկարելի է ա՛լ աւելի մօտ գտնուիլ անոնց: Հակառակ ինքզինքը զսպե-

լուն, Վալանկլէյ չէր կրնար իր զարմանքը զսպել: Ուստի ըսաւ ան.

— Ինչ որ չի նշանակեր թէ ոսկիին վրայէն կը քալեմ, և թէ կը բաւէ մայթին սալայատակները կամ յենարանը քակել:

— Պարոն վարչապետ, հոտալ խոչընդոտաներ կան: Արդ, ո եւ է խոչընդոտ նպատակէն չի բաժներ մեզ:

— Ոչ մէկ խոչընդոտ,

— Այո՛, պարոն վարչապետ, քանի որ փոքր շարժուածեւ մը ընելով կրնաք տոպրակներուն դպչիլ:

— Փոքր շարժուածեւ մը ըսաւ Վալանկլէյ, որ մեքենարար կը կրկնէր տօն Լուիի խօսքերը:

— Փոքր շարժուածեւ կը կոչեմ այն զոր կարելի է գործ դնել առանց ճիզի, առանց տեղէն երեքալու գրեթէ, օրինակի համար, գաւազանը մխրձելով ջրակոյտի մը մէջ... կամ թէ...

— Կա՞մ թէ...

— Կամ թէ աւազակոյտի մը մէջ:

Վալանկլէյ լուռ և անզգած մնաց: Թեթեւ սարսուռ մը միայն ցնցեց ուսերը: Այդ շարժուածեւը չըրաւ ան: Պէտք չունէր ընելու, քանի որ ըմբռնած էր:

Միւսները լուռ մնացին, փայլակի ուժգնութեամբ իրենց երեւցող այդ հրաշալի ու պարզ ճշմարտութենէն ապշահար: Այդ ընդհանուր լուռութեան մէջ, զոր ոչ մէկ բողոքի ու թերահաւատութեան արտայայտութիւն կը խզէր, տօն Լուի մեղմօրէն յարեց.

— Եթէ ամենափոքր կասկած մը ունենայիք — ու կը տեսնեմ

որ չունիք — ձեր գաւազանը պիտի մխրձէիք առ առաւելն յիսուն սանթիմի չափ: Այն ատեն դիմադրութիւն զգալով կանգ պիտի առնէիք յանկարծ: Ոսկիի տոպրակներն են անոնք: Հազար ութը հարիւր տոպրակ ըլլալու է: Ինչպէս կը տեսնէք, խոչոր դէզ մը չէ: Դրամի վերածուած մէկ քիլօ ոսկին կը ներկայացնէ երեք հարիւր հազար ոսկի: Ինչպէս մօտաւորապէս հաշուեցի, յիսուն քիլօնոց տոպրակ մը, որ հարիւր յիսուն հազար ֆրանքի գումար մը կը պարփակէ հազար ֆրանքնոց ծրարիկներով, սեղմ պարօնակութիւն մը ունի: Իրարու վրայ դիզուած, այդ տոպրակները հինգ խորանարդ մէթր տեղ կը գրաւեն: Եթէ երբեք եռանկիւնի բուրգի մը ձեւ տաք այդ զանգւածին, պիտի ունենաք խարխիս մը սրուն կողմերէն իւրաքանչիւրը երեք և երեք յիսուն մէթր բարձրութիւն ունի, ոսկիներու դէզին միջեւ եղած անջրպետը հաշուելով: Ամբողջ միասին ծածկեցէք աւազի խաւով մը, և այն ատեն քչքի առջև կ'սունենաք սա դէզը...:

Պահ մը շունչ առնելէ յետոյ, տօն Լուի յարեց.

— Պարոն վարչապետ, ամիսներէ ի վեր հոս է...: Ոչ ոսկին փնտառողները երեւան պիտի հանէին զայն, և ոչ ալ դիպածը պիտի յայտնէր անոր ներկայութիւնը: Անգամ մը միաքերնուգ առջև բերէք աւազոտ դէզ մը, նկուղի մը մէջ փնտառցին, քարայրի մը ամէն կողմերը պրպտեցին: Բայց ինչո՞ւ խառնշտկէին աւազի դէզ մը: Պարոն վարչա-

պետ, շատ վարպետորդի է այն անձը որ երեւակայած է երեք հարիւր միլիօն ոսկին ծածկել աւազի մէջ:

Վալանկլէյ մտիկ ըրած էր տօն Լուին, առանց ընդմիջելու անոր խօսքը: Յետոյ դիտել տուաւ.

— Արդարև, վարպետորդի մարդ է, բայց անկէ վարպետորդին կայ, պարոն:

— Չեմ կարծեր:

— Այո՛, այն անձը որ գուշակած է թէ աւազի դէզը իր մէջ կը բովանդակէ երեք հարիւր միլիօն ոսկին: Անիկա վարպետ մըն է, որուն առջև պէտք է խոնարհիլ:

Տօն Լուի յարգալիբ կերպով ողջունեց, այդ մեծարանքէն զոհ մնացած: Վալանկլէյ ձեռքը կարկառելով անոր, ըսաւ.

— Պարո՛ն, երկրին մատուցած ձեր ծառայութիւններուն փոխարէն արժանաւոր վարձատրութիւն չկայ:

— Ես վարձատրութիւն չեմ փնտառեր, յարեց տօն Լուի:

— Լա՛ւ, պարո՛ն, բայց պիտի նախընտրէի որ աւելի հեղինակաւոր անձեր շնորհակալութիւն յայտնէին ձեզի:

— Միթէ հարկաւօր է, պարոն վարչապետ:

— Նոյն իսկ անհրաժեշտ է: Պէտք է խօստովանիլ որ հետաքրքիր եմ գիտնալու թէ ի՞նչպէս յաջողեցաք այդ գաղտնիքը երեւոն շանել: Մէկ ժամէն, նախարարական պաշտօնատունը եկէք:

— Պարոն վարչապետ, դժբաղդարար, մէկ քառօրէն պիտի մեկնիմ:

— Բայց ո՛չ, ո՛չ, չէք կրնար այսպէս մեկնիլ, հաւատոց վաւանկէյ յատակ չեշտով մը:

— Ինչո՞ւ, պարօն վարչապետ,

— Որովհետեւ ոչ ձեր անունը գիտենք, և ոչ ալ ձեր անձնաւորութիւնը կը ճանչնանք:

— Ատիկա կարևորութիւն չունի:

— Խաղաղութեան ատեն թերեւս, բայց պատերազմի ատեն անընդունելի է:

— Պարօն վարչապետ, ինծի համար բացառութիւն մը կրնան ընել:

— Օ՛հ, օ՛հ, բացառութիւն մի...:

— Ենթադրենք որ ատ ըլլայ պահանջած վարձատրութիւնը, պիտի՞ մերժեն միթէ:

— Միակ վարձատրութիւնն է զոր հարկադրած են մերժելու: Մնաց որ, դուք ալ չպիտի պահանջէք: Զեղի պէս բարի շաղաքացի մը կ'ըմբռնէ այն պահանջները որոնց պէտք է համակերպի ամէն ոք:

— Շատ լաւ կը հասկնամ ձեր ըսած պահանջները, պարօն վարչապետ: Դժբախտաբար համակերպելու սովորութիւն չունիմ:

Գիչ մը սպառնալիք կար տօն Լուիի շեշտին մէջ: Վալանկէյ կարծես չնշմարեց այդ բանը և ծիծաղելով ըսաւ.

— Գէշ սովորութիւն, որմէ պէտք է շեղիք գոնէ անգամ մը: Պ. Տէմալիօն պիտի օգնէ ձեզի: Այնպէս չէ՞, սիրելի Տէմալիօնս, այդ մասին համաձայնեցէք պարօնին հետ: Մէկ ժամէն նախաբարական պաշտօնատունը գտնուե-

ցէք: Յտեսութիւն, պարօն, ձեզի կը սպասեմ:

Հրաժեշտի սիրալիր ողջոյնէ մը յետոյ՝ Վալանկէյ գաւազանը ճօճելով դէպի օթօմօպիլը ուղղեցաւ, զոր կը վարէր Պ. Տէմալիօն:

— Աւելի լաւ, մէկ անգամէն ընդունեց երեք հարիւր միլիոն ոսկին, պատմական դաշնագիր մը ստորագրեց և Արսէն Լիւբէնի ձերբակալութիւնը հրամայեց, ըսաւ տօն Լուի հեղինօրէն.

— Ի՞նչ կ'ըսէք, դ՞ուք ձեր բակալիք, գոչեց Բաթրիս շարուն:

— Դէ՛թ դատարան պիտի ներկայանամ, թուղթերս քննութեան ենթարկուելու համար.

— Դարչելի բան է:

— Հոգ չէ, սիրելի հարիւրապետ, համակերպի՞նք:

— Բայց...:

— Հարիւրապետ, հաւատացէք որ թեթեւ տաղտուկներ չեն կրնար զրկել այն կատարեալ գոհացումէն, զոր կը զգամ, այս մեծ ծառայութիւնը մատուցանելով իմ երկրիս: Այս պատերազմի ընթացքին, կ'ուզէի բան մը ընել Ֆրանսայի համար և լայնօրէն օգտուիլ իմ ընակութեան ժամանակամիջոցէս: Այդպէս ալ եղաւ: Մնաց որ, ուրիշ վարձատրութիւն մըն ալ պիտի ստանամ, այն է չորս միլիոնը: Որովհետեւ քոյլ Բօրալիի վրայ համարում ունիմ և չեմ կարծեր որ այդ գրամին ձեռք զարնէ, որ իրեն կը պատկանի իրապէս:

— Ես երաշխաւոր կ'ըլլամ անոր:

— Ենթակալ եմ, վստահ

եղէք որ այդ նւէրը լաւագոյն կերպով պիտի գործածուի, ու ամբողջովին պիտի յատկացուի իմ երկրիս փառքին ու անհրաժեշտ յաղթանակին: Ուրեմն ամէն ինչ կարգին է: Հիմա քանի մը վայրկեան ալ կուտամ ձեզի: Օգտուինք անկէ: Արդէն Պ. Տէմալիօն կը հաւաքէ իր մարդիկը: Անոնց գործը դիւրացնելու և զայթակողութենէ մը խուսափելու համար, աւազակոյցային առջեւ իջնենք: Հոն աւելի դիւրին պիտի ըլլայ մարդուն օձիքէն բռնելը:

Վար իջած ատեննին Բաթրիս ըսաւ.

— Մէկ քանի վայրկեանը կ'ընդունիմ, բայց կ'ուզեմ նախ ինքզինքս արդարացնել:

— Ի՞նչ բանի մասին, հարիւրապետ: Որովհետեւ քիչ մը բերան տւած էիք ու տաղաւարին մէջ արգելափակ ըրած էիք զիս: Անշուշտ, քոյր Բօրալին պաշտպանելու համար կ'ընէիք այդ բաները: Միթէ կարելի՞ էր ենթադրել որ Արսէն Լիւբէն պիտի արհամարհէր երեք հարիւր միլիոն ոսկին:

— Ուրեմն արդարացումի պէտք չկայ, այլ շնորհակալութիւն յայտնելու է, ըսաւ Բաթրիս ծիծաղելով:

— Ի՞նչ բանի համար: Զեր և Բօրալիի կեանքը ազատած ըլլալո՞ւս:

Ենթակալ մի ըլլաք: Ինծի համար սքորթ մըն է մարդիկը փրկել:

Բաթրիս ուժգնօրէն սեղմեց տօն Լուիի ձեռքը: Յետոյ զարթ շեշտով մը ըսաւ, որ իր յուզումը կը ծածկէր.

— Ուրեմն շնորհակալութիւն չպիտի յայտնեմ, ձեզի չպիտի ըսեմ թէ անուի մղձաւանջէ մը ազատեցիք զիս, իմացնելով որ այդ հրէշին զաւակը չէի ու անոր ճշմարիտ ինքնութիւնը պարզելով: Նոյնպէս ձեզի չպիտի ըսեմ թէ երջանիկ եմ, թէ կեանքը իմ առջեւ կը պարզուի ճաճանչազեղ, և թէ Բօրալի ազատ է զիս սիրելու: Ո՛չ, այդ մասին չխօսինք: Բայց խոստովանելու եմ թէ իմ երջանկութիւնս քիչ մը մոլթ է տակաւին: Ու է տարակոյտ չունիմ: Բայց հակառակ ամէն բանի, ճշմարտութիւնը չեմ ըմբռներ, և որքան ատեն որ անըմբռնելի մնայ, ճշմարտութիւնը քիչ մը մտահոգութիւն պիտի պատճառէ ինծի: Ուրեմն խօսեցէք, բացատրեցէք, կ'ուզեմ հասկնալ:

— Սակայն շատ պայծառ է այդ ճշմարտութիւնը, գոչեց տօն Լուի: Ամենէն բարդ ճշմարտութիւնները պարզ կ'ըլլան: Օ՛հ, չէ՞ք ըմբռներ: Տառնըվեց-տասնըրեք տարի, Աիմէօն Տիօտօ քիս իբր կատարեալ բարեկամ կը վարուի ձեզի հետ, հօր մը պէս կատարեալ անձնաւորութեամբ: Իր վրէժխնդրութենէն զատ, ձեր և Բօրալիի երջանկութիւնը միայն կը հետապնդէ մե: անա յանկարծ, ձեր թշնամին կը դառնայ և միայն կը խորհի սպաննել ձեզ ու Բօրալին: Ի՞նչ առնչութիւն կայ այս երկու հոգեկան վիճակներու միջեւ: Ապրիլ 3-4ի գիշերը էսաւրէս պէյի տան մէջ պատահած սուամին հետեւեալ օրը, Սիմէօն Տիօտօ քիսի ամենէն մեծ թշնամին կ'ըլլաք: Հիմա հասկցա՞ք:

ես ամէն ինչ երեւան հանած եմ դէպքերու վրայ նետած այս ընդհանուր ակնարկէս :

Բաթրիս գլուխը կը ցնցէր, առանց պատասխանելու : Անշուշտ, կ'ըմբռնէր ան, բայց առեղծւածին մէկ մասը գաղտնի կը մնար տակաւին :

— Սա աւազակոյտին վրայ նստեցէք և մտիկ ըրէք զիս, ըսաւ տօն Լուի : Տասը վայրկեանէն պիտի աւարտեմ գործը :

Պէրթու գործարանին մէջ կը գտնւէին : Օրը իրիկուն կ'ըլլար, ու Սէնի միւս կողմը, սիւլէթները անորոշութեան մէջ կը խորասուզէին : Քարափին եզերքը, նաւը կը տատանէր մեղմօրէն :

Տօն Լուի յարեց :

— Այն ըրիկունը, երբ մատենադարանի ներքին պատշգամին վրայ պահւրտած, էսարէս պէյի բնակարանին մէջ պատահած տուամին ներկայ կը զրտնւէիք, ձեր աչքերուն առջեւ մեղսակիցներուն կողմէ կաշկանդւած էին երկու անձեր. էսարէս պէյ ու Սիմէօն Տիօտօքիս : Հիմա երկուքն ալ մեռած են : Անոնցմէ մէկը ձեր հայրն էր : Միւսին, էսարէս պէյի վրայ խօսինք : Այդ իրիկուն, տազնապալի կացութեան մը մէջ կը գտնւէր ան : Թանօայի ոսկեդրամը փախցնելէ յետոյ արեւելեան պետութեան մը հաշւին, որ Գերմանիոյ զեկավարութեան տակ կը գտնւի ակնհասութեն, կը փորձէր նաև շորթել մէկ միլիառն մնացեալ մասը : Կայծերու անձրեւին ազդանշանը տեսնելուն պէս Պի-էյիկ կը

խարսխէր Պէրթու գործարանին երկայնքը : Գիշերը մօթէօրաշարժ նաւուն մէջ պիտի փոխադրէր աւազակոյտը : Ամէն ինչ լաւ կ'ընթանար, երբ մեղսակիցները խուժեցին հոն, Սիմէօնի տեղեկատուութեան վրայ : Ասկէ առաջ եկաւ շանթափ տեսարանը, զնդապետ Ֆաքիի մահը և այլն : էսարէս իմացաւ թէ մեղսակիցները տեղեկ էին իր մեքենայութեան և ոսկիները շորթելու ծրագրին. նոյնպէս իրազեկ եղաւ թէ Ֆաքի իր դէմ բողոքած էր դատական իշխանութեան : էսարէս կորստեան մատնւած էր : Ինչ ընէր : Կծիկը դնէ՞ր արդեօք : Բայց պատերազմի ատեն, փախուստը անկարելի է գրեթէ : Մնած որ, եթէ խոյս տար, ոսկիէն ու Քօրալիէն հրաժարած պիտի ըլլար ընդ միշտ : Կը մնար միակ միջոց մը. անհետանալով հանդերձ կուր վայրին մէջ մտալ, ոսկիին ու Քօրալիին մօտ : Գիշեր ըլլալուն պէս, իր ծրագրին գործադրութեան կը ձեռնարկէր : Գանք Սիմէօն Տիօտօքիսի :

Տօն Լուի շունչ առաւ : Բաթրիս անյազօրէն մտիկ կ'ընէր, հեղձուցիչ մթութեան մէջ լոյս փնտռելու համար :

— Ծերուկ Սիմէօն կոչւած անձը, այսինքն ձեր հայրը, իր կեանքի ամենէն տազնապալի շրջանին մէջ կը գտնւէր, յարեց տօն Լուի : էսարէսի երբեմնի զոհը եղող Արման Պէլլալ, ձեր հայրը, իր նպատակին կը հասնէր : Իր թշնամբն էսարէսը մատնած ու յանձնած էր Ֆաքիի ու մեղսակիցներուն : Ան յաջողած էր ձեզ մօտեցնել Քօրալին :

Ան ձեզի զրկած էր տաղաւարին բանալին : Սիմէօն այնպէս կը հաւատար որ քանի մը օրէն ամէն ինչ պիտի վերջանար իր փափաքներուն համաձայն : Սակայն նշաններ կը յայտնէին վտանգի մը սպառնալիքը. անշուշտ նախազգացումը ունեցաւ թէ էսարէս ինչ ծրագիր կը պատրաստէր : Ուստի ամէն ինչ աչքը առնելով հեռաձայնեց ձեզի, իմաց տալու համար : Ձեր ձայնը լսեց հեռաձայնին մէջէն, մինչ էսարէս, դրան առջեւ կատաղօրէն կը ջանար ներս մտնել. ձեր հայրը շնչասպառ կը գոչէր. «Ի՞նչ ես, Բաթրիս : Բանալին առի՞ր : Նամակը չառի՞ր : Բայց սոսկալի բան է : Ուրեմն չես գիտեր...» : Յետոյ խուսող ձիւ մը լուեցաւ հեռաձայնին մէջ. յետոյ անկապ ձայներ, բանավէճի մը աղմուկը : Ապա հեռաձայնին մէջէն լուեցաւ ձայն մը որ կը մրմնջէր. «Բաթրիս, մեղսակից մէտայեօնը... : Բաթրիս, որքան պիտի փափազէի... : Բաթրիս, Քօրալի» : Յետոյ մեծ աղմուկ մը, պռստութեան լսելի եղան, որոնք տակաւ կը նւազէին : Ի վերջոյ լուծիւն տիրեց. ձեր հայրը սպաննւած էր : էսարէս պէյ, որ ատենօք չէր յաջողած սպաննել հայրերնիդ, այս անգամ վրէժ կը լուծէր իր նախկին մրցակցէն :

Տօն Լուի ընդհատեց խօսքը : Իր ուժգին խօսքերուն ներքև այդ տուամը կը կենդանանար : Ոճիւրը նորէն կը գործէր գաւկին աչքերուն առջեւ :

Բաթրիս, վրդովւած, մըրմնջեց :

— Հա՛յրս, հա՛յրս... :
— Ձեր հայրն էր, ըսաւ տօն Լուի : Առաւան ժամը եօթը տասնրինը անցած էր, ինչպէս նօթագրած էք արդէն : Քանի մը վայրկեան յետոյ՝ ուղեւով ամէն ինչ հասկնալ, հեռաձայնով կը խօսէիք, ու էսարէս կը պատասխանէր ձեզի, հօրերնուդ դիակը ունենալով իր ոտքերուն տակ :
— Ա՛ն, թշուառական : Այդ դիակը չկրցինք և չէինք կրնար գտնել :

— էսարէս պէյ այդ դիակը չպարած ու կերպարամափոխած է պարզապէս. հարիւրապետ, խընդիրը հոտ է արդէն. մեռած Սիմէօն Տիօտօքիսը դարձած է էսարէս պէյ մինչև որ Սիմէօն Տիօտօքիսի փոխւած էսարէս պէյը կատարէ Սիմէօնի դերը :

— Այո՛, կը հասկնամ, մրմնջեց Բաթրիս :

Տօն Լուի շարունակեց :

— Ինչ յարաբերութիւն ունէին այդ երկու անձերը : Ձեմ գիտեր : էսարէս նախապէս տեղեկութիւն ունէ՞ր թէ իր հակառակորդը ուրիշ մէկը չէր, եթէ ոչ Քօրալիի մօր սիրահարը, այսինքն այն մարդը որ մահընէ ազատուած էր : Գիտէ՞ր թէ Սիմէօն ձեր հայրն էր, այսինքն Արման Պէլլալ : Ասոնք ինչիքններ են որոնք չպիտի լուծէին երբեք, բայց կարեւորութիւն չունին քնաւ : Բայց կ'ենթադրեմ որ այդ նոր ոճիւրը յանպարաստից գործւած չէր : Ձերմապէս համոզւած եմ թէ էսարէս ստուգելով որ իր հասակովը և կերպարանքովը նմանութիւններ ունէր Սիմէօնի հետ, ամէն ինչ պատրաստած էր, անոր

տեղ բաներու համար, այն պարագային երբ իրերու բերումով ստիպւէր անհետանալու: Դիւրին եղաւ այդ գործը: Սիմէօն Տիօտօքիս կեղծամ կը կրէր ու մօրուք չուէր բնաւ: Ընդհակառակը, էսարէս ճաղատ էր ու մօրուք ունէր: Ածիւեցաւ, ունելիով ջախջախեց Սիմէօնի դէմքը, ու այդ արիւնոտ մահոյախին մէջ խառնեց իր մօրուքին թելերը, իր զգեստները հազցուց դիակին, ինք հազաւ զոհին զգեստները, անոր կ'ողջամը, ախնոցը ու քթապահը դրաւ: Կերպարանափոխութիւնը կատարեալ էր:

Բաթրիս խորհել յետոյ առարկեց.

— Առտուան ժամը եօթը տասնընը անցած պատահեցաւ այդ ամէնը: Սակայն ուրիշ բան տեղի ունեցաւ կէս օրը քսանըրեք անցած:

— Ոչ մէկ բան պատահած է:

— Սակայն ժամացոյցը կէս օրը քսանըրեք անցած կը ցուցնէր:

— Չեղի կ'ըսեմ թէ բան մը պատահած չէ: Ո՛րայն թէ հետք ձգելու չէր, որպէսզի փնտրուտուք չկատարէր: Մանաւանդ խուսափելու էր այն անխուսափելի ամբաստանութենէն, զոր կրնային ընել նոր Սիմէօնին դէմ:

— Ի՞նչ ամբաստանութիւն:

— Էսարէս պէյը սպաննելու ամբաստանութիւնը: Առտուն դիակ մը կը գտնեն: Ո՞վ սպաննած է զայն: Կասկածները Սիմէօնին վրայ պիտի ծանրանային իսկոյն: Հարցաքննել յետոյ

պիտի բանտարկէին զայն: Ու Սիմէօնին դիակին տակ կը գտնէին էսարէսը: Պէտք էր որ իր շարժումներուն մէջ ազատ ըլլար: Այդ պատճառով ամբողջ առտուն ծածկեց ոճիրը, և այնպէս մը բրաւ որ ոչ ոք մատենադարանէն ներս մտնէ: Երեք անգամ գնաց իր կնոջ դուռը ափ առաւ, որպէսզի ան իրազեկ ըլլայ թէ էսարէս պէյ տակաւին կ'ապրէր առտուն: Յետոյ դուրս ելած ատեն, բարձրաձայն հրամայեց Սիմէօնի, այսինքն ինքզինքին, մինչեւ Շան գէլիդէի հիւանդանոցը առաջնորդել: Տիկին էսարէսի այնպէս հաւատացուց թէ իր ամուսինը կենդանի էր ու ինք կ'ընկերանար ձերուկ Սիմէօնի, մինչ իրապէս, ասն մէկ ամայի մասին մէջ, կը թողուր Սիմէօնին դիակը, ամուսինն ընկերակցութեամբ: Ի՞նչ պատահեցաւ յետոյ: Աւաղակին ուզածը եղաւ: Կէս օրէն ետքը, ժամի մէկի տեւաները, գնդապետ Փաքօի կողմէ լուր տրուեցաւ ոստիկանութեան, որ դիակ մը գտաւ էսարէսի ընկերանին մէջ: Որո՞ւն դիակն էր: Ո եւ է կասկած չունեցան այդ մասին: Սենեկապահուհիները ճանչցան իրենց տէրը, ու երբ տիկին էսարէս ներս մտաւ, ան ալ ստուգեց որ իր ամուսինը փուլած էր այն վառարանին առջեւ, ուր առժիրիկուն չարչարած էին: Մերուկ Սիմէօն ալ, այսինքն էսարէս, նոյնպէս հաստատեց այդ դիակին ինքնութիւնը: Դուք իսկ, ծուղակը ինկաք, Լաւ խաղ մըն էր:

Բաթրիս գլուխը ցնցելով բաւաւ:

— Այո՛, այդպէս պատահած են զէպքերը, ատ է չղթայաւորու մը:

— Խաղը ի գլուխ հանւած էր, յարեց տօն Լուի: Ատկէ զատ, իբր փաստ, էսարէսի ձեռքով գրւած նամակը կար, որ գրասեղանին վրայ գրւած էր: Ապրիլ 4 թւական կրող այդ նամակը իր կնոջ ուղղւած էր, և որով իր մեկնումը կը ծանուցանէր: Աւելին կայ. խաղը այնքան լաւ խաղցւած էր որ ճշմարտութիւնը երեւան հանելու ձգտող նշանները ա՛լ աւելի կամբաստանէին կեղծիքը:

Տօն Լուի շարունակեց.

— Այսպէս, ձեր հայրը լուսանկարներու փոքր ալպօմ մը ունէր իր ներքնազգեստին մէկ գրպանին մէջ: Էսարէս ուշադրութիւն չդարձուց այդ ներքնազգեստին, ու վրայէն չհանեց: Ալպօմը գրանցուցնուց պէս, սա անճշմարտանման իրողութիւնը ընդունեցին թէ էսարէս պէյ իր վրայ կը կրէր կնոջը և հարիւրապետ Պէլլալի լուսանկարները:

« Երբ մեռեալին, այսինքն ձեր հօր ձեռքին մէջ գտան մեղեսիկէ մէտայեօն մը, որ ձեր երկու նոր լուսանկարները կը պարունակէր, ու երբ անոր մէջ գտան ոսկիէ եռանկյունին վրայ խօսող ձեռքիւ կաթիլ մը, այն ատեն համոզուեմ գոյացուցին թէ էսարէս պէյ գողցած էր մէտայեօնը ու փաստաթուղթը, իր ձեռքին մէջ պահելով անոնք մեռած պահուն: Ո եւ է տարակոյս չէր վերցնէր էսարէսի սպաննութիւնը, ուստի ալ եւս չէին գրազեր այդ ի՞ր դրով: Այսպէս՝ նոր

Սիմէօն կացութեան տէրը կը դառնար:

Տօն Լուի քրքիջներ արձակեց: Զւարճալի կը գտնէր այդ արկածախնդրութիւնը, և իբր արեւստագէտ, կ'ըմբոսխնէր այն շարաշուք հնարամտութեան ոգին զոր իր մէջ կը բովանդակէր այդ բախտախնդրութիւնը:

Ու տօն Լուի յարեց.

— Էսարէս պէյ իր անթափանց դիմակին տակ գործի ձեռնարկեց իսկոյն: Նոյն օրն իսկ, կիսաբաց պատուհանին մէջէն մտիկ բրաւ քոյր Քօրալիի հետ ունեցած ձեր խօսակցութիւնը, ու տեսնելով որ դուք Քօրալիի վրայ ծռած էիք, հրազենի հարւած մը պարպեց զայրոյթէն: Յետոյ, այդ նոր ոճիրը ձախողած ըլլալուն, խոյս առաւ և սկսաւ կատակերգութիւն մը խաղաղ պարտէզին փոքր դրան մօտ, օգնութիւն աղաղակեց, բանալին պատին վրայէն նետեց, օրպէսզի կեղծ հետքեր ձգէ, ու կիսամեռ գետին փուլեցաւ, թշնամիին կողմէ խեղդւած, որ իբր թէ վոլվերի հարւած մը պարպած էր: Կատակերգութիւն մը որ յիմարութիւն ձեւացնելով կը վերջացնէր:

— Ինչո՞ւ:

— Որպէս զի հանդարտ ձգեն ու չհարցաքննեն զինքը և չկասկածին: Իբր յիմար՝ կրնար լուռ ու մեկուտի մնալ: Էսարէս բերանը բանալուն պէս՝ կինը պիտի ճանչնար ձայնը, որքան ալ լաւ կեղծէր: Իբր խենթ, անպատասխանատու էր: Ուզածը կրնար ընել: Այսպէս՝ ձեզ անձամբ առաջնորդեց իր նախկին մեղսա-

կիցներուն մօտ, զոր ձերբակալել
ոււիք: Խեղճ ու անվնաս յի-
մար մըն էր, իր արարքներուն
մէջ անկաշկանդ: Այնուհետեւ իր
վերջին երկու հակառակորդնե-
րուն, այսինքն քոյր Քօրալիի ու
ձեզի դէմ պիտի պայքարէր: Իւրիս
եղաւ այդ բանը: Կ'ենթադրեմ որ
իր ձեռքին մէջ ունեցած է հօրը
կողմէ գրւած օրագիր մը: Ամէն
պարագայի մէջ՝ օրը օրին իմացած
է եղածները: Այսպէս՝ կ'իմա-
նար գերեզմաններու ամբողջ
պատմութիւնը, ու գիտէր թէ
Ապրիլ 14ին, քոյր Քօրալի կ'
շուք ուխտագնացութեան պիտի
երթայիք այդ գերեզմանին: Ար-
դէն իր մեքենայութիւններով ձեզ
կը մղէր հոն երթալու: Իր ծրա-
գիրը պատրաստ էր: Այսօրւան
Բաթրիսի և Քօրալիի դէմ կը
ծրագրէր այն հարւածը, զոր ա-
տենօք պատրաստած էր անոնց
հօրը և մօրը դէմ: Այդ ծրագիրը
յաջողեցաւ սկզբան, ու մինչեւ
վերջը պիտի յաջողէր, եթէ եր-
բէք մեր խեղճ Եւ-Պօնի շնորհիւ,
նոր հակառակորդ մը երեւան
զգար յանձին ինձի: Բայց հա՞րկ
կայ ա՛յլ աւելին ըսելու: Մնաց-
եալը զուք ալ գիտէք, և կրնաք
դատել այդ գարշելի աւաղակը,
որ քանրչորս ժաման ընթաց-
քին, կը ձգէր որ իր մեղսակի-
ցը՝ Կրէկուար՝ և կամ աւելի
ճիշդը՝ իր սիրուհին եղող արկին
Մօսկրանէմը խեղդեն, քոյր Քօ-
րալիի աւաղակոյտին տակ կը
ծածկէր, Եւ-Պօնը կը սպաննէր,
զիս արգելափակ կ'ընէր տաղա-
ւարին մէջ, — գէթ այնպէս կը
կարծէր ինք, — ձեզ կը թաղէր
ձեր հօր կողմէ փորւած գերեզ-

մանին մէջ, ու կը մահացնէր դա-
նապան վաշտոն:

«Հարիւրապետ, հիմա թօյլ
տալու չէ՞՞ որ այդ շնորհալի
պարօնը անձնասպան ըլլար, որ
վերջին անգամ ըլլալով կը փոր-
ձէր ձեր հօր տեղը անցնիլ:

— Իրաւունք ունիք սկիզբէն
մինչեւ վերջը, ըսաւ Բաթրիս:
Հիմա դործը աչքերուս առջեւ
կը պարզւի իր ամբողջութեան
և մանրամասնութիւններուն մէջ:
Մէկ կէտ միայն կը մնայ. ոսկիէ
եռանկիւնը: Ի՞նչպէս երեւան
հանեցիք այդ ճշմարտութիւնը:
Ի՞նչ բան ձեզ առաջնորդեց մին-
չեւ այդ աւաղակոյտը, և ի՞նչ-
պէս կրցիք Քօրալիի ազատել
ամենասոսկալի մահէ մը:

— Օ՛հ, խնդիրը աւելի պարզ
է այդ մասին, ու առանց իմ
գիտութեանս լուսարանւած է:
Մէկ քանի խօսքով պիտի բա-
ցատրեմ: Բայց նախ հեռանանք
հոսկէ: Պ. Տէմալիօն և իր մար-
դիկը նեղացուցիչ կը դառնան
քիչ մը:

Ոստիկանները Պէրթու գոր-
ծարանին երկու մուտքերուն
առջեւ կեցած էին: Պ. Տէմալիօն
իր հրահանգները կուտար անոնց:
Ակնբերւօրէն, տօն Լուիի վրայ
կը խօսէր անոնց հետ, ու մօտե-
նալու կը պատրաստէր:

— Շոգենաւակը կ'երթանք,
ըսաւ տօն Լուի: Կարեւոր թուղ-
քիք ձգած եմ հոն:

Բաթրիս անոր հետեւեցաւ:
Կրէկուարի դիակը պարունակող
խցիկին դիմաց ուրիշ խցիկ մը
կար, ուրկէ կարելի էր ներս
մտնել միեւնոյն սանդուխին մի-
ջոցաւ: Սեղան մը և աթոռ մը
միայն կային հոն:

— Հարիւրապետ, աւաղակ
նամակ մը, յարեց տօն Լուի,
դորոց մը բանալով ու մէջէն
նամակ մը առնելով, զօր կնքեց:
Պիտի խնդրէի որ այդ նամակը
յանձնէիք...: Բայց ո՛չ, անօ-
ղուտ պարբերութիւններու պէտք
չկայ: Հաղիւ թէ ատեն ունենամ
ձեր հետաքրքրութեան գոհացում
տալու: Այդ մարդիկը կը մօտե-
նան: Առայժմ եռանկիւնին վրայ
կը դաւնայ խնդիրը: Անյապաղ
խօսինք այդ մասին:

Տօն Լուի մեծ ուշադրու-
թեամբ ականջ կը դնէր, բան մը
որուն իրական նշանակութիւնը
ընդհուպ պիտի հասկնար Բաթ-
րիս: Իսրաբը անցած դարձածը
մտիկ ընելով հանդերձ, տօն Լուի
յարեց:

— Ոսկիէ եռանկիւնին անդ-
րադատանք: Խնդիրներ կան,
զոր մարդ դիպւածաւ կը լուծէ,
առանց փնտառուքի: Ի՞նչպէք
մեզ կ'առաջնորդեն լուծման, և
այդ դէպքերուն մէջէն մարդ ան-
գիտակցօրէն կ'ընտրէ ու կը ըննէ
այս ինչ դէպքը, իսկ նկատու-
չառներ այն ինչ դէպքը: Եւ ան-
յանկարծ, նպատակը կը նշմարի:

«Արդ, այս առտու, ձեզ դէպի
գերեզմանները տանելէ և գե-
րեզմանաքարին տակ թաղելէ
յետոյ՝ էսարէս պէյ իմ քովս վե-
րադարձաւ: Կարծելով որ տաղա-
ւարի աշխատանոցին մէջ արդե-
լափակւած եմ, ազնուութիւնը
ունեցաւ կազի ժամացոյցը բա-
նալու. յետոյ հեռացաւ ու քա-
րափ եկաւ, Պէրթու գործարա-
նին վերեւ: Հոն վարանոււմ մը
ունեցաւ, և այդ վարանոււմն է
որ ինձի համար թանկագին նշան
մը եղաւ: Անշուշտ, կը խորհէր
քոյր Քօրալիի ազատել: Քարա-
փէն անցնող մարդիկ տեսնելով
հեռացաւ: Գիտնալով թէ ուր
կ'երթար էսարէս, ձեզի օգնու-

թեան փութացի, ձեր ընկերնե-
րուն իմաց աւի և խնդրեցի որ
ձեզմով զբաղին: Յետոյ հօս վե-
րադարձայ: Կարելի էր ենթադրել
որ ոսկիի տապրակները խոզո-
վակներուն մէջ չէին գտնուե-
ր: Պէյ էյէկի վրայ բեռցւած չըլա-
լուն, տապրակները պարտէղէն
դուրս, շրջակաները զետեղւած
էին հաւանաբար: Շօգենաւակը
խուզարկեցի, ո՛չ թէ տապրակ-
ները փնտռելու, այլ տեղեկու-
թիւն մը քաղելու և Կրէկուարի
յանձնուած և անոր պատկանող չօրս
միլիօնները փնտռելու համար:
Արդ, ամէն անգամ որ տեղ մը
խուզարկեմ և ուզածս չգտնեմ,
միշտ կը յիշեմ էտկաա Բօէի մէկ
տարօրինակ պատմութիւնը, այն
է Գոդըւած Նամակը: Կը յիշէք
այդ դիւանագիտական փաստա-
թուղթը, որ գողցւած էր, թէև
գիտէին այս ինչ սենեակին մէջ
պահւած ըլլալը: Այդ սենեակին
ամէն անկիւնները կը խուզար-
կեն: Տախտակամօք կը քակեն:
Ոչինչ: Բայց Պ. Տիւրքէն կը հառ-
նի, և իսկոյն կ'ուղղուի գէպի
թղթակալ մը, որ պատէն կախ-
ւած էր և ուրկէ դուրս ելած էր
հին թուղթ մը: Փաստաթուղթն
էր ան: Ես ալ բնադաբար մի-
եւնոյն հնարքին դիմեցի: Սկսայ
խուզարկել այն տեղերը զորս
խուզարկելու դադափարն իսկ
չունենար մարդ, այնպիսի տեղեր
որոնք թաքստոց չեն կրնար ըլ-
լալ, որովհետև շատ դիւրին է
երեւան հանելը: Ահա ինչու՞ զա-
դափար յղացայ թղթատելու Պօ-
թէնի անգործածելի չօրս հա-
տորները, որոնք սա տեղանին
վրայ շարւած էին: Չօրս միլիօն-
ները հոն կը գտնուէին: Հարկ
եղած տեղեկութիւնը ստացած
էի:

— Ի՞նչպէս:
— Այո՛, էսարէս մտային
24

վիճակին, ընթերցումներուն, սովորոյթներուն և լաւ թաքստոցի մը մասին ունեցած գաղափարին վրայ: Շատ հեռուները և շատ խորերը փնտաւած էինք: Դժուարութեան դէմ պայքարեցանք, մինչդեռ գործը շատ դիւրին էր ու կը բաւէր արտաքինը և մակերեսը դիտել: Երկու փոքր նշաններ ալ ծառայութիւն մատուցին ինձի: Դիտած էի որ աւագի հատիկներ կային այն սանդուխին վրայ զոր ետ-Պօն այս կողմերէն առած էր:

«Վերջապէս սա պարագան ալ յիշեցի. ետ-Պօն մայթին վրայ ետանկին մը գծած էր կաւիճով, և այդ ետանկիւնը երկու կողմ միայն ունէր, իսկ երրորդ կողմը կը ձեւացնէր պատին խարխուլը. ինչո՞ւ համար երրորդ գիծ մը չէր քաշած կաւիճով: Այդ երրորդ գծին չզոյգութիւնը արդեօք կ'ազատեցանէր որ պատի մը ստորո՞տը կը գտնուէր թաքստոցը: Իրկառ մը վառեցի, ու վերը շոգեմաշակի կամրակին վրայ հաստաւեցայ, ու շուրջս նայելով, մտովի ըսի. «Իւրեքն», հինգ վայրկեան կուտամ քեզի»: Այլևս անկարելի էր դիմադրել ինքզինքիս: Սիկառէթիս մէկ քառորդը չծխած, գործը յաջողած էր:

— Գիտէի՞ք...:
— Այո՛: Իմ արամադրութեանս տակ գտնուող տարրերէն ո՞րը ցայտեցուց այդ գաղափարը: Չեմ գիտեր: Անտարակոյս, ամենքն ալ: Հոգեբանական բաւական բարդ գործողութիւն մըն է, քիմիաբանական փորձի մը պէս: Յանկարծ ճշգրիտ գաղափարը կը կազմուի խորհրդաւոր հակադրեցութիւններով ու ասարերու միաւորութիւններով: Յետոյ իմ մէջս կար յայտնատեսութեան սկզբունք մը, մասնաւոր

գերագրգռութիւն մը, որ ճակատագրականօրէն կը հարկադրէր զիս երեւան հանելու թաքստոցը. քոյր Բորալի հոն կը գտնուէր: Վտտան էի որ եթէ ձախողանք մը, դեղեւում մը ու աւելի երկարատեւ վարանում մը ունենայի, քոյր Բորալին կորստեան պիտի մատնուէր: Կին մը կը գտնուէր քանի մը տասնեակ մէթր տարածութեամբ շրջանակի մը մէջ Պէտք էր հասկնալ, ու կրցի հասկնալ, շնորհիւ մտքիս մէջ ցայտոզ գաղափարին: Տարրերու միաւորումը պեղի ունեցաւ: Ու դէպի աւազակոյտը վազեցի ուղղակի: Քայլափոխելու հետքեր տեսայ իսկոյն, ու քիչ մը վերը՝ աւելի որոշ հետքեր: Սկսայ խուզարկել: Երբ առաջին անգամ շօշափեցի տոպրակները, մեծ եղաւ զարմանքս: Բայց յուզուելու ատեն չունէի: Քանի մը տոպրակներ տեղափոխեցի: Քոյր Բորալի հոն էր, հաշիւ թէ աւազով պաշտպանւած, որուն տակ կը խեղդուէր, աւազը կը խցէր աչքը ու հեղձամահ կ'ընէր զինքը: Հարկ չկայ ասիկա աւելին ըսելու, այնպէս չէ՛: Գործարանը ամալի էր ամէն ատենուան պէս: Հոնիկ դուրս հանեցի քոյր Բորալին, ու օթոմսպիւ մը կանչեցի: Յետոյ զբաղեցայ հօտրէտով, դանապան Վաչրոյով: Մեր թշնամիին ծրագրին տեղեկացած ըլլալով՝ Տոքթ. Ժէրառէթի մօտ գացի: Վերջապէս Պուլվար Մօնմարանսիի գարմանատունը փոխադրել տի ձեզ. նոյնպէս հրամայեցի որ հոն փոխադրեն քոյր Բորալին: Ու այս ամէնը երեք ժաման մէջ տեղի ունեցաւ: Երբ բժիշկին օթոմսպիւով դարմանատունը վերադարձայ, հարէս միեւնոյն ատեն հոն կը հասնէր, ինքզինքը դարմանել տալու համար: Օձիքէն բռնած էի:

Տօն Լուի լռեց: Այլևս պէտք

չէր մնացած որ այդ երկու սնունդները խօսքեր փոխանակէին իրարու հետ: Մէկը միւսին ամենամեծ ծառայութիւններ մատուցած էր, և միւսը գիտէր թէ այդ ծառայութիւններուն փոխարէն ամէն շնորհակալութիւն անզոր պիտի ըլլար: Նոյնպէս գիտէր թէ երբեք առիթ չպիտի ունենար իր երախտագիտութիւնը ապացուցանելու: Տօն Լուի պէտք չունէր այդ երախտագիտական ցոյցին: Ի՞նչպէս կարելի էր ծառայութիւն մատուցանել տօն Լուիի պէս մարդու մը, որ այդքան միջոցներ ունէր իր տրամագրութեան տակ, և որ հրաշքներ կը գործէր այնքան դիւրութեամբ որքան առօրեայ կեանքի փոքր արարքները:

Բաթրիս դարձեալ ուժգնօրէն սեղմեց տօն Լուիի ձեռքերը, աւանց բառ մը արտասանելու: Տօն Լուի այդ լուռ յուզումի արտայայտութիւնը ընդունեց, ու ըսաւ.

— Հարիւրապետ, եթէ երբեք ձեր առջեւ խօսին Արսէն Լիւրէնի վրայ, պաշտպանեցէք զայն, որովհետեւ արժանի է:

Ու ծիծաղելով յարեց.

— Չարմանալի բան, տարիքս առած ըլլալուս համար, կարեւորութիւն կ'ընծայեմ համբաւին: Երբ սատանան ձերանայ, կրօնաւոր կը դառնայ:

Տօն Լուի ականջը սրեց, ու բոպէ մը ետքը յայտարարեց.

— Հարիւրապետ, բաժանումի ժամը հասաւ: Յարգանքներս մատուցէք քոյր Բորալի: Չեմ ծանօթացած անոր հետ, և ան չի ծանչնար զիս: Թէեւ լաւագոյն է որ այսպէս ըլլայ: Յտեսութիւն, հարիւրապետ: Եթէ պէտք ունենաք ինձի, մի վարանիք իմ խօսրուորդս լսելու, ի՞նչ գործ որ ալ ըլլայ ան, ինչ-

պէս անդամ մը դիմակաղերձ ընել, պարկեշտ մարդ մը տագնապէ ազատել, առեղծւած մը լուծել: Հասցէս պիտի տամ ձեզի, որպէսզի ինձի գրէք: Կրկին ցտեսութիւն:

— Ուրեմն կը բաժնուի՞նք իրարմէ:

— Այո՛: Պ. Տէմալիօնի ձայնը կը լսեմ: Կ'ուզէ՞ք դիմաւորել զայն: Հաճեցէք հոս բերել:

Բաթրիս վարանեցաւ: Ինչո՞ւ տօն Լուի իրեն կը յանձնարարէր դիմաւորել Պ. Տէմալիօնը: Արդեօք անոր համար որ Բաթրիս նպատաւոր միջամտութիւն մը ընէ՞ր:

Այդ գաղափարէն խթանւած, Բաթրիս դուրս ելաւ: Այն ատեն առաջ եկաւ բան մը զոր Բաթրիս չպիտի կրնար ըմբռնել երբեք. շատ արագ ու բոլորովին անբացատրելի բան մըն էր ան: Կամրակին վրայ Բաթրիս հանդիպեցաւ Պ. Տէմալիօնի ու ըսաւ անոր.

— Ձեր բարեկամը հօ՞ս է:

— Այո՛: Բայց նախ երկու խօսք ընեմ: Մտադրութիւն չունի՞ք...

— Մի վախնաք բնաւ: Ձեռք ուզեր գէշութիւն ընել անոր. ընդհակառակը:

Այնքան բացորոշ շեշտով մը խօսեցաւ որ սպան ընելիք առարկութիւն չգտաւ: Պ. Տէմալիօն անցաւ գնաց: Բաթրիս հետեւեցաւ անոր: Սանդուխէն վար իջան:

— Այդ խցիկին դուռը բաց ձգած էի, ըսաւ Բաթրիս:

Դուռը հրելով բացեցաւ: Բայց տօն Լուի հոն չէր գտնուեր:

Անմիջական քննութեամբ մը ստուգուեցաւ որ ոչ ոք տեսած էր տօն Լուիի մեկնումը. ոչ քարափին առջեւ կեցող ոստիկանները և ոչ ալ կամրակէն անցնողները:

Բաթրիս յայտարարեց.

— Երբ ատեն ունենանք այս նաւը մանրակրկիտ կերպով քննելու, պիտի տեսնենք որ շատ փոխուած է ան. չեմ տարակուսիր այդ մասին:

— Ուրեմն ձեր բարեկամը կափուլէ մը խոյս տուած և ծով նետուած է, հարցուց Պ. Տէմալիօն, որ շատ նեղացած կը թւէր:

— Այնպէս ըլլալու է, ըսաւ Բաթրիս ծիծաղելով. Թերեւս ընդծովեայով գացած է:

— Ա՛հնի մէջ ընդծովեան ինչ գործ ունի:

— Ինչո՞ւ չէ: Չեմ կարծեր որ բարեկամիս միջոցները ու կամքը սահման ունենան:

Բայց Պ. Տէմալիօն շատ զարմացաւ, սեղանին վրայ գտնելով նամակ մը որ իր հասցէն կը կրէր: Տօն Լուի Բէրէննա այդ նամակը հօն դրած էր, Բաթրիս Պէլլալի հետ ունեցած տեսակցութեան սկիզբը:

— Ուրեմն գիտէ՞ր որ հոս պիտի գամ, հարցուց Պ. Տէմալիօն: Լսել է մեր տեսակցութենէն առաջ կանխատեսած էր թէ կարգ մը ձեւակերպութիւններ պիտի պահանջէի:

Սա տողերը կը պարունակէր այդ նամակը.

«Ներողութիւն մեկնումիս համար: Եատ լաւ կ'ըմբռնէի այն շարժառիթը զոր հոս կ'առաջնորդէ ձեզ, Արդարեւ, իմ վիճակս կանոնաւոր չէ, և դուք իրուուունք ունիք բացատրութիւններ ուղեւու ինէ: Կը խոստանամ օրին մէկը այդ բացատրութիւնները տալու: Այն ատեն պիտի հասկնաք որ եթէ երբեք իմ ըմբռնած եղանակով կը ծառայեմ միտնասայի այդ եղանակը ամենէն գէշը չէ, և թէ իմ երկիրս պարտի երախտապարտ ըլլալ այն անհուն ծառայութիւններուն — կը համարձակիմ այդ խօսքը ընելու:

Փոխարէն զոր մատուցի ներկայ պատերազմի ընթացքին: Կ'ուզեմ որ այդ տեսակցութիւնը օրը շնորհակալ ըլլաք ինծի: Այդ թւականին ուստիկանութեան վերատեսուչ պիտի ըլլաք. ձեր թաքուն փառասիրութեանը ծանօթ է ինծի: Թերեւս ձեռքէս եկածը ընեմ, որպէսզի այդ պաշտօնին կոչուիք, որուն արժանի էք արդէն: Հիմակընէ կաշխատիմ այդ բանին համար: Հաճեցէք և այլն...»

Պ. Տէմալիօն բաւական ատեն լուռ մնաց: Յետոյ ըսաւ.

— Տարօրինակ մարդ է: Եթէ ուզէր, մեծ գործեր կրնայինք յանձնել իրեն: Պ. Վալանկլէյի կողմէ պաշտօն ունէի այդ բանը յայտարարելու իրեն:

— Պարո՛ն, վստահ եղէք որ հիմա կատարած գործերը շատ աւելի մեծ բաներ են: Արդարեւ, տարօրինակ անձնաւորութիւն է, աւելի տարօրինակ, աւելի հզօր և աւելի արտակարգ քան որչափ չէք ենթադրեր: Եթէ երբեք դաշնակից ազդերէն իւրաքանչիւրը իր արամադրութեան տակ ունենար այդ իմօրը ունեցող չորս անձեր, պատերազմը վեց ամիս ալ չպիտի տւէր:

Ու Պ. Տէմալիօն մըմնջեց.

— Ես ալ այնպէս կը կարծեմ: Միայն թէ այդ անձերը կղզիացած ու այլամերձ են. անոնք իրենց խելքին համաձայն կը գործեն ու օ եւ է լուծ չեն ընդունիր: Օրինակի համար, օս հոչակաւոր բախտախնդիրը, որ քանի մը տարի առաջ Քայզերը կը բռնադատէր իր բանտը դալու և զինքը ազատելու, բայց դժբախտ սիրոյ մը հետեւանքով, Գարրիի ապառաժուտ ամբերուն բարձունքէն վար նետած է ինքզինքը:

— Ո՛վ է այդ մարդը:

— Լաւ գիտէք... Լիւրէնն Լիւրէնր...



15p

Ա. Գ.

1751

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL1695761

